

ՀՈԿՏԵՄԲԵՐ – ՆՈՅԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ ԹԻԻ 10–11–12
OCTOBER – NOVEMBER – DECEMBER № 10–11–12


ՄԻՈՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԴԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԹՈՒԹԵԱՆ

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE
ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

2018



ՄԻՈՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ
ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԵԱՆ

Ղ. 90 ՏԱՐԻ – ՆՈՐ ԵՐԶԱՆ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ
ԵՐՈՒՍԱՂԷՄ

2018	ՀՈԿՏԵՄԲԵՐ – ՆՈՅԵՄԲԵՐ – ԴԵԿՏԵՄԲԵՐ	ԹԻԻ 10–11–12
2018	OCTOBER – NOVEMBER – DECEMBER	№ 10–11–12

SION

A QUARTERLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY
OFFICIAL PUBLICATION OF THE
ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM

VOL. 90



ST. JAMES PRESS
JERUSALEM

*Իրաւատէր՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան,
Հայ Պատրիարք Երուսաղէմի*

*Proprietor: His Beatitude Archbishop Nourhan Manougian
Armenian Patriarch of Jerusalem*

*Խմբագիր՝ Տ. Ներսէճ Աբեղայ Ալոյեան
Editor: Father Nerseh Aloyan*

*Խմբագրի օգնական՝ Յովհաննէս Սարկաւազ Պետրոսեան
Assistant Editor: Deacon Hovhannes Petrosyan*

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏԱՐԻ

«Եւ երկիր էր աներեսոյթ եւ անպատրաստ, եւ խաւար ի վերայ անդնդոց, եւ հողի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» (Ծննդոց Ա:2):

Վերը նշուած նախադասութիւնը կը մէջբերենք, որովհետեւ հոն կը գտնենք նրկարագրութիւնը աշխարհի եւ կեանքի սկզբնաւորութեան, ու հիմա կանգնած ենք Նոր Տարուան շեմին եւ հիշին վախճանին, ուրեմն մեր «Հին աշխարհ» է որ կու գայ իր աւարտին, եւ հետեւաբար այս կը նշանակէ նաեւ թէ «Նոր աշխարհ» մը, նոր կեանք մը կը սկսի:

Ծննդոց Գիրքին մէջը ջուրը դարձած է խորհրդանշիչ «Քառսի», անձեւ եւ կեանքէ զուրկ ջուր մը, որուն վրայ սակայն կու գայ յաժիշ Աստուծոյ շունչը, որ շուտով ձեւ, կարգ եւ կեանք կու տայ անոր: Եւ Յովհաննէս Աւետարանիչ անպայմանօրէն Ծննդոց Գիրքը մտքին մէջ ունենալով, իր կարգին կը նկարագրէ ստեղծումը Նոր Աշխարհի մը, Նոր Մարդով, վերածնած նոր ձեւով՝ ջուրով եւ հոգիով:

Անկասկած բոլոր մարդիկ, մանաւանդ Ս. Երկրի բնակիչները հարց կու տան թէ Նոր Տարին ինչեր վերապահած է իրենց համար, որովհետեւ բացուող տարին նման է Հին Կտակարանի ջուրերուն, որոնք ծածկուած էին անյայտին խաւարով, սակայն մենք մեր կողմէն կրնանք այս բացուող, կազմաւորուող եւ տակաւին անծանօթ տարիին վրայ աւելցնել մեր ցանկութիւնը կարգ ու կանոնի: Եւ նոյնիսկ եթէ չենք կրնար կեանք ստեղծել, առնուազն փորձենք պահպանել եւ փրկել ա՛յն ինչ կը մնայ հինէն և զայն բարելաւել՝ դնել աւելի լաւ վիճակի մէջ, եւ այս յաջողցնելու համար մարդկային մեր իմաստութեանն եւ շահերէն աւելի կարիքը ունինք բարի-կամեցողութեան, որովհետեւ վեհ գաղափարներ եւ ազնիւ խօսքեր բաւարար չեն կերտելու բարօր եւ ապահով ապագայ:

Մարդ արարածը միշտ հակամէտ եղած է սիրել նորն ու նորոյթները, նորութիւնները: Ինչ որ նոր է կը դառնայ գեղեցիկ ու հրապուրիչ, ինչպէս են Նոր Տարիները: Ճաբոնցիներ իւրաքանչիւր նոր կայսեր հետ կը սկսին նոր օրացոյց մը: Սակայն Քրիստոսի Ծնունդով հինը կ'ընդհատուէր եւ խաւարը կը դառնար լոյս, յուսահատութիւնը՝ նոր լոյս, եւ կը սկսէր շնորհքի շրջան մը: Որովհետեւ այդ է որ կ'ըսեն օրացոյցները, Աստուածորդւոյն ծնունդով մարդկային պատմութիւնն էր որ կը վերսկսէր: Իրականութեան մէջ, խաղաղութեան եւ Սիրոյ Իշխանին ծնունդով ամէն տարի մեզի՝ քրիստոնեաներուս համար պարտի դառնալ «Առաջին Տարին», նոր կեանքի, նոր սկիզբի եւ նոր ստեղծագործութեանց շրջան մը:

Օր մը գիւղացի մը իր դրացիին կ'ըսէ, թէ անոր գաւազը ցեխի փոս մը ինկած էր: «Որքան խորունկ ինկած է տղաս», կը հարցնէ հայրը, լրաբերը կ'ըսէ «Մինչեւ ծունկերը»: «Ուրեմն տակաւին ժամանակ ունինք գաւաթ մը խմելու» կ'ըսէ տղուն հայրը: Որուն լրաբերը կ'ըսէ. «Չեմ խորհիր, որովհետեւ տղադ գլխիվայր ինկած է փոսը»: Թերեւս, մեզմէ ոմանց համար ալ անցնող տարին եղաւ ցեխի փոս մը, որուն մէջ գլխիվայր ինկանք: Կեանքը լեցուն է անհաճոյ խնդիրներով եւ դժուարութիւններով,

ասոր համար ալ միշտ թելադրելի պիտի ըլլար հաւատացեալին համար կարդալ Յովհաննու Աւետարանին Ա. գլուխը. «Նովաւ կեանք էր եւ կեանքն էր լոյս մարդկան, եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէր, եւ խաւար նմա ոչ եղեւ հասու»։ Եւ անշուշտ խոսք ինք է Քրիստոս, որուն մուտքը մեր խաւար կեանքերէն ներս, իր հետ բերաւ յոյսը փրկութեան, բոլոր անոնց որոնք գլխիվայր ինկած են մեղքերու փոսին մէջ։ Քրիստոսի Ծնունդով լուսաւորուեցաւ մեր մութ աշխարհը, ինչպէս նաեւ յոյսն ու սէրը մտան մեր անյոյս եւ անսէր ու ցուրտ աշխարհէն ներս։ Ան՝ ինչպէս շատեր կ'ակընկալէին, մուտք չգործեց մեր աշխարհէն ներս փառքով եւ ոյժով, այլ առնելով ծառայի կերպարանք, խոնարհաբար մտաւ մեր կեանքերէն ներս, քաջ գիտնալով թէ այդ էր միակ եւ ճիշդ ձեւը հասնելու մէջ սիրտերուն։

Աստուածորդւոյն ծնունդը իր հետ կը բերէ Նոր Տարի մը, նոր շրջան մը կը պարզուի մեր աչքերուն, ուր մեզի կարելիութիւնը կ'ընծայուի դառնալու Աստուծոյ արժանաւոր զաւակներ։ Թող մեզմէ իւրաքանչիւրին համար 2019 Տարին ըլլայ Քրիստոսի սիրով օծուն ու բարիքներով լեցուն տարի մը։

Շնորհաւոր Նոր Տարի

ԱՄԱՆՈՐԵԱՅ ԽՈՀԵՐ

Բարիք ընել ուզողին գանձարանը միշտ լեցուն կ'ըլլայ։ Անոնք՝ որոնք հաճոյքով կու տան, ուրախութիւն կը հնձեն, իսկ անոնք՝ որոնք ակամայ եւ ցաւելով կու տան, անոնք կը ստանան ցաւի մկրտութիւնը միայն։

Տալը ապրելու կերպ մըն է, բնութիւնը ձեզի օրինակ։ Ծառն իր պտուղով, ծաղիկը իր ծիլով եւ կենդանին իր ձագով ճիշդ այս է որ կ'իրագործեն։ Կեանքը փոխ կու տայ կեանքին զայն յաւերժացնելու համար։

Սիրելի եւ Աստուածահաճոյ կը դառնան անոնք՝ որոնք ոսկի խօսքերու փոխան բարիք գործել կը սիրեն եւ կու տան իրենց խոստացածէն աւելի եւ երանելի է այն անձը՝ որ իր տալու եւ բաշխելու ժեսթին մէջ ինքզինք կը մոռնայ։ Ձեր հոգին ձեր կեանքն է եւ անոր գործունէութենէն է, որ կը ծնին վիշտն ու երջանկութիւնը։

Միայն արծիւներն են որոնք կը թռչին անհունին մէջ, մօտիկ աստղերուն, եւ վերէն կը նային անդուդներուն։ Պարագան նոյնն է սրտանց եւ առանց ակնկալութիւններու տուողին, որ վեր կը մնայ հասարակ ու սովորական հարուստ մօտիկներէն, վերէն նայելով կեանքի անդուդներուն մէջ սողացող մարդկային տգրուկներուն։

Մինչ գիշերը կը յառաջանայ ու մենք կը մտնենք Նոր Տարուան սեմէն ներս, բոլորս կ'ունենանք հին եւ ինքնակոչ հիւր մը ճամբած ըլլալու գոհունակութիւնը, իսկ անգին կը պատրաստուինք սրտագինս ողջունելու Նոր Տարին՝ Ամանորը, միշտ անոր բարիքներէն եւ բերելիք նուէրներէն լաւ ու առատ բաժին մը ունենալու մեծ ակնկալութիւններով, եւ այս մէկը Յոյսին հրաշագործ զօրութիւնն է, որ միշտ կը յայտնուի Ամանորի գիշերը բոլոր սիրտերուն մէջ անխտիր, նոյնիսկ կեանքի բիրտ հարուածներէն խոցոտուած հոգիներուն, զարմանալիօրէն կեանքի սէրը արթնցնելով աշխարհէն ու մարդոցմէ միայն փուշ եւ տատասկ ստացած սիրտերու մէջ։

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ

ԾՆՆԳԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (ԲԵԹՂԵՏԷՄ ԵՐԹԱԼ ՉՈՒՋՈՂ ՀՈՎԻԻԸ)

Հրեշտակներն ու երկնային զօրութիւնները լոյսերով ու քաղցր երգեցողութեամբ երկինքը կենդանացնելէ վերջ, մեկնած էին: Հովիւները լոկ, իրենց ոչխարներուն հետ կեցած տմոյն աստղի լոյսին տակ, տակաւին կը նայէին հեռուն, բլուրներէն անդին, ուր մեծ աստղ մը ինքզինքը կ'այրէր: Անոնց աչքերը մութին մէջէն կրակ կ'առնէին, հեռուններէն տակաւին բխող մեղեդիներուն թելովը:

«Բեթղեհէմ երթանք, ըսաւ հովիւներէն տարէցը, տեսնելու համար այս հրաշալի իրողութիւններուն արդինքը, զոր երկինքը կը բանայ մեր աչքերուն առաջ այս գիշեր, արդարութեան, բարութեան, սիրոյ և խաղաղութեան պատգամներուն կենդանակերպը աշխարհ զրկելով, աստղերու եւ հրեշտակներու միաձոյլ հանդէսի մը մէջ, յորդումի հանելու չափ այս գիշերը, իր անհունասփիւռ սաղաւարտով»:

Դաւթի քաղաքը, հեռուն, բլուրի մը բարձունքին՝ կը ցնծար, նորանշոյլ աստղի շողերովը պատմունճանուած: Անայց խորերէն մոգեր եւ արքաներ ճամբայ կ'իյնային, ստաշխով ու ոսկիով բեռնաւոր, խուզարկելու համար ծնող մանկան վայրը:

Հովիւները կը պատրաստուէին մեկնելու, սակայն անոնցմէ մին, որ Ամովս կը կոչուէր, կռթնած իր գաւազանին, լուռ եւ անտարբեր, չէր ուզեր շարժիլ: «Երթանք, ըսաւ հովիւներէն ամենէն տարէցը, տեսէք ահա լոյսը կը շատնայ քաղաքին վրայ, պատռելով հորիզոնը, եւ աստղերու ոսկի փոշին կը բարձրանայ արքայավար երիվարներու սմբակներուն վերեւ»:

Սակայն Ամովս ժխտական շարժեց իր գլուխը եւ չուզեց ընկերանալ մեկնելու պատրաստ հովիւներուն:

Յետոյ, յանկարծ, լսուեցաւ քաղցր ու խորունկ ձայն մը, երկնքէն ու երկրէն բխող, որ կ'ըսէր. «Այսօր մարդոց համար Փրկիչ մը ծնաւ Դաւթի քաղաքին մէջ, եւ Անոր փառքն է որ կը շողայ երկնքին վրայ»:

«Երթանք, ըսին հովիւները Ամովսին, չե՞ս լսեր հրեշտակին ձայնը որ նոր Փրկչին ծննդեան բարի լուրը կ'աւետէ մեզի»:

«Ոչինչ կը լսեմ ես, ըսաւ Ամովս, հոգիս լուռ է եւ անարձագանք, ամառուան երկնքին պէս»:

Սրտմտեցաւ տարեց հովիւը ընկերոջ այս անտարբերութեան համար, ու ըսաւ. «Դուն աչքերովդ տեսար երկնային զօրութիւնները եւ ականջներովդ լսեցիր անոնց քաղցր համերգը, որոնք Տիրոջ փառքը կ'երգէին բարձունքներու մէջ եւ երկրի վրայ»:

Հովիւներէն ուրիշ մը հեգնանքով ըսաւ. «Որքան ատեն որ երկինքը չէ փլած եւ լեռները կը պահեն իրենց տեղը, Ամովս պիտի չուզէ համոզուիլ եղածին: Անիկա աւելի մեծ ու եղերական ապացոյց մը կ'ուզէ, քան Աստուծոյ ձայնը»:

Ամովս իր գաւազանը աւելի խոր հրելով հողին մէջ ու կռթնելով անոր, ըսաւ. «Ես կ'ուզեմ լսել ձայն մը որ ականջիս մըմնջէր ձեր ըսածը»:

«Ի՞նչ կ'ուզէիր որ այդ ձայնը ըսէր ականջիդ, խնդացին միւս հովիւները, թէ դուն փոքրիկ հովիւն ես հարիւրնոց հօտին»:

Ամովս չկրցաւ զսպել իր զայրոյթը եւ պոռթկաց. «Ես փրկիչն ու պահապանն եմ իմ ոչխարներուն, չէ՞ք տեսներ անոնց աչքերուն մէջ եւս կայ սարսափը հրեշտակներուն եւ զարմանքը երկնային երեւոյթներուն: Աստուած շատ զբաղած է Բեթղեհէմի մէջ, եւ ժամանակ չունի մեր ոչխարներով հետաքրքրուելու»:

Ճիշդ այդ պահուն, տեսան հեռուն մարդու մը իրենց մօտենալը: Հովիւները զարմանքով նկատեցին որ շուները չէին հաչէր եկողին վրայ: Եկողը տփույն ծերունի մըն էր, որ գաւազանի օժանդակութեամբ հազիւ կը քալէր: Օտարականը իրենց մօտեցաւ եւ կրակ ու կաթ խնդրեց իր նորածին գաւակին եւ անոր մօրը համար:

Հովիւները իրենց ունեցած կրակէն բաժին հանել ուզեցին իրեն: «Ո՛ր լեցնենք կրակը զոր կը խնդրես», ըսին ծերունիին: Ան իր վերարկուին փէշը ներկայացուց: Երբ հովիւները անոր մէջ լեցուցին կրակը, զարմանքով տեսան որ փէշը չէր այրեր: Յետոյ իրեն տուին կաթ եւ հաց եւ ճամբու դրին զինք:

Ամովս երկար նայեցաւ մեկնողին ետեւէն, սակայն մնաց իր տեղը անշարժ:

Ծերունիին մեկնելէն վերջ, հովիւները հետեւեցան իրեն եւ գացին Բեթղեհէմ: Ամովս շրջեցաւ հօտին մէջ եւ ջանաց հանդարտեցնել ոչխարները, որոնք արտակարգ զգացումէ մը համակուած, անսովոր շարժումներ կը փորձէին, ականջին լարած հեռուն, կասկածոտ սպասումի մը մէջ:

Առտուան դէմ հովիւները վերադարձան, եւ Ամովսի պատմեցին մսուրի մէջ ծնած Մանկան մասին:

Անոնք տեսած էին իբրեւ արհաւիր ծառայող այրի մը աղօտ լոյսին մէջ, երիտասարդ կին մը որ լուռ քաղցրութեամբ իր նորածինը կը դիտէր: Տակաւ բացուող մութին մէջ, հովիւները նշմարած էին նաեւ այն ծերունին, որ իրենցմէ կաթ, հաց եւ կրակ ընդունած էր:

Երբ վերջացուցին իրենց տեսածներուն նկարագրութիւնը, ըսին Ամովսի. «Իսկ դուն ի՞նչ ըրիր հոս, ոչխարներուդ քովը նստած»:

Ամովս ուրախութեամբ ըսաւ անոնց, թէ այժմ իր հարիւր ոչխարներուն թիւը հարիւր մէկի բարձրացած է, եւ անոնց ցոյց տուաւ նորածին ճերմակ գառնուկը:

«Այս նորածին գառնուկին համար դուն լսեցի՞ր որեւէ երկնային ձայն», ըսաւ տարեց հովիւը Ամովսին:

Ամովս շարժեց իր գլուխը եւ ժպտեցաւ: Սակայն հովիւները իր դէմքին վրայ տեսան զարմանալի պայծառութիւն մը, ճիշդ նման անոր՝ զոր տեսած էին նորածին Մանկան մօրը դէմքին վրայ:

«Ձեր երթալէն վերջ, ըսաւ Ամովս, ես լսեցի ձայնը, եւ անկէ յետոյ ծնաւ այս գառնուկը»:

Հազիւ Ամովսը վերջացուցած էր իր խօսքը, անոնք բոլորը նշմարեցին որ լուսակապոյտ երկնքին մէջ աստղը փշուր փշուր կը տարտղնուէր, գրելու համար դարերով սպասուած կախարդական պատգամը, զոր սակայն իրենք չէին կրնար կարդալ:

ԿՐՕՆԱԿԱՆ

ԿԱՏԱՐԵԼՈՒԹԻՒՆ

«Եղերուք կատարեալք որպէս եւ Երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է»

(Մատթ. Ե:48):

Կատարելութեան ձգտելու տենչը մարդուն մէջ սկսած է շատ կանուխէն: Աշխարհի պատմութիւնը ցոյց կու տայ մարդուն ձգտումն ու փորձերը հասնելու բարձրագոյն զարգացման եւ կատարելութեան: Մատթէոսի Աւետարանէն առնուած այս հատուածը դարձեալ կու գայ մեզի թելադրելու թէ Մարդ արարածը պարտաւոր է ինքզինք կատարելագործել ո՛չ միայն գիտութեան, կրթութեան եւ արուեստներու գետնի վրայ, որոնք յաճախ զինք՝ տարուած մրցակցութեան ոգիէն՝ կը մղեն դառնալու ժխտական, չար եւ եսակեդրոն, բայց ատոր փոխարէն զարգացնելով մեր ներսը գտնուող դրական ու բարի կողմերը պարտինք մենք զմեզ կատարելագործել այդ ուղղութեամբ:

Աստուածորդին շարունակելով իր «Լերան Քարոզ»-ը, եւ որպէսզի իր ունկնդիրները իր խօսքերը սխալ չմեկնաբանէին, կ'ըսէ. «Ես չեմ եկած հին օրէնքները խախտելու, այլ ամբողջացնելու. եւ եթէ դուք կարենաք հետեիլ անոնց այդ ատեն կրնաք դառնալ կատարեալ անհատներ: Ու ան կը սկսի խօսիլ այդ օրերու Հրէաստանն ու Հրէութիւնը մտահոգող բարոյական մի քանի կէտերու մասին, որոնք անմիջական սրբագրութեան կը կարօտէին, եւ որոնք ապագային պիտի դառնային քրիստոնէութեան գլխաւոր օրէնքներն ու պատուիրանները. –

Ա. «Մի՛ սպաններ»: Քրիստոս ո՛չ միայն կը դատապարտէր սպաննութիւնը այլ քայլ մը աւելի առաջ երթալով, աւելցուց թէ անիմաստ զայրոյթը կամ երկար քէնն ու ոխը եւս նոյնքան ծանրակշիռ մեղքեր էին որքան սպաննութիւնը. որովհետեւ մենք այն միամիտ հաւատքը ունինք, որ եթէ մարդ չենք սպաննած ուրեմն մաքուր ենք եւ անմեղ, մոռնալով այն իրականութիւնը որ եթէ քէնն ու ոխը մարդը ֆիզիքապէս չեն սպաններ՝ կրնան բարոյապէս եւ հոգեւին ընկճել մեզ, մեր եղբայրը, մեր երբեմնի ընկերն ու բարեկամը: Ու ատոր համար ալ Յիսուս ըսաւ, «Երբ զո՞հ կը մատուցանես եւ յանկարծ յիշես թէ գժտուած ես մէկու մը հետ, ձգէ՛ նուէրդ խորանին վրայ, ու գնա՛ նախ հաշտուէ՛ այն անձին հետ որ գժտուած ես, ապա դարձիր ու նուէրդ մատուցէ որ ընդունելի ըլլայ»:

Ոխը, ատելութիւնն ու բարկութիւնը ամենածանր բեռն է որ մարդ կրնայ տանիլ: Ան կրնայ թունաւորել մեր հոգիներն ու պղտորել մեր մտքի պայծառատեսութիւնը: Մենք բոլորս ունինք մտահոգութիւններու ամբողջ բեռ մը, ուրեմն ինչո՞ւ աւելի ծանրաբեռնել մեր սիրտերն ու միտքերը: Եթէ կան անձեր որոնք կ'ուզեն մեզ ատել՝ այդ իրենց բացարձակ իրաւունքն է, բայց մենք պէտք է սորվինք չատել՝ քանի ատելութիւնը կ'առաջնորդէ ինքնափճացումի: Սաղմոսերգու թագաւորը՝ Դաւիթ, իր անձնական փորձառութենէն առաջնորդուած կը թելադրէ իր հպատակներուն, «Բարկանայք եւ մի՛ մեղանչէք. զոր ինչ ասէք ի սիրտս ձեր, յանկողինս ձեր զղջացարուք»:

Բ. եւ Գ. կէտերը կը շօշափեն ամուսնալուծման եւ շնութեան հարցերը, որոնք կ'երեւի այդ օրերուն տարածուած եւ ընդունուած երեւոյթ էին: Հոս դարձեալ, մեր Տէրը մատը կը դնէ կոտտացող վէրքին վրայ երբ «Մի՛ շնար»-ին փոխարէն, նոյնիսկ «Ցանկութեամբ» նայիլը ոեւէ կնոջ հաւասար կը նկատէ շնալու մեղքին, ինչպէս

նաեւ ծանրօրէն կը պախարակէր անոնք՝ որոնք ոչինչ պատճառներով իրենց կրներուն ամուսնալուծում կու տային: Այս օրերուն մանաւանդ այս երկրին մէջ, ամուսնալուծումները դարձած են սովորական երեւոյթ, -չըսելու համար նորոյթ-երբ զոյգեր հազիւ թէ իրար անուն սորված կը պատրաստուին ամուսնալուծման: Նկատուած է որ այն տուններուն մէջ՝ ուր կը տիրէ Աստուծոյ վախն ու Քրիստոսի եւ անոր եկեղեցւոյ սէրը՝ ամուսնալուծումները այդ տուններէն մնացած են հեռու: Եկեղեցին ու Կիրակնօրեայ դպրոցը այդ բացն է որ կը գոցեն այս օրերուն Ամերիկայի մէջ, ուր հանրային դպրոցներէ ներս կրօնական դաստիարակութիւնը կը պակսի:

Կատարելութեան հասնելու Դ. պայմանը Քրիստոս կը նկատէ բոլորովին երգում չընելը, փոխանակ «Երդմնագանց մի՛ ըլլար»-ին: Ներկայիս Աստուծոյ եւ կամ Ս. Երրորդութեան անունները այնքա՛ն յաճախակի եւ անգիտակցաբար մեր լեզուին վրայ են որ կարծէք մեր սովորական խօսակցութեան մաս կը կազմեն. ինչպէս Ամերիկացի նշանաւոր կատակերգակ՝ Պիլ Քազպի կ'ըսէ, «մինչեւ դպրոց երթալ սկսիլս կը կարծէի թէ անունս Յիսուս Քրիստոս է, քանի երբ հայրս բարկանար, անունս կը մոռնար եւ երբ ինծի կանչել ուզէր, կը պոռար. 'Jesus Christ' հոս եկո՛ւր»:

Մովսիսականութեան եւ քրիստոնէութեան գլխաւոր տարբերութիւններէն մէկն է «Ակն ընդ ական եւ ատամն ընդ ատաման», եւ կամ «Սիրէ՛ ընկերդ եւ ատէ՛ թշնամիդ» պատուիրանը զոր Մովսէս տուած էր Հրեաներուն: Քրիստոս, ամբողջ տիեզերքը պարփակող իր անհուն սիրով, կատարելագործեց այս Ե. եւ Զ. կէտերը ու թելադրեց իր ունկնդիրներուն ըսելով «Բարեան յաղթեա՛ չարին», թէ անոնք ոչինչ պիտի շահէին եթէ հակառակ երթային չարիք գործել ուզողներուն եւ թէ մենք անպայման տառացիօրէն պէտք չէ առնենք իր այն խօսքը որ կ'ըսէր, «Եթէ մէկը ձեզի ապտակ մը զարնէ, դարձո՛ւր միւս այտդ». եւ թէ ըսել ուզուածը այդ չէր. մարդիկ մեզի յաճախ կրնան վիրաւորել սուտ եւ վատ խօսքերով, հայհոյանքներով, զրպարտութիւններով, բամբասանքներով եւայլն. ի՞նչ պիտի ըլլար եթէ մենք ձանձրոյթը առնէինք այդ բոլորին պատասխանելու նոյն ձեւով... նախ խնդիրները աւելի բարդացուցած կ'ըլլայինք, յետոյ, վիրաւորանքը չվերադարձնելով՝ մենք աւելի հաւանական է որ կտրենք չարին կամակորութիւնն ու շահինք անոր յարգանքը: Նախնական եկեղեցւոյ նահատակները հաւատարիմ կերպով պահեցին այս պատուիրանը, ու համաշխարհային պատմութիւնը կը փաստէ թէ այդ հին քրիստոնեաներու ներողամտութեան ոգին եւ սէրն էր որ յաջողեցաւ կործանել Հռոմէական անծայրածիր կայսրութիւնը:

Մովսիսական կրօնքը կը թելադրէր իր հետեւորդներուն «Սիրել իրենց ընկերը եւ ատել թշնամիները», սակայն Յիսուս եկաւ յեղաշրջելու այդ հին ու միաժամանակ ատելութիւն բուրոզ սովորութիւնը, քանի բնական եւ դիւրին բան էր, «Սիրել ընկերը եւ ատել իր թշնամին». Քրիստոս եկաւ կատարելագործելու այդ ու ըսաւ թէ, «Հոգիի մեծութիւնը թշնամին սիրելուն մէջ էր»: Ան իր կեանքով ու մահով օրինակ հանդիսացաւ մեզի, երբ խաչին վրայէն ներեց անոնց՝ որոնք զինք կը ծաղրէին ու մահուան կը դատապարտէին: Մենք տուեալ եկեղեցիի մը անդամակցելով քրիստոնեայ չենք ըլլար. մենք միայն մեր ապրելակերպով, վարքով ու բարքով է որ կրնանք ապացուցել թէ մենք իրաւ հետեւորդներն ենք Քրիստոսի, ատկէ դուրս ոչինչ պիտի կրնայ օգնել մեզի:

Մեր Տէրը պատուիրեց իր հետեւորդներուն ըլլալ «Կատարեալ իրենց երկնաւոր Հօր նման», բան մը որ շատերուն ո՛չ միայն անհաւատալի կը թուի, այլ նաեւ ծիծաղելի. քանի անոնք կ'ըսեն, «Ինչպէ՞ս կրնանք նմանիլ մէկու մը զոր չենք տեսած...»: Եթէ մենք մանանեխի հատիկին չափ անգամ հաւատք ունինք, ուրեմն ոչ մէկ բան անկարելի կրնայ ըլլալ. յետոյ, Քրիստոս լաւ գիտէր թէ մենք բնաւ անմեղ պիտի չըլլանք, սակայն

ան կ'ուզէր ըսել որ հաւատացեալը կրնար հասնիլ կատարելութեան այդ բարձր աստիճանաչափին՝ եթէ միայն փորձէր ձգտիլ հոգեւոր եւ բարոյական հասունութեան:

Յիսնակի Պահոց այս շրջանը հաւատացեալը կը հրաւիրէ լրջօրէն խորհրդածելու այս բնաբանին շուրջ, «Եղերուք կատարեալք որպէս եւ Երկնաւոր Հայրն ձեր կատարեալ է», որպէսզի այդ կատարելութեամբ դիմաւորենք Ծնունդը Աստուածորդուն, մարդկութեան տրուած մեծագոյն պարգեւը: Կատարեալ մարդը կ'ապրի Աստուծոյ կամքին համաձայն եւ մէկ բան կրնայ փճացնել իր նկարագիրը, որովհետեւ ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ, «Կատարեալ մարդը պէտք է ըլլայ Աստուծոյ տաճարն ու բնակարանը»: Երբ մենք կատարեալ ենք՝ այն ատեն միայն կ'ըլլանք Աստուածաման, եւ այս շնշանակէր որ մենք մեր հինգ զգայարանքները պիտի գործածենք տեսնելու աշխարհիկ ճշմարտութիւնները միայն, այլ միաժամանակ պարտինք օգտագործել մեր հոգեկան կարողութիւնները, որպէսզի հոգեպէս հասունցած, լաւագոյնս ապրինք նախ՝ իբրեւ Աստուածահաճոյ անձեր ապա իբրեւ իրա՛ւ հետեւորդները մեր Փրկչին՝ Յիսուս Քրիստոսի:

Ն.Ա.Մ.

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Նոր Տարուան իրա՛ւ իմաստը այն չէ որ մենք ունենանք նոր տարի մը, այլ աւելի որ մենք ունենանք նոր հոգի, նոր ողնայար, նոր աչքեր եւ նոր ականջներ:

Ահա, հին տարին անցնող 12 ամիսներու ծանր բեռան տակ սկսած է քայքայուիլ, մինչ անդին գալիք տարին դուրս կու գայ իր պատեանէն:

Ահա կը բանանք գիրք մը, որուն էջերը պարապ են: Մենք է որ բառերը պիտի շարենք հոն: Գիրքը կը կոչուի «Առիթներ» եւ անոր առաջին գլուխը Նոր Տարուան օրն է:

Ուզենք կամ չուզենք Ամանորը մեզի կը բերէ նոր մարտահրաւէրներ, անոնցմէ օգտուինք կամ ոչ, ան անպայման կը բերէ նոր պատեհութիւններ:

Նման տարիքին, Նոր Տարին եւս լոկ թիւ մըն է:

Երիտասարդութեանս սորվեցայ թէ ամէն ինչ երկու կողմեր ունէր, եւ որոշեցի թէ ես միշտ պայծառ կողմը պիտի տեսնէի, թէ կարողութեանս չափով մօտ պիտի ըլլայի Աստուծոյ, եւ իր տեսանկիւնէն նայէի իրերուն: Որքան կը նայիմ աշխարհին այդքան աւելի կը համոզուիմ թէ բաւականին լոյս կայ ամենուր մեր ճամբուն վրայ: Ի վերջոյ առողջ եւ բարօր մնալու ճշգրիտ եւ միակ ճամբան մեր հոգիի լոյսն է:

Հին Տարուան վարդը ահա կը թառամի, մինչ անդին նոր կողմեր կը սկսի ծաղկիլ:

Միակ որոշում մը առած եմ զոր կը փորձեմ պահել, այդ ալ մանր հաշիւներէ վեր մնալն է:

ԿՐՕՆԱԿԱՆ

ՍԻՐԵՅԷՔ ԶԹՇՆԱՄԻՍ ԶԵՐ

Աստուածորդույն «Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր» պատուիրանը շատ մը քրիստոնեաներու համար եղած է գայթակղութեան քար: Ինչո՞ւ պէտք է սիրել մեր թշնամիները, պարզապէս որովհետեւ Քրիստոս ի՞նք ըսաւ, եւ կամ արդեօք բարոյական օրէնք ըսուածին անբաժան մէկ մասնիկը կը կազմէ, որ կու գայ զօրացնելու մեր Տիրոջ ուսուցումը եւ մեզ մղելու, որ պայքարինք մեր «միւս ես-ին» հետ: Սիրել մեր թշնամիները քիչ մը անտրամաբանական կը թուի մեզի, որովհետեւ ան կը հակասէ մեր մարդկային բնութեան:

Սակայն ինչ պիտի ըլլայ հետեւանքը եթէ մենք մեր թշնամիները վերածէինք ուսուցիչներու, թերեւս ատիկա հաւանականութիւն մը ստեղծէր, սկիզբ մը ըլլալու զիրենք սիրելու: Սովորաբար անոնք որոնք ազնիւ են ու դրական մեր հետ, կամ միշտ մեր կողքին ու մեր հետ, կը խորհինք թէ մենք որոշ բաներ կը սորվինք իրենցմէ: Ուրեմն ինչո՞ւ առիթներ չենք տար մենք մեզի սորվելու բաներ անոնցմէ՝ որոնք հակառակ են մեզի. կ'արհամարհեն ու կ'անտեսեն մեզ: Միայն գաղափարը թէ մենք կրնանք շատ բաներ սորվիլ մեր հակառակորդներէն, մեզ անարգողներէն, ատողներէն եւ բամբասողներէն, մեր հոգեկանին վրայ կրնայ դրական յատկութիւններ աւելցնել: Որովհետեւ յաճախ կեանքի լաւագոյն բաները մեր մէջ ի յայտ կու գան թշնամիին ներկայութեան եւ մեծագոյն դասը կը սորվինք անոնցմէ՝ որոնք մեզի կը հակառակին: Այսպէսով մենք մեր թշնամիները կրնանք հաւանական «դաշնակիցներու» վերածել: Մենք կրնանք չսիրել մեր թշնամիները, բայց առնուազն կրնանք զիրենք օգտագործել բարի նպատակներու համար:

Առաջին դասը որ կրնանք սորվիլ մեր հակառակորդներէն եւ նոյնիսկ մեզ ատողներէն եւ մեզ վատաբանողներէն, անդրադարձն է մե՛ր իսկ տկարութիւններուն եւ փորձենք սրբագրել զանոնք: Բնական է, որ երբ մեր թշնամիները անդրադառնան մեր խոցելի կողմերուն, պիտի փորձեն հարուածել մեզ: Անշուշտ մենք միշտ կը փորձենք ծածկել մեր թերութիւններն ու սխալները, նոյնիսկ մենք մեզմէ, մեր ներքին ես-ին համար: Եւ երբեմն հակառակորդի մը խորամանկ խօսք-դաշտոյնի հարուածը կրնայ աւելի բան ըսել մեր տկար կողմերուն համար քան որեւէ ինքնաքննութիւն կամ ինքնադատութիւն: Թերեւս հակառակորդի այդ հարուածը վիրաւորէ մեր զգացումները, սակայն որոշ արժանապատուութեամբ լռելեայն պէտք է ընդունինք, որ հարուածը ուղղուած էր ճիշդ տեղին: Բան մը որ ժամանակի ընթացքին մեզ աւելի կը զօրացնէ եւ լռելեայն ատող երախտագիտական զգացում մը ունենանք մեր թշնամիին նկատմամբ: Ու այս մէկը կրօնքին ճիշդ սորվեցնել ուզածն է, որովհետեւ եթէ մէկը կրնայ բան մը սորվիլ իր թշնամիներէն, այդ ցոյց կու տայ իր ներքին հաւատքին ոյժը ի՛ր անձին, իր դրացիին եւ ընդհանուր առմամբ տիեզերքի եւ բնութեան նկատմամբ: Ահա ա՛յս է Քրիստոսի ուսուցած կեանքի նուիրական օրէնքը, որովհետեւ առաջին հերթին ինք դրական էր, ստեղծողը եւ յաջող ամէն ինչի մէջ, որմէ մղուած Պօղոս Առաքեալ պիտի ըսէր. «Մի՛ յաղթիր ի չարէն, այլ բարեաւն յաղթեա՛ չարին»:

Երկրորդ մեծ դասը որ կրնանք սորվիլ մեր հակառակորդէն, այդ ալ մեր մէջ գտնուող ոյժի անսպառ աղբիւրներն են, ո՛չ միայն ինքնապաշտպանութեան, այլ

նաեւ ամեցնելու մեր ներքին դրական ոյժերը, որոնք իրականութեան մէջ կու գան տալու մեր նկարագրի զօրութիւնը: Սուրբ Գրքի, մանաւանդ Նոր Կտակարանի էջերը կը պարզեն այս սկզբունքը: Եթէ կարդանք Գործք Առաքելոցը, այս մօտեցումը ունենալով մեր մտքին մէջ, հոն պիտի տեսնենք թէ ինչպէս Հեթանոսաց Առաքեալը՝ Պօղոս, պիտի հաստատէր իր հոգեկան վեհութիւնը, իր թշնամիներու իւրաքանչիւր յարձակումին պարագային: Մեզմէ ոմանք կը խորհին թէ կրօնքն ու հաւատքը եղած են մարդկային կեանքի ընթացքը դարձնելու աւելի հեզասահ եւ հաճելի. սորվեցնելով մեզի ինչպէս խուսափիլ յուսախաբութիւններէ եւ դժբախտութիւններէ, որոնք երբեմն կը հարուածեն մարդկութիւնը, որովհետեւ շատերու համար կրօնքը ուրիշ բան չէ, եթէ ոչ թմրեցուցիչ կամ ցաւազրկիչ մը, մեզ տանող երանութեան, եւ այս մօտեցումը բոլորովին սխալ է եւ խտտելի:

Իրականութեան մէջ կրօնքը գործիք մը կամ մեքենայ մը չէ, որ մեզ կարենայ հեռու պահիլ խնդիրներէ, այլ աւելի հրաւէր մըն է, որ մեզ կը դնէ ծանր պարտականութեան մը առաջ: Կրօնքը, ինչպէս ոմանք կ'ուզեն մեկնաբանել, այսպէս ըսած «կտրուկ ճամբայ» մը չէ, խուսափելու ծանր խնդիրներէ եւ լուրջ դժուարութիւններէ, այլ ան՝ աւելի կոշ մըն է որ մենք գործածենք մեր ուղեղն ու բոլոր ոյժերը հարթելու կեանքի մեր դէմ յառաջացուցած դժուարութիւնները, բոլոր անոնց համար, որոնք օր մը պիտի յաջորդեն մեզի: Այս մէկը չըմբռնել՝ անկասկած ապրիլ է երազային եւ անիրական աշխարհի մը մէջ, ուր մեծ հաւանականութիւնը կ'ունենանք զրկուելու կեանքի իրա՛ւ հաճոյքներէն:

Ասոնք, ինչպէս նաեւ այլ բաներ մենք կրնանք սորվիլ մեր թշնամիներէն, անշուշտ եթէ տրամադիր ենք: Եւ երբ սկսինք սորվիլ, պիտի տեսնենք որ մեր որդեգրած կեցուածքը մեր հակառակորդին նկատմամբ, փոխան ատելութեան կը սկսի տակաւ վերածուիլ յարգանքի նմանող բանի մը: Ապա յանկարծ մենք զմեզ պիտի գտնենք ոչ շատ հեռու այն կեցուածքէն մեր թշնամիներէն ոմանց նկատմամբ զոր Քրիստոս՝ մեր Տէրը պատուիրեց մեզի զգալ եւ արտայայտուիլ, «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները», եւ այն ատեն միայն պիտի հասկնանք թէ կեանքի լաւագոյն «նուէրները» կրնանք գտնել մեր թշնամիներու ներկայութեան:

Ն.Ա.Մ.



ԿՐՕՆԱԿԱՆ

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՅԻՍՈՒՍԻ ԿԵՐՊԱՐԸ ՍՈՒՐԲ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ԱԻԵՏԱՐԱՆՈՒՄ

ՉՈՐՐՈՐԴ ԱԻԵՏԱՐԱՆԻ ԿԱՌՈՒՅՈՒԱԾՔԸ ԵՒ ՀԱՐՅԵՐ՝ ԿԱՊՈՒԱԾ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ ՔՐԻՍՏՈՍԱՐԱՆՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Ասում է, թէ չորրորդ աւետարանը նման է մի առուակի, ուր մանուկներ կարող են ծանծաղուտով անցնել եւ փղեր լողանալ: Բազմաթիւ ընթերցողների համար, այս աւետարանի հիմնական թեմաները շատ պարզ են ու յստակ, եւ աւետարանի՝ Յիսուսի պատմութեան մատուցումը, դրամատիկ է եւ գերող: Աւետարանի առաջին մասի գերակշռող նիւթը Յիսուսի ունեցած երկխօսութիւններն են մի շարք անձնաւորութիւնների հետ, որոնց չենք հանդիպում միւս աւետարաններում: Նիկողիմոս «էր այր մի ի փարիսեցւայ, իշխան հրէից, սա եկն առ նա գիշերի» (Գլ. Գ), Սամարացի կինը Սիւքար քաղաքի շրջորի մօտ, որ «հինգ այր փոխեալ է» (Գլ. Դ), այսինքն՝ հինգ ամուսիններ էր փոխել եւ մարդը, ով Յ8 տարի պառկել էր մի աւազանի մօտ «որ կոչէր երայեցերէն բեթհեզա, այսինքն հինգ սրահ» (Գլ. Ե), եւ մարդը, որ ծնուել էր կոյր եւ որի տեսողութիւնը Յիսուսը վերականգնում է, եւ որը, հակառակ բոլոր փարիսեցիների կողմից կատարուած սպառնալիքներին, հաստատում է իր հաւատարմութիւնն ասելով՝ «հաւատամ, Տէր, եւ երկիր եպագ նմա» (Գլ. Թ):

Աւետարանը լի է գրաւիչ ու դրամատիկ պահերով, որոնց նմանը չենք տեսնում միւս աւետարաններում, ինչպէս այս չորս օրինակները պիտի լուսաբանեն: Գալիլիայի Կանա քաղաքում տեղի ունեցող հարսանեաց խնճոյքում, հակառակ մօր հանդէպ ունեցած իր մայրական հպարտութեանը, Յիսուսն իր մօրն ասում է՝ «գի կայ իմ եւ քոյ, կին դու, չէ եւ հասեալ ժամանակ իմ» (Գլ. 2:4): Ղազարոսի գերեզմանի մօտ Յիսուս «արտասուեաց» (Գլ. 11:35): Վերջին Ընթրիքի պահին Յիսուս լուանում է իր աշակերտների ոտքերը եւ յետոյ ասում. «գի որպէս ես ձեզ արարի, եւ դոմ առնիքիք» (Գլ. 13:1-20): Յիսուսի խաչելութեանը ներկայ են իր մայրը «եւ զաշակերտն զոր սիրէր» (Գլ. 19:26): Յիսուս ասում է իր մօրը. «ահա որդի քո» եւ յետոյ դառնում է իր աշակերտին եւ ասում. «ահա մայր քո» (Գլ. 19:27), եւ աւետարանիչն աւելացնում է. «եւ յայնմ ժամանակ է առ աշակերտն զնա առ իւր» (Գլ. 19:27): Նման մանրամասնութիւններ չենք գտնում Համատես աւետարաններում: Յովհաննէսի աւետարանում փաստարկումների շարքեր գոյութիւն չունեն. այնտեղ տիրում է միայն մի զգայուն սրտի հայեցողութիւն:

Յիսուսի բազմաթիւ ասացուածքներից, որոնք առկայ են միայն Յովհաննէսի աւետարանում, Նոր Կտակարանի ամենածանօթ եւ ամենասիրուած հատուածներն են եւ ունեն շատ սիրուած բանաստեղծական կտորների ոյժ. «Ձի այնպէս սիրեաց Աստուած զաշխարհ, մինչեւ զՈրդին իր միածին եւ. զի ամենայն ուր հաւատայ ի նա՝ մի կորիցէ, այլ ընկալցի զկեանսն յափառնականս» (3:16): «Եւ ծանիցիք զնշմարտութիւնն, եւ նշմարտութիւնն ազատեցէ զձեզ (8:32): «Ես եմ ճանապարհ եւ նշմարտութիւն եւ կեանք» (Գլ. 14:6): Աւետարանիչն անմրցելի հմտութեամբ կենտրոնանում եւ զարգացնում է

շատ փոքր թուով թեմաներ: Իր աստուածաբանական հիմնական մտքերը կրկնում եւ մեկնում է մէկից աւելի տեսանկիւններից: Յովհաննէսի համար ասում է, թէ հեղինակն ինքն իր աւետարանի ամենահմուտ մեկնիչն է: Եթէ ընթերցողն ուշադրութեամբ կարդայ այս աւետարանը, պիտի նկատի հատուածներ, որոնք առաջին ընթերցումից թուում են անհասկանալի, հետագային պարզւում են աւետարանչի կողմից:

Աւետարանը գնահատում է անվարժ ընթերցողների կողմից, բայց նաեւ մրտազբաղեցնում է նրանց, որոնք հմուտ են հին աշխարհի փիլիսոփայական եւ կրօնական մտածելակերպերին: Մակերեսային պարզութեան յետին կայ նաեւ խորութիւն: Աւետարանիչն օգտւում է երկու աշխարհայեացքներից, որոնք մասամբ իրար են համընկել առաջին դարում: Դրանք են հելլէնիստական եւ հրէական (Հին Կտակարան) աշխարհայեցութիւնները: Ինչպէս կը տեսնենք հետագային, Յովհաննէսի պատկերացումը Յիսուսի՝ որպէս «քանն», լաւագոյնս է ներկայացնում այս երկու աշխարհների մերձեցման հանգամանքը:

Սրանից 50 տարի առաջ, բանասիրութեան մէջ ընդունելի էր դարձել Յովհաննէսի աւետարանն աւելի հաստատապէս առնչել յունական, քան հրէական կրօնական մտածելակերպի հետ: Բայց 1947 թ. Մեռեալ ծովի պատառիկների յայտնութիւնից յետոյ, նժարի թեքումն աւելի հրէականի կողմն է: Քումրանի գրութիւններն հաստատում են, որ Յովհաննէսի աւետարանն արտացոլում է մի շարք հոսանքներ, որոնք առկայ էին առաջին դարի հրէականութեան մէջ: Յովհաննէսի աւետարանը ոչ միայն լիովին հրէական, այլ նաեւ բացարձակօրէն հակահրէական է: Յիսուսի հակառակորդները հետեւողականօրէն եւ անվերապահօրէն բնութագրւում են ծագումով որպէս «հրեայ»-ներ: Իր՝ նրանց հետ բանավէճի մէջ, Յիսուս յաճախ չափազանց ընդդիմախօս է երեւում եւ նոյնիսկ վիճարկող: Յովհաննէսի աւետարանում, Յիսուսի եւ իր հակառակորդների միջեւ բանակռիւր ընդգծուած է աւելի, քան Մատթէոսի աւետարանում (Մատթ. աւետարանը գրուած է հրեայ ընթերցողների համար): Մի օրինակը բաւական է այս հաստատելու համար: Քիչ առաջ մենք վկայակոչեցինք Յիսուսի այս խօսքերը. «Եւ ծանիջի՛ք զնշմարտութիւնն, եւ նշմարտութիւնն ազատեսցի զձեզ» (Գլ. 8:32): Բայց այս ասացուածքն իր սկզբնական կոնտեքստում ասացուածք չէր, ինչպէս յաճախ ենք ենթադրում: Այս ասացուածքին առաջին անգամ հանդիպում ենք Յիսուսի եւ «հրեաների» միջեւ կայացած մի ընդարձակ ու անընդունելի վէճի մէջ, որի վերջաւորութեան մէջ կան մի շարք անվայել անուանակոչումներ: Յիսուս ասում է. «ընդէ՛ր չխօսիմ ոչ գիտէ՛ դու. վասն զի ոչ կարէ՛ լսել զքանն իմ. դու՛ք ի հօրէ ի սատանայէ Էֆ, եւ զցանկութիւնս հօրն ձերոյ կամի՛ք առնել. զի մա մարդասպան է՛ր ի սկզբանէ, եւ ի նշմարտութեան ոչ եկաց...» (8:43-44): Հրեաներն առարկում են. «ո՛չ բարո՛ւք ասեմք մեք եթէ Սամարացի ես դու, եւ դեւ գոյ ի քեզ» (Սամարացի ցեղն անարգուած էր հրեաների կողմից) (Գլ. 8:48): Անընկալ եւ վիրաւորուած այն բոլորից, որ իրենք նկատում են գրգռիչ եւ հայհոյիչ, հրեաները քարեր են վերցնում Յիսուսին քարկոծելու համար: Յովհաննէս աւետարանիչն հաղորդում է. «Յիսուս խոյս ետ եւ ել գնաց ի տանարի անդի» (Գլ. 8:5 ա): Ինչո՞ւ Յիսուս եւ հրեաները նման հայհոյիչ եւ վիրաւորական խօսքեր են փոխանակում: Այս հարցն իր պատասխանը կստանայ քիչ յետոյ: Նախ մի քանի խօսք կնճռոտ մի հարցի մասին, թէ ինչո՞ւ է այս աւետարանն իր մի շարք գրական յատկանիշներով նման եւ միաժամանակ շատ տարբեր Մատթէոսի, Մարկոսի եւ Լուկասի աւետարաններից:

Յովհաննէս եւ Համատես աւետարանները

Մարկոսի աւետարանում Յիսուսն սկսում է իր առաքելութիւնը Գալիլիայում: Նա Երուսաղէմում ոտք չի դնում մինչեւ Գլ. 11:1 համարը (Ծաղկազարդ, Աւագ Շաբաթ,

Զատիկ), ուր ժամանելուց մէկ շաբաթ յետոյ մահանում է: Մատթէոսի եւ Ղուկասի ընդհանուր շարադրանքը համանման է Մարկոսի կառուցուածքին, իսկ Յովհաննէսի աւետարանում, Յիսուսն սկսում է իր առաքելութիւնը Հրէաստանում եւ Երուսաղէմում, եւ աւելի ժամանակ է անցկացնում այս երկու տեղերում, քան Գալիլիայում: Յիսուսն առնուազն երեք անգամ այցելում է Երուսաղէմ (Գլ. 2:13; 5:1; 7:10) եւ իր այս առաքելութիւնը տեւում է երկու կամ երեք տարի: Համատես աւետարանները պարունակում են Յիսուսի ուսուցումների եւ արածների մասին հակիրճ աւանդոյթներ, որոնք իրար են շաղկապուած շատ թոյլ կերպով: Նոյնիսկ երկար շարադրանքների դէպքում, ինչպէս Մատթէոսի «Լեռան քարոզի» պարագան, ներկայացման եղանակը կախուած է մի շարք կարճ ասացուածքներից: Մարկոս աւետարանչի «Լեռան քարոզ»-ը բաղկացած է մի շարք տարրերից, որն հեշտութեամբ կարելի է տարանջատել: Սա-կայն Յովհաննէսի աւետարանում, այս նոյն դրուագի շարադրանքը նմանում է ոչ կնճռոտ մի գործուածքի: Թէ՛ մտածողութիւնը եւ թէ՛ կառուցուածքը շատ աւելի կուռ է, քան Համատես աւետարանների: Յովհաննէսը ներկայացնում է մի շարք ընդարձակուած դատողութիւններ այն արդիւնքով, որ իր ներկայացրածը աւելի նըմանում է գիտական մի թէզի, քան «պատմութեան»: Աւետարանի երկրորդ մասը պարունակում է քննախօսութիւններ, որ Յիսուսը վարել էր իր աշակերտների հետ՝ ամփոփուած 13-17 գլուխներում: Աւետարանի առաջին մասում կան տեսարանների մի երկար շարք, որոնք ունեն համանման կառուցուածք: Մի դէպք (յաճախ մի հրաշք) տեղի է տալիս մի երկխօսութեան՝ մի անհատի կամ մի խումբ հակառակորդների հետ, որին յաջորդում է մի երկարաշունչ մենախօսութիւն: Էականօրէն նոյն գրական կառուցուածքը կարելի է նշմարել Նիկողիմոսի (3:1-36), Սամարացու կնոջ (4:1-42), Բեթհեզդա սրահի հիւանդի (5:1-47), հինգ հազարի կերակրումը (6:1-71), Յիսուսի տաղաւարահարաց տօնին (7:1-8:59) եւ ի ծնէ կոյր մարդը (9:1-41) պատումներում: Բազմաթիւ բառեր եւ արտայայտութիւններ, որ աչքի են ընկնում Համատես աւետարաններում, հազուադիւս դէպքերում են կիրառուում Յովհաննէսի աւետարանում: Համատես աւետարաններում Յիսուսի յայտարարութիւնը Աստծոյ արքայութեան մասին, իր ուսուցման հիմնական առանցքն է կազմում, իսկ Յովհաննէսի աւետարանում «առփայլութիւն» բառը միայն գործածուած է երկու անգամ՝ 3:3, 5, 18:36, 38 համարներում: Ոյժ (դունամիս) բառը Մարկոս աւետարանիչը կիրառում է 10 անգամ, Մատթէոսը՝ 13, եւ Ղուկասը 15 անգամ, իսկ Յովհաննէսը՝ երբեք: «Մաքսաւորս» անուանումին Համատես աւետարաններում հանդիպում ենք 21 անգամ, իսկ Յովհաննէսի աւետարանում՝ երբեք: Սրանք միայն մի քանի օրինակներ են բազմաթիւ պարագաներից: Իսկ դրան հակառակ, Յովհաննէսի աւետարանի ամենասիրուած եւ յաճախ գործածուած բառապաշարից, Համատես աւետարաններում շատ բառեր են բացակայում. օրինակ՝ «վեանֆ», «լոյս», «աշխարհ», «հրեայք», «վկայել» եւ «սէր» (որպէս բայ եւ գոյական), որոնք յաճախ են կիրառուում Յովհաննէսի, բայց հազուադիւս դէպքում միայն՝ միւս աւետարանիչների կողմից: Յովհաննէս աւետարանչի բառապաշարը շատ աւելի սահմանափակ է, քան Մարկոսին: Յովհաննէսի յունարէն ոճը պարզ է, բայց ոչ անուայելուչ: Յովհաննէսի մօտ, մի քանի հրաշքային պատումներ շատ չեն տարբերուում Համատես աւետարանների պատումներից (օրինակ՝ 4:46-54, 5:1-9, 9:1-7). դիւահալածութեան դէպքեր ամենեւին չկան: Համատես աւետարաններում Յիսուսի առականները գերակշռում են: Յովհաննէսի աւետարանում, թէեւ առականին ասացուածքները թուով քիչ չեն, բայց առականեր բացարձակապէս չկան: Ընդարձակուած այլաբանութիւնները՝ «ի գալիթ ոչխարացն» (10:1-18) եւ «Որքն ճշմարիտ» (15:1-11), կարելի է համարել որպէս բացառութիւններ: Համատես աւետարաններում, Յիսուսը բացայայտօրէն հազուադէպ է շեշտում իր կարեւորութիւնը: Իր ուսուցմունքի սեւեռակէտն է Աստուած: Յովհաննէսի համար Յիսուսը մշտապէս որոշակիօրէն է արտայայտուում իր արժանիքների մասին: «Ես եմ»

ասացուածքները, որոնք կրկնորդները չունեն Համատես աւետարաններում, աներկ-բայօրէն պատկերւում են այս անմոռանալի ասացուածքներով. «Ես եմ հացն կենաց» (6:35), «Ես եմ լոյսն աշխարհի» (8:12), «Ես եմ դուռն» (10:9), «Ես եմ հովիւն փաշ [բարի]» (10:11), «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք» (11:25), «Ես եմ նանապարհն եւ նշարտութիւն եւ կեանք» (14:6), «Ես եմ որքն նշարիտ» (15:1): Զորս այլ հատուածներում՝ «Ես եմ» արտայայտութիւնը կիրառւում է առանց ստորոգեալի (Գլ. 8:24; 8:28; 8:58; 13:19. Հմմտ. նաեւ Գլ. 18:5):

Յովհաննէսը Յիսուսի խօսելակերպը նմանեցնում է Աստծոյ՝ Հին Կտակարանի բազմաթիւ արտայայտչաձեւի խօսելակերպին: Մասնաւորապէս յատկանշական է «Ես եմ Յահւեն» [«Որ էն»] (Ելք 3:14): Այստեղ Աստուած իրեն յայտնում է որպէս «Ես եմ» (հմմտ. Եսայի 41:4), հետեւաբար, զարմանալի չէ, երբ Յիսուսն ասում է. «Յառաջ քան զլինելն Աբրահամու եւ ես», հրեաների կողմից այն ընդունւում է որպէս հայհոյանք՝ արժանի մահուան՝ քարկոծմամբ (8:58-59):

Համատես աւետարաններում եւ Յովհաննէս աւետարանչի մօտ, Յիսուսի դիմանկարները վճռականօրէն տարբերւում են իրարից: Համատես աւետարաններում Յիսուսի «փառք»-ին՝ պայծառակերպութեան դրուագի մէջ (Մարկ. 9:18 եւ զուգահեռներ), ականատես են լինում Պետրոս, Յակոբոս եւ Յովհաննէս առաքեալները, սակայն, նոյնիսկ այն ժամանակ, նրանք չեն նկատում յայտնաբերման կարեւորութիւնը: Յովհաննէս աւետարանչի մօտ Յիսուսի «փառք»-ը բացայայտօրէն յայտնւում է Կանայի հարսանիքում՝ հէնց իր իսկ առաքելութեան սկզբում: Սա առաջին «նշանն» է, որ Յիսուս կատարում է, եւ աւետարանիչն իր եզրափակիչ նկատողութեան մէջ նշում է, որ հրաշքի արդիւնքն այն էր, որ «եւ հաւատացին ի նա աշակերտքն Նորա» (2:11): Որպէս յաւելեալ մի օրինակ, այս դրուագը կարելի է համեմատել այն դէպքերի հետ, որոնք տեղի ունեցան Յիսուսի ձերբակալութիւնից անմիջապէս առաջ: Մարկոս աւետարանչի վերջին ընթրիքի նկարագրութեան մէջ, Յիսուսն առաքեալների հետ հաստատում է «Վերջին Ընթրիքի» խորհուրդը կամ «Արբազան Պատարագը»: Յիսուսն առաքեալների հետ յետոյ գնում է Գեթսեմանի պարտէզ՝ աղօթելու: Յիսուս «սկսաւ ախրել եւ հոգալ», եւ ասում է՝ «տրտում է անձն իմ մինչեւ ի մահ» եւ յետոյ աղօթում է. «Հայր, ամենայն ինչ քեզ հնարաւոր է, անցն զբաժակս զայս յինչն. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու կամիս» (Մարկ. 14:36-37): Յովհաննէսի մօտ, աշակերտների հետ երկար քննախօսութիւնների շորս գլուխներ են յատկացւում, որոնք տեղադրւում են վերջին ընթրիքի կոնտեքստում (Գլ. 13-17) եւ ոչ մի ականարկութիւն չկայ «Վերջին Ընթրիքի» խորհրդի հաստատման մասին: Զկայ նաեւ որեւէ հաղորդում Յիսուսի Գեթսեմանիի դրուագի մասին, փոխա-րէնը՝ Յիսուսն անդորր վստահութեամբ, վերցնում է նախաձեռնութիւնը եւ սկսում է քայլել դէպի իրեն կալանողները: Երբ նրանք յայտնում են, թէ իրենք Յիսուս Նազովրեցուն են փնտռում, Յիսուս պատասխանում է՝ «Ես եմ»: Այս դարձուածքն առնչւում է «Ես եմ» ասացուածքներին, որոնց արդէն անդրադարձել ենք վերելում: Յիսուսի յայտնութիւնը՝ «Ես եմ», պատճառ է դառնում, որ իրեն կալանելու եկողները «յետս չոգան եւ զարկեան զգետնի» (18:6): Դէպքի աւարտին Յիսուս յանդիմանաբար ասում է Պետրոսին. «զբաժակն զոր ետ ինձ Հայր՝ ո՞չ ըմպիցեմ զնա» (18:11): Յետ այսու Աւագ Շաբաթուայ ողջ դրուագների պատումների մէջ Յիսուս թելադրում է դէպքերի ընթացքը, ուր պակասում է վիշտն ու տխրութիւնը: Համատես աւետարաններում Յիսուս դատւում է, իսկ Յովհաննէսի մօտ իրեն ձերբակալելու եկողներն են, որ դատւում են: Յովհաննէսի մօտ Յիսուս ոչ թէ «մարդն է տրամուպեան», այլ «թագաւորը՝ փառքի»: Նման օրինակների շարքին (դեռ աւելի կարելի է թուարկել), որոնք ցոյց են տալիս տարբերութիւնները Յովհաննէսի աւետարանի եւ Համատես աւետարանների միջեւ, պէտք է նշել նաեւ անսպասելի բազմաթիւ նմանութիւնները: Յովհաննէսի եւ Մարկոսի աւետարաններում կան մօտ տասն հատուածներ, որոնք գնում են նոյն

հետեւողականութեամբ: Մի շարք հատուածներում կայ նաեւ բառապաշարի նմանութիւն՝ յունարէն բնագրով: Օրինակի համար, Մարկոս 14:3-9 եւ Յովհաննէս 12:1-8 պատումները պարունակում են բազմաթիւ տարբերութիւններ, բայց նաեւ մի շարք աչքի ընկնող նմանութիւններ դարձուածաբանութեան մէջ: Մարկոսի 14:3 եւ Յովհաննէսի 12:3 գործածուած իւղը մի շարք թարգմանութիւններում որակւում է որպէս «ազնուի մեծագնոյ» [Pistikos]: Այս ածականն այնքան հազուագիւտ դէպքերում է կիրառւում աւետարաններում, որ իսկական իմաստը չգիտենք: Այս ածականին չենք հանդիպում ոչ մի այլ տեղ Նոր Կտակարանում, բացի, շատ քիչ թուով միայն, յունական հնագոյն գրականութեան մէջ: Այս հազուագիւտ բառի կիրառումն այս երկու համարներում փաստում է, որ սերտ կապ կայ երկու աւետարանների միջեւ: Ինչպիսի՞ կապ: Յովհաննէս աւետարանիչը ծանօթ լինելով Մարկոսի եւ, թէկուզ Ղուկասի աւետարանին, օգտագործում է այն՝ բարեփոխելով ազատօրէն եւ ընդարձակօրէն: Եթէ այդպէս է, ապա ի՞նչ էր Յովհաննէսի նպատակը: «Ճշտել» Մարկոսին եւ Ղուկասին՝ թէ պարզօրէն ցոյց տալ, թէ ինքը ծանօթ է Համատես աւետարաններին եւ օգտւում է նրանցից ժամանակ առ ժամանակ, բայց եւ աւելի յաճախ անտեսում նրանց՝ նախընտրելով զարգացնել իր շարադրանքն իր ուրոյն տեսանկիւնից: Կամ էլ Յովհաննէս աւետարանիչն ամենեւին կախուած չի Համատես աւետարաններից: Եթէ այդպէս է, ապա որտեղի՞ց է նա քաղում այդ աւանդոյթները եւ շաղկապում իրար՝ ստեղծելով համաշափ վկայութիւն: Ինչո՞ւ են որոշ նախա-Յովհաննիսեան աւանդոյթներ նման համատես աւետարանների աւանդոյթներին, իսկ որոշները՝ ոչ: Այս հարցերը դեռ բանասիրութեան վիճելի նիւթ են, բայց համոզիչ պատասխաններ չկան: Մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը, գերիշխում էր այն տեսակէտը, որ Յովհաննէսը ծանօթ էր եւ գործածել էր Մարկոսի աւետարանը, գուցէ նաեւ՝ Ղուկասի: Նմանութիւններն այնքան շատ են, որ նման տեսակէտ նկատւում էր ակնյայտ: 1938 թ., Պ. Գարդներ Սմիթն (P. Gardner Smith) առարկեց այս տեսակէտի դէմ եւ մշակեց այն կարծիքը, որ աւետարանների մէջ եղած գրական նմանութիւնները պէտք է բացատրել այն փաստով, որ բոլորն օգտւում են միեւնոյն, բանաւոր կամ գրաւոր աղբիւրներից: Նա պնդում է, որ Յովհաննէսի աւետարանի եւ Համատես աւետարանների միջեւ տարբերութիւններն այնքան շատ են, շատ հաւանական է, որ Յովհաննէս աւետարանիչը չի օգտագործել Համատես աւետարաններից որեւէ մէկը: Այս տեսութիւնը ներկայումս լայն ընդունելութիւն է ստացել: Աւանդոյթներից մի մասը, որ նշմարելի է Յովհաննէսի որոշ դրուագների շարադրանքների յետին, կան նաեւ Համատես աւետարաններում: Սակայն նրանցից իւրաքանչիւրն այդ նիւթը զարգացրել են անկախաբար եւ իւրաքանչիւրն՝ իր ուրոյն ոճով: Ուրիշ գիտնականներ [դրանցից ամենահռչակաւորը՝ Ս. Կ. Բարրէտը], շարունակում են պաշտպանել այն թէզը, որ Յովհաննէսը գիտէր եւ գործածել էր Մարկոսի եւ, հաւանաբար, նաեւ Ղուկասի աւետարանները: Երկրորդ դարի վերջաւորութեան Կղեմէս Աղեքսանդրացին վկայակոչում է Յովհաննէսին՝ իր աւետարանը կոչելու «Հոգեւոր աւետարան» եւ այդ ժամանակուանից ընդհանրապէս ճանաչուած է որպէս այն աւետարանը, որը ներկայացնում է Յիսուսի խորիմաց աստուածաբանական դիմագիծը: Սակայն իր ազդեցիկ գրքի մէջ՝ «Պատմական աւանդոյթը չորրորդ աւետարանում» (1963), Ս. Հ. Դոդդը ծաւալուն փաստարկներով պաշտպանում է այն տեսակէտը, որ Յովհաննէս աւետարանի մօտ առկայ անկախ աւանդոյթները նոյնքան վաւերական ու վստահելի են, որքան Համատես աւետարանների նիւթերը: Այս տեսակէտը պաշտպանելու համար, Փրոֆ. Դոդդը հանգամանօրէն անդրադառնում է Յովհաննէս աւետարանի պատմագրական որոշակի միտուածութեանը: Այն հին տեսակէտը, որ Համատես աւետարանիչները կարեւորում են պատմականութիւնը, իսկ Յովհաննէսը հետաքրքրւում է միայն դէպքերի աստուածաբանական յատկանիշներով, այլեւ ընդունելի չէ: Չորս

աւետարանիչներն էլ լուրջ նշանակութիւն են տալիս դէպքերի պատմականութեանն ու աստուածաբանութեանը: Չորս աւետարանիչներն էլ շահագրգռուած են ներկայացնելու Յիսուսին որպէս պատմական մի անձնաւորութիւն եւ այն ապացուցել այդ պատմութիւնից քաղուած փաստերով:

Չորրորդ աւետարանի յօրինովի կառուցուածքը բնորոշեցինք որպէս «Թճնուկ թիկնոց»: Շատ տեսանկիւններից այս բնորոշումը տեղին է, բայց, հարկաւ, կան նաեւ բազմաթիւ ոչ ճշգրիտ կապեր: Օրինակի համար, հիմքեր կան պնդելու, որ Յովհաննէսի աւետարանի 21-րդ գլուխը մի ուրիշ հեղինակի կողմից հետագայի յաւելում է: Աւետարանի հիմնական մասը վերջանում է ազդեցիկ 20:30-31 համարներով. «Բազում եւ այլ նշանաւոր քիսուս առաջի աշակերտաց իւրոց, որ ոչ է գրեալ ի գիրս յասմիկ: Այլ այս այնչափ ինչ գրեցաւ, զի հաւատայցէք եթէ Յիսուս Քրիստոս է, Որդի Աստուծոյ եւ զկեանսն յափտեմնական: Ընդունիցիք յամուն Նորա» (20:30-1): Այս փառահեղ վերջաւորութիւնից յետոյ՝ ուղղուած ընթերցողին, շարունակելն աւելորդ էր: 21-րդ գլուխը, որի դէպքերը տեղի են ունենում Գալիլիայում եւ ոչ թէ Երուսաղէմում, (այս է պարագան 20-րդ գլխի), անյարիր է տեղադրուած, եւ աւարտում է 2-րդ համարով, որը դժգոյն նմանումն ունի վերը մէջբերուած հատուածի: Այս համարն անմիջապէս վկայում է, որ այլեւս Յարուցեալ Յիսուսի երեւումներ չեն լինելու: Յիսուս Թովմաս առաքեալին ասում է. «Երանի որոց ոչ իցէ տեսեալ եւ հաւատացեմ» (20:29): Հակառակ այս յայտարարութեան, 21-րդ գլխում մի յաւելեալ երեւում է տեղի ունենում: Բառապաշարի եւ ոճի ուշագիւր վերլուծութիւնը մղում է եզրակացնելու, որ 21-րդ գլուխը չի պատկանում չորրորդ աւետարանի հեղինակին: Ինչու՞ է այս յաւելեալ գլուխը կցուել: Նշենք, որ այս յաւելեալ գլխի վերջին համարները վերաբերում են Պետրոս առաքեալի յարաբերութեան՝ «սիրեցեալ աշակերտի» հետ, որոնք երկուսն էլ մահացել են (21:18-19 եւ 21:23): Այստեղ երկուսն էլ ներկայացուած են որպէս դաւանակիցներ. սա նշանակում է, որ որոշ շրջանակներում Պետրոսի կարեւորութիւնը թերագնահատուած էր, եւ այս յաւելեալ հատուածի նպատակն էր ճշգրէ այդ թիւրիմացութիւնը: Եթէ 21-րդ գլուխը հետագայի խմբագրութեան արդիւնք է, ապա այլ խմբագրական հետքեր էլ կարելի է նշմարել աւետարանի մէջ: Միանգամայն ստոյգ է, որ մի շարք անյարմար խախտումներ կան շարադրանքի մէջ: Վերջին ընթրիքի մէջ, աշակերտների հետ, Յիսուսի երկխոսութիւնը կարծես հասնում է իր աւարտին՝ 14:31 համարով: Աշակերտներին զգուշօրէն պատրաստելուց յետոյ, իր «մեկնումի» համար դէպի Աստուած, Յիսուս յայտարարում է. «Օն արի՛ք գնացու՛մ աստի» (14:31): Բայց ոչ ոք ոչ մի տեղ չի գնում մինչեւ 18:1 համարը: 15-րդ գլխում, Յիսուս շարունակում է լիովին խօսել իր աշակերտների հետ՝ արժարժելով մի նոր նիւթ: 16-րդ գլուխը նոյնպէս յանգում է եզրակացութեան 33 համարով: Գլուխ 17-ում, որտեղ Յիսուս հասցէագրում է Հօրը (աղօթքի մէջ), փոխանակ աշակերտներին, պարունակում է անհաշտելի նիւթ, եւ, հաւանաբար, հետագայի յաւելցուկ է: Սրանով հարկ է նշել, որ նոյնիսկ այսպէս կոչուած «հրաժեշտի երկխօսութիւնները» մի ժամանակ գոյութիւն են ունեցել որպէս երեք առանձին ինքնուրոյն երկխօսութիւններ՝ գլուխ 14, գլուխ 15-16 եւ գլուխ 17:

Կանայի հարսանիքում, Յիսուսի՝ ջուրը գինիի փոխարկելը, աւետարանիչը նկարագրում է որպէս «զայս արար սկիզբն նշանաց Յիսուս» (2:11): Կափառնայում իշխանաւորի սրտի բուժումը համարում էր «զայս դարձեալ երկրորդ նշան արար Յիսուս՝ եկեալ ի Հէւսատանէ ի Գալիլիա» (4:54): Առաջին եւ երկրորդ հրաշքների միջեւ աւետարանիչը մի ծանօթագրութիւն է մտցնում (2:23)՝ այն «զնշանսն զոր առնէր յԵրուսաղէմ»: Առանց վարանելու պիտի ասենք, որ այն հրաշքները, որոնք աւետարանիչն զգուշօրէն թուարկում է «առաջին» եւ «երկրորդ» եւ կապում Գալիլիայի հետ, մի ժամանակ պատկանելիս են եղել մի այլ աղբիւրի: Ռ. Բուլթմանն իր հմուտ մեկնութեան մէջ փորձում է ապացուցել, որ առաջին երկու հրաշքների նիւթերը, հինգ

այլ հազուադէպ պատմութիւնների հետ՝ աւետարանի առաջին կէսի մէջ, մի ժամանակ օրգանապէս իրար էին շաղկապուած՝ որպէս «հրաշքների աղբիւր», որն աւարտուում է 20-րդ գլխի 30-31 համարով: Այս աղբիւրի մէջ Յիսուս ներկայանում է որպէս կիսա-աստուածային հրաշքներ կատարող անձնաւորութիւն: Թէեւ այս թէզը մի քիչ աւելի մանրամասնուել է վերջերս, դեռ մնում է միայն որպէս հաւանականութիւն: Յովհաննէս աւետարանչի մօտ «նշան» բառը յաճախ կիրառուում է «նշան» բառի տեղ:

Եթէ հրաշքների աւանդոյթը սերտօրէն կապուած էր մի այլ աղբիւրի, ապա ի՞նչ կարելի է ասել երկխօսութիւնների մասին, որոնք մեծ նշանակութիւն ունեն այս աւետարանի համար: Բովթմանը յարմար էր գտնում առաջարկելու, որ այս հատուածներն էլ ունեցել են մի այլ սկզբնաղբիւր: Ըստ իրեն, Յովհաննէս աւետարանիչն այս երկու միաւորները՝ հրաշքների պատումներն ու երկխօսութիւնները, շաղկապուում են աւետարանը կազմելու համար: Բովթմանի կարծիքով որոշ «նշան»-ների պատումները շատ թոյլ կապերով միաւորուել են երկխօսութիւնների հետ: Օրինակ, 5-րդ գլխում շարադրուած երկխօսութիւնն սկսւում է Յիսուսի եւ հրեաների միջեւ Շաբաթ օրուայ մէջ կատարուած «բժշկութեան» շուրջ՝ մի երկխօսութեամբ: Սակայն այն մարդու բժշկութիւնը, որը «եղեւում եւ ութ ամ» հիւանդ էր, չի առնչւում «շաբաթ»-ուայ հետ, միայն հիւանդի բժշկումից յետոյ, երբ մարդն առնում է իր անկողինը եւ քայլում, աւետարանիչն անակնկալ ծանօթագրում է. «Եւ էր շաբաթ յաւուրն յայնմիկ» (5:9 բ): Եթէ բոլոր հրաշքների պատմութիւնները եւ երկխօսութիւններն իրար են կապակցուել այսքան անհամերաշխ ձեւով, ապա առաջացրած թէզն առանձին երկխօսութիւնների աղբիւրի գոյութեան մասին, աւելի համոզիչ է դառնում: Իրականում այդպէս չէ: «Եւ եւմ հացն» երկխօսութիւնը գլուխ 6-ում, շատ մօտիկից առնչւում է «հինգ հազարի» կերակրելու հետ: Որոշ գլուխներում, ինչպէս՝ (4, 9 եւ 11), շարադրանքներն ու երկխօսութիւնները հիւսուել են իրար այնքան սերտօրէն, որ դժուար է երեւակայել, որ երկխօսութեան տարրն առանձին աւանդոյթ էր: Հրաշքների պատմութիւնների բառապաշարն ու ոճը, պատումներն ու երկխօսութիւնները վերլուծում է մանրամասնօրէն, բայց ներկայացուած փաստարկները ո՛չ հաստատում եւ ո՛չ էլ ժխտում են, որ որեւէ ժամանակ եղել է երկխօսութիւնների առանձին մի աղբիւր: Շարադրանքի մէջ կան մի շարք ուշագրաւ յատուկ անցումներ. օրինակ, Յիսուսի՝ Նիկողիմոսի հետ ունեցած խօսակցութիւնն անսպասելիօրէն ընդհատուում է, երբ աւետարանիչն ընդմիջարկում է մի հատուած, որը վերաբերւում է Յովհաննէսի մկրտութեանը եւ Յիսուսի հետ ունեցած առնչութիւնն սկսւում է գլուխ 3:22 համարով: Սակայն 31 համարում, Յիսուսի խօսակցութիւնը Նիկողիմոսի հետ, կարծես թէ վերաբացւում է: Եթէ 3-րդ գլխի 22-30 համարներն առանձնացնենք, ապա 3-րդ գլխի կառուցուածքն աչքի ընկնող չափով բարելաւուում է: Եթէ այդ խանգարող համարները տեղադրուեն 2-րդ գլխի 12 եւ 13 համարների միջեւ, ապա 2-րդ գլխի կառուցն աւելի բնական եւ սահուն է ընթանում: Այս տեսանկիւնից եղել են առաջարկներ, որ գլուխ 5-ի եւ 6-ի հերթականութիւնը պէտք է յետադարձնել: Այժմեան հերթականութեան մէջ, 5-րդ գլխի դէպքերը տեղի են ունենում Երուսաղէմում, բայց ըստ 6-րդ գլխի 1 համարի, Յիսուս «գնաց յայնկոյս ծովուն Գալիլիացոց»՝ առանց որեւէ ցուցմունքի, որ Յիսուս թողել էր Երուսաղէմը: Իսկ 7-րդ գլխի 1 համարն աւելի խորթ է հնչում: «Եւ յետ այսորիկ շրջէր Յիսուս ի Գալիլիա, քանզի ոչ կամէր ի Հրէաստանի շրջել, զի խընդդէմն գնա Հրէայքն սպանանել»: Այս համարը հաստատում է, որ Յիսուսն եղել է Հրէաստանում, բայց իր ապահովութեան համար որոշել էր մեկնել Գալիլիա: Սակայն 6-րդ գլխի դէպքերը պատկանում են Գալիլիային, եւ Յիսուսը դեռ չի մտել Հրէաստան՝ ըստ 5-րդ գլխի 47 համարի տեղեկութեան: Եթէ 5-րդ եւ 6-րդ գլուխների հերթականութիւնը յետադարձենք, ապա բոլոր այս նշմարած անհարթութիւնները կը վերանան:

Ինչպէ՞ս բացատրել այս աններդաշնակութիւնը՝ դէպքերի շարադրանքների

հերթականութեան մէջ: Ոմանք պնդում են, որ աւետարանին իր աւետարանը գրել է երկար ժամանակուայ ընթացքում եւ աչքից վրիպել է այս աններդաշնակութիւնը: Ուրիշներ յանգում են այն համոզման, որ աւետարանը գրելուց յետոյ, հնագոյն պապիրուսի չհամարակալուած 50 կամ աւելի էջերի խախտման հետեւանքով տեղաշարժուած են եւ նման կարծիք բոլորովին էլ անհեթեթ չէ: Իսկ մի ուրիշ խումբ էլ առաջադրել է այն կարծիքը, որ այս անհարթ փոխանցումներն արդիւնք են հետագայ յաւելումների:

Առհասարակ, դարերի հեռաւորութիւնից շատ դժուար է որեւէ մէկի համար համոզիչ մի լուծում բանաձեւել այս հարցի վերաբերեալ: Բայց նման մօտեցման դէպքում թէկուզ, պարզ է դառնում այն հանգամանքը, որ աւետարանը կազմաւորուել է տարբեր փուլերով: Ռայմոնդ Բրաունն իր յայտնի մեկնութեան մէջ զանազանում է հինգ փուլեր: Նա իր այս տեսակէտը յագեցնում է համոզիչ փաստարկներով որ, դժուար է հերքել: Բայց այս կնճռոտ հարցն ունի շատ աւելի պարզ մի պատճառ. միգուցէ Յիսուսի աշակերտ Յովհաննէսը՝ որդին Զեբեդիայի, իր մի խումբ համախոհներին փոխանցեց մի շարք աւանդոյթներ, որոնք հետագային շօշափելի չափով բարեփոխուեց եւ դարձաւ մեզ հասած չորրորդ աւետարանի առաջին տարբերակը: Աւելի ուշ, մի շարք վերանայումներից ու յաւելումներից յետոյ, ստացուեց այն աւետարանը, որ մեզ է հասել որպէս 4-րդ աւետարան՝ 21 գլուխներից բաղկացած:

Աւետարանի կառուցուածքը

Եթէ մի պահ մի կողմ թողնենք գրաքննական բոլոր հնարանքները եւ նայենք աւետարանի կառուցուածքին այնպէս, ինչպէս որ է, պիտի տեսնենք, որ այն պարզ է եւ տպաւորիչ: Աւետարանի նախերգանքը բաղկացած է երկու մասերից՝ 1:1-18 եւ 1:19-51: Երկրորդ մասում, Յովհաննէսը (ով այս աւետարանում իրեն Մկրտիչ չի կոչում) Յիսուսին ներկայացնում է որպէս «գառն Աստուծոյ» (1:29, 36) եւ որպէս «Որդին Աստուծոյ» (1:34): Անդրէասն ասում է Սիմօն Պետրոսին (եւ ընթերցողին), որ Յիսուս «գմեսիայն (որ թարգմանի Քրիստոսի)» (1:41): Նախերգանքի աւարտին Յիսուս ինքն իրեն կոչում է «Որդի Մարդոյ». «Տեսանիցի՞մ գերիմա բացեալ եւ զհեշտակս Աստուծոյ զի ելանիցեն եւ իջանիցեն ի վերայ Որդոյ Մարդոյ» (1:51):

Նախերգանքի կառուցուածքը նման է միջնադարեան ճարտարապետական մի կառուցի: Աւետարանի կորիզը բաղկացած է երկու մասից: 1-12 գլուխների նիւթն անհատների եւ հակառակորդ խմբաւորումների միջեւ տեղի ունեցող պատմութեան, երկխօսութիւններ եւ քննախօսութիւններ են, որը համապատասխանում է տաճարի միջավայրի «հասարակական» մասին: 13-20-րդ գլուխներում պարունակում են Վերջին Ընթրիքի շարադրանքը եւ աշակերտների հետ Աւագ Շաբաթուայ դէպքերի շուրջ տեղի ունեցած քննախօսութիւնները, որը յիշեցնում է տաճարի Սրբազան խորանը: Իսկ 21-րդ գլուխը, կառուցուածքի ոճի եւ տեղադրութեան տեսակէտից, համարում է հետագայի յաւելում:

Աւետարանի Նախաբանը 1 – 18 համմտ.

Համատես աւետարաններն իրարից տարբերող ամենաակնառու զանազանութիւնը, իւրաքանչիւրի կիրառած սկզբնական նախաբաններն են: Յովհաննէս աւետարանի նախերգանքն էլ այն ոսպնեակն է, որի միջով ընթերցողը պիտի նայի աւետարանի ողջ բովանդակութեանը: Հէնց այստեղ էլ վերջանում է նմանութիւնը չորս աւետարանների միջեւ: Յովհաննէսի աւետարանի նախերգանքը, Յիսուսի կերպարի ամենաերկարաշունչ եւ խորիմաստ բացայայտումն է՝ Նոր Կտակարանի մէջ: Նախերգանքի դերը նման է յունական մի դրամայի երգչախմբի դերին: Նախերգանքի մի-

ջոցով ընթերցողը կամ դիտորդը ծանօթանում է ոչ միայն յաջորդող թեմաներին, բայց եւ տալիս է դէպքերն ըմբռնելու ճիշդ հայեցակէտը: Յիսուսի առաքումը որպէս «Բանն» աշխարհ, պատահական մտածողութիւն չէր. «Ի սկզբանէ էր Բանն» (1): Բանն առնչւում է Աստծոյ արարչութիւններին հետ եւ «ամենայն ինչ նովաւ եղել» (2,3). Նա է լոյսը մարդու կեանքի (2,4). եւ նրանք, որ մերժեցին լոյսը (2,5, հմմտ. 10) Յիսուսի, «խաւար նմա ոչ եղել հասու» (2,5բ): Իսկ նրանք, որ «ընկալան» եւ «հաւատացին» նրան՝ «եւ նոցա իշխանութիւն ուղիս Աստուծոյ լինել» (12): Նախերգանքը վերջանում է այն նիւթի վրայ, որով սկսուեց «Եւ Բանն մարմին եղել, եւ բնակեաց ի մեզ» (14): Ինչպէս որեւէ մեծ բանաստեղծութեան պարագային, նախերգանքի դէպքում էլ դժուար է լիովին բանաձեւել դրա խորքն ու բազմիմաստ նշանակութիւնը, սակայն եւ անհնարին է չտպաւորուել աւետարանի թողած անջնջելի մտածելակերպով ու աշխարհընկալմամբ: Աւետարանիչը բաւական ճիշդ է գործադրում իր աւետարանի մէջ պատասխանելու հարցադրումներին եւ հասած եզրայանգումներին: Նախերգանքի յարուցած բոլոր հիմնախնդիրներին նա տալիս է սեղմ եւ հակիրճ պատասխաններ՝ միայն մի բացառութեամբ: Աւետարանիչն աւետարանի հետագայ գլուխներում, չի դիմում Յիսուսին որպէս «Բանն Աստուծոյ», բայց կան մի քանի առնչուող հատուածներ, որոնք պատշաճ են անդրադառնալու: Աւետարանիչը Յիսուսի ուսուցմանը վերագրում է «Բանն» յատկանիշը. «զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ... ընդունի զկեանս յաւիտեանական» (5:24, հմմտ. 6:63, 68, 7:31): 5-րդ գլխի 37 համարում, աւետարանիչը պնդում է, որ թէեւ Յիսուսի հակառակորդները գիտէին Ս. Գրքի ուսուցմունքն Աստծոյ մասին, բայց չունէին «զբանն նորա ունի ի ձեզ բնակեալ» (5:39): Աստծոյ խօսքերը կարելի է նշմարել նաեւ Հին Կտակարանում, բայց առաւել եւս այն վեհապէս նշմարելի է Քրիստոսի ուսուցմունքի մէջ. «Եւ զբանն իմ զոր լսէ՞ ոչ է իմ, այլ Հօրն, որ առաքեացն զիս» (14:24):

Ինչո՞ւ է Յովհաննէս աւետարանիչն իր աւետարանն սկսում մի նախերգանքով, որի մէջ նա շարունակաբար դիմում է Յիսուսին՝ որպէս «Բանն Աստուծոյ»: Կան մի շարք պատճառներ: Լոգոս բառը կիրառւում էր յունարէնում որպէս արտայայտչամիջոց, որը նկատի էր առնում բանաւոր խօսքի թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին մտքի արտայայտուելու ոճը: Ստոյգ փիլիսոփայութեան մէջ, «լոգոս»-ը ռացիոնալ սկզբունքն էր, որի համաձայն ղեկավարւում էր տիեզերքը: Հրեայ ընթերցողները, որոնք հմտացած էին Հին Կտակարանին, նաեւ ծանօթ էին այս տերմինին: Հին Կտակարանի բազմաթիւ համարներում «Բանն Աստուծոյ» արտայայտութիւնը վերաբերում է մարդկութեան հետ Աստծոյ հաղորդակցութեան եղանակին՝ մասնաւորաբար մարգարէների միջոցով: Աստծոյ խօսքն ազդեցիկ է՝ «լի է կեանքով եւ զօրութեամբ»: Որոշ պարագաներում Աստծոյ «Բանն» ունի անկախ գոյութիւն. «Առաքեաց զբանն իւր եւ բժշկեաց զնոսա» (Սղմ. 106:20). «Այնպէս եղիցի բանն իմ որ ելանէ ի բերանոյ իմմէ, մի՛ դարձի դատարկ՝ մինչեւ կատարեացէ զոր ինչ կամիցիմ» (Եսայի 55:11): Նախերգանքի յետին, Հին Կտակարանային մի երկրորդ թեմա էլ կայ: Առակաց գրքի 8:22-31 համարները ենթադրում են, որ իմաստութիւնը մօտիկից առնչւում է Աստծուն՝ իր ստեղծագործութեան մէջ եւ համարեայ թէ ունի ինքնուրոյն անկախ գոյացութիւն: Աստծու իմաստութիւնը՝ «յառաջ քան զյաւիտեանս հաստատեաց զիս, ի սկզբանէ յառաջ քան զերկիր առնել, նախ քան զանդուտս գործել, նախ քան զբղիսէ աղբերաց ջրոց... ի ժամանակի յորում հաստատուն դնէր զհիմանս երկրի, եւ էի առ նովաւ պատշաճեալ» (Առակք 8:22-30): Այս թեման, մի շարք հետագայ գրութիւններով առանձին զարգացում է ստանում՝ սերտօրէն կապուած Առակաց գրքի նիւթի հետ: «Իմաստութիւն Սողոմոնի» գրքի մէջ, օրինակ, իմաստութիւնը ներկայանում է որպէս «ճարտարապետ ամենայն ինչից» (7:22): Առաջին Ենովք 42-րդ գլխում, իմաստութիւնն առաքւում է Աստծոյ կողմից՝ մարդկութեան ծոցում բնակութեան վայր գտնելու համար: Յովհաննէսի նախերգանքում կան դարձուածքներ, որոնք ակնյայտ ձեւով նմանւում են իմաստութեան գրականութեան մէջ կիրառուած դարձուածքներին: Յով-

հաննէս աւետարանիչն (եւ իր յունախօս հրեայ ընթերցողները) անառարկելիօրէն ծանօթ էր այս ոճին: Եթէ այս ճիշդ է, ապա ինչո՞ւ է աւետարանիչն իր նախերգանքի մէջ նախընտրում մշակել Յիսուսի կերպարը որպէս «Բանն», փոխանակ՝ Աստծոյ «Իմաստութիւն»-ը (Ա Կորնթ. 1:24): Միգուցէ Յովհաննէսը դժկամում էր «Իմաստութիւն» անուանումը տալ Յիսուսին, քանի որ «Իմաստութիւն»-ը իգական սեռի գոյական է թէ՛ յունարէնում եւ թէ՛ եբրայերէնում: Քրիստոնէական գրականութեան մէջ «Բանն» տերմինի միտումնաւոր օգտագործումը վերաբերում էր Քրիստոնէական ուսմունքին, որի կիզակէտը հէնց ինքը՝ Քրիստոսն էր (հմմտ. Ա Թադ. 2:13; Կող. 3:16; ԳԱ. 10:36, 13:26, 15:35, 36): Աւետարանիչն աննախընթաց քայլ է առնում եւ Յիսուսին ներկայացնում է որպէս «Բանն», այսինքն գործակից Աստծուն՝ իր ստեղծագործութեան մէջ, երբ «Բանն մարմին եղեւ»: Այս դէպքում դժուար չէ նկատել, որ աւետարանիչն ազդուած է ոչ միայն յունական մտածելակերպից, այլ Հին Կտակարանից ու եբրայական գրականութիւնից եւ նաեւ վաղ քրիստոնէական աւանդութիւններից:

Նախերգանքի առաջին համարներում «Բանն»-ի կապն Աստծոյ հետ, ուրուագծում է անմոռանալի ոճով. ճիշդ այնպէս, ինչպէս Որդու եւ Հօր յարաբերութիւնը՝ ողջ աւետարանի մէջ: Աւետարանի առաջին համարները յիշեցնում են Հին Կտակարանի սկզբնական բառերը. «Ի սկզբանէ արար» (Ծնունդ 1:1): Մի որոշիչ տարբերութեամբ Աստծոյ տեղ ունենք «Ի սկզբանէ էր Բանն» արտայայտութիւնը: Սա, իսկապէս չափազանց ինքնատիպ եւ յանդուգն սկսուածք է: Բայց աւետարանիչը միշտ շեշտում է, որ «Բանն» անկախ չէ Աստծուց, որովհետեւ «Բանն էր առ Աստուած»: Աւետարանի մէջ Յիսուսն ինքը յայտարարում է. «Ես եւ հայր իմ մի եմ» (10:30), բայց նաեւ շատ յաճախ, բացառիկ շեշտով պնդում է, որ իր յարաբերութիւնը Հօր հետ «կախեալ» է: Բազում անգամներ նա յուշում է, որ ինքն առաքուած է Հօր կողմից եւ որեւէ ենթագրութիւն հերքելու համար, որ ինքը կարող է համարուել «երկրորդ Աստուած», իր ընթերցողներին ընդմիշտ զգուշացնում է՝ «Հայր իմ մեծ է քան զիս» (14:28): Սուրբ գրքի շատ մեկնիչներ կարծում են, որ նախերգանքը սկզբնաւորուել է որպէս բանաստեղծութիւն կամ երգ, որի մէջ հետագային աւելացուել են Յովհաննէսի վկայութիւնը՝ «վասն լուսոյն» (6-8) մասին: Նախերգանքի 1-5 եւ 9-12 (եւ որոշ մասեր՝ 13-18), հնարաւոր է վերակառուցել որպէս բանաստեղծութիւն: Մի շարք վանկեր սկսւում են՝ կրկնելով նախկին տողերի վերջաւորութիւնը, որով ստեղծւում է «զոյգ-աստիճանական» համանման յանգեր, որոնք կարելի է նշմարել նոյնիսկ թարգմանութեան մէջ.

Ի սկզբանէ էր Բանն

Եւ Բանն էր առ Աստուած

Եւ Աստուած էր Բանն, Նա էր,

Ի սկզբանէ առ Աստուած.

Ամենայն ինչ նովաւ եղեւ,

Որ ինչ եղեւն

Նովա կեանք էր, եւ կեանք էր լոյս մարդկան

Եւ լոյսն ի խաւարի անդ լուսաւորէ,

Եւ խաւարն նմա ոչ եղեւ հասու:

Սակայն այս «զոյգ-աստիճանական» զուգահեռականութիւնը քիչ աւելի ակնյայտ է 10-12 համարներում եւ ամենեւին պակասում է 14-16-ում, որոնք համարւում են նախնական բանաստեղծութեան սկզբնական մասը: Առհասարակ, բանասէրների միջեւ համաձայնութիւն չկայ, թէ որ համարներն են հետագայի յաւելումներ: Զարմանալի չէ, որ որոշ գիտնականներ (մասնաւորապէս Ս. Կ. Բարրեթ) հարցաքննում են նման թէզի հաւանականութիւնը եւ նախընտրում են պաշտպանել այն տեսակէտը,

որ աւետարանիչն ինքն է հեղինակը ողջ նախերգանքի, որը շարադրել է բացառիկ համաչափ արձակով:

Յովհաննէսի աւետարանի որոշ թեմաները 12:44-50.

Առաջին մասի վերջաւորութեան մէջ, աւետարանիչը հարկ է տեսնում ամփոփել այն բոլոր թեմաները, որոնց անդրադարձել է նախորդող գլուխներում: Ինչպէս նկատուում է, այս ամփոփումը հեղինակը կցել է քննարկուող համարների սկզբին՝ 12-րդ գլխի 36 համարի պատմածի համաձայն. «Յիսուս շոգաւ թագեցաւ ի նոցանէ», եւ յաջորդող համարներում Յիսուսն ակնարկում է նրանց թերահաւատութիւնը, ովքեր ականատես են եղել իր հրաշքներին: Այս գլխի վերջաւորութեան եզրայանգումը սակայն, վերաբերում է առհասարակ բոլորին՝ առանց որեւէ ցուցմունքի. «Եւ Յիսուս աղաղակէր եւ ասէր» (12:44), թէեւ տեքստից շատ դժուար է ենթադրել հեղինակի միտումնաւորութիւնը, բայց եւ այնպէս համարները տեղադրուում են յարմար տեղերում: Աւետարանի առաջին կէսն ամփոփում է ոչ միայն կոկիկ կերպով, բայց եւ մօտիկից աւելի քննելուց յետոյ, պարզում է, որ սէրտօրէն առնչում են նախորդ համարների նիւթին: Վերոյիշեալ համարներում, աւետարանիչը վկայում է, որ՝ «Եւ յիշխանաց անդի բազումք հաւատացին ի նա, այլ վասն փարիսեցոցն ոչ յայտնէին, զի մի՛ ի ժողովդէն էլանիցէն» (12:42): Երկու այլ առիթներով, 9:72 եւ 16:2 համարներում, հեղինակը յիշում է պարագաներ, երբ իրեն հաւատացողները հակառակորդների կողմից արտաքսուել են ժողովրդարանից: Յատուկ ուշադրութիւն պէտք է դարձնել հրէական այն վկայութեանը, որ Յ. Բ. 85 թ. մի նոր օրէնք էր աւելացուել ժողովրդարանի պաշտամունքին, որն իրաւունք էր տալիս քրիստոնեաներին արտաքսել ժողովարաններից:

Գլուխ 12:42 համարը կարծես ակնարկութիւն է հէնց նման մի լարուածութիւն այն հրեաների դէմ, որոնք ընդունել էին քրիստոնէութիւնը, եւ նրանց, ովքեր մերժում էին հաւատալ Յիսուսին: Աւետարանում մի շարք յօդուածներ անդրադառնում են այս հակամիտ վերաբերմունքին: Նրանց ամենադառը դժգոհութիւնն այն էր, որ քրիստոնեաները Յիսուսին նոյնացնում են Աստծոյ հետ: 5-րդ գլխի 18 համարում հաղորդում է, որ. «Հրեայքն առաւել խնդրէին սպանանել զնա ոչ թէ որովհետեւ լուծանէր զլաբաթս այլեւ հայր իւր կոչէր զԱստուած, եւ հաւասար առնէր զանձն Աստուծոյ» (5:18): Այն պարագան, որ Յիսուս իրեն դիմում էր «Եւ եմ» անուամբ (5:88), իր հակառակորդներին թուում էր, թէ Յիսուսն իրեն աստուածային հեղինակութիւն է վերագրում, եւ անմիջապէս որոշում են քարկոծել նրան: Մի այլ յարանման յանդիմանական կրքոտ վերաբերմունքի, աւետարանիչը բացայայտում է 10:33-րդ համարում, ըստ որի Յիսուսին քարկոծել են ուզում «վասն հայհոյութեան», որովհետեւ նրան մեղադրում են՝ ասելով. «զի դու մարդ ես, եւ զանձն քո Աստուած առնես» (10:33):

Աւետարանիչը միանշանակ կերպով հերքում է այս մեղադրանքները Յիսուսի դէմ՝ պնդելով, որ Յիսուսն աշխատում եւ խօսում է միշտ Հօր անունից: Այս է պատճառը, որ քրիստոնեաները Յիսուսին չեն համարում «Երկրորդ Աստուած»: Այս պաշտպանութիւնը հեղինակը կրկնում է թէ՛ աւետարանի սկզբում եւ թէ՛ վերջում: Համարներ 44 եւ 45-ը շեշտում են մօտիկութիւնը Յիսուսի եւ Աստծոյ միջեւ: Հաւատք Յիսուսի հանդէպ, համարում է հաւատք հանդէպ նրան, ով ուղարկել է Յիսուսին: Տեսնել Յիսուսին, համահաւասար է տեսնել իրեն առաքողին: Այս երկու համարները պարունակում են աւետարանիչի՝ Աստծուն դիմելու ինքնուրոյն ոճ. Նա է, որ ուղարկել է Յիսուսին: Աւետարանիչն այլ եւ այլ առիթներով նշում է, որ Յիսուսը 17 անգամ դիմում է Աստծուն որպէս՝ «Նա որ ինձ առաքեց»: Այս կէտը մի անգամ եւս ընդգծում է այս հատուածի ամփոփման մէջ: Յիսուսը չի խօսում ըստ իր ուզածին. «զի ես յանձնէ իմմէ ոչ խօսեցայ, այլ որ առաքեացն զիս Հայր, Նա ետ ինձ պատուէր զինչ ասացից եւ

զինչ խօսեցայց. այդ զոր եսն խօսիմ, որպէս ասաց ինձ Հայրն, այնպէս խօսիմ» (12:49-50): Համարներ 44 եւ 45-ը, սերտ կապ ունեն գլուխ 13:20 ք համարի հետ՝ «զիս եւ որ զիս ընդունի՝ ընդունի զայն որ առաքեացն»: Աւետարանչի համար հաւատալ, տեսնել եւ ընդունել Յիսուսին, նոյնանիշ յատկութիւններ են: Գլուխ 13:20 համարի բառական, ոճական եւ իմաստային նմանութիւններն ուշագրաւ են Մատթէոսի 10:40-ի հետ: Այս այն քիչ դէպքերից մէկն է, երբ Համատես աւետարանիչները եւ Յովհաննէսի վկայութիւնը Յիսուսի ասացուածքներին, համընկնում են: Այս ամփոփման մէջ երկու այլ օրինակներ եւս կան. «Եւ եթէ ոք լուիցէ բանից իմոց եւ ոչ պահեացէ» (12:47 ա), կրկնում է Մատթէոսը 7:26; 12:48 համարներում եւ. «որ անարգէ զիս», կրկնում է Ղուկասը 10:16 համարում: Համար 46-ը համառօտաբար վերաբերում է լոյս-խաւար թեմային, որը մասնաւորապէս զբաղեցնում է 3, 8 եւ 9 գլուխները: Համար 8:12-ում Յիսուսը յայտարարում է. «Ես եմ լոյս աշխարհի, որ զայ զկնի իմ ընդ խաւար մի գնացէ. այլ ընկալցի զլոյսն կենաց»: Յաջորդող համարներում՝ (8:15-16), ինչպէս նաեւ 3:17-19 եւ 9:38-41, լոյս-խաւարի թեման զուգորդում է Վերջին դատաստանի թեմայի հետ: Հետեւաբար, բոլորովին էլ անընկալելի չէ, որ 47-48 համարներում գտնում ենք Դատաստանի թեմայի ամփոփումը, որը տիրապետել է նախորդող գլուխներին: Ով որ մերժի Յիսուսին եւ ընդունի Նրա ուսուցմունքը, դատուում է ինքն իրեն: Յիսուսի խօսքով ասած՝ ինքն աշխարհ է եկել ոչ թէ դատելու, այլ փրկելու աշխարհը (3:17 եւ 12:47): Նրանք, ովքեր չեն ընդունում Յիսուսին որպէս լոյսը, որ զրկուել է աշխարհ, մնում են խաւարի մէջ եւ դատում իրենք իրենց (3:18-19 եւ 12:46): Զորրորդ աւետարանչի հայեցողութեամբ, դատաստանը տեղի է ունենում ներկայում, երբ մարդիկ ընդունում կամ մերժում են «լոյսը, որ առաւել է աշխարհ»: Յատուկ ուշադրութեան է արժանի այն պարագան, որ թէեւ աւետարանիչը շեշտում է, որ դատաստանը տեղի է ունենում ներկայում եւ այս համընկնում է միւս երեք աւետարանիչների հայեացքին, սակայն կայ նաեւ ապագայի դատաստանը. «գոյ որ դատի զնա յաւտն յետնում» (12:48 եւ 5:27-29): Ամփոփման վերջին համարում ակնարկութիւն կայ «յափտեմական կեանք»-ի մասին, որն Աստծոյ պարգեւն է մարդուն՝ Յիսուսի միջոցով: Այս արտայայտութիւնը չորրորդ աւետարանի հեղինակը նախորդող գլուխներում կիրառում է 14 անգամ: Զորրորդ աւետարանչի համար, նրանք, ովքեր հաւատացել են Յիսուսին, շնորհւում են այժմ, այս կյանքում՝ դեմընթաց այդ վիճակին սպասուելիք ժամանակում: Այս առումով, ամենաբացայայտ դիրքորոշումը գտնում ենք գլուխ 5:24 համարում. «Ամէն ամէն ասեմ ձեզ, զի որ զբանն իմ լսէ եւ հաւատայ այնմ որ առաքեացն զիս՝ ընդունի զկեանսն յափտեմականս, եւ ի դատաստան ոչ մտանէ, այլ փոխեցաւ ի մահուանէ ի կեանս»: «Յափտեմական կեանք» կեանք չէ միայն մահից յետոյ (ինչպէս դարձաւ հասկացողութիւնը հետագայ Քրիստոնեայ ուսմունքի մէջ): Յիսուսի գալով, ապագայի օրհնութիւնը դառնում է ներկայի իրողութիւն: Վերջապէս, արժէ յիշել, թէ այս թեմաներից մի քանիսին արդէն նշմարում ենք նախերգանքի մէջ՝ լոյս եւ խաւար (հմմտ. 1:4-5, 9 եւ 12:46), կեանք (հմմտ. 1:4-5 եւ 12:50): Յիսուսի գալը պատճառ է դառնում իր մերժումին (որոշների կողմից)՝ (հմմտ. 1:10 եւ 12:47-48). հաւատալ Յիսուսին, նշանակում է հաւատալ Աստծուն (հմմտ. 1:12 եւ 12:44), տեսնել Հօրը (հմմտ. 1:18 12:45): Այս զուգահեռականներից ոմանք իրար աւելի մօտ են, քան ուրիշները, բայց բոլորը միասին առնուած, պաշտպանում են մեր թէզը, որ աւետարանիչը սահմանափակ թուով թեմաներ է արժարժում իր աւետարանում եւ զարգացնում տարբեր տեսանկիւններից: Նա դրանք համառօտակի թուարկում է իր նախերգանքի մէջ եւ ամփոփում վերոյիշեալ համարներում, որով եւ աւարտում է աւետարանի առաջին մասը:

Յիսուսի «Աղօթքը առ Հայր» 17:1-26

Յովհաննէս աւետարանչի 17-րդ գլուխը մի սրտառուչ աղօթք է, որ Յիսուս ար-

տասանեց իր աշակերտների համար, չարչարանքի գիշերուայ նախօրեակին, երբ մօտալուտ էր նիւթացած չարիքը:

Այս գլուխը կարելի է բաժանել չորս յստակ բաժինների:

Ա. Համարներ 1-5:

Յիսուս իր աղօթքն ուղղում է Հայր Աստծուն, վերայիշելով իր՝ հաւատարմօրէն անմբողջացրած այն առաքելութիւնը, որ Հայրն իրեն վստահել էր իր ծննդեան օրից, եւ հայցում է Աստծուց, որ իրեն հասանելիք մահը փառաւորի Աստծուն եւ Հայրն էլ իր հերթին փառաւորի իրեն: Մի արարք, որ միաժամանակ թէ՛ աստուածային պարգեւ է եւ թէ՛ հաւատարմութեան խորհրդանիշ, որով ինքը նաեւ փառաւորում եւ վերականգնում է այն փառքով որ ունէր նախքան «աշխարհին լինելը»:

Բ. Համարներ 6-19

Յիսուս աղօթում է իր աշակերտների համար, որոնք հաւաքուել էին իր շուրջ: Նրանք վերադառնալու էին մի միջավայր, որ պիտի հալածէր իրենց: Մինչ այդ պահը, Յիսուսին յաջողուել էր պաշտպանել նրանց միասնականութիւնը եւ աղօթում է, որ իր մահից յետոյ պիտի շարունակեն մնալ իրենց հաւատքի մէջ, պաշտպանել իրենց միասնականութիւնը, համերաշխութիւնը միմեանց եւ Աստծոյ հետ, եւ ամենից կարելորդ՝ չհրաժարուեն իրենց առաքելութիւնից:

Գ. Համարներ 20-24

Աղօթքի տարողութիւնը ընդարձակում է, երբ այն ներառում է ոչ միայն առաքեալների անմիջական հետեւորդներին, այլ նաեւ ապագայ ողջ սերունդներին, որոնց հաւատքը կախուած է առաքեալների գործունէութիւնից: Հաւատացեալներն էլ պէտք է միանան եւ իրենց միասնականութեամբ ներշնչեն ողջ մարդկութեանը՝ հաւատալու իրենց սկզբունքների ճշմարտութեանը: Բոլոր հաւատացեալների ճակատագիրն է մնալ անմնացորդ հաւատարիմ Յիսուսին, «որպէսզի տեսնեն իմ փառքը, որ դու ինձ տուեցիր»:

Դ. Համարներ 25-26

Յիսուս այս վերջին երկու համարներով արժեւորում է իր ողջ առաքելութեան նուաճումները: Աշխարհը չճանաչեց Աստծուն, բայց նրա հետեւորդները հաւատացել են Յիսուսի առաքելութեանը, որ բխում է Հօրից, եւ որի մէջ նրանք գտել են յաւիտենական կեանքի ճշմարտութիւնն ու սէրը:

Համատես աւետարանիչները շատ յաճախ են ակնարկում Յիսուսի աղօթելու մասին (ՄԿ. 1.35; 6.46; 14.32-39; 15.34; Մթ. 14.23; 19.13; 26.36-44; 27.46; Ղկ. 3.21; 5.16; 6.12; 9.18; 11.1; 22.41-45; 23.34 (46)), բայց շատ քիչ դէպքերում են յայտնում ընթերցողին աղօթքի բովանդակութիւնը: Ամենաակնյայտ բացառութիւնը Գեթսեմանի պարտէզի աղօթքն է եւ նաեւ այն խօսքերը, որ Յիսուս բացականչեց խաչի վրայ: Յովհաննէսի աւետարանում Յիսուս երեք անգամ աղօթում է. Ղազարոսի գերեզմանի վրայ (11.4 եւ նաեւ՝ 12.27): Այս վերջին աղօթքով Յովհաննէս աւետարանիչը բանաձեւում է իր ողջ աստուածաբանութիւնը՝ շաղկապուած անքակտելիօրէն Յիսուսի առաքելութեան հետ: Յիսուս ընդգծում է կարեւորութիւնը հնազանդութեան՝ հանդէպ Հօրը, նոյնիսկ մօտահաս մահուան պահին՝ շեշտելով այն հանգամանքը, որ իր մահը այն առիթն է, ուր ակնյայտ է դառնում Աստծոյ Փառքը, որին յաջորդում է առաքեալների ընտրութիւնը եւ գործակցութիւնը: Այս աղօթքի նպատակն է ազդեցիկ կերպով մատնանշել Քրիստոսի դարձը դէպի Աստուած, որը դառնում է վերջին երկխօսութիւնների հիմնական թեման, որտեղ եւ գուշակում է իր մահը:

Այս գլխի քննութեան հիման վրայ, շատ մեկնիչներ սրա բովանդակութիւնը բնութագրում են այս պիտակաւորումներով՝ «Քահանայապետական Աղօթք» կամ «Աղօթք Զեռնադրութեան»: Այս գլխում աւետարանիչը նաեւ բացատրում է իր կապը Որդու եւ Աստուծոյ միջեւ՝ շնորհիւ մարդեղութեան խորհրդին եւ իր ժամանակաւոր մեկնումը Հօրից: Որոշ իմաստով աւետարանիչը վերարժարծում է այս գլխում այն թեմաները, որոնց անդրադարձել էր նախորդ գլուխներում: Յատկանշական է նկատել, որ այս գլխում աւետարանիչն իր առաքելութեան մէջ բացարձակապէս չի անդրադառնում Ս. Հոգու դերին: Սա ապացոյց է, որ Յովհաննէս աւետարանչի համար սկզբունքօրէն Ս. Հոգու դերը վախճանաբանական էր, եւ սա խօսում է այն մասին, որ մինչեւ այստեղ Աւետարանիչն անհրաժեշտութիւն չի տեսել բանաձեւել Երրորդութեան երեք անձերի փոխարարներութիւնը:

«Այս բաները խօսեցի ձեզ, մինչ ձեզ հետ եմ» (14.25): Յիսուս իր աշակերտներին յուշում է, որ հետ այսու իր երկխօսութիւնները մեծ մասամբ լինելու են Աստծոյ հետ եւ դա վկայում է աւետարանչի յաճախ կիրառած արտայայտութիւնը. «աչքերը վեր բարձրացրեց ու ասաց՝ Հայր» (11.41, 12.27): Յովհաննէս աւետարանիչն յաճախ է սկսում իր երկխօսութիւնը Հօր հետ այս խօսքերով. «Ճասեալ է ժամ» (2.4, 12.23): Այն ժամը, որին անհամբեր Որդին սպասում է. եւ այն պահն է, երբ Որդին պիտի փառաւորուի: Բացի դրանից, դա այն պահն է, երբ Որդին պիտի խաչուի: Աւետարանիչն ընկերակցում է ընթերցողին մեղամղձութեամբ՝ Աստծոյ Որդու փրկագործ խաչելութեանը եւ այդ կէտից այն կողմ Յովհաննէս նախագուշակում է Քրիստոնէական հաւատքի վսեմութիւնը եւ Քրիստոնէական եկեղեցու ծագումը: «Փառաւորեա զՈրդի քո» վկայութիւնը շատ աւելի կտրուկ ներշնչանքի արտայայտութիւն է, քան «Եհաս ժամ զի փառաւորեսցի Որդի մարդոյ» (12.23): Որդու փառաւորումը բխում է Հօրից եւ արդիւնք է Որդու հնազանդութեան:

«Ձի եւ Որդի քո փառաւորեսցի զքեզ»

Եթէ Հայրը փառաւորում է Որդուն՝ ի դիմաց իր ցուցաբերած անառարկելի հնազանդութեան. «Եթէ մէկը կամենում է հետեւել ինձ, թող ուրանա իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ իմ հետեւից»: Սա նշանակում է, որ Որդու զոհողութիւնը գնահատւում է եւ թէրեւս ամենաակնյայտ ապացոյցն է Հօր փառաւորման:

«Ետուր նմա իշխանութիւն ամենայն մարմնոյ»

Եբրայական ոճը «ամենայն մարմնոյ» (*pasa sark*) «շնորհ իշխանութեան» (1,12) «Ետ նոցա իշխանութիւն» եւ «պարգելը իշխանութիւն» (5.27), «իշխանութիւն ետ նմա» [*Jexusian edoken auto krisin noein*] արտայայտչաձեւեր բացառապէս օգտագործում է Յովհաննէս աւետարանիչը: Յովհաննէսի մօտ «իշխանութիւն» բառը շատ աւելի ընդարձակ իմաստ ունի: Որդին իր իշխանութիւնը ստանում է Հօրից. եւ այն բոլոր ժամանակների համար է: Որդին ստանում է Սուրբ Հոգին, որպէսզի կարողանայ մկրտել հոգով «զոր ետուր նմա» (*pan o dedukas autw*): Այս պարագային «ամենայն» բառը թէեւ չէզոք եզակի է, բայց վերաբերում է բոլոր աշակերտներին: «Ամենայն» բառն այստեղ շեշտում է առաքելաւորների «միասնականութիւնը» (*panten* - ոչ թէ «բոլորը», այլ՝ «ամբողջութիւնը»):

«Ամբողջականութեան» կամ «միասնականութեան» թեման առաջընթաց նշանակութիւն ունի եւ յաճախ կրկնուող (տես՝ 11.20, 24.26) եւ թէեւ որոշ պարագաներին միասնականութեան չափանիշն անտարակոյս առկայ է, այնուամենայնիւ նկատւում են պահեր, երբ կարիքն է զգացւում «աղօթքի»:

«Ձկեանս յախտեմականս»

Յիսուսի առաքելութեան նախանշանները, Յովհաննիսեան արտայայտութեամբ կլինի.

ա. Աստծոյ փառաւորումը եւ բ. յաւիտենական կեանքի շնորհումը մարդկանց (հմմտ. 1.4, 3.15): Այս արտայայտչաձեւը յաճախ է օգտագործուում Ա-ԺԳ գլուխներում, որը վերաբերում է ողջ մարդկութեանը, իսկ ԺԴ-ԺԸ գլուխներում այն ուղղակիօրէն հասցէագրուած է աշակերտներին: Այս փոփոխութեան պատճառը այն է, որ սկզբնական գլուխներում աւետարանչի պատգամը վերաբերում է ողջ հաւատացեալներին, իսկ վերջին երկխօսութիւնների մէջ աւետարանիչն իր ուշադրութիւնը որոշակիօրէն սեւեռում է աշակերտների վրայ, որոնք ընտրուել են բոլորի միջից՝ Աստծոյ սէրը լիովին դրսեւորելու համար. «դրա համար էլ Աստուած նրանց առաւել բարձրացրեց» (Փիլիպ. 2.9): Սիրոյ ակնադրելը Աստծոյ մէջ է:

«Այս են յաւիտենական կեանք, զի ծանիցեն»

Այն մտայնութիւնը, որ Աստծոյ մասին իմացութիւնը անհրաժեշտ է կեանքի փրկութեան համար, սովորական երեւոյթ է եբրայական եւ հելլենիստական մտածողութեան մէջ: Հին Կտակարանի շրջափակում «Իմաստութեան» կարեւորութեան չափանիշը բարձր է: Իմաստութեանը նուիրուած յատուկ գրականութիւն կայ: Առկայ գրքի 11.9 համարը յայտարարում է. «արդարեւ կը զատուեն գիտութիւնով» կամ «երկիրը պիտի լցուի Տիրոջ փառքի գիտութեամբ» (Ամբակում 2.14) «Իմ ժողովուրդը բնաջինջ եղաւ գիտութիւն շունենալու պատճառով» (Ովսէէ 4.6): Հրէական գրականութեան մէջ Աստծոյ մասին գիտութիւնը նախընտրաբար փոխանցուած է օրէնքի միջոցով, եւ «օրէնք»-ն էլ ինքնաբերաբար «կեանք է»: Այս երկու եզրերն օգտագործուում են փոխարինաբար: Օրինակ, «որովհետեւ դու մերժեցիր գիտութիւնը եւ մոռացար Աստծոյ օրէնքը, ես էլ մերժել եմ ձեզ» (Ովսէէ 4.6): Հրէականութիւնից դուրս, Աստծոյ տեսիլքին արժանանում էին միայն «ընտրեալները»: Նման հասկացողութիւնների եւ տրամադրութիւնների հաստատապէս հանդիպելու ենք գնոստիկեան աղանդաւորների ուսմունքների մէջ: Այս տիպի գնոստիկականութիւնն արդէն մեծ վտանգ էր ներկայացնում քրիստոնէութեան համար: Յովհաննէս աւետարանչի համար գիտութիւնը Աստծոյ շնորհումն է, սակայն յաւիտենական կեանքի լուսապսակին կարելի է հասնել նաեւ հաւատքով. «Այլ սա այն չափով գրուեց, որ դուք հաւատաք, թէ Յիսուսը Քրիստոսն է՝ Աստուծոյ Որդին. նաեւ, որպէսզի հաւատաք ու նրա անունով յաւիտենական կեանքն ընդունէք» (20.31): Յովհաննէս աւետարանչի համար գիտութիւնը եւ հաւատքը հակամէտ հասկացողութիւններ չեն, այլ իրար լրացնող: Սրանից կարելի է եզրակացնել, որ Յովհաննէս աւետարանչի հայեցողութեան մէջ գիտութեան արժեւորումը աւելի համահունչ է Հին Կտակարանի սկզբունքներին: Պէտք է աւելացնել նաեւ այն, որ գիտութիւնն ունի տեղեկատուական, իրաւատեսական նշանակութիւն: Մարդիկ պէտք է ճանաչեն բազմաթիւ աստուածների միջից ճշմարիտ Աստծուն: Այս իրապաշտական մօտեցման համար մասամբ պարտական ենք յունական փիլիսոփայութեանը եւ մասամբ հրէական մտածողութեանը, որի համաձայն Աստուած յայտնուում է մարդկանց եւ ճանաչելի դառնում պատմական դէպքերի միջոցով: Գիտութիւնն Աստծոյ մասին, չի կարելի տարանջատել իմացութիւնից մարդացած Որդու մասին. «Եթէ ինձ ճանաչէիք, ապա կը ճանաչէիք եւ իմ Հօրը» (14.7, 20.31): Յիշատակութեան արժանի է նաեւ այն կարծիքը, որ Յովհաննէս աւետարանչի գիտութեան այս հասկացողութեան հետեւանքով հելլենիստական եւ հրէական ուսմունքները համատեղում են. «զի ծանիցեն զի եղ միայն ճշմարիտ Աստուած» (Ա Թեսղ. 1.9, հմմտ. Ա Յով. «Եւ ետ մեզ միտս զի ծանիցում զճշմարիտն... զի նա է ճշմարիտ Աստուած»): «Միայն» [monos] բառը այստեղ շեշտում է «ճշմարիտ» [alithinos] բառի իմաստը: Այն Աստծուն, որ պիտի ճանաչենք եւ որի միջնորդութեամբ

կեանք պիտի ունենանք, միակ էակն է, որ կարող էր այդ խօստումը կատարել եւ որի համար «զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս» (17.3): Զուգահեռական շարադրանքը նախորդ արտայայտչաձեւի հետ «միայն նշմարիտ Աստուած», ենթադրում է, որ «զոր առաքեցար» վերաբերում է «զՅիսուս Քրիստոս» հետեւեալ բացատրական յաւելումով՝ «որպէս առաքեաց զիս հայր իմ, եւ ես առաքեմ զձեզ» (20.21):

«Ես զքեզ փառաւորեցի յերկրի»

Այստեղ անջատում կայ երկու «փառաւորումների» միջեւ (տես. հմ. 2): Մինչդեռ նախկին համարում, Որդին փառաւորում է Հօրը՝ կեանք պարգեւելով մարդկանց: Այստեղ փառաւորութեան իմաստն ակնյայտ է դառնում յաջորդ նախադասութեան միջոցով.

«Զգործն կատարեցի զոր ետուր զիս»

Աւելի ճիշդ՝ «աւարտելով այն գործը», որ ինձ վստահուած էր: Որդին փառաւորում է Հօրը՝ շնորհիւ իր ամբողջական նուիրումին, եւ հաւատարմօրէն իր առաքելութիւնն իր գազաթնակէտին հասցնում՝ հակառակ բոլոր խոչընդոտների: Հարկ է դիմել Յովհաննէս աւետարանչի յետադարձ հայեացքին՝ Քրիստոսի ողջ առաքելութեանը, ընդ որում նաեւ իր մահուան՝ յստակօրէն վկայուած. «Ամենայն ինչ կատարեալ է. եւ խոնարհեցուցեալ զգլուխն՝ աւանդեաց զոգին» (19.30):

«Ետուր զիս»

«Եւ այժմ փառաւորեա զիս»: Իր հաւատարիմ եւ մեծապէս յաջող ծառայութեան շնորհիւ Յիսուս փառաւորեց Հօրը՝ այժմ ի գնահատական իր զոհաբերութեան, որը դարձաւ դրոշմն իր գործունէութեան, եւ Աստուած փառաւորեց իր Որդուն:

«յառաջ քան զլինելն».

Որդու փառաւորման առանցքակէտն այն դարձաւ, որ Որդին վերադարձաւ իր սկզբնական վիճակին, նախքան իր մարդեղութիւնը: Խաչելութիւնից եւ Յարությունից յետոյ, Որդին վերափոխուում է երկինք. այնտեղ, որտեղ էր առաջ. «Եթէ տեսանիցիք զՈրդի մարդոյ, զի ելանիցէ ուր էր զառաջինն» (6.63 հմմտ. 8.58 «յառաջ քան զլինելն»):

Այս համարից յետոյ Յիսուսի մտահոգութիւնները սեւեռուում են աշակերտների վրայ:

«Յայտնեցի զանուն քո».

Աստծոյ անունը հռչակելը մի մտածելակերպ է, որը իւրայատուկ է Յովհաննէս աւետարանչի այս գլխին: Աստծոյ անուան հռչակումը ամփոփում է Յիսուսի առաքելութեան էութիւնը: Սաղմոս (22 [21]) 23 համարում «Պատմեցից զանուն քո եղբարց իմոց»: Անունն Աստծոյ ինքնութիւնն է յայտնում՝ «այս է անուն իմ յափտեան» կամ՝ «վասն այնորիկ ծանիցէ ժողովուրդ իմ զանուն իմ յաւուր յայնմիկ» (Ելից 3.15, Եսայի 52.6): Աւելի ուշ շրջանում հրէական գրականութեան մէջ Աստծոյ անունը ներկայացուում էր չորս տառերի կապակցութեամբ. YHWH՝ Աստուած անուան տեղ, որն արտասանելի չէր որեւէ մէկի կողմից, բացի քահանայապետից:

«զորս ետուր ինձ յաշխարհէ»

Աշակերտները պատկանում են Աստծուն հէնց սկզբից, որոհետեւ հէնց սկզբից նրանք անձնատուր էին եղել Աստծուն որպէս իր որդեգրած որդիները, որոնց «ետուր նմա իշխանութիւն»: Յիսուսի սէրը՝ հանդէպ իւրաքանչիւրին հաստատուեց, երբ

նա իր կեանքը զոհեց նրանց համար՝ փոխադարձ նրանց ցուցաբերած սիրոյ:

«Եւ զբանն քո պահեցին»

Ոչ մի այլ տեղ Յովհաննէսի աւետարանում չենք հանդիպում նման մի պատուերի՝ «պահել»:

Յովհաննէսի Քրիստոսագիտութիւնը հիմնուած է իր՝ Տիրոջ հետ ունեցած մտերմիկ եւ քաղցր բարեկամական յարաբերութեան հիման վրայ: Բաղդատմամբ Պետրոս առաքելի յախուռն, համարձակ, անհնարին եւ սրբագրուած յայտարարութիւններին, Պողոս առաքելի ճանաչողութիւնը Քրիստոսին՝ հնոցի մէջ կռանուած՝ կազմաւորուած, երկաթէ մտածումներով ու Սուրբ Հոգու ներշնչումով է, իսկ Յովհաննէսը հետեւելով Քրիստոսին, իր կեանքի ողջ ընթացքին տարիներով, ինքն իրեն նոյնացրեց իր Տիրոջ հետ՝ զգալով համահաւասար նրա սէրը, տենչերը եւ տառապանքները: Յովհաննէսի համար Յիսուս Աստուած չէր միայն, այլ սիրելի բարեկամ: Ըստ Յովհաննէսի, Յիսուսն իր աշակերտների նկատմամբ ունէր մեծ հաւատք, որով նրանք պիտի իրականացնէին իրենց Տիրոջ առաքելութիւնը:

Յովհաննէս աւետարանն այս աղօթքը սքանչելի կերպով բացայայտում է, որ Յիսուս Աստուած չէ միայն, այլ մի սիրելի եւ մեծ բարեկամ:

Աւետարանի նպատակը եւ միջավայրը

Աւետարանի վերջին համարում (չհաշուած յաւելումը), աւետարանին ուղղակիօրէն յայտնում է իր նպատակը՝ թուարկելով հրաշքները, որոնց նպատակն է՝ «զի հաւատացէ եթէ Յիսուս Քրիստոս է, Որդի Աստուծոյ» (20:31): Յատակ չէ, թէ աւետարանին ի՞նչ է փափաքում, իր գրութիւնը՝ «նպաստում է պահելու հաւատքը», թէ՞ «այս գրութեան շնորհիւ հաւատալու էք»: Աւետարանի նպատակն է ամրացնել մեր հաւատքը, թէ՞ աւետարանը գործիք է՝ ամրապնդելու հաւատքը հանդէպ Յիսուսի: Դժբախտաբար, յունարէնն անորոշ է եւ կարծես թէ, կացութիւնն աւելի է բարդանում, հին ձեռագրերում կիրառուած յունարէն բայի երկու տարբեր ձեւերի պատճառով, որը չի օգնում ուսումնասիրողներին: Շատ բանասէրներ հակուած են ընդունելու, որ աւետարանիչը գրում է իր քրիստոնեայ համայնքը նկատի ունենալով: 6:68 համարներում Պետրոսն ընթերցողի անունից ասում է. «առ ո՛վ երթիցում, բանս կենաց յափտէնականաց ունիս. եւ մեք հաւատացաք եւ ծանեաք եթէ դու ես Քրիստոսն Որդի Աստուծոյ...»: Նմանատիպ հատուածներ, ինչպէս 8:31, («Եթէ դու կացիք բանի իմում, նշմարիտ աշակերտք իմ էք») եւ 15:4 («Կացէ՛ք յիս եւ ես ի ձեզ... որ հաստատեալ է յիս եւ ես ի նա, նա բերէ պտուղ յոյժ»), հասցէագրուած էին հաւատացեալ հասարակութեանը: Նախերգանքի աւարտին (1:14), ոչ միայն աւետարանիչի, բայց նաեւ իր համայնքի հաւատքը, բացայայտում է այս խօսքերով. «Եւ տեսաք զփառս Նորա, զփառս իբրեւ զմիածնի առ ի Հօրէ» (հմմտ. նաեւ 1:16):

Ի՞նչ գիտենք աւետարանի համայնքի մասին: Այս մեկնաբանութեան մէջ, արդէն անդրադարձել ենք հատուածների, որոնք մատնանշում են, որ Յովհաննէսի հետեւորդները սուր պայքարի մէջ էին հրեայ կրօնական խաւերի հետ: Այս թեման անխուսափելի հետք է թողել ողջ աւետարանում: Յիսուսի մերժուածութիւնը՝ «իւրեմն զնա ոչ ընկալան» (1:11): Նիկողիմոսի հետ բանավէճի մէջ կայ մի դրամատիկ փոփոխութիւն 3:11 համարում: Մինչեւ այս կէտը, Յիսուսը եւ Նիկողիմոսը խօսում են իրար հետ որպէս անհատներ, բայց միանգամից աւետարանին սկսում է կիրառել գոյականների յոգնակի ոճ, օրինակ 3:11-ում Յիսուսն ասում է. «զոր ինչ գիտեմք խօսիմք (քրիստոնեաներս) եւ զոր տեսաք վկայեմք», բայց դուք հրեաներդ. «զվկայութիւն մեր ոչ ընդունիք»: 5-9-րդ գլուխներում, շարունակաբար կան նոյն ոճի արտայայտութիւններ

ու աստուածաբանական առարկություններ քրիստոնեաների եւ հրեաների միջեւ: Աւետարանչի հետեւորդներն անկասկած, ընդհարումի մէջ են հրեայ հարեւանների հետ: Աւետարանչի հետեւորդներից ոմանք ցաւով լքել են իրենց ժողովարանները: Պատմութեան մէջ, դարեր շարունակ, այն փոքրամասնությունները, որոնք բաժանուել են «մայր» խմբակցությունից, հակուած են դառնալու ներքնահայեաց եւ մեկուսացած: Նման կեցուածքը յաճախ համարուում է «աղանդաւորական», թէեւ այս պարագային «աղանդաւոր» որակումը պատշաճ չէ: Բայց մի բան, որ կասկածանքից դուրս է, այն է, որ Յովհաննէսի համայնքի որոշ անդամների համար, իրենց առնչակցությունը հրէականութեան հետ, հարցականի տակ էր դրուել: Այն յատուկ արտացոլում է Յիսուսի՝ իր աշակերտների հետ, հրաժեշտի երկխօսությունների մէջ: 15-րդ գլխի 18-րդ համարում Յիսուսն ասում է. «Եթէ աշխարհ զձեզ ատեաց, գիտաւորի՞ գի նախ զիս ատեաց: Եթէ յաշխարհէ աստի էի՞ աշխարհ զիւրն սիրէր արդեօք, բայց զի չի՞ յաշխարհէ, այլ ես ընտրեցի զձեզ յաշխարհէ, վասն անորիկ ատեաց զձեզ աշխարհ» (15:18-19): Այս մեկուսացումն «աշխարհից», նաեւ զգալի կերպով նշմարուում է 17-րդ գլխում՝ Յիսուսի հրաժեշտի երկխօսությունների մէջ: Նա չի աղօթում աշխարհի համար, «այլ վասն նոցա զորս ետուրն ինձ» (հմմտ. 9): Աշակերտները «չեն յաշխարհէ, որպէս եւ ես չեմ յաշխարհէ» (հմմտ. 14 եւ 16):

Բնական է, որ այս աւետարանչի բարոյական ուսուցմունքն ուղղուած է քրիստոնեայ համայնքի անդամներին. «նոր» օրենքը, որը Յիսուս տալիս է իր աշակերտներին՝ «սիրեցէ՛ք զմիմեանս» (13:34): Սա Յովհաննէս աւետարանչի բարոյական ուսուցմունքի առանցքն է՝ սէր համախոհ քրիստոնեայի հանդէպ: Այս պատգամը որոշակիօրէն տարբերուում է Մատթէոսի 5:44 համարի հրահանգից. «Սիրեցէ՛ք զքշմամիս ձեր, օրհնեցէ՛ք զանիծիչս ձեր» (33) եւ Սամարացի կնոջ առակում, որը պատասխան է օրինականի հարցումին՝ «Ո՞վ է իմ ընկերը» (Ղուկ. 10:25-37, հմմտ. Մարկ. 12:31): Յիսուսի ասացուածքներն ամուսնութեան, ապահարգանի, ունեցուածքի եւ պետութեան վերաբերեալ Համատես աւետարաններում, բոլորովին չկան Յովհաննէսի շարադրանքում: Յովհաննէսի հետեւորդներն առանց վարանումի, կարելի է ասել, հակամէտ էին իրենց հրեայ հարեւանների եւ ընդհանրապէս՝ աշխարհի հետ:

Ի՞նչ էր Յովհաննէսի համայնքի յարաբերութիւնն այլ քրիստոնեայ խմբակցությունների հետ: Սա կարելոր, սակայն չափազանց դժուար հարց է պատասխանելու համար: Այն յարուցում է բազմաթիւ հարցեր, որ ի վիճակի չենք այստեղ հետապնդելու: Ի. Բուլթմանն իր ուսումնասիրութեան մէջ ցոյց է տալիս, որ հետագայի մի եկեղեցական խմբագիր, առաջին դարի աւարտին, աւետարանի գրությունից յետոյ, վերախմբագրել է այն՝ յարմարեցնելով «Բանն» քրիստոնէութեան տեսանկիւնին: Նա պնդում է, որ Յովհաննէսի մտածողութեան մէջ խորհուրդները տեղ չունեն: Այն հատուածները, որ մասնաւորապէս ակնարկում են խորհուրդներին, անպայման հետագայի ներմուծումներ են: «Ծնցի ի ջրոյ» (3:5) [մկրտութեան] դարձուածքը, հետագայի յաւելում է այն հատուածի, որ խօսում է «հոգւով ծնելու» մասին: Հացի մասին երկխօսութեան աւարտին՝ «հաց կենդանի» (6:25-59), շատերն այն նշմարում են որպէս ուսուցում հաղորդութեան մասին: Այն համարները, որ վերաբերում են «զմարմին իւր յուտել» եւ «արքջի՞ գարիւն նորա» (6:53 բ -58), համարուում են յովհաննիսեան հաւելումներ «վերջին ընթրիք»-ի վերաբերեալ: Նման մի շարք այլ համարներ, ինչպէս՝ 5:28-29, 6:39-40, 44, 54, 12:48, Բուլթմանը նկատում է որպէս հետագայի յաւելումներ: Եթէ Բուլթմանի հետեւությունները ճիշդ են, ապա այս աւետարանի ներկայացրած քրիստոնէությունը շատ տարբեր է այն բոլոր հոսանքներից, որոնք ծնունդ են առնում առաջին դարի աւարտին: Բայց, եթէ նոյնիսկ, բազմաթիւ այլ մեկնիչների հետ ընդունենք, որ Բուլթմանի թէզի կենտրոնական դիտողությունը (յաւելումների մասին) վիճարկելի է, այնուամենայնիւ իր կարծիքը, որ Յովհաննէս

աւետարանչի միտուածութեան տարրերը իւրայատուկ են իրեն, չի հերքում: Յովհաննէսի դիրքորոշումը խորհուրդների նկատմամբ, առհասարակ ցաք ու ցրիւ է, եթէ ոչ՝ անյստակ: Աւետարանչի առաջնակարգ թեման «Վերջին դատաստանի» եւ «Յախտեմական կեանքի» քարոզչութիւնն է: Ե. Կասեմանն ինչ որ տեղ զարգացնում է Բովթմանի հայեացքները՝ ուղղակի խնդրոյ առարկայ դարձնելով աւետարանչի ներկայացրած Յիսուսի պատկերը: Կասեմանի կարծիքով, նախերգանքի եզրափակիչ համարներն են. «Եւ տեսաք զփառս Նորա» (1:14): Յիսուս կիսա-աստվածային մարդ է, որի ոտքերը հագիւ են դիպչում հողին: Արդեօ՞ք այն է պատճառը, որ Յովհաննէսի՝ Յիսուսի ներկայացրած դիմագիծը համարեայ թէ «Երեւութական» է (docetic): Յիսուս միայն «Երեւում» է որպէս մարդ: Յովհաննէսը գրեթէ նախագուշակում է յետ դարերի գնոստիկեան դրոյթը եւ կամ արդէն իր շարադրանքի մէջ նշմարում է այդ աղանդաւորական շարժման սկզբնական սաղմերը: Այս վերջին մեկնութիւնը շահել է շատ քիչ հետեւորդներ: Շատերը համամիտ են, որ այդ գաղափարը հիմնուած է միայն 1:14 համարի վրայ, որն անբաւարար է նման վերջնական տեսութիւն հիմնաւորելու համար: Սակայն Կասեմանի ուսումնասիրութիւնը մի անգամ եւս ուշադրութիւն է սեւեռում Յովհաննէս աւետարանչի՝ Գնոստիկ շրջանակների հետ ունեցած կապին: Հիմա պարզուել է, որ երկրորդ դարում, Յովհաննէսի աւետարանը լայն ընդունելութիւն է ստացել Գնոստիկեան շրջանակներում (նկատի ունեն չորրորդ աւետարանի սերտ նմանութիւնն Աւետարան ճշմարտութեան հետ). եւ Ս. Գրքի որոշ պատմաբաններ այս են համարում Յովհաննէսի աւետարանի քիչ գործածման պատճառը սկզբնական եկեղեցում, որը տեւեց մինչեւ երկրորդ դարի աւարտը: Աւետարանի կիրառած ինքնորոշիչ եւ առաձնայատուկ բառերը, ինչպիսիք են՝ լոյս, կեանք, ճշմարտութիւն, իմաստութիւն, յաճախ ենք հանդիպում գնոստիկեան բազմաթիւ գրութիւնների մէջ: Յովհաննէսի աւետարանը շատ հեռու է գնոստիկեան մտածողութիւնից, որը հետագայի եկեղեցու հայրերը քննադատեցին եւ հերքեցին:

Վերջացնելուց առաջ, մի քանի խօսք նաեւ այն առնչութեան մասին, որ Յովհաննէսի աւետարանն ունի Յովհաննու Ա-Բ թղթերի եւ Յայտնութիւն Յովհաննու գրութիւնների եւ նաեւ միւս աւետարանների հետ: Ոճական նմանութիւններ կան ենթադրելու, որ այս բոլոր գրութիւնները միայն մի հեղինակի գրութիւններ են: Յովհաննէսի աւետարանի ոճը այնքան տարբեր է Յայտնութեան գրքի ոճից, որ երբեք ոչ ոք չի առաջարկել, որ այս երկու գործերի հեղինակը կարող էր նոյն անձնաւորութիւնը լինել: Սակայն թղթերը, կարծես ունեն աւելի համեմատելի եզրեր, բայց բանասէրներից շատերն ընդունում են, որ այս գրութիւնների, կառուցուածքը, ոճը, բառապաշարը եւ հայեացքներն այնքան տարբեր են, որ դրանք անկարելի է համարել մի հեղինակի գործ: Ա Յովհաննու թղթի 2:19 համարը վկայում է, որ Յովհաննէս համայնքի մէջ տեղի է ունեցել «առ ի մէնջ էլին, այլ ոչ էին ի մէնջ, զի եթէ ի մէնջ էին, ապա առ մեզ մնացին»: Ա Յովհաննու թղթի 4:5 համարն այնքան բացասական տպաւորութիւն է թողնում, որ անկարելի է այլ կերպ մտածել, քան այն, որ բաժանուողների քանակն աւելի շատ է սպասուածից. «Նոքա յաշխարհէ են, վասն այնորիկ յաշխարհէ խօսին, եւ աշխարհ լսէ նոցա»: Զ. Լ. Հոլդէն եւ Ռ. Լ. Բրաունը, իրենց՝ Ա Յովհաննու թղթին նուիրած մեկնութիւնների մէջ ընդունում են, որ թղթերը գրուել են աւետարանից յետոյ: Երկու հեղինակներն էլ համաձայն են, որ Յովհաննու Ա թղթի վկայութիւնը «հակառակորդ խմբակցութեան» շուրջ, բխում էր աւետարանի տարբեր մեկնութիւնից: Այն խմբակցութիւնը, որ կապուած էր Ա Յովհաննու թղթի հեղինակի հետ, հաւատարիմ մնացին քրիստոնէութեան հիմնական հոսանքի հետ, բայց բաժանուողներն աւելի հակուած էին դէպի Գնոստիկեան բնոյթի քրիստոնէութեանը:

Հեղինակութեան եւ գրութեան ժամանակի հարցը

Ինչպէս միւս աւետարանիչների, այս աւետարանի գրութեան թուականն էլ անորոշ է: Այսպիսով, եթէ նոյնիսկ կարող ենք համոզուել, որ ոճական, իմաստային նմանութիւնները Յովհաննէսի եւ միւս Համատես աւետարանների միջեւ սերտ է, սրանք հնարաւորութիւն չեն տալիս պնդելու գրութեան թուականը: Ասուեց, որ աւետարանիչն իր աւետարանի մէջ վկայում է ժողովարաններից որոշ զանգուածների արտաքսելու մասին եւ այս դէպքը թուագրւում է շուրջ 90 Յ. Ք. թուականին: Շատ գիտնականներ համամիտ են, որ այս պէտք է լինի գրութեան ամենահաւանական թուականը: Նրանց այս եզրայանգումը հիմնուած է մի շարք ընդհանրական ձեւակերպումների եւ գրութեան տեւողութեան վրայ: Մինչդեռ, կարող ենք մի շարք տուեալների հիման վրայ վստահաբար ասել, որ աւետարանը գրուել է 100 թուականից շատ տարիներ յետոյ: Ամենավաղ շրջանի պապիրուսէ պահպանակներ, որ պարունակում է նոր Կտակարանից որեւէ հատուած (Rylands Papyrus 457, British Library Papyrus, Egerton 2), ընդգրկում են նաեւ մի քանի համարներ Յովհաննէսի 18-րդ գլխից: Քննելով գրութեան ձեւը, թանաքը եւ կառուցուածքը, պապիրուսագէտներն այն թուագրում են 130 թ. շուրջ: «Անյայտ աւետարանը» (Egerton Nr.2) մասամբ հիմնուած է Յովհաննէսի աւետարանի վրայ եւ այս էլ փաստ է, որ Յովհաննէսի աւետարանը շրջանառութեան մէջ էր Եգիպտոսում շատ աւելի վաղ, քան երկրորդ դարի կէսը: Սրանով կարելի է եզրակացնել, որ Յովհաննէսի աւետարանը գրուել է 80 կամ 100 թուականների միջեւ:

Երկրորդ դարի վերջին Իրենէոս Հայրապետը վկայում է, որ Յովհաննէսի որդի Զեբեդին իր խորը ծերութեան հասակին ապրեց Եփեսոսում եւ այնտեղ էլ գրեց իր աւետարանը: Այս շրջանից նման տեսակէտը գտնում ենք նաեւ այլ հեղինակների գրութիւններում, որը կարճ ժամանակում դարձել է ընդունուած հայեցակէտ: Սակայն դժուար է ընդունել այս տեսակէտի հաւաստիութիւնը: Աւելի վաղ շրջանի հեղինակների գործերում փաստ չկայ, որ Յովհաննէսն ապրել է Եփեսոսում. իսկ եթէ դա պատմական իրողութիւն է, ապա ինչպէ՞ս բացատրել լուծութիւնը: Աւետարանում բացայայտ տեղեկութիւն չկայ հեղինակի ինքնութեան մասին:

Աւետարանի երկրորդ մասում հանդիպում ենք «զոր սիրէմ Յիսուս» (13: 23-25; 19:26), «աշակերտն զոր սիրէ» (20:2-8), «աշակերտն զոր սիրէ Յիսուս», եւ ըստ ոմանց նաեւ՝ 18:15 19:35: Թէեւ շատերը փորձել են «զոր սիրէ Յիսուս» աշակերտին նոյնացնել «որդի Զեբեդի» հետ՝ հիմնուելով 1-20 գլուխների տեղեկութեան վրայ, կարելի է համարել միայն պարզ հետեւութիւն: 21-րդ գլխի 7 համարում հետագայի յաւելում «սիրեցեալ աշակերտը», ներկայանում է որպէս մէկը այն աշակերտների, որոնց անունները յիշատակում են 21-րդ գլխի 2-րդ համարում. «Սիմոն Պետրոս, Թովմայ անուանեալն Երկուրեալ եւ Նաթանայել եւ որդիքն Զեբեդեայ եւ այլ աշակերտաց անտի երկուս»: Հեղինակը չի յիշատակում «երկուս» այլ աշակերտների անունները: Դարձեալ «աշակերտն զոր սիրէ Յիսուս» կարող էր լինել Զեբեդեայի երկու որդիներից մէկը, բայց այս հետեւութիւնը անհիմն է: Եթէ «սիրեցեալ աշակերտը» սկզբից մէկն էր Յիսուսի աշակերտներից, ապա ինչո՞ւ է նրա անունը միայն յիշուում 13-րդ գլխի 23-րդ համարում:

«Սիրեցեալ աշակերտի» յիշեցումին միայն հանդիպում ենք աւետարանի 21-րդ գլխի 24-րդ համարում. «Այս աշակերտ է, որ վկայէ վասն այսոցիկ, որ եւ գրեացն իսկ զայսոսիկ, եւ գիտեմք եթէ ճշմարիտ վկայութիւն նորա»: Առաջին ընթերցումից թուում է, թէ չորրորդ աւետարանի հեղինակը «սիրեցեալ աշակերտն է»: Բայց արդեօք «գրեացն իսկ զայսոսիկ» վերաբերում է ամբողջ աւետարանին, թէ՞ միայն 21-րդ գլխին կամ որոշակիօրէն այդ մի դէպքին: Եթէ նոյնիսկ այդ վկայութիւնը վերաբերէր ողջ աւետարանին, գրաքննութիւնը ցոյց է տուել, որ 21-րդ գլուխը հետագայի յաւելում է եւ միտումնաւոր փորձ է ողջ աւետարանի գրութիւնը վերագրել «սիրեցեալ աշակերտին»: Այսպիսով, դէմ առ դէմ ենք բազմապիսի չարաբանութեամբ հարցերի: Վստահաբար

չգիտենք նաեւ աւետարանի գրութեան վայրը: Նրանք, ովքեր ընդունում են երկրորդ դարի վկայութիւնը, որ այն գրուել է Նփեսոսում, կան այլ բանասէրներ, որ այլ փաստարկների հիման վրայ նախապատուութիւնը տալիս են Աղեքսանդրիային կամ նոյնիսկ Անտիոքին: Այս բոլորը վարկածներ են եւ առ այսօր գրութեան վայրի հարցը պէտք է համարել չլուսաբանուած:

Օգտագործուած գրականութեան ցանկ

1. **Ashton, John**, *Understanding the Fourth Gospel*, Oxford University Press, Oxford, 2nd edition, 2007.
2. **Barrett, C. K**, *The Gospel according to St. John. An introduction with commentary and notes on the Greek text.* SPCK, London, 2nd edition, 1978.
3. **Brown, R. E.**, *The Gospel according to John*, 2 vols, Doubleday, NewYork, 1970.
4. **Bultmann, R.**, *The Gospel of John*, Blackwell, Oxford, 1971.
5. **Dodd, C. H.**, *The interpretation of the Fourth Gospel*, Cambridge, Cambridge University Press, 1953.
6. **Dodd, C. H.**, *Historical tradition in the Fourth Gospel*, Cambridge, Cambridge University Press, 1963.
7. **Graham, Stanton, N.**, *The Gospels and Jesus*. Oxford University Press, Oxford, 1989.
8. **Harvey, A. E.**, *A companion to the New Testament*, Cambridge, Cambridge University Press, 2nd edition, 2004, pp. 365-367.
10. John Ryland's Library, Manchester, Papyrus 457, Papyrus Egerton 2.
11. Թանգարան Հակական Հին եւ Նոր Դպրութեանց Բ Անկանոն Գիրք Նոր Կտակարանաց, Վենետիկ, 1898.
12. Համատես աւետարանները: Մարկոս - Մատթէոս - Ղուկաս, Աշխ. Տ. Ներսէս աւ. քհնյ. Ներսէսեանի, Հայաստանի Աստուածաշնչական Ընկերութիւն, 2007:
13. **Ներսէս աւ. քհնյ. Ներէսեան**, «Յովհաննէսի աւետարանի նախաբանը», Նախնական եկեղեցու մտքի զարգացման պատկերը, Անթիլիաս, 2016, էջ. 78-86:



ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԵԱՆ

Խաչատուր Աբովեանի անուան ՀՊՄՀ
գեղարուեստական կրթության ֆակուլտետ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱՐՄԱՆԻՐ ՔԱՂԱՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ ԵՒ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Արմաւիրը Ռուսաստանի Դաշնութեան Հիւսիսային Կովկասի քաղաքներից մէկն է, որն ունի իր ինքնատիպ պատմութիւնն ու մշակոյթը: Այն հիմնուել է 1839 թ. ռուսական կայսեր միջամտութեամբ՝ չերքեզական գիւղերից այստեղ գաղթած հայերի կողմից, եւ, ի յիշատակ հնադարեան հայոց մայրաքաղաքի, անուանուել է Արմաւիր: Տեղի հայերի ջանքերով փոքրիկ առուը շատ կարճ ժամանակահատուածում՝ մօտ կէս դար, դառնում է Հիւսիսային Կովկասի արդիւնաբերական, երկաթուղային, կրթական եւ մշակութային խոշոր ու ակնառու կենտրոններից մէկը: Շուտով՝ 1914-ին, Նիկոլայ II կայսեր հրամանով այն դառնում է քաղաք՝ բնակչութեան մէջ հայերի թուի գերակշռող մեծամասնութեամբ:

Տեղի հայ բնակչութեան կրօնական կեանքին միշտ էլ բնորոշ է եղել պայծառ եւ անկրկնելի ներկայակեր: Նախա-խորհրդային շրջանում այստեղ գոյութիւն ունէին հայկական հինգ եկեղեցիներ: Այսօր, ցաւօք, դրանցից պահպանուել եւ գործում է միայն մէկը՝ Ս. Աստուածամօր Վերափոխման տաճարը: Հայ հոգեւոր ու մշակութային կեանքում նշանակալի իրադարձութիւն էր այն, որ դեռեւս 1939-ին՝ խորհրդային շրջանում, բարբարոսաբար վերացուած համանուն հին տաճարի տեղում հայերի եւ Նոր Նախիջեւանի թեմի համատեղ ջանքերով 2015 թուականին կարմիր տուֆով կառուցուեց Ս. Գէորգ խաչածէւ փոքրիկ եկեղեցին: Վերջին տարիներին այս երկու եկեղեցիների գեղարուեստական յարդարանքն ստանձնել է մի շատ արժանաւոր հայորդի՝ հմուտ սրբանկարիչ, միջնադարեան եկեղեցական արուեստի գիտակ Հայկ Ազարեանը¹:

Դեռեւս 1839 թ. փետրուարի 23-ին Կուբանի ճակատի հրամանատար գեներալ-մայոր Գ. Զասսը հրամայում է չերքեզահայերին տեղափոխել Կուբան գետի ձախ ափը՝ «Պրոչնի օկոպ» ամրոցի դիմաց: Այս օրը համարում է Արմաւիր քաղաքի հիմնադրման տարելիցը: Զօրավարը յատուկ յանձնարարում է, որ նոր վայրում «մեծ նեղութիւններ չլինեն, պահպանուեն փողոցների ճիշդ կառուցուածքը, իսկ ամբողջ բնակավայրի կենտրոնում թողնեն հրապարակ, որը բաւարար կը լինի եկեղեցի կառուցելու համար»: Գ. Զասսը նաեւ կարգադրում է, որ տաճարը կառուցեն քարէ հիմքի վրայ, ծածկեն

¹ Հայկ Աբրահամի Ազարեանը Ս. Էջմիածնի Գէորգեան նեմարանում կրթութիւն ստանալուց ու սարկաւագ ձեռնադրուելուց յետոյ ուսանել է Բուխարեստի պատրիարքարանի եկեղեցական նկարչութեան դպրոցում, ապա 1995-2000 թթ. սովորել է Բուխարեստի Աստուածաբանական համալսարանի մշակութային ժառանգութեան ռեստուրացիայի բաժնում, իսկ 2003 թ. գրելով «Մրբապատկերի աստուածաբանութիւնը մեր օրերում» թեմայով ատենախօսութիւնը՝ ստացել է աստուածաբանական գիտութիւնների թեկնածուի աստիճան: Տե՛ս Satenik Vardanyan. Haik Azarian // «Divine Temple», (Annual Almanac), «Kolomenskaya Versta», Saint - Petersburg, I, 2014, p. 9-11.

երկաթէ կտուրով, իսկ գագաթը պսակեն ոսկեզօծ խաչով²: Յաւօք, 1842-ի մի շարադէտ գիշեր հրդեհ է բռնկուում, եւ փայտէ անաւարտ տաճարն ամբողջովին դառնում է հրօ ճարակ: Տարիներ յետոյ այնտեղ վերստին կառուցւում է հայկական աղիւսէ եկեղեցի, որը 1861 թ. օգոստոսի 25-ին հանդիսաւոր կերպով օծւում է Աստրախանի արքեպիսկոպոս Մատթէոսի կողմից եւ ստանում «Ս. Աստուածածնի Վերափոխումը» անուանումը: Իսկ 1887-ին էլ աւարտւում է Ս. Վերափոխման հայկական եկեղեցու հիմնական վերանորոգումը: Հաւանաբար միայն դրանից յետոյ է Արմաւիրի այդ հնագոյն եկեղեցին ստանում իր այժմեան տեսքը, որն աւելի հոգեհարազատ է հայ պաշտամունքային ճարտարապետութեանը, քան այն, որն սկզբում նախատեսուած էր վերջինիս կառուցման համար: Այս տաճարը, բարեբախտաբար, պահպանուել է մինչեւ մեր օրերը եւ գործում է Կիրովի փողոցի թիւ 7 հասցէում:

Եկեղեցու ինտերիերը՝ ներսի ճարտարապետական եւ գեղարուեստական ձեւաւորումը, նախքան ներկայիս վերանորոգումը զարգարուած էր որմնանկարներով, ինչպէս նաեւ XIX դարի հաստոցային նկարներով: Ուշարժան է, որ աստուածաշնչեան թեմաները հիմնականում ներկայացուած էին փաստագրական-պատմական նկարների մեկնաբանութիւններով, իսկ առաքելների եւ սրբերի պատկերները՝ ակադեմիական ու իրապաշտական ոճով³: Այստեղ առկայ են ինքնօրինակ նկար-սրբապատկերներ, որոնք բնորոշ են XVII-XIX դարերի հայկական եկեղեցական արուեստին եւ կատարուած են անանուն վարպետների կողմից:

Վերջին տարիներին եկեղեցին վերանորոգման խիստ պահանջ էր զգում, ուստի նրա նոր տեսքը դարձել է տեղի հայութեան ինքնութեան եւ հոգեւոր դարձի նորոգուած խորհրդանիշ: Վերափոխումն Ս. Աստուածածնի տաճարն այսօր, քան երբեւէ, փայլում է իր նոր՝ իւրօրինակ որմնանկարներով, միջնադարեան մանրանկարչական բարձրարուեստ եւ կոթողային հնչեղութիւն ստացած զարդերով: Եկեղեցու գմբէթարդում ոսկեգոյն խորքից Քրիստոսի Ամենակալ կերպարն է՝ աղօթող աջ ձեռքով եւ գլանակը ձախ ձեռքում: Եկեղեցական արուեստի կանոններին համաձայն՝ Փրկչի կերպարը գմբէթում, ինչպէս երկնքում, հաստատում է իր փառահեղ ներկայութիւնը՝ Երկրորդ գալստեան եւ քրիստոնէական կրօնի փառաբանումը: Քրիստոսի մտահայող կերպարն այստեղ զբաղեցնում է գմբէթի կենտրոնական հատուածը, իսկ նրա պատկերը երիզուած է ժապաւէնաձեւ շրջանակով, ուր ասւում է. «ԱՍՏՈՒԱՄ ԶՕՐՈՒԹԵԱՆՅ, ԴԱՐՁ ՀԱՅԵԱՅ ՅԵՐԿՆԻՅ ԵՒ ՏԵՍ, ԱՅՅ ԱՐԱ ԱՅԳԻՈՅՍ ԱՅՍՄԻԿ, ՏԵՐ ԱՍՏՈՒԱՄ ԶՕՐՈՒԹԵԱՆՅ, ԴԱՐՁՈ ԶՄԵԶ, ԵՐԵԻԵՅՈ ԶԵՐԵՍՍ ՔՈ Ի ՄԵԶ ԵՒ ԿԵՅՅՈՒՔ»: Քրիստոսի պատկերով մեղալիոնը պահում են սաւառնող չորս հրեշտակները՝ իւրաքանչիւրն առանձնաշատուկ դէմքով, բայց անկիրք կերպարով: Նրանք գունային նրբին երանգների հագուստներով են՝ վարդագոյն, երկնագոյն, բաց փիրուզագոյն եւ դեղնաւուն՝ ծալքերի լուսաստուերային նուրբ անցումներով: Յիսուսի եւ հրեշտակների տեսքն առաջացնում է թովիչ, երանային ներկայութեան տպաւորութիւն:

Գմբէթը պահող թմբուկի պատուհանների արանքներում հայկական մանրանկարչական գոհար զարդերն են, իսկ թմբուկի հիմքում՝ մեղալիոնների մէջ, պատկերուած են չորս մեծ նահապետներ ս. Աբրահամը, ս. Մեղքիսեդեկը, ս. Դաւիթը, ս. Սողոմոնը եւ չորս մեծ մարգարէների կերպարները՝ ս. Եսային, ս. Երեմիան, ս.

² Մանրամասն տե՛ս Шаган-Симон. Памятник армавирскому четырехголосному хору. Тифлис, «Эсперанто», 1914. с. 62-64 (на арм. яз.), Ктиторов С. Н. Исторический очерк армянских храмов Армавира // <http://ru.hayazg.info/%D0%9A%D1%82%23.032018>, Армянские церкви Российской империи (1717-1917), Ереван, Тигран Мец, 2009, с. 10-15.

³ Տե՛ս Армянские церкви Российской империи (1717-1917), Ереван, Тигран Мец, 2009, с. 10-15.

Եզեկելը, ս. Դանիէլը: Եկեղեցու նահապետների այս շարքը ներքեւից երիզում է զարգառճ շրջանակով, որից ներքեւ թմբուկի տարածութիւնը նկարիչը պատել է երկնագոյն խորքով: Այստեղ՝ կամարների ու թմբուկի միացման հատուածում՝ երկնային կապոյտով ներկուած հիւսիս-հարաւային մասում, բացայայտում են Յովհաննէս Մկրտիչը եւ Մարիամ Աստուածածինը՝ Օրանտայի տեսքով, իսկ արեւելք-արեւմուտք առանցքում Եթիմասիայի աթոռն է ու Քրիստոսի անձեռակերտ պատկերը: Ներքեւից՝ կամարներից դէպի թմբուկ բացուող առագաստներին, եկեղեցական կանոնադրութեանը համաձայն, պատկերուած են չորս աւետարանիչները: Նրանցից իւրաքանչիւրի վերելում՝ ճերմակ ու կապոյտ երանգների ներքոյ, ներկայացուած է համապատասխան խորհրդանշը:

Եկեղեցու նկարազարդման աշխատանքները դեռեւս շարունակում են: Գլխաւոր խորանում Հայկ Ազարեանն այժմ աւարտին է հասցնում Յարութեան պատկերը՝ Դժոխքի Աւերման տեսարանով:

Ս. Աստուածածնի Վերափոխման տաճարը բարենորոգումից յետոյ ընդհանուր առմամբ ներկայանում է մեր առջեւ տօնական վառ գոյների գեղեցկութեամբ, սրբերի պատկերների զուսպ ու պայծառատես խորհրդով: Նշելի է, որ սրբապատկերների գեղարուեստական այսօրինակ մեկնաբանումը համահունչ է եկեղեցական դարաւոր արարողակարգին եւ հաւատացեալ ժողովրդին իրաւամբ հաղորդակից է դարձնում երկնային բացառիկ գեղեցկութեան վեհ արժէքներին:

1868 թ. յունիսի 6-ին տեղի բնակիչների հաւաքած զոհաբերութիւնների շնորհիւ հիմնում է մի մատուռ, որը վերագրւում է Ս. Վերափոխման տաճարին: Մատուռի կառուցման առիթը բաւական խորհրդանշական է. տօնելով 1867-ի մայիսի 25-ին Փարիզում Ալեքսանդր II կայսեր վրայ կատարուած անյաջող մահափորձից փրկութիւնը՝ բնիկ արմաւիրցիներն այդ ձեռնարկով ընդգծում էին իրենց նուիրուածութիւնը Ռուսաստանին ու միապետին: Ինչ տեսք ունէր այդ մատուռը, կամ որտեղ է այն գտնւում՝ դեռեւս անյայտ է:

Ս. Վերափոխման հայկական եկեղեցու օծումից 20 տարի յետոյ մէկ ուրիշ թաղամասի բնիկ հայերը որոշում են գիւղում կառուցել նոր եկեղեցի⁴: Ենթադրեալ աղօթարանի փոխարէն նրանց յաջողում է կերտել աղիւսէ մի փոքրիկ եկեղեցի: 1887 թ. Աստրախանի արքեպիսկոպոս Գէորգ Սուրենեանցը (հետագայում՝ կաթողիկոս Գէորգ V) այն օծում է Ս. Գէորգ անունով (Ս. Գէորգի Պոբեդոնոսեց): Ս. Գէորգիեւեան եկեղեցու հին շէնքը պահպանուել է մինչեւ մեր օրերը (Լիւքսեմբուրգի փողոց, թիւ 170): Այսօր այն օգտագործւում է որպէս բնակելի շէնք: Այդ շէնքի բնակիչներն իրենց կցակառուցներով եւ վերափոխումներով կամայ-ակամայ հիմնովին խաթարել են պատմա-ճարտարապետական այդ յիւրաւի արժէքաւոր յուշարձանի նախնական տեսքը:

Ս. Գէորգի Պոբեդոնոսեցի տաճարը, իր գաւթով հանդերձ, ունի քառաթեւ խաչի տեսք եւ ուղղուած է դէպի Արեւելք: Աղօթարանը մի երկար ու բարձր շինութիւն էր: Գլխաւոր խորանի հատուածը բարձրացուած էր եւմնացած մակերեսից առանձնացուած էր խորանի միջնորմով ու վարագոյրով: Հին լուսանկարներից մէկի համաձայն, ուր Ս. Գէորգիեւեան տաճարը երեւում է յետնամասում, վերջինիս կենտրոնական հատուածում թմբուկի վրայ վեր է խոյանում խաչ ունեցող մի փոքրիկ գմբէթ: Հարաւարեւմտեան կողմից շինութեանը յարում է ցածր երկյարկանի զանգակատունը: Որմնանկարների եւ նկարների վերաբերեալ առայժմ տեղեկութիւններ չկան:

1902-1904 թթ. Արմաւիրի նոր գերեզմանատանը (ներկայումս այն ընդարձակ

⁴ Ст'ю Шаган-Симон, нշում աշխ., էջ 91-92:

տարածություն է, որն ընկած է Վոլոդարսկի, Շահումեան փողոցների եւ երկաթուղային ճանապարհների միջեւ) բարձրանում էր եւս հայկական մէկ ուրիշ եկեղեցի՝ Սուրբ Պողոս-Պետրոսը: Պաշտամունքային այս կառույցի մասին պահպանուել են խիստ ժլատ տեղեկություններ: Տարեցների պատմությունների համաձայն՝ Պողոս-Պետրոս եկեղեցին ունեցել է փոքր չափեր եւ համապատասխանել է միջնադարեան հայկական ճարտարապետութեան ոճին⁵: Այստեղ հիմնականում կատարւում էին հոգեհանգստեան արարողություններ: Խորհրդային տարիներին տաճարի, ինչպէս նաեւ հանգուցեալ շատ արմաւիրացիների գերեզմանների ճակատագիրը ողբերգական եղաւ: 1922-ի ապրիլին նոր իշխանություններն այստեղ բռնագրաւեցին եկեղեցական արժէքները: Այսպէս, օրինակ, 1931 թ. հայկական գերեզմանատան տարածքում սկսեց աշխատել անտառահատման մի գործարան, որի հետեւանքով 1936-ին ոչնչացաւ նախկին գերեզմանատան եկեղեցին:

XIX վերջերին, Արմաւիրի տնտեսական բուռն զարգացմանը զուգընթաց, ի հաշիւ Ռուսաստանի այլ մասերից եւ արտասահմանից եկած վերաբնակիչների, բազմապատկւում է նաեւ բնակչութեան թիւը: Եկուորների թուում էին նաեւ բազմաթիւ հայեր: Ընդարձակուող հայկական համայնքի հոգեւոր խնդիրները յանգեցրին նոր թեմական եկեղեցի կառուցելու անհրաժեշտութեանը: Ս. Գէորգ նոր եկեղեցու հանդիսաւոր հիմնարկումը տեղի է ունենում 1908 թ. ապրիլի 23-ին: Միայն 1915 թ. գարնանը, երբ Արմաւիրն արդէն դառնում է քաղաք, աւարտւում են շինարարական եւ յարգարման բոլոր աշխատանքները:

Ս. Գէորգ տաճարի աղիւսէ սլացիկ շէնքը կառուցուել էր միջնադարեան հայկական պաշտամունքային ճարտարապետութեան ոգով: Եկեղեցու օծման համար Արմաւիր է ժամանում Աստրախանի հայկական թեմի եպիսկոպոս Մխիթարը: Արմաւիրեան պարբերականներից մէկի լրագրողը իրադարձությունները նկարագրելիս նշել է հետեւեալը. «Անհնար է չիշատակել Արմաւիրի Գէորգիեւեան նորակառույց եկեղեցին, որն այսքան մեծ ու գեղեցիկ է: Եկեղեցու ներքին եւ արտաքին ոճաւոր յարգարանքներն ապշեցուցիչ են: Դրսից եկեղեցին սուաղուած եւ ներկուած է ակնահաճոյ բաց շագանակագոյն նրբերանգով: Ներսից եկեղեցին պատուած է միատեսակ մարմարով: Որմնանկարները կատարուած են Պետրոգրադի գեղարուեստական ակադեմիան աւարտած հայազգի նկարիչ Արշակ Ֆէթուաճեանի կողմից: Յատկապէս տպաւորիչ է եկեղեցու խորանի միջնորմը, որը հսկայական չափերի է. այն մաքուր մարմարից է, եւ կառուցել է իտալացի յայտնի վարպետ Կատոն: Մանկանը գրկած Աստուածամօր սրբապատկերը կատարուած է պաստառի վրայ եւ տեղակայուած է գահի վերելի միջնորմում. այն կատարուած է հին արեւելեան ոճով եւ թողնում է վերերկրային մաքրութեան ու սրբութեան տպաւորութիւն, իսկ նրան նայելիս միտքը սաւառնում է առ երկինք»⁶:

Ս. Գէորգ նոր եկեղեցին դառնում է հայկական ամենահիմնաւոր ու ամենագեղեցիկ եկեղեցիներից մէկը Հիւսիսային Կովկասում: Ա. Ֆէթուաճեանի փաստաթղթերում յայտնաբերուել է Քրիստոսի պատկերը կրող մի անսովոր էսքիզ, որի վրայ առկայ է հեղինակի մակագրությունն այն մասին, որ վերջինս տեղափոխուել է Արմաւիրում կառուցուած Ս. Գէորգ եկեղեցու պատի վրայ⁷:

Վեր խոյացող Ս. Գէորգ հսկայ եկեղեցին, ինչպէս արդէն նկատել ենք, հետագայում ցաւալիօրէն դառնում է խորհրդային իշխանությունների հակա-կրօնական հրեշաւոր քաղաքականութեան զոհը. 1939-ին եկեղեցին պարզապէս խլւում է ծխականներից ու

⁵ Տե՛ս Ктиторов С. Н., նշուած աշխ.:

⁶ Նոյն տեղում:

⁷ Տե՛ս Архивный отдел НКГА, Аршак Фетваджян, ф-144.

քանդուժ՝ հիմնականում աղիւսը որպէս շինարարական նիւթ օգտագործելու նպատակով:

Ինչպէս ցարական շրջանում, այնպէս էլ այսօր հայկական Ս. Աստուածամօր վերափոխման եւ Ս. Գէորգ նոր եկեղեցիների, ինչպէս նաեւ ռուսական ուղղափառ Նիկոլաեւեան եկեղեցու ուրուագծերն իշխում են Արմաւիր քաղաքի վրայ ու կատարում հոգեւոր վեհապանծ խորհրդանիշների դեր: Արմաւիրի հայ բնակչութեան պատմութիւնն ու մշակոյթը Ռուսաստանի Դաշնութեան պետական կառոյցի մէջ ակնառու կերպով վկայում են հայկական համայնքի ներդրման ու ներգրաւուածութեան մասին՝ միաժամանակ պահպանելով ու զարգացնելով ազգային հարուստ ու իւրօրինակ մշակոյթը⁸:



⁸ Տե՛ս Լ. Ա. Բոգոսյան, «Армянская колония Армавира», Ереван, 1981, АН АССР, 1981, 181 с., Խ. Բորիսյան, «Происхождение черкесского населения и основание г. Армавира», //Вестник общественных наук, АН АССР, Ереван, № 5, май, 1971, с. 66-75, Փ. Մ. Բորիսյան, «История Армавира и черкесско-горцев». Екатеринбург, Т-во «Печатник», 1916, 194 с.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱԼՏԵՐ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի
առկայ բակալավրիատի 4-րդ կուրսի
ուսանող

ԼԵԶՈՒԻ ԱՐՏԱՅԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ՊՈԵՄՈՒՄ

Գաղտնիք չէ, որ հայ գրականության զարգացման մէջ վիթխարի է Գրիգոր Նարեկացու դերը: Վերջինիս մեծութիւնն ու կարեւորութիւնը վերստին հաստատեցին բոլորովին վերջերս, երբ Վատիկանի Սուրբ Պետրոսի տաճարում Հայոց ցեղասպանության 100-ամեայ տարելիցին նուիրուած սուրբ պատարագին Հռոմի Ֆրանցիսկոս Պապը Նարեկացուն հռչակեց Տիեզերական եկեղեցու վարդապետ: Յաւելենք, որ 2000 տարուայ պատմութեան մէջ Գրիգոր Նարեկացին 36-րդն է, ով արժանացաւ բարձրագոյն այդ կոչմանը: Սա հպարտանալու առիթ է համայն հայութեան համար եւ եւս մէկ անգամ փաստում է այն, որ Նարեկացին միշտ արդիական է, նրա ժառանգութիւնը՝ անսպառ:

Գ. Նարեկացին հայ եւ համաշխարհային գրականութեան մէջ հռչակուել է «Մատեան ողբերգութեան» պոեմով, որը թարգմանուել է աշխարհի բազում լեզուներով: Պոեմը դարեր շարունակ կոչուել է նաեւ «Նարեկ» (ձեռագրերում յայտնի են եղել տարբեր վերնագրեր՝ «Նարեկ աղօթից», «Գիրք աղօթից», «Աղօթամատեան», «Աղօթամատոյց» եւ այլն), եւ այդ գրքին վերագրուել է հոգեկան, մարմնական ցաւեր բուժելու մեծ կարողութիւն: Նարեկացին իր «Մատեան ողբերգութեան» պոեմով մարդասիրութիւն, գթառատութիւն, ազնւութիւն, անաղարտութիւն է քարոզում մարդկանց, կոչում բոլորին լինել բարի, արդար, սիրել եւ օգնել միմեանց, ձգտել կատարելութեան: Վ. Նալպանտեանը առանց վերապահութեան նշում է, որ «Մատեան ողբերգութեան» ձեռակերտը ոչ միայն հայ ազգային քերթողական հանճարի ամենամեծ արգասիքն է, այլեւ առհասարակ իր ժամանակի համաշխարհային գրականութեան ամենափայլուն ու ինքնատիպ յուշարձաններից մէկը, որոնց ծնունդը, ինչպէս յայտնի է, այնքան էլ յաճախագէտ չէ աշխարհի ժողովուրդների գրականութիւնների պատմութեան մէջ¹: Տեղին է յիշատակել նաեւ այն, որ «Մատեան ողբերգութեան» պոեմը պատկանել է ամենաշատ կարդացուող գրքերի թուին, պաշտուել է անգամ Սբ. Գրքին հաւասար եւ նոյնիսկ շատ անգամ էլ նախապատուելի է համարուել եկեղեցական շատ գրուածքներից:

Լեզուաբանական առանձնայատկութիւնների տեսանկիւնից դիտարկելով Նարեկացու մատեանը՝ սոյն աշխատանքում ներկայացնում ենք գրաբարի՝ գրքում վկայուած արտայայտչամիջոցները եւ երեւան հանում Նարեկացու լեզուաշինական մեծ կարողութիւններն ու հմտութիւնները:

¹ Տե՛ս Նալպանտեան Վ., Գրիգոր Նարեկացի, Եր., 1990, էջ 84:

Վ. Նալպանտեանը գրում է. «Նարեկայ վանականի այդ զարմանահրաշ ստեղծագործութիւնը հայ պոեզիայի բանաստեղծական ձեւերի ու արտայայտչական միջոցների մի անսպառ շտեմարան է, մի զարմանալի յորդաբուխ աղբիւր, որից դարեր շարունակ առատօրէն օգտուել են մեր ազգային քերթութեան վարպետների բազում սերունդներ, եւ որը այսօր էլ, իրօք, կարող է շատ բանով ուսանելի լինել»²:

Յայտնի է, որ լեզուի արտայայտչական միջոցներից են ճարտասանական դարձոյթները, կրկնութիւնը՝ իր տարբեր տեսակներով, աստիճանաւորումը, շրջադասութիւնը, ընդհատումը, զեղչումը, հակադրութիւնը եւ այլն:

Մատեանը հարուստ է ճարտասանական դարձոյթներով, որոնք են ճարտասանական հարցը, ճարտասանական բացականչութիւնը, ճարտասանական դիմումը: Սրանցից առաջինը զգացմունքներ, յոյզեր դրսեւորելու միջոց է, երկրորդը ոճական-շարահիւսական դարձոյթ է, որի դէպքում խօսքին հաղորդում է արտայայտչականութիւն, իսկ ճարտասանական դիմումը հեղինակի կամ որեւէ մէկ այլ անհատի յոյզերի, ապրումների արտայայտման լաւագոյն միջոց է, երբ խօսողը խօսքն ուղղում է ոչ միայն ներկաներին, խօսակցին, այլեւ հռետորական եւ փիլիսոփայական մղումներով դիմում է բացակայ մարդկանց, բնութեանը, նրա առանձին երեւոյթներին ու առարկաներին, դրանով իսկ առաւել եւս խօսքը դարձնում յուզիչ ու ներգործուն³: Բերենք բնագրային օրինակներ՝

Եւ արդ, որո՞ց խնդրոց արժանատի վարկանելով զիս՝ մայրչիւն աղերսել.

Արքայութեանն, յորմէ վրիպեցայ,

Թէ փառնցդ վայելչութեան, յորմէ զրկեցայ,

Թէ կեննցդ անմահականաց, յորմէ հեռքեցայ,

Թէ ընդ հրեշտակսն պարսկցութեանն, յորմէ տրոհեցայ... (ԲԱՆ ԻԴ, ա)

Մեղսնյ մեծիդ բարեդարութեան, անարգս մեղայ,

Մեղսնյ ծագմանդ ճառագայթից, խաւարս մեղայ,

Մեղսնյ շնորհացդ անբաւ երախտեաց, արդարեւ մեղայ,

Մեղսնյ սիրոյդ վերնում գթութեան, յայտնապէս մեղայ... (ԲԱՆ ԻԷ, գ)

Այս օրինակներում նկատելի է ե՛ւ ճարտասանական դարձոյթների, ե՛ւ կրկնութիւնների միաժամանակեայ կիրառում, ինչը հաստատում է այն, որ Նարեկացու ոճին բնորոշ է երկու եւ աւելի ոճական հնարանների համաժամանակեայ գործածութիւնը: Աւելի յաճախ բանաստեղծը ստեղծում է հռետորական հարցումների հարուստ ու բազմաշերտ գունեղ կուտակումներ, որոնք զարմանք են պատճառում իրենց արտայայտչական ներքին վիթխարի զօրութեամբ, վարակիչ յուզականութեամբ: Ճարտասանական դարձոյթների օժանդակութեամբ Նարեկացու կատարած մի շարք հարցադրումներ միտուած են հասնելու եւ ձուլուելու կատարելիութեանը, աստուածային էութեանը: Ըստ էութեան, դա անհնարին է. Աստուած կատարեալ է, մարդը՝ անկատար: Աստծուն հասնելու գեր-զգայական ճանապարհը միշտ է հետաքրքել Նարեկացուն եւ ճարտասանական դարձոյթները այս դէպքում խթան են այդ ամենի բացայայտմանը: Ճարտասանական դարձոյթների օրինակներ առկայ են նաեւ Բան (Բ), Բան (Դ), Բան (Ը), Բան (ԻԱ), Բան (ԻԵ), Բան (ԻԸ), Բան (ԻԹ), Բան (ԽԵ), Բան (ԽԸ) եւ այլ գլուխներում:

Պոեմում կան կրկնութիւններ, որոնք նպաստում են խօսքի արտայայտչականութեանը: Խօսքի տարբեր դրսեւորումներում (գործառական տարբեր ոճերում)

² Նոյն տեղում, էջ 265:

³ Տե՛ս Եզնկեան Լ., Հայոց լեզուի ոճագիտութիւն, Եր., 2006, էջ 362:

ոճական որոշակի նպատակներով, որպէս կանոն, կրկնում են նախադասութեան ամենատարբեր միաւորները, խօսքի մասերը, որը նախ իւրապատուկ յանգաւորում է ստեղծում, բխում է տաղաչափական կառուցուածքից, ապա բովանդակային խորութիւն է ստանում: Այսպէս՝

Ահա ողորմեա ինձ, գթած, աղաչեմ զքեզ,
Ողորմեա ինձ, հզար, կրկին ողորմեա.
Մի փոխարկեր երկունս ցաւոց ընդ չարեաց իմոց, բարիդ ամենեւին,
Մի բառնար ի վրասնգեղոյս զառ ի քէն պարգեւեալդ շնորհ,
Մի կապրեր զփշումն ամէնարհնեալդ Հոգոյ... (ԲԱՆ ՀԸ, գ)

Եթէ զինուոր րեսանեմ՝ մահու ակն ունիմ,
Եթէ պարգանաւոր՝ խարութեան,
Եթէ մարենագէտ՝ մուրհակի կորստեան,
Եթէ արհնաւոր՝ անիծից... (ԲԱՆ ԻԳ, գ)

Տեղին է յիշատակել Հր. Միրզոյեանի կատարած քննութիւնը. պարզում է, որ Մատեանի 95 գլուխներից 59-ը սկսում է շաղկապով կամ շաղկապական բառերով, 2-ը՝ **ընդ** նախդիրով, դրանցից յատկապէս գերակշիռ է «Եւ արդ» շաղկապը (31), իսկ առանց շաղկապի սկսուող 30 գլուխներից 25-ը սկսում է «Տէր» (7), «Աստուած» (5), «Աւհնեալ» (2), «Արեալ» (2), «Բարձրեալ» (2)... բառերով⁴: Անշուշտ, սա եւս հետաքրքրական է եւ նիւթի հետ առնչուող: Այս դիտարկումն ապացուցում է, որ պոեմը կուռ ամբողջութիւն է, ոչ թէ աղօթամատեան, որի առանձին մասերը միւսների հետ կապուած են տրամաբանական կապերով, հիմունքներով: Բացի այդ՝ հեղինակն ակնյայտ մեղեդայնութիւն, երաժշտականութիւն է հաղորդել իր գրած տեքստին: Կրկնութեան օրինակներ կան նաեւ Բան (է), Բան (ՄԴ), Բան (Ձէ), Բան (ՀԹ) եւ այլ գլուխներում:

Ոճական արտայայտչամիջոցներից պոեմը հարուստ է նաեւ աստիճանաւորման շատ օրինակներով: Աստիճանաւորումը յարիմաստ կամ համանիշ բառերի, լեզուական տարբեր միաւորների շարադասութիւնն է, որը բխում է հեղինակի ուժեղացող՝ սաստկացող կամ նուազող իմաստային, բովանդակային նպատակադրումից: Ըստ այդմ էլ լինում է երկու տեսակ՝ բարձրացող (ուժեղացող) եւ իջնող (թուլացող): Յաւելենք, որ այն կիրառում է գեղարուեստական, հրապարակախօսական, յաճախ նաեւ առօրեայ-խօսակցական խօսքում: Բերենք համապատասխան օրինակներ:

Բարձրացող (ուժեղացող)՝
Այլ յայս անսրուերագիր վարահոտիւն ապաստան՝
Կամ կործանեալս կանգուն,
Թշուառացեալս՝ յաղթող,
Վրիպեալս՝ ի դարձն կենդանական,
Ամենաթշուառ չարագործս՝ ի յոյսն,
Մահու մարնեցեալս՝ ի կեանսն... (ԲԱՆ ԺԱ, ե)

Իջնող (թուլացող)՝
Քանզի իմ ոք հասեալ յառաւապ՝
Եւ ի ծագման լուսոյն խիթայ մթանալ,
Եւ կամ ընթերակաց կենաց՝ մահանալ,

⁴ Տե՛ս **Միրզոյեան Հ.**, Նարեկացու մատեանի ներքին կառուցուածքի հիմնախնդիրը, Բանբեր Երեւանի համալսարանի Հայագիտութիւն, 2016 (3), էջ 39:

Կամ ազատություն՝ եւ պարտաւորիլ,
 Կամ շնորհաց՝ եւ դատապարտիլ,
 Կամ փրկութեան՝ եւ մարմնիլ... (ԲԱՆ ԺԷ, ք)

Աստիճանաւորման օրինակներ տեսնում ենք նաեւ Բան (Ի), Բան (ԻԴ), Բան (ԻԷ), Բան (ԼԲ), Բան (ԼԳ), Բան (Խ), Բան (Մ), Բան (ՀԹ), Բան (ԿԷ) եւ այլ գլուխներում:

«Մատեան»-ում ոճական արտայայտչամիջոցներից վկայուած է նաեւ շրջադասութիւնը (ինվերսիա): Դա նախադասութեան կամ բառակապակցութեան անդամների ոչ սովորական (ոչ կանոնական) շարակարգումն է, շրջուն շարադասութիւնը, որը բնորոշ է յատկապէս չափածոյ խօսքին⁵: Աւելացնենք, որ շրջադասութիւնը դրսեւորուած է երեք եղանակով՝ հակադասութեամբ, շարախախտումով եւ հերթաշրջումով: Այսպէս՝

Հանապազ եռամ եւ ոչ երբէք մարզիմ,
 Միշտ խառնիմ զուգիլ եւ ոչ եւս միանամ,-
 Ահա զուր արծաթագործդ, երկնաւոր իմ ճարտարապետ,
 Ի սևոյրիս վատրակեալ առ իս աշխատիս... (ԲԱՆ ԿԹ, ա)

Եւ մի իբր յանկարծադէպ հիմից ատպարակ՝
 Գիշեր մահուն ինձ պատահեսցի:
Մի քսալ քաւթոյն յանկարդասար պահուն զարմարս հարեալ՝ **ցամաքեցուցէ**,
 Եւ մի լուսնական դիպումաժք, հասեալ զաղբնեալք, վնասեսցեն: (ԲԱՆ ԶԲ, գ)

Շրջադասութեան օրինակներ տեսնում ենք նաեւ Բան (Գ), Բան (Զ), Բան (Ղ), Բան (Կ), Բան (ԺԲ), Բան (ԻԹ), Բան (ԿԵ), Բան (ԼԳ), Բան (ՂԳ), Բան (ԽԱ), Բան (ՄԼ), Բան (ԼԷ), Բան (ԺԶ), Բան (ԿԶ) եւ այլ գլուխներում:

Խօսքի ընդհատումը եւ զեղչումը Նարեկացին եւս առատօրէն կիրառում է պոեմում: Ընդհատումը խօսքային-արտասանական շղթային (յաջորդականութեանը) յանկարծակի դադար տալն է, որով նախադասութեան կաղապարը անաւարտ է մնում, սակայն արտասանուածքն ուղեկցւում է յուզականութեամբ կամ խօսողի ակնյայտ երկմտութեամբ: «Զեղչումը նախադասութեան՝ բառակապակցութեան հեշտ վերականգնելի եւ մտքով հասկացուող անդամի (բաղադրիչ տարրի, մասի) բացթողումն է. խօսքին բերում է սեղմութիւն, նրան տալիս է յոյզ, ներգործուն ոյժ եւն»⁶: Բերենք օրինակներ՝

Անսխալ հոգում եւ անշաղախ մարմնով
 Զապալինեալս ի քեզ հանդերձեա
Ի շնչմանէ հողմոց, ի զարկմանէ բռնութեանց,
Ի բախմանէ փոթորկաց, ի յոստմանէ մրրկաց,
Ի յարձակմանէ գազանաց:
Ի կափման աչացս հայեցուած սրտիս մի ստուերացի... (ԲԱՆ ՂԱ, դ)

Ընդհատման եւ զեղչման օրինակներ առկայ են նաեւ Բան (ՂԲ), Բան (ՂԳ), Բան (ՀԵ), Բան (ԼԴ) եւ այլ գլուխներում:

Գրքում մեծ տեղ են գրաւում հակադրութիւնները: Այն ոճաբանական հնար է, որն իրենից ներկայացնում է հակիմաստ բառերի, մտքերի, պատկերների հակադրում: Օրինակ՝

⁵ Պետրոսեան Հ., Հայերենագիտական բառարան, Եր., 1987, էջ 509:

⁶ Նոյն տեղում, էջ 506:

Մի ընդհարկանիր խաղութեամբ մեծոք ընդ փոքրուս,
 Լոյսդ՝ ընդ ստուերականիս,
 Բնութեամբ բարիդ՝ ընդ ի բնէ չարիս,
 Ողկոյզդ արհնութեան՝ ընդ պրոյոյս անիծից,
 Քաղցրութիւնդ իսկապէս՝ ընդ համայն դառնութեանս... (ԲԱՆ ԺԷ, ք)

Եւ ես՝ խաւար եւ յիմար,
 Դու՝ իսկութեամբ բարի, գովելի,
 Եւ ես՝ համայնիւն չար, ապիկար,
 Դու՝ Տէր ստորիցս եւ երկնից,
 Եւ ես՝ անիշխան շնչոյս եւ հոգւոյս,
 Դու՝ բարձրեալ, ի կարեաց զարեալ... (ԲԱՆ ԶԳ, ք)

Պէտք է նշենք, որ հեղինակի համոզմամբ՝ հակադրութիւնը յարաբերական է. մարդկայինը կարող է դառնալ աստուածային եւ նաեւ՝ հակառակը: Անտարակոյս, սա յանգում է միաթիկների տեսութեանը, խորհրդապաշտութեանը: Հակադրութեան օրինակներ տեսնում ենք նաեւ Բան (Կ), Բան (ՁԲ), Բան (ՀԱ) եւ այլ գլուխներում:

Գրիգոր Նարեկացին պոեմում ստեղծել է բազմաթիւ համեմատական պատկերներ: Նրա բանաստեղծական արուեստի կարեւոր իւրայատկութիւններից մէկը պիտի տեսնել, անշուշտ, հէնց բանաստեղծական պատկերների, եթէ կարելի է այսպէս բնութագրել, «նարեկացիական» զարմանալի ու ինքնատեսակ «թանձրացականութեան», «առարկայականութեան» մէջ, որի շնորհիւ հեղինակի խօսքը, եթէ անգամ այն վերաբերում է ամենավերացական գաղափարներին, ձեռք է բերում ինքնօրինակ տեսանելի, շօշափելի կոնկրետութիւն, ընդգծուած արտայայտչականութիւն եւ ներազդելու զօրութիւն: Նարեկացին այս դէպքում կտաւներ ստեղծելու մեծ վարպետ է:

Աստուածաշնչեան պատկերներ՝ մարգարէութիւններ եւ հինկտակարանային աւանդութիւններ.

Այլ դու, Աստուած,
 Աստուածդ հոգւոց եւ ամենայն մարմնոց՝
 Ըսր դաւանելոյ աստուածաշնորհին,
 Երկայնամիտ եւ բազումոգորմ՝
 Ըսր սրբոյն Յովնանու ձայնին,
 Շնորհեա կարարել ի քոյդ հաճութիւն, արհնեալդ կամաց,
 Զսկզբնատրեալ մարեան մաղթանաց այսր ողբերգութեան:
 Եւ ընդ լալով սերմանել բանիս,
 Ի նախընթաց չորս աստիճանաց ալթեանացս պարտապարտեան,
 Ի կարարածն ժամանելոյ հաւաքման հնձոցն... (ԲԱՆ Բ, ք)

Մի իբրեւ զհամբարձումն ձեռաց ամբարշտեալն Յակոբու,-
 Ըսր բողոքելոյն Եսայեայ,-
 Եւ զանիրաւութիւնն Բաբելոնի
 Տաղտկալի քեզ երեւեցի,
 Զոր առակ եթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ,
 Այլ իբր զբուրեալ խունկն հաճոյական՝ ի խորանին Սելովայ,
 Զոր Դաւիթն կանգնեալ նորոգեաց
 Տապանակին հանգստեան, ի գերութենէն դարձելոյ... (ԲԱՆ Ա, դ)

Կենդանական պատկերներ՝ հնագոյն եւ Քրիստոնէական խորհրդապաշտու-

թեամբ.

Աղու աղաւնիս միշտ յիմարութեամբ, այլ ոչ հաւդարպութեամբ,
Ի կորեանց առիծուց անձնական աւա եղեռնային,
Կերպս ձուոց քարբից՝ լցեալ ժանրութեամբ,
Պարկերս վերջին հարուածոցն Երուսաղեմի,
Ըստ բանին տէրունի եւ տեսնողացն ճայնի: (ԲԱՆ Բ, ա)

Պատկերների օրինակներ տեսնում ենք նաեւ Բան (Զ), Բան (ԻԵ), Բան (ԼԼ), Բան (ԸԹ), Բան (ԾԳ), Բան (ԿԹ) եւ այլ գլուխներում:

Այսպիսով, քննութեան նիւթ դարձնելով Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմի լեզուի արտայայտչամիջոցները՝ եւս մէկ անգամ համոզուեցինք, որ ոճը պայմանաւորուած է բովանդակութեամբ: Արտայայտչամիջոցները հաղորդում են յուզականութիւն, վառ գոյներ, երանգներ եւ տալիս ստեղծագործութեանը: Նարեկացին գիտակցել է սեփական գրքի իրական գինը, նրա բուն իսկ էութիւնը, եւ պատահական չէ, որ գրել է. «Ու թէեւ որպէս մի մահկանացու պիտի վախճանուեմ, բայց այս մատեանի յարակալութեամբ կը մնամ անմահ»⁷:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Տէ՛ր, մինչ կը ցաթի արշալոյսն Ամանորի,
Օգնէ ինծի սխալներս սրբագրելու:
Թող վեր մնամ չնչին բաներէ
Եւ շնորհէ՛ ինծի բարեկամութեան պարգեւած երջանկութիւնը,
Հեռացո՛ւր ինծմէ եսասիրութիւնն ու ատելութիւնը,
Եւ թող իմաստուն ըլլամ ընտրելու ճիշդը:
Բարի Ամանոր, թող երբեք
Արցունք չպատճառին ոչ ոգի:
Եւ երբ այս տարին իր կարգին աւարտի,
Թող մարդիկ ըսեն. «Թէ ես եղայ իրա՛ւ բարեկամ,
Ապրեցայ հոս, սիրեցի եւ գործեցի
Զայն վերածելով իրա՛ւ Բարի Տարիի»:

Կրակը սկսած է մարիլ եւ Հին Տարին կ'անցնի: Թող մեռած անցեալը թաղէ իր մեռելները: Նոր Տարին արդէն իւրացուցած է ժամանակին ժամացոյցը: Ամէն մարդ կ'ողջունէ պարտականութիւններն կարելիութիւնները գալիք 12 ամիսներուն, սակայն ես ոչ մէկ նորութիւն կը տեսնեմ, որովհետեւ ան արդէն եզերուած է ժառանգուած ցաւերով եւ չլուծուած հարցերով:

Նոր Տարուան նպատակը նոր տարի մը ունենալ չէ միայն, այլ աւելի՝ մենք ունենանք նոր այտեր, նոր աչքեր, նոր ականջներ, նոր ողնայար եւ աւելի՝ նոր հոգի:

⁷ Մնացականեան Եվ., Հայ գրականութիւն հարցեր եւ պատասխաններ, Եր. , 2011, էջ 44:

ԳՐԱԿԱՆ

ՏԱԹԵԻԻԿ ՄԵՐՋԱՆԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուն
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ԱՐԵՒՄՏԱՀԱՅ ՆՈՐԱՎԷՊԻ ԻՆՔՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՐԱ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՈՐՈՒՄԸ

1880-1910-ականների արեւմտահայ բազմաբովանդակ նորավիպագրության մէջ իւրօրինակ արտայայտութիւն ստացան ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական միջավայրը, անհատի հոգեբանական անցումներն ու շրջադարձերը, ինչպէս նաեւ ուրուագծուեցին ժամանակակից գրականութեան գաղափարա-գեղարուեստական մտայնութիւնները: Նորավէպի ժանրի շնորհիւ արեւմտահայ արձակագիրները, որոնք իրենց լաւագոյն գործերը ստեղծել են հէնց այս ժանրով, տարբեր կողմերից լուսաբանեցին հայի ազգային դիմագիծն ու բարոյա-հոգեբանական ինքնութիւնը: Ուստի իրաւացի է Գր. Յակոբեանը, երբ գրում է. «Արեւտահայ նորավիպագրութեան ինքնութեան ցուցանումն ու մեկնաբանութիւնը համարժէք է ողջ գրականութեան բնոյթատեսակային ընդհանրականութիւնը վերհանելուն»¹:

Արեւմտահայ շուրջ երեսուն տարիների նորավիպագրութիւնը ունի պարբերացման հետեւեալ պատկերը.

1. 1880-ականներ - ժանրի հաստատման շրջան
2. 1890-ականներ - ժանրի ամրապնդման եւ բիրտղացման շրջան
3. 1900-ականներ - ժանրի կատարելագործման շրջան
4. 1910-ականներ - նորավէպի ջրբաժանի կամ փոխակերպման շրջան²:

Նորավէպի ժանրի ինքնութեան եւ հաստատման ճանապարհին կարելիոր նշանակութիւն ունի 1880-ականների իրապաշտական շարժումը: Համիդեան հայահալած քաղաքականութեան տարիներին ծաւալուող տեսակի մէջ եզակի այս շարժումը ուրուագծեց այն խնդիրները, որոնք դարեր շարունակ ծառացել էին հայ ժողովրդի առջեւ: Ժամանակակիցները ուշադրութեան կենտրոնում էին պահում հասարակական-քաղաքական եւ ազգային բարոյա-հոգեբանութեան ողբերգական անկումները: Այս ծայրայեղ վիճակում իրականութեան ճանաչողութիւնը, անհատի ազատութիւնը, կնոջ իրաւունքների պաշտպանութիւնը, ընտանեկան առողջ յարաբերութիւնները, բարբերի բարելաւումը, անցեալից ժառանգուած բարոյական սխալ ըմբռնումների մաքրագործումը դարձան հրատապ խնդիրներ: Հայ ժողովուրդը քաղաքակիրթ հասարակութիւն ստեղծելու դժուարընթաց գործի նախընթաց փուլում պէտք է ճանաչէր սեփական թերութիւնները: Հայ գրականութիւնը էականօրէն վե-

¹ Յակոբեան Գր., Արեւտահայ նորավէպը (1880-1910-ական թուականներ ժանրի պատմութիւն եւ տեսութիւն), Երեւան, ՀՀ ԳԱԱ «Գիտութիւն» հրատ., 1996, էջ 41:

² Տե՛ս նոյն տեղում, էջ 23:

րախմաստաւորուում է. գրական տիրոջթում տարաբեւեռ կողմերից քննութեան առարկայ է դառնում ժողովուրդի բոլոր խաւերի կեանքը: Գեղարուեստական երանգ են ստանում այնպիսի երեւոյթներ, որոնք մինչ այդ քննարկման առարկայ չէին դարձել: Այս շարժման կարեւորութեան եւ համախմբուածութեան մասին Մինաս Հիւսեանը գրում է. «Անցեալի հայ գրականութեան պատմութիւնը, հինգերորդ դարից այս կողմ, չունի այլ դէպք, երբ գրողների մի ամբողջ խումբ, ոգեւորուած միեւնոյն նպատակով, հաւաքուած լինէր մի կեդրոնի շուրջ»³:

80-ականների գրական շարժումը ստեղծեց այն գեղագիտական հայեացքներն ու ըմբռնումները, որոնք պիտի ուղենիշ լինէին այդ շարժման ճանապարհին: Այդ ըմբռնումները ձեւակերպուեցին մէկ ընդհանուր բանաձեւի մէջ՝ արտացոլել կեանքն այնպէս, ինչպէս որ այն կայ: Այս բանաձեւը պահանջում էր կեանքի բազմակողմանի, ընդհուպ մինչեւ յոռի եւ արատասովոր կողմերի արտացոլում, որոնք դարձել էին այդ ժամանակաշրջանի հասարակութեան «անբուժելի հիւանդութիւնը»: Շարժման գաղափարախօսութիւնը քննադատաբար էր վերաբերում «հին» կեանքին: Կարեւոր է նաեւ այն, որ 80-ականների գրական սերունդը ուշադրութեան կենտրոնում էր պահում կեանքի յատակում յայտնուած մարդկանց, պանդուխտների կեանքը, որը մինչ այդ չէր դարձել գրականութեան թեմա: Գրական այս սերունդը իրաւացի էր այն հարցում, որ ժողովրդին հասկանալի լինելու համար պէտք է գրել նրա լեզուով, օգտագործել այդ լեզուի՝ դարերով կատարելագործուած պատկերաւորման միջոցները: Այս բոլորի արդիւնքում պիտի ստեղծուէր ազգային գրականութիւնը:

Արեւմտահայ նորավէպի ինքնութեանը նպաստում են ինչպէս միջ-ժանրային դրսեւորումները, ինչպէս օրինակ Թագուհի Շիշմանեանի «Գարնան մի ասուպը» (1883 թ.), այնպէս էլ, այսպէս կոչուած, մաքուր նորավէպերը: 1880-ականներին ժանրի ինքնութիւնը հաստատուեց Արփ. Արփիարեանի, Գր. Զօհրապի, Լ. Բաշալեանի, Տիգրան Կամարականի եւ այլոց նորավէպերով:

Արփ. Արփիարեանի «Կեանքի պատկերներ» ընդհանուր խորագիրը կրող նորավէպերի ժողովածուն լոյս է տեսնում 1895 թուականին՝ այն ընթացքում, երբ ժանրը գտնւում էր բիւրեղացման ճանապարհին: Հեղինակի այս ժողովածուն դարձաւ այն ուղենիշը, որին հետեւեցին ժամանակի իրապաշտ գրողները (Միսաք Գոշունեան «Կեանքի տեսարաններ» (1897 թ.), Երուխան «Կեանքին մէջ» (1910 թ.), Գր. Զօհրապ «Կեանքն ինչպէս որ է» (1911 թ.)):

Գրականութեան հերմենեւտիկ, այսինքն՝ մեկնաբանական գործառոյթը հնարաւորութիւն էր տալիս էպիկական հարթութեան վրայ պատկերել ոչ միայն դարակազմիկ խնդրայարոյց իրողութիւնները եւ կենսա-փիլիսոփայութիւնը, այլեւ մարդու հոգեկերտուածքային այլեւայլ դրսեւորումները, ազգային ճակատագիրն ու հասարակական յարաբերութիւնները: Ժամանակաշրջանի նորավէպերում գեղեցիկ ներդաշնակութիւն էին ստանում մարդու բնաւորութիւնը եւ այն միջավայրը, որտեղ նա ապրում էր: Ասուածի լաւագոյն օրինակներն են Ռուբէն Զարդարեանի «Տան սէրը» եւ Տիգրան Զեոկիրեանի «Տէրտէրին ոճիրը» նորավէպերը: Այս ստեղծագործութիւններն իրենց ներքին տարերքով հատման եզրեր ունեն իրար հետ: Երկու հեղինակներն էլ կերտել են ազգային հոգեկերտուածք, որը պայմանաւորուած է ժամանակաշրջանի իրական կեանքի տեղաշարժերի հետ: Զարդարեանի նորավէպում ազգային հոգեկերտուածքը դրսեւորուում է «տուն» երեւոյթի նկատմամբ ունեցած ընկալումներում: Կով Առաքելի համար տունը մի այնպիսի տաբու է, որը մարդուն հեռու է պահում բոլոր փորձութիւններից: Ահա այստեղից է ծագում այդ մեծ սէրը տան նկատմամբ: «Տան սէրը» նորավէպը ցոյց է տալիս արեւմտահայ նորավէպի կարեւոր

³ Հիւսեան Մ., Գրիգոր Զօհրապ, կեանք եւ ստեղծագործութիւնը, Երեւան, «Հայպետհրատ», 1957, էջ 56:

յատկանիշներից մէկը: Խօսքը փորձութիւնների մասին է, որոնք այլեւայլ դրսեւորումներով ներթափանցում են նորավէպի ներ-ժանրային կառոյցներ:

Փորձութիւնը կարելոր տեղ է զբաղեցրել նորավէպի ժանրի պատմութեան իւրաքանչիւր շրջափուլում: Արեւմտահայ նորավէպի ուղեծրում փորձութեան առկայութիւնը պայմանաւորուած է ժանրի պատմական ժառանգականութեամբ եւ ազգային կեանքի իւրայատկութիւններով: Այս մասին Յակոբեանը իրաւացիօրէն նկատում է. «Արեւմտահայ կեանքի կենսալոռաը փորձութիւնների գերխտացում էր ինքնին եւ ահա ժամը, որն իր պոետիկական-գեներալի ինքնութեան մէջ փորձութեան պատկերացումների կատարեալ հնարաւորութիւններ է ներառում, միակցում է «արտաքին» համայնութեանը եւ արդիւնքում բացառիկ պատեհութիւն է ապահովում սեւեռման ներսուզման համար»⁴:

Փորձութիւնը, որն ինչպէս երեւում է նորավէպի կազմաբանական կարելոր բաղադրիչ է, կատարելագործուեց Տիգրան Զեռկիւրեանի «Տէրտէրին ոճիրը» նորավէպում: Նորավէպի Տէր Բարթող քահանան քաղաքի 1895 թ. աւերածութիւնների եւ կողոպուտների քիչ թէ շատ խաղաղ ժամանակներում, փորձում է ինչ-որ բանով օգնել իր հովանու ներքոյ գտնուող մարդկանց: Այդ կողոպուտների ժամանակ թալանուել էր նաեւ եկեղեցին: Թալանչիների աշքաթողութեան «շնորհիւ» եկեղեցում մնացել էր միայն Յիսուսի պատկերի արծաթեայ շրջանակը: Տէր Բարթողը շատ լաւ գիտէր եկեղեցական իր պարտականութիւններն ու իրաւունքները, բայց միեւնոյն ժամանակ չէր կարող անտարբեր նայել իր հօտի քաղցածներին, առաւել եւս այն դէպքում, երբ ձմեռը եօթ սարի հետեւում չէր: Գիտակցելով համատարած աղէտի հետեւանքները՝ Տէր Բարթողը որոշում է հալել եկեղեցու միակ թանկարժէք իրը եւ հոգալ մարդկանց գոնէ մի մասի կարիքները: Սակայն այս ծրագիրը չի կարողանում կատարել եւ ինքնասպան է լինում:

Հեղինակը այս սիւժէի մէջ ներբերում է փորձութիւնների շղթան, որը, ինչպէս գրում է Յակոբեանը, «ինքնաբախման գործընթացով ստեղծագործութեան մէջ ընդհանրացնում է միասնական փորձութիւնը որպէս ինքնուրոյն բաղադրատարր»⁵:

Աւերն ու թալանը փորձութիւն էր բոլորի համար, իսկ Տէր Բարթողին փորձութիւնը ներկայանում է մարդկանց օգնելու ցանկութեան եւ հնարաւորութիւնների սահմանափակութեան տեսքով, ինչն էլ իր հերթին բերում է այն հակադրութիւնը, ըստ որի՝ մի կողմից քահանան պիտի ապահովի իր հովանու ներքոյ գտնուող մարդկանց կեանքը, իսկ միւսից՝ յարգի եկեղեցին եւ նրա գոյքը: Քահանան իրաւունք չունի պղծել եկեղեցին, բայց այդ նոյն եկեղեցին պատգամում է հոգ տանել քաղցած մանուկների մասին: Այս փորձութիւնը յաղթապարում է Տէր Բարթողի կողմից: Ասուածի լաւագոյն օրինակը «ջահակալին կեռէն կախուած» քահանայի դին է, որը ներդաշնակ յարաբերութեան մէջ է գտնուում ինքնառնչացման փորձութեան հետ: Իսկ ինչ մնում է ժողովրդին, ապա նա յաղթապարում է իրեն բաժին հասած փորձութիւնը եւ «Վերջին թալանչի՛ն... չֆահանա՛ն»⁶ արտայայտութեամբ հաստատում է ապրելու իրաւունքը:

Ժանրի համառօտ եւ գերհագեցած բովանդակութիւնը յատուկ է նաեւ այնպիսի նորավէպերի, որոնցում արծարծում են կեանքի, ճակատագրի գոյութեան եւ փիլիսոփայութեան ընդհանրական հարցերը: Այս դիտանկիւնից առանձնանում է Երուսաղիմի «Ջրհանկիրի մը պատմութիւնը» նորավէպը: Օննիկի համար երկաթագործութիւնը զուտ ապրուստի միջոց է: Նա երազում է հրշէջ դառնալ եւ օգնել աղէտի մէջ յայտնուած մարդկանց: Սա է պատճառը, որ նա հաճոյքով չի գնում վարպետանալու երկաթագործութեան մէջ: Օրերից մի օր Օննիկը վարպետի տանը պատահաբար հան-

⁴ Յակոբեան Գ., նշում աշխ., էջ 44-45:

⁵ Նոյն տեղում, էջ 45:

⁶ Կամսարական Տ., Զեռկիւրեան Տ., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, «Սովետ. գրող» հրատ., 1984, էջ 455:

դիպում է նրա դստերը եւ սիրահարւում առաջին հայեացքից: Յետ այսու աղջնակը հրշէջութեան պէս դառնալու էր նրա ճակատագիրը: Օննիկի կեանքի միակ իմաստը դառնում է վարպետի աղջիկն ու հրշէջութիւնը:

Այդ ընդհանուր համապատկերի վրայ Օննիկը պէտք է դրսեւորէր իր անհատականութիւնը: Աղջկայ այն հարցին, թէ արդեօք Օննիկը օգնութեան կը գայ եւ կը փրկի իրեն, երբ վառուի իրենց տունը, երիտասարդը պատասխանում է. «Հոգիս ֆեզի համար թէլեֆ կ'ընեմ, ֆուրիկս»⁷: Ճակատագիրը տալիս է այդ հնարաւորութիւնը: Վարպետի տունը այրւում է, իսկ աղջիկը մնացել է տանը: Օննիկը օգնութեան է հասնում եւ աղջկան, իր բազուկների մէջ առած, նետւում է քարայրատակին: Օննիկը մահանում է: Հեղինակը այս սիւժէի մէջ ընդհանրացնում է այն գաղափարը, որ ճակատագիրը անհեթեթ է, իսկ գոյութիւնը՝ իմաստաւորուած: Օննիկը, թէկուզ կեանքի գնով, ապացուցեց, որ ինքը իր խօսքի տէրն է: Փաստօրէն, յետ մահու ընդգծւում է հերոսի անհատականութիւնը:

Առհասարակ, նորավէպի ժանրն իր պատմութեան բոլոր շրջափուլերում աչքի է ընկնում հակիրճ պատումով եւ գերխիտ բովանդակութեամբ: Այս հանգամանքը գեղարուեստական ստեղծագործութեանը հնարաւորութիւն է տալիս արագ ճանաչել ընթերցողի կողմից: Ճանաչողութեան գործընթացին մեծապէս օժանդակում էին ժամանակաշրջանի մի շարք պարբերականները: Դրանք անընդհատ ընթերցողի դատին էին ներկայացնում յայտնի եւ անյայտ նորավիպագիրների ստեղծագործութիւնները: Հետեւաբար՝ սխալ չէ այն ձեւակերպումը, ըստ որի՝ նորավէպի ժանրը իր բնոյթով «լրագրական է»⁸:

Արեւմտահայ վիպագրութեան դէպքում տեղի է ունեցել հետաքրքիր զուգակցում: Յայտնի է, որ համիդեան բռնապետութիւնը արգելել էր գրքի տպագրութիւնը: Եւ այս պայմաններում, անուրանալի է արեւմտահայ մամուլի օժանդակութիւնը: 1880-ական թուականներին իրապաշտական շարժման առաջնորդ Արփ. Արփիարեանը արեւմտահայ գրականութեան կայացման գործում կարեւորում էր պարբերական մամուլի նշանակութիւնը: Առաջին հերթին պարբերականը շրջանցում էր թուրքական գրաքննադատութիւնը եւ երկրորդ՝ այն պարարտ հող էր նախապատրաստել 1880-ականների գրական շարժման սկզբնաւորման համար⁹:

Յիրաւի, նորավէպի շնորհիւ արեւմտահայ գրականութեան մէջ ամրակայուեց համաշխարհային գրականութեան առաջաւոր ուղղութիւններից մէկը՝ իրապաշտութիւնը (ռէալիզմը): Նորավէպի ժանրը կարողանում է արագ եւ արդիւնաւէտ արձագանքել արեւմտահայ արագընթաց առօրեային: Այն պարագայում, երբ ժողովրդի մշակութային կեանքը պարփակւում էր միայն պարբերական մամուլի էջերում, բնական է, որ առանցքային դաշտ էին մղուելու այնպիսի ժանրեր, որոնք աւելի դիւրաշարժ էին եւ հեշտ էին յարմարւում ստեղծուած պայմաններին: Այս առումով նորավէպի ժանրը արեւմտահայ իրականութեան համար դառնում էր յարմարաւէտ եւ յուսադրող ժանր: Մի կողմից արեւմտահայ գրականութեան մէջ ստեղծուած արգելքները, իսկ միւսից՝ նորավէպի լրագրական բնոյթը պայմանաւորում էին ժանրի կատարեալ յաղթանակը գեղարուեստական համապատկերում:

Հարկ ենք համարում այստեղ ուշադրութիւն դարձնել այն չափանիշներին, որոնք յատկանշական էին ժամանակաշրջանի նորավիպագրութեան համար: Գրականութեան ընթացիկ միտումները պայմանաւորուած էին Զօհրապի եւ Նրուխանի այն ստեղծագործութիւններով, որոնք վէպի բացակայութեան պայմաններում ապահով-

⁷ Երուսան, Նովելներ, Երեւան, «Հայաստան» հրատ., 1965, էջ 122:

⁸ Տէ'ս Յակոբեան Գր., նշում աշխ., էջ 50:

⁹ Տէ'ս Արփիարեան Արփ., Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, «Սովետ. գրող» հրատ., 1987, էջ 411:

ւում էին առհասարակ արձակի զարգացումը եւ դառնում էին չափանիշ ժամանակակից նորավէպի համար: Այս առումով՝ առանձնանում են Գր. Զօհրապի «Ռեհան» («Մասիս» 1893 թ.) եւ Երուսանի «Քարին նշանը» («Արեւելք», 1895 թ.) նորավէպերը:

Ժամանակաշրջանի նորավիպագրութեան համատեքստում իր կառուցուածքային եւ թեմատիկ ընդգրկումներով բիրեղեայ չափանիշ է Գր. Զօհրապի «Ռեհան» նորավէպը: Պատանեկան սիրոյ գեղեցիկ երազին ընդառաջ գնացող երիտասարդն ամբողջ գիշեր անցկացրել է սիրած աղջկայ տան առջեւ: Նա վստահ է, որ դիմացի պատուհանից արտացոլուող պատկերը օրիորդի մազերն են: Բոլոր իրադարձութիւնները տղան մեկնաբանում է վերագրման տիրոջթում, իսկ վերջում, տեսնելով, որ դա ընդամէնը ռեհանի թաղար է, բացասում է իր նախնական վերագրումը եւ տալիս դրա ամփոփումը: Չնայած նրան, որ դա խաբէկանք է, բայց միեւնոյն է իր պատկերացումներում եւ ներաշխարհում տղան երջանիկ է եղել: Հեղինակը սուր աչքով նկատում է, որ առաջին եւ պարզամիտ, բայց նուիրական զգացմունքը յաւիտենապէս մնում է մարդու յիշողութեան մէջ. «Հիմա, որ տարիներ անցան անկէ ի վեր, հիմա կ'օրհնեմ քեզի, ո՛վ ռեհանի պզտիկ փունջ, որ ամեն սրտի մօտ բարեկամէ աւելի երջանիկ քրիւ զիս գիշեր մը ողջոյն»¹⁰:

Այս նոյն երեւոյթը դիտարկում է նաեւ Երուսանը իր «Քարին նշանը» նորավէպում: Այստեղ հեղինակը իր պատումը հիւսում է հակադարձ ճանապարհով: Սուրբիկի ամուսինը կնոջը տեղեկացնում է, որ իրենց որդին՝ Յուսէփիկը, անտարբեր չէ դրացի աղջկայ հանդէպ: Այս զրոյցից յետոյ հեղինակը հերոսի միջոցով կատարում է ընդհանրացումներ: Ամուսնու այն հարցից յետոյ, թէ արդեօք կինը փոքր տարիքում ունեցել է իր «Յուսէփիկը», այսինքն՝ իրեն սիրահետող տղայ, կնոջ յուշերում ակամայից արթնանում է մանկութեան ընկերոջ՝ Օննիկի հետ կապուած դիպումը: Օննիկը, օգտուելով Սուրբիկի հետ մենակ մնալու հանգամանքից, համբուրում է նրան, իսկ յուզուած աղջնակը քարով խփում է յանդուգն տղային: Ինչպէս պարզուում է վերջում, Սուրբիկի ամուսինը, նոյն այդ Օննիկն է, որի պարանոցին յաւերժացել էր այն քարի հետքը, որով հարուածել էր Սուրբիկը. «Կը ճանչնա՞ս այս ճեմակ նշանը... Նետածդ քարիդ նշանն է...»¹¹: Այս պատկերը Զօհրապի «Ռեհանի» վերագրումների յետադարձ շղթան է:

Ինչպէս համաշխարհային այնպէս էլ արեւմտահայ նորավիպագրութիւնը աչքի է ընկնում իր շարժունակութեամբ: Կեանքի առաջադրած նորանոր հարցերը պէտք է մեկնաբանուէին գեղարուեստական հարթութեան վրայ, իսկ այդտեղ ժամանակի համար ամենաարդիւնաւէտ ժանրը նորավէպն էր: Նորավէպի դիւրաշարժութիւնը պայմանաւորուած է նորավէպի ձեւաբանական յատկանիշներով (փոքր ծաւալ, միագիծ սիւժէ եւ անակնկալ հանգուցալուծումը): «Դիմամիզմը նորավէպի ինֆնութեան կազմակերպող բաղադրատարրերից է...»¹², - գրում է Յակոբեանը:

Յատկանշական է, որ նորավէպը արեւմտահայ գրականութեան մէջ զարգանում է գեղարուեստական հակադիր մեթոտների (Օր. Մենիկի եւ Եղիա Տեմիրճիպաշեանի նորավէպերը զարգանում էին ռոմանթիզմի եւ ռէալիզմի ուղղութիւններով, ընդ որում՝ «Գարնան մի ասուպը» կազմալուծեց ռոմանթիկ իտէալը եւ գեղագիտութիւնը, իսկ Երուսանին ընթանում էր ռէալիզմի եւ նատուրալիզմի ուղղուածութեամբ), պատումային շարոյթի բազմաբնոյթ սկզբունքների բաւիղներում: Սակայն այս հակադրութիւնը ոչ թէ խանգարում է նորավէպի բիրեղացմանը, այլ ընդհակառակը,

¹⁰ Զօհրապ Գր., Երկերի ժողովածու չորս հատորով, հատոր Ա, Գեղարուեստական երկեր, նորավէպեր, դիմանկարներ, աշխատասիրութեամբ Ալ. Շարուբեանի, Երեւան, ԳԱԹ հրատ., 2001, էջ 292:

¹¹ Երուսան, Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, «Սովետ. գրող» հրատ., 1980, էջ 450:

¹² Յակոբեան Գր., նշում աշխ., էջ 56:

տարբեր դպրոցների փորձի զուգակցումով արեւմտահայ նորավէպր ոչնչով չէր զիջում համաշխարհային նորավիպագրութեանը:

1880-1910-ական թուականներին արեւմտահայ նորավիպագրութիւնը առաջնորդւում էր այն սկզբունքով, որ կեանքը աւելի վիպային է, քան վէպը: Այս սկզբունքի ներքոյ իրապաշտութեան դիրքերից յանդես էին գալիս Արփիար եւ Տիգրան Արփիարեանները, Լ. Բաշալեանը, Գր. Զօհրապը, Սիպիլը, Թլկատինցին: Աւելի ուշ նորավէպր զարգացաւ նաեւ նատուրալիզմի ուղղութեամբ (Երուխան, Օննիկ Զիֆթէ-Սարաֆ): Իսկապէս, իրական կեանքը լեփ-լեցուն էր արտասովոր դրսեւորումներով, ճակատագրական շրջադարձերով եւ անսպասելի լուծումներով: Ճշմարիտ արուեստագէտը պէտք է յայտնուէր ճիշդ ժամանակին, ճիշդ տեղում, որսար իրականութեան այդ ձայները եւ արձագանքեր գրականութեան մէջ: Այլ խօսքով՝ գրողը գրականութեան մէջ պէտք է գեղարուեստականացներ իրական կեանքը: Ի տարբերութիւն ռոմանթիկական նորավէպի՝ իրապաշտական նորավէպերում հերոսը ձեռքագատուեց միտումնաւոր գաղափարախօսութիւնից եւ դարձաւ ինքնուրոյն: Նոր շրջանի նորավէպը աւելի շատ կենտրոնանում էր մարդու հոգեբանութեան անհասկանալի դրսեւորումների գեղարուեստականացման վրայ: Ժանրը այդ շրջանում ընդգրկում էր արեւմտահայ կեանքի բոլոր ոլորտները, չկար որեւէ նիւթ կամ բնագաւառ, որ իր արձագանքը չգտնէր նորավէպի համակարգում:

Ժանրի գերակայութեան տեսանկիւնից Յ. Օշականը իրաւացիօրէն գրում է. «Կազմուած ու իր կատարելութիւնը գտած է մեր պատմութեամբ, այն օրերու բառով նորավէպը, իրապաշտութեամբ գործունէութեան ամենէն մաքուր յաղթանակը: Թէ հայ (արեւմտա) վէպը պակասաւոր է ցեղային ստորագելիներէ, կենցաղային կնիքէ, կարճ գրականութիւն մը արդարացնող քանի մը մեծ նմուշներէ (ժողովրդական կեանքի պատկերացում, տիպարներ, մտայնութիւններ, տախտակող կերպընկալութիւն եւ ուրիշներ) արեւմտահայ նորավէպը, իր ծաւալային փոփոխութեան հակառակ՝ մեր կեանքին որոշ գոտիներ (zona) կրնանք նուաճած նկատել»¹³:

Մարդու հոգեբանութեան անտեսանելի որակների վերհանման առումով առանձնանում է Լ. Բաշալեանի «Նոր զգեստը» (1890 թ.) նորավէպը: Սա իր տեսակի մէջ եզակի գործ է նոյնիսկ համաշխարհային գրականութեան կտրուածքով, որովհետեւ այստեղ հեղինակը սոցիալական խնդիրների միջոցով փորձում է տեսնել, թէ ինչ է կատարւում այրական բնազդի հետ: Ի զարմանս բոլորի՝ տեղի է ունենում տարօրինակ մի բան. տղամարդը խեղճանում է իր բնազդներում: Հոգեբանական որակների մէջ այրական հոգեբանութիւնը պարտութիւն է կրում: Երեխան չի ուզում «հիմ լաթերով» դպրոց գնալ: Հայրը գիտակցում է, որ իր երեխայի համար պարտաւոր է նոր զգեստ գնել, սակայն հնարաւորութիւնները չեն ներում: Հայրը ապտակում է երեխային, որովհետեւ վերջինս չի ուզում հասկանալ հօր անգործութիւնը: Բաշալեանը կատարեալ գիտարկումների ճանապարհով է քննում շատ դէպքերում անհասկանալի եւ չբացայայտուած հայրական այս հոգեբանութիւնը: Հայրը ծանր ցաւ է ապրում, որովհետեւ նա, որդուն հարուածելով, իրեն է հարուածել: Նա գիտակցում է, որ որդին ծիծաղի առարկայ է դառնում դպրոցում եւ ստիպուած պարտքով գնում է երկար սպասուած «նոր զգեստը»: Սակայն, որդին արդէն հիւանդացել էր եւ շուտով պիտի մահանար: Բաշալեանին սա չէ, որ հետաքրքրում է: Նա ուզում է տեսնել, թէ հոգեբանական ինչ դրսեւորումներ կան: Զաւակի ուրախութիւնը լինելու էր հօր բնազդի բաւարարութիւնը: Սակայն այդ տեսիլային երջանկութիւնը այդպէս էլ մնում է անկատար: Երեխան մի թոյլ նշան է ցոյց տալիս եւ վերջ: Ամէն ինչ վերջացած է: «Ա՛խ, ըսաւ,- թո՛ղ մէյ մը հագնեմ, անկէ ետք մեռնեմ, պաշխա պան չէի ուզէ: Մուսաւսըզ մեռաւ

¹³ Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 6, Արուեստագէտ սերունդ, Պէյրութ, տպ. Համազգային, 1968, էջ 7:

խեղճ զաւակս»¹⁴, - ցաւով ասում է Յակոբջան աղան: Դա կը լինէր հօր հոգու դարմանը, սակայն չեղաւ:

Արեւմտահայ նորավիպագրութիւնը առանձնանում է մի էական յատկանիշով եւս, որը շատ քիչ ժողովուրդների նորավէպերում կարելի է տեսնել: Խօսքը այս դէպքում ժանրի «համազգիտարանային» գործառույթի մասին է: Այդ գործառույթը հնարաւորութիւն էր տալիս նորավէպին անդրադարձնել այն կեանքը, կենցաղը, միջավայրը, որոնցում ապրում էր մարդն ի վերուստ սահմանուած ճակատագրով: Այս իմաստով հետաքրքիր անդրադարձ է կատարում Լ. Բաշալեանը: Նա «Սիւզենիի վարպետ» (1890 թ.) նորավէպում կենդանագրում է Կ. Պոլսում սոցիալական խնդիրների ծանր բեռը քարշ տուող մարդկանց կեանքն ու ճակատագիրը: Եթէ «Նոր զգեստը» նորավէպում հոգեբանական անցումները եւ սոցիալական կեանքի պայմանները ակնբախ են, ապա այստեղ նա կերտում է ոչ թէ հոգեկերտուածք, այլ՝ բնաւորութիւն¹⁵:

Նորավէպի ժանրի ինքնութիւնը շատ յաճախ դրսեւորւում է ներաշխարհային տարածքի ուսումնասիրութիւններով: Նորավէպը հայ արձակի համապատկերում արտացոլեց մարդու հոգեբանութեան անհասկանալի կողմերը: 1880-1910-ական թուականներին արեւմտահայ նորավէպի համապատկերում միահիւսուեցին արտաքին գործողութիւնները եւ անհատի հոգեբանութիւնը (Դր. Զօհրապ, Լ. Բաշալեան, Երուխան): Իրապաշտական նորավէպում անհատի հոգեբանութիւնը սկսում է ձեւաւորւել արտաքին գործողութիւնների ազդեցութեամբ: Ասուածի լաւագոյն ապացոյցը Զօհրապի «Փոստա՛լ» նորավէպն է: Տիգրանուհու հոգեբանութիւնը ձեւաւորւում է արտաքին գործօնների ազդեցութեամբ: Այստեղ յատկանշական է նաեւ այն աննշան, բայց յոյժ կարեւոր դրսեւորումը, որ այդ հոգեբանութիւնը սկսում է ձեւաւորուել մայրական բնազդի արթնացմանը զուգընթաց:

Մայրական բնազդը եղել եւ մնում է կատարելութեան տեսակ: Անգամ բնութիւնն է անզօր այդ բնազդի դէմ: Այդ նորավէպում Զօհրապը աւանդական դարձած թեմայի մէջ որոշակի գիւտեր է անում: Ըստ Զիգմունդ Ֆրոյդի հոգեվերլուծութեան՝ երբ զաւակն այլեւս չկայ մայրական բնազդը վերածւում է յիշողութեան: Զօհրապը սա գիտականօրէն չգիտի, սակայն հմուտ գեղագէտի խորաթափանց մտածողութեամբ գտնում է, որ մայրական բնազդը չի կարող յիշողութեան վերածուել այն պարզ պատճառով, որ դա աւելի իրական աշխարհ է, քան բուն աշխարհը. մայրը «պզտիկ տապանին» մօտ նստած իր զաւակի հետ խօսում է «անոր մանուկի բարբառովը»¹⁶: Հոգեբանական այսպիսի տեղաշարժերի գրականացման միջոցով նորավէպի ժանրը ինքնութիւն ստանալու հետ մէկտեղ իր տեղն է նուաճում հայ գրականութեան պատմութեան համակարգում:

Արեւմտահայ նորավիպագիրները իրենց ստեղծագործութիւններում կարեւորում էին, այսպէս կոչուած, աւելորդ մարդկանց հոգեբանութեան դրսեւորումների գեղարուեստականացումը: Նրանք ցոյց էին տալիս որ կեանքից մերժուածները կամ «աւելորդները» իրենց գոյութեամբ պայմանաւորում էին այսպէս կոչուած «ընդունելիների» գոյութիւնը: Այս դիտանկիւնից առանձնանում են Երուխանի նորավէպերը¹⁷:

«Եւնիկէ» նորավէպի համանուն հերոսուհին կեանքի շարժումից դուրս մնացած Սամիկ աղբօր կեանքի գնով դարմանում է քայքայուած նեարդերը: Եւնիկէին չեն

¹⁴ Թլկատինցի, Լ. Բաշալեան, Առանձար, Երկեր, Հայ դասականների գրադարան, Երեւան, «Սովետ. գրող», հրատ., 1982, էջ 336:

¹⁵ Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Մերջանեան Տ., «Կամային որակների ֆնոտիքները Լեւոն Բաշալեանի «Սիւզենիի վարպետ» նորավէպում» յօդուածը, «Սիւն», Երուսաղէմ, 2017, յուլիս-դեկտեմբեր, էջ 36-41:

¹⁶ Զօհրապ Գր., Երկեր, հ. Ա, նշուած հրատ., էջ 46:

¹⁷ Տե՛ս Մերջանեան Տ., «Ռէպլիկա՞ր Օննիկ Զիֆթէ-Սարաֆի նորավէպերում», «Սիւն», Երուսաղէմ, 2017, յուլիս-դեկտեմբեր, էջ 25:

օգնում ո՛չ կազդուրիչ կլիման եւ ո՛չ էլ ծովը: Նրա «ջիղերը» հանդարտում են միայն այն ժամանակ, երբ իմանում է, որ Սամիկ աղբարն այլեւս չկայ: Այս նորավէպում «կազմափանդում» է այն առասպելը, որ աւելորդները ոչնչով պիտանի չեն հանրութեանը: Սամիկ աղբարի կեանքն էր, փաստօրէն, այն բալասանը, որը պիտի բուժէր քմահաճ Եւնիկէի առողջութիւնը:

1880-1910-ական թուականների արեւմտահայ նորավիպագրութեան ինքնութիւնը ուսումնասիրելիս անդրադարձել ենք նաեւ պոետիկայի հարցերին: Ինչպէս համաշխարհային, այնպէս էլ արեւմտահայ նորավիպագրութիւնը կենտրոնանում է սիւժէի, պատումի, կերպաւորման ներդաշնակ համակցութեան վրայ:

Հարկ ենք համարում այստեղ ուշադրութիւն դարձնել այն հարցին, թէ նորավէպում պատում ասուածը ժանրակազմիչ ինչ նրբութիւններ է դրսեւորում: Այս հարցը լաւագոյնս պարզաբանել է Յ. Օշականը. «Մեր մէջ փչերը գիտեն, թէ վէպի այս երկու կերպերը (պատմութիւնն ու պատմումը համապատասխանաբար՝ պատմողին, վիպասանին եւ նորավիպագրին) անջատ կաղապարներ են: Թէ մէկուն համար պահանջելի առաքինութիւնները առնուազն աւելորդ արժանիքներ կը դառնան, փոխադարձաբար: Թէ նշմարիտ պատմողը (conteur) միշտ մեծ արուեստագէտ մըն է, կարելի չափով գերծերրորդական, չորրորդական կարողութիւններէ, որոնք վիպասանը կը պայմանաւորեն, յաճախ արուեստի օտար նկատողութիւններու ցանց մը պարտադրելով անոր տաղանդին: Պատմումը աւելի նախնական, աւելի բանաստեղծական, աւելի կենդանի, պարզ, արագ, շարժուն, փոփոխուն, հին դիցազնավէպերուն արդիացած, արձակուած ձեւն է աւելի, քան թէ համառոտութիւնը այն պրկագին, մանուածոտ, խոր լարուածքին, որով վիպասանը կը դնէ իմֆզիմֆը աշխարհին դէմ»¹⁸:

Օշականի այսպիսի տարբերակումը յատկանշական է ոչ միայն Զօհրապին, Երուսանին, Կամսարականին, այլեւ այնպիսի «մաքուր» նորավիպագիրներին, ինչպիսիք են Յարութիւն Ալփիարը, Լեւոն Բաշալեանը, Ենովք Արմէնը եւ այլք: Բոլոր այս հեղինակները ժանրի ձեւաբանական համակարգը կատարելագործում էին Օշականի բնորոշած «պատմումի» միջոցով: Իւրաքանչիւր հեղինակ իր նորավէպով «պատմումի» մի նոր տարատեսակ էր մտցնում նորավէպի ձեւաբանութեան մէջ, ինչի շնորհիւ արեւմտահայ նորավէպը ստանում է ինքնադրսեւորման իւրօրինակ հանդերձ:

Ինքնութեան ճանապարհին նորավէպի ժանրը գերծէր կարող մնալ տեսական հիմնաւորումներից: Չնայած նրան, որ սկզբնական շրջանի նորավիպագիրների (Մովսէս Զօհրապեան Արցախեցի, Խ. Աբովեան, Խ. Միսակեան, Ճանիկ Արամեան) ստեղծագործութիւնները ունէին գաղափարա-գեղարուեստական եւ կառուցուածքային տարբերութիւններ, այդուհանդերձ, դրանք կանոնակարգում էին ժանրի գեղագիտական սկզբունքները եւ յատկանիշները: Այդ սկզբունքներն ու յատկանիշները ենթադրում էին նորավէպի ժանրի տեսական հիմնաւորում եւ եզրոյթի կիրառութիւն: Թէ՛ տեսութեան եւ թէ՛ եզրոյթի հաստատման գործընթացը նորավէպի հին անուանումների (պատմուածք, վիպակ, վէպիկ) կողքին դնում էր նորերը (դրուագ, իրավէպ, վայրկենավէպ, պատկեր եւ այլն): Այս խայտաբղէտ բնորոշումները կիրառւում են մինչեւ 1880-ական թուականները: Նորավէպը՝ իբրեւ ինքնորոշուած եզրոյթ շրջանառութեան մէջ մտաւ 1883 թ.-ից յետոյ, երբ Օրիորդ Մենիկը (Թագուհի Շիշմանեան) հրատարակեց նորավէպ վերտառութեամբ «Գարնան մի ասուպը»*: 1880-ականները թէ՛ արեւելահայ եւ թէ՛ արեւմտահայ հատուածների համար յատկանշւում է ժանրի

¹⁸ Օշական Յ., Համապատկեր արեւմտահայ գրականութեան, հ. 7, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութիւն Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1980, էջ 203:

* Այս մասին աւելի մանրամասն տե՛ս Մերջանեան Տ., «Թագուհի Շիշմանեանի «Գարնան մի ասուպ» նորավէպի գաղափարա-գեղարուեստական եւ ժանրային առանձնայատկութիւնները» յօդուածը, «Սիւն», Երուսաղէմ, 2018, յունուար-փետրուար-մարտ, թիւ 1-2-3, էջ 58-69:

անցումային շրջան:

1901 թ. «Մասիս», «Արեւելք» եւ յատկապէս «Բիւրակն» հանդէսների էջերում ծաւալուում է մի բանավէճ, որը գրասէր հասարակութեան կողմից ստացաւ «Նորավէպ»-ին շուրջը» ընդհանուր խորագիրը: Սա ըստ էութեան ժանրի տեսութեան հիմնաւորման առաջին լուրջ քայլն է: Գրական այս բանավէճի վերաբերեալ Գր. Յակոբեանը գրում է. ««Նորավէպի շուրջ» բանավէճը գրականութեան պատմութեան մէջ հանդիպած ժանրի տեսութիւնն էր, որտեղ զուգակցուել է եւ ժանրի անցման ստեղծագործական փորձը, եւ տեսական-վերլուծական ընդհանրացումները, եւ թէ՛ նորավէպի պոետիկայի տեսական ամբողջականացումը»¹⁹:

20-րդ դարասկզբին նորավէպի պատահական դրսեւորումները հասունացնում էին ժանրի տեսական հիմնաւորման հրատապութիւնը: Այդ բանավէճի ընթացքում յատկանշական է ամերիկուհի հայագէտ Վիւիեն Հոփքինս կեղծանունամբ ստորագրած եւ «Բիւրակնի» խմբագրութեանը ուղղած Ենոք Արմէնի նամակը: Չնայած նրան, որ Արմէնը իր նամակում նորավէպ եզրոյթը բառացիօրէն բխեցնում է nouvelle բառից եւ միեւնոյն ժամանակ մատնանշում է նրա կառուցուածքային եւ տեսական յատկանիշները, բայց, այդուհանդերձ, խմբագրութիւնից խնդրում է ստուգաբանել բառի նշանակութիւնը²⁰:

Ե. Արմէնի պարզագոյն հարցը իր մէջ բազմաթիւ խնդիրներ էր պարունակում եւ պատահական չէ, որ այն լուրջ արձագանք ստացաւ բանավիճող գրասէրների կողմից: Կարապետ Ութուճեանը, հրապարակաւ պատասխանելով «Բիւրակն» հանդէսի առաջադրած հարցին, տալիս է բանավէճի պաշտօնական մեկնարկը: Ըստ նրա՝ «այդ անխմաստ բառի» (**նորավէպի**. – ընդգծումը մերն է – Տ. Մ.) ծագումնաբանութիւնը ոչ մի կարեւոր նշանակութիւն չունի: Կ. Ութուճեանի այն տեսակէտը, ըստ որի՝ նորավէպը «առաւելն 15 տարուան ծնունդ մը կրնայ ըլլալ»²¹ հաստատում է նաեւ ժամանակաշրջանի յայտնի նորավիպագիր եւ գրաքննադատ Տիգրան Արփիարեանը²²:

Սակայն, անտեսելով նորավէպի ծագումնաբանութեան հարցը, խնդիրը չէր լուծուում: Այն իրողութիւնը, որ նորավէպի ժանրը այդ շրջանում լիիրաւ տիրապետութեան մէջ էր գտնուում արեւմտահայ գրականութեան համապատկերում, արդէն հասկանալի էր: Մնում էր տեսականօրէն հիմնաւորել հրապարակի վրայ եղած եւ օրեցօր շատացող նորավէպերը: Ըստ էութեան Ութուճեանի եւ Տ. Արփիարեանի տեսակէտները ունեն հատման եզրեր: Դրանք մի կողմից ցոյց են տալիս ժանրի պատմական հետադիժը, իսկ միւսից ուրուագծում են այն ճանապարհը, որով պիտի հիմնաւորուէր նորավէպի տեսութիւնը:

Իրենց յօդուածներով բանավիճողները բաժանուեցին երկու հիմնական ջոկատների: Մի մասը (Եղիա Տեմիրճիպաշեան, Յովհ. Գալանճեան, Գր. Զօհրապ, Ե. Արմէն) պաշտպանում էր նորավէպ եզրոյթի կիրառութեան իրաւունքը, իսկ հակադիր ջոկատի նորավիպագիրները (Ռ. Պէրպէրեան, Գ. Շահինեան) Կարապետ Ութուճեանի գլխաւորութեամբ նպատակայարմար են գտնում շրջանառել վիպակ տերմինը: «Նորավէպ»-ին շուրջը» յարուցուած այս բանավէճը եզրափակուեց Արտաշէս Յարութիւնեանի յօդուածով²³: Նա եւս նորավէպ եզրոյթը դուրս է թողնում շրջանառութեան ոլորտներից. «Նորավէպ բառը ֆրանսերէնի nouvelle-ին սխալ թարգմանութիւնն է»²⁴:

¹⁹ Յակոբեան Գր., նշուած աշխ., էջ 100:

²⁰ Տե՛ս «Բիւրակն», Կ. Պոլիս, 1901, թիւ 14, 7 ապրիլի, էջ 222:

²¹ Տե՛ս «Մասիս», Կ. Պոլիս, 1901, թիւ 17, 28 ապրիլի, էջ 264:

²² Նոյն տեղում, էջ 265-266:

²³ Տե՛ս «Բիւրակն», Կ. Պոլիս, 1901, թիւ 21, 26 մայիսի, էջ 329-330:

²⁴ Նոյն տեղում, էջ 330:

Նորավիպագիրների յօդուածներին ակնյայտ է դառնում, որ արդէն 1901 թ. ձեւաւորուել էր նորավէպի, եթէ ոչ գիտական, ապա գոնէ պատճառաբանուած տեսութեան ընկալում: «Նորավէպ»-ին շուրջը» բանավէճը ծաւալուում էր նորավէպի թարգմանութեան եւ դրա սահմանների որոշարկման շուրջ: Այն, որ ֆրանսերէն *nouvelle* բառը ուղղակիօրէն թարգմանուել էր նորավէպ, սա հասկանալի է: Խնդրայարոյց էր այն իրողութիւնը, թէ այդ թարգմանութիւնը ինչքանով է ամբողջացնում ժանրի տիպական յատկանիշները: Սա էր այն հիմնական եւ առաջնային հարցադրումը, որի շուրջ եւ ծաւալուում էր այդ բանավէճը: Մնացած բոլոր հարցերը ուղղակիօրէն ածանցուում էին դրանից:

Յիրաւի, *nouvelle* բառի թարգմանութեան հարցում շահեկանօրէն առանձնանում է Զօհրապի տեսակէտը: Ըստ նրա՝ *nouvelle* մեզանում նշանակում է «պզտիկ պատմութիւն մը որ միանգամայն իր ձեւովը նորութիւն մըն է. աւ է բուն իմաստը»²⁵: Այդ «նորութիւնը» պայմանաւորուած է ժանրի ինչպէս ծագումնաբանական, այնպէս էլ զարգացման ընթացքում ձեռք բերած յատկանիշներով եւ գործառոյթներով: Այս դէպքում նորավէպ-վէպ յարաբերակցութիւնը դառնում է աւելի անհասկանալի: Նորավէպը կարելի է սահմանել այն դէպքում, երբ յայտնի է վէպի սահմանումը, այսինքն՝ նորավէպը, լինելով վէպի ածանցեալ, այդուհանդերձ, բացատրուում եւ ինքնորոշուում է վէպով: Հայ նորավիպագիրները, որոնք միեւնոյն ժամանակ հանդէս էին գալիս նորավէպի տեսաբաններ, հիմնուելով իրենց ստեղծագործութիւնների վրայ ապացուցում էին, որ նորավէպը կախում չունի վէպից: Այս առումով յատկանշական է Զօհրապի դիպուկ համեմատութիւնը. «առնը կրնայ ըլլալ տունիկ կամ տնակ, բայց վէպը չըլլար վէպիկ կամ վիպակ»²⁶:

Բանավիճողներից իւրաքանչիւրը հիմնաւորում էր նորավէպի սահմանման իր կարծիքն ու տեսակէտը: Եւ չնայած այդ տարակարծիք սահմանումներին, նորավէպ եզրոյթը, գրական համապատկերում ստանալով տեսական հիմնավորում եւ գեղարուեստական յատկանիշներ, իր յաղթանակն էր տօնում մրցակիցների՝ վիպակի, վէպիկի եւ այլ տերմինների նկատմամբ: Այս առումով՝ յատկանշական է Տ. Արփիարեանի եզրակացութիւնը. «Նորավէպ բառը մրցակիցներ շատ ունեցաւ, վիպակ, վէպիկ, տարփավէպ, ու դեռ չեմ գիտեր ինչավէպ, բայց ո՛չ մէկը դիմացաւ ու նորավէպը՝ գրասէր հասարակութենէն սիրուած փայփայուած՝ կը ծիծաղի զինքը դատափետողներուն երեսին...»²⁷:

Ընդհանրացնելով կարելի է ասել՝ արեւմտահայ նորավիպագրութիւնը իրապաշտական շրջանում համալրուեց նոր յատկանիշներով: Նորավէպի ինքնութեան հաստատման տեսանկիւնից աներկբայելի է այն հանգամանքը, որ այդ ժանրն իր զարգացման եւ կատարելագործման ազդակները վերցնում էր գերազանցապէս ժամանակաշրջանի իրականութիւնից: Արեւմտահայ նորավիպագրութեան հիմքը իրական կեանքն էր, որին եւ բաղադրուում էր ժանրակազմիչ յատկանիշները, եւ այդ համադրութեան արդիւնքում ստացուում էր ժանրի բիւրեղեայ ինքնութիւնը: Նորավէպի ժանրն իր տիրոյթներում մեկնաբանում էր հասարակական ամենատարբեր երեւոյթներն ու հոգեբանական դրսեւորումները: Նորավէպը արեւմտահայ գրականութեան մէջ մեկ ընդ միշտ ամրագրեց այն իրողութիւնը, որ կեանքը գեղարուեստական մակարդակում պէտք է ստանայ հիմնաւորուած մեկնաբանութիւն: Այդ շրջանում արդէն մարդու ճակատագիրը եւ հոգեբանութեան դրսեւորումները դիտարկուում են նոր լոյսի ներքոյ եւ ստանում նախադէպը չունեցող գեղարուեստական

²⁵ Զօհրապ Գր., Երկեր, հ. Գ, նշուած հրատ., էջ 403:

²⁶ Նոյն տեղում, էջ 404:

²⁷ «Մասիս», Կ. Պոլիս, 1901, թիւ 17, 28 ապրիլի, էջ 266:

որակներ: Նորավէպի՝ իբրեւ ինքնորոշուած եզրոյթի մեկնարկից յետոյ արեւմտահայ իրականութեան մէջ ժանրն անցաւ տեսական հիմնաւորման բարդ եւ երկարատեւ շրջան, որի արդիւնքում ի յայտ եկան իրարամերժ բազմաթիւ տեսակէտներ: 20-րդ դարասկզբին եզրոյթի թարգմանութեան եւ ժանրային յատկանիշների համապատասխանութեան շուրջ ծաւալուած բանավէճերից յետոյ նորավէպ տերմինը, տեսականօրէն հիմնաւորուելով, մտնում է լիիրաւ շրջանառութեան մէջ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ոչ նման ուրիշ մահերու,
Տարիները չեն մեռնիր հիւանդութեան, եւ կամ մահուան պատճառաւ,
Պարզապէս անոնց ժամանակը կը հասնի,
Ու անոնք թերեւս քիչ մը պարտասած,
Տասներկու ամիսներու աշխատանքի հետեւանքով,
Սակայն երբեք տխուր կամ ուրախ չեն, որ կ'երթան,
Իրենց համար ծառայութիւնը անպայման հաճոյք էր,
Հաւատարիմ ընկերակիցը, հին տարին կ'ըսէ,
Ու մինչ գլխով խոնարհութեամբ ան կը մեկնի,
Կը ծնի նորը առանց պորտալարի,
Որոշ փորձառութիւն ձեռք ձգած արդէն,
Սկսելու առաւօտը Յունուար Մէկին:

Իրա՛ւ երիտասարդութիւնը այն է՝ որ Ամանորի գիշերը մինչեւ ուշ ատեն արթուն կը մնաս, մինչ միջին տարիքին արդէն ստիպուած ես մնալու:

Երէկ գիշեր 11-12-ի միջեւ, Հին Տարին իր ոտնահետքերը թողած ժամանակ կայսրութեան սահմանին վրայ, կը սպասէր կոշնակի հնչելուն, որ զինք կանչէր միանալու անցած տարիներու խումբին...

Եւ Նոր Տարին մեծ սիրով ողջունեց անմխիթար Հին Տարին ու նստելով անոր մօտ, սպասեց նշանին սկսելու իր դեգերումը աշխարհի վրայ: Երկուքն ալ հարազատ քոյրեր էին, ըլլալով թոռնուհիները ժամանակին, հոգ չէ թէ մէկը աւելի տարեց կ'երեւէր քան միւսը, այդ ալ անշուշտ տարիքէ աւելի արդիւնք էր անոր տեսած դժուարութիւններուն, հակառակ անոր որ միայն 12 ամիսներ կը բաժնէին զիրենք իրարմէ:

Նոր Տարին ուրախ յայտարարեց թէ բաւականին հոյակապ, բուրումնալից, վարդի ընտանիքին պատկանող յոյսեր ունէր իր կողովին մէջ:

Որուն Հին Տարին պատասխանեց, ըսելով. «Շուտով անոնք պիտի կորսնցնեն իրենց բոյրը, ուրիշ ի՞նչ բերած ես բարի գալուստ մը ապահովելու դժուարահաճ մարդկային ցեղէն»:

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԸ ԵՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵԳԷՈՆԸ (100-ամեակի առթիվ)

Սուրբ Երկրի մէջ գտնուող Արարա լեռը մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմը անյայտ բարձրունք մըն էր Հայ ժողովուրդի համար, սակայն, 1918-ի Սեպտեմբեր 19-էն ի վեր՝ ան դարձած է նուիրական վայր եւ սրբազան անուն մը համայն հայութեան համար:

Հայոց Ցեղասպանութիւնը վերապրած եւ իրենց հարազատներու եղբրական մահուան վրէժով լեցուած Հայ կամաւորներ, որոնցմէ 600 զինուոր Մուսա Լեռան հերոսներէն էին, իբրեւ առանձին զօրագունդ, որը յայտնի էր Հայկական Լեգէոն (Armenian Legion) անունով¹, պատերազմի ընթացքին Հայ ժողովուրդին տրուած ինքնավարութիւն ստեղծելու խոստումի իրականացման յոյսով կը միանան Ֆրանսական բանակին եւ 1918-ի Սեպտեմբեր 19-ին կ'արձանագրեն զինուորական պատմութեան մէջ անհաւատալի յաջողութիւն մը²: Հայկական Լեգէոնի դիմաց կանգնած էին 1000 Թուրք եւ 600 Գերմանացի զինուոր³: Հետաքրքիր է, որ Թուրքերու վրայ հոգեբանական ճնշում գործադրելու նպատակով յարձակման նախօրէին Բրիտանական օդանաւը թշնամութիւնը թռուցիկներ կը տարածէ, որոնց մէջ գրուած էր, որ անոնց դիմաց կանգնած է 60 000-ոց Հայկական բանակ⁴: Այսպիսով, աշխարհի հզօր ոյժերը Թուրքերուն կը վախցնէին ոչ թէ իրենց բանակով, այլ՝ Հայկական ըլլալու հանգամանքով⁵:

Գրեթէ մէկ օր տեւած կռիւէն ետքը Հայկական Լեգէոնը յաջողութեամբ կը կոտրէ Թուրք-Գերմանական միացեալ բանակի դիմադրութիւնը եւ կը գրաւէ Արարա լեռը: Յաղթանակէն քանի մը շաբաթ վերջ Թրքական բանակը վերջնականապէս կը պարտուի, եւ Առաջին Համաշխարհային պատերազմը կ'աւարտի Դաշնակից պետութիւններու յաղթանակով: Կամաւորներէն՝ Մանուկ «Խան» Պաղտասարեան, անդրադառնալով Արարայի գրաւման, իր յուշերուն մէջ կը գրէ. «Հայկական զօրագունդին վերապահուած էր գրաւել այդ բարձունքը եւ արձանագրել յաջող աւարտ Պաղեստինի նակատամարտի

¹ 1916 թուականին Կիպրոսի մէջ Ֆրանսայի կողմէ կը կազմատրուի Հայկական Լեգէոնը, որուն երկու գումարտակները 1918-ի Ապրիլ-Մայիս ամիսներուն կը տեղափոխուին Եգիպտոս, իսկ ամառը՝ Փոքր Սալիտ-Քանթարա-Ռամլէ-Լոտ գծով Պաղեստինեան ռազմաճակատ: Օգոստոսի 30-ին Լեգէոնը կը տեղատրուի ռազմաճակատի առաջաւոր գիծէն մօտ 7 ֆմ հեռավորութեան վրայ (Տէս Գասպարեան Ռ., Հայկական Լեգէոնը (1916-1920 թթ.), «Հայկական բանակ», 1996, թ. 1, էջ 8):

² Ֆրանսացիները Հայերուն խոստացած էին ինքնավարութիւն ստեղծել Կեդրոնական եւ Հարաւային Թուրքիոյ մէջ: Հայկական Լեգէոնն ալ պիտի ըլլար նոր ստեղծուելիք Հայկական բանակին հիմնական կորիզը:

³ Տէս «Արարա», Նուիրուած Արարայի հիմնգերող տարեգրքին, 1923, Պոսթոն, էջ 6:

⁴ Թաթարեան Մ., Կամաւորի մը յուշեր, Անթիլիաս, 1960, էջ 15:

⁵ Պօղոսեան Ս., Հայկական զինուորի դերը Պաղեստինեան ռազմաճակատում 1918թ., «Էջմիածին», թ. 1, 2015, էջ 108:

համար»⁶։

Անգլիական բանակը Ապրիլ ամսուն փորձած էր գրավել Արարան, սակայն չէր յաջողած։ Անկէ վերջ եւս լեռը գրավելու Անգլիական բանակին երկու փորձերը ձախողած էին։ Արարայի գրաւումը վերապահուած էր Հայկական Լեզէոնին, որն իր քաջասրտութեան, տոկունութեան եւ զինուորական կարգապահութեան շնորհիւ յաջողեցաւ կատարել ռազմական այդ բարդ գործողութիւնը եւ արժանանալ Անգլիական եւ Ֆրանսական բանակի գլխաւոր հրամանատարներու գովասանքին։

Այս հրամանատարներն, ի լուր աշխարհի, յայտարարեցին այդ պատերազմին մէջ հայերու կատարած քաջագործութիւններու եւ Արարայի բարձրունքի գրաւման վտանգալի գործին մէջ յանդուգն ու ճարպիկ գործունէութեան մասին⁷։

Անգլիական բանակի գլխաւոր հրամանատար՝ Ճեներալ Ալէնպի այնքան գոհ մնացած էր Հայկական Լեզէոնի յաջողութենէն, որ իր տեղեկագրին մէջ կը գրէ, «Հայկական Լեզէոնը շատ կարեւոր դեր խաղաց մեծ յարձակման օրը, որ տեղի ունեցաւ 1918-ի Սեպտեմբեր 19-ին՝ Պաղեստինեան ճակատին վրայ»։ Ճեներալ Ալէնպի Հայ ազգային պատուիրակութեան նախագահ Պօղոս Նուպարին ուղարկած հեռագիրով կը յայտնէ. «Հպարտ եմ, որ Ձեր հայրենակիցները ակտիւ դեր խաղցան կռուին մէջ եւ մասնակցեցան մեր մեծ յաղթանակին»⁸։ Յատկանշական են նաեւ անոր հետեւեալ տողերը. «Հպարտ եմ, որ իմ հրամանատարութեան տակ ունիմ Հայկական գունդ։ Հայերը փայլուն կերպով կռուեցան եւ մեծ մասնակցութիւն ունեցան իմ յաղթանակի մէջ»⁹։ Իր կողմէն Ֆրանսական զօրքերու հրամանատարը եւս, որու հրամանատարութեան տակ կը կռուէր Հայկական Լեզէոնը, լոյս սփռեց այդ քաջարի մարտիկներու արժանիքներու, տոկունութեան եւ եռանդին վրայ, որոնց հաւատարմութիւնը դաշնակիցներուն անխախտ մնացած էր եւ պատիւ կը բերէր Ֆրանսական դրօշին¹⁰։

Մարտի ընթացքին Հայկական Լեզէոնը կու տայ 23 զոհ եւ 76 վիրաւոր։ Զոհուած կամաւորներու աճիւնները կը թաղուին Սեպտեմբեր 20-ին Արարա լեռան բարձունքին՝ Ռաֆաթի բարձունքի Հարաւ-Արեւմտեան լանջին, գիւղէն 300 մետր հեռաւորութեան վրայ՝ եղբայրական գերեզմանի մէջ¹¹։ Թաղման արարողութեան ներկայ էր զօրագունդի հրամանատար՝ գնդապետ Ռօմիէոն որ իր ճառին մէջ մասնաւորաբար կը նշէ. «Երբեք ձեր ցեղին յամառութիւնը – որ վերապրեցուցած է ձեզ դարաւոր փորձութիւններու մէջն – աւելի վեհ գործածութիւն մը ունեցած չէ։ Քնացէ՛ք ձեր փառքին մէջ. դուք նախնայնաբար Արդարութեան եւ Իրաւունքին՝ որոնք դարեւ ի վեր վտարուած էին այս շրջաններէն։ Պիտի գիտնանք ձեզի արժանի ըլլալ, որպէսզի այս հատուցումը կատարեալ եւ տեսական ըլլայ։

Ատիկա կ'երդնում ձեր դամբարանին վրայ, այս գերեզմանատան առջեւ զոր փառքի յիշատակարանի մը պիտի վերածենք եւ պիտի կոչենք Արարայի Գերեզմանատուն, այս անունին մէջ միացնելու յիշատակը մեր մեռելալներուն, անոնց զոհաբերութեան, անոնց յաղթանակին եւ այն հորիզոնին զոր այդ յաղթանակը կը բանայ իրենց հայրենակիցներուն

⁶ Merguerian Barbara, "Remembering the Armenian Victory at the Battle of Arara, September 19, 1918", The Armenian Mirror-Spectator, 2018.

⁷ Նշենք նաեւ, որ Հայկական Լեզէոններու Միութիւնը «Արարա» անունով իր պաշտօնաթերթը հրատարակած է Կիլիկիոյ մէջ։ Տե՛ս Կիլիկիա, «Արմէնիա», Մարտի, քիւ Ն, 1921։

⁸ Պօղոսեան Ս., Հայկական զինուորի դերը Պաղեստինեան ռազմաճակատում, 1918, էջ 117։

⁹ Նոյն տեղում։

¹⁰ «Պատմութիւն Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962», խմբագիր՝ Կիստուր Ա., հ. Ա., Պէյրութ, 1962, էջ 532։

¹¹ Պօյաճեան Տ., Հայկական Լեզէոնը, Պատմական Յուշագրութիւն, Ուօրթատուն, 1965, էջ 147։

ազգային բաղձանքներում առջեւ»¹²։

1925 թուականին Հայկական Լեգեոնի կամաւորներէն՝ Համբարձում Նազըրեանի նախաձեռնութեամբ եւ Երուսաղէմի Եղիշէ Արք. Դուրեան Պատրիարքի աջակցութեամբ ու օրհնութեամբ, Արարայի բարձրունքին զոհուած եւ հոն թաղուած Հայ Կամաւորներու մարմինները կը տեղափոխուին Երուսաղէմ եւ կ'ամփոփուին Ս. Փրկիչ Ազգային գերեզմանատան մէջ։ Յետագային այս եղբայրական գերեզմանին վրայ կը կառուցուի Արարայի յուշարձանը։ Տարիներ վերջ Համբարձում Նազըրեան այս դէպքին մասին կը վկայէ՝ ըսելով. «Իր կեանքի ամենէն ուրախ օրը այն օրն էր, երբ ինք օգնեց իր զինակից եղբայրներու մարմինները տեղափոխել Արարայէն Երուսաղէմ եւ ականատես ըլլալ անոնց թաղման արարողութեան՝ Հայ հոգեւորականի աղօթքով, Ս. Պատարագով եւ խունկով»¹³։

Ֆրանսական զօրքին հետ Հայկական Լեգեոնն ազատագրեց Ալեքսանտրէթը եւ հոնկէ մտաւ Կիլիկիա, ուր կեդրոնացան Ատանայի եւ Այնթապի մէջ։ «Արեւելեան Լեգեոն»ը վերանուանուեցաւ «Հայկական Լեգեոն» եւ դարձաւ հիմքը Կիլիկիոյ ինքնավարութեան պաշտպան բանակին¹⁴։

Սակայն, Արարայի ռազմական յաղթանակին եւ Հայ գաղթականներու՝ Կիլիկիա վերադարձին պատճառած ուրախութիւնը երկար պիտի չտեւէր։ 1919-ի աշնանը, Բրիտանական զօրքերը կը քաշուին Կիլիկիայէն՝ անոր պաշտպանութեան գործը թողլով Ֆրանսական բանակին։ 1920-ի Օգոստոսին, Դաշնակիցները պաշտօնապէս կը լուծեն Հայկական Լեգեոնը։ 1921-ի Հոկտեմբեր ամսուն Ֆրանսա կը ստորագրէ Անգարայի համաձայնութիւնը Ազգայնական Թուրքիոյ հետ, որով կը համաձայնի Կիլիկիայէն ամբողջապէս դուրս բերել Ֆրանսական բանակը։ Կիլիկիոյ Հայ ազգաբնակչութիւնը կը մնայ անպաշտպան։ Անոնց մէկ մասը անգամ մը եւս կ'ենթարկուի ցեղասպանութեան, իսկ մնացեալ մասը երկրորդ անգամ եւ, անվերադարձ, կ'արտաքսուի իր հայրենիքէն։

Իբրեւ պատմական իրողութիւն, կարելի է արձանագրել, որ Դաշնակից պետութիւնները վերջնական յաղթանակէն ետք, մոռցան Հայ ժողովուրդին տրուած իրենց խոստումները եւ Հայկական Լեգեոնի յաջողութիւնները ծառայեցուցին միայն իրենց իմփերիալիստական շահերուն։ Այսուհանդերձ, այս իրողութիւնը ոչ մէկ կերպ կը նուաստացնէ Արարայի յաղթանակին արժէքը եւ Հայ զինուորին արձանագրած սխրագործութիւնը¹⁵։ Ան պիտի շարունակէ խորհրդանշել Հայ զինուորին ռազմական քաջագործութիւնն ու անպարտ ոգին, ուստի Հայ ժողովուրդը ամէն տարի Սեպտեմբեր 19-ը պիտի նշէ որպէս Հայ կամաւորի սխրագործութեան օր եւ իր յարգանքն ու աղօթքը մատուցէ այն բոլոր զինուորներուն, ովքեր ինկան Արարայի բարձրունքին՝ յանուն Հայ Դատի եւ Հայ վրէժի։

¹² Պարթեւեան Ս., Հայկական Լեգեոնը, «Արարա», Աղեֆսանդրիա, 1919, էջեր 15-16։

¹³ Հ. Ե. Մ. Հայկական Եռամսեայ, 1984։

¹⁴ Պէրպէրեան Ն., «100 տարի առաջ, այսօր, Արարայի ճակատամարտին Հայկական Լեգեոնը ջախջախեց քուրդ-գերմանական զօրքերը», Լուսաւոր Աւետիս, 2018, էջ ։

¹⁵ Արարայի սխրագործութեան իւրօրինակ ապացոյց է Հայկական Լեգեոնի գերի բռնած Թուրք հազարապետին խոստովանութիւնը, ով չէր կրցած հաւատալ իր աչքերուն, որ Ֆրանսական բանակի համագգեստով Հայերու կողմէ պարտութեան մատնուած եւ գերի ինկած էին Թուրքական զօրքերը... Ան յայտարարած էր, որ «Միթէ դեռ Հայ կայ աշխարհի երեսին, մաշալլահ, մաշալլահ. ձեր ազգը երբէք չի մեռնիր ուրէմն» (Արզումանեան Մ., Արհաւիրից վերածնունդ, Երեւան, 1973, էջ 409)։

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆ

95-րդ Պատրիարք Երուսաղէմի

ՁԵՐԳ՝ ՎՍԵՄՈՒԹԻՒՆ

Երկու պատկերներ կան իմ մտքիս մէջ. առաջինը՝ Հին կտակարանէն, որ անմահացած է միջազգային գրականութեան մէջ իբրեւ խորհրդանկար իրենց, հրեաներու տաճարակրած գաղափարին համար զոհաբերուած կեանքներուն, եւ երկրորդը՝ մեր պատմութենէն:

Հին կտակարանի Ա. Թագաւորաց Զ. գլխուն մէջ կը պատմուի թէ փղշտացիներ Տապանակ Ուխտին եօթը ամիսներ իրենց մօտ գերի պահելէ վերջ, իր տիրոջ՝ Իսրայէլի վերադարձուցին, երկու անդրանկածին երինջներէ քաշուած սայլի մը վրայ, սահմանագլուխի առաջին քաղաքին Բէթսամիւսի մօտերը: Երբ իսրայէլացիներն ընդմարեցին այդ, ընդառաջ վազեցին ցնծալից, եւ իրենց խանդավառութեան առաջին հակազդեցութիւնը եղաւ խարոյկ մը կազմել այդ սայլի փայտերէն եւ անոր վրայ ողջակիզել երինջները, զոհելով կրողները կրուածին:

Տեսնելով վերաբերմունքը զոր ցոյց տրուեցաւ Հայ քաղաքական կեանքի այս վերջի վերածնութենէն ասդին, Հայ Եկեղեցւոյ նկատմամբ, մեր միտքը կ'երթայ այդ պատկերին եւ անոր խորհուրդին:

Ո՞վ պիտի չընդունէր թէ Հայ Եկեղեցին մեր ազգին գոյութեան մէջ այն հաստատութիւնն է եղած, որ մեր քաղաքական կեանքի եղերական վերիվայրումներէն վերջ, դարերով իր ծոցին մէջ պահած եւ հովանաւորած է Հայ Ազգի ինքնութեան գաղափարը, ընելով ինչ որ հարկ էր եւ հնարաւոր, որպէսզի չկորսուէր ազգին հոգիին եւ ապագային համար այնքան կենսական այդ սկզբունքը:

Այժմ, երբ քաղաքական դէպքերէ նպաստաւորուած հասած եւ եկած է ժամանակը ազգին ինքնութեան պահպանումին գործը յանձնելու իր բուն տիրոջ՝ Ազգին քաղաքական իշխանութեան, որուն առաջին գործը եղած է պահպանուած գաղափարին զոհ մատուցանել՝ պահպանող զօրութիւնը՝ Հայաստանեայց Եկեղեցին եւ այրուած սայլը:

Հանրապետական Հայաստանի արդի կառավարութիւնը, իր հայրենիքի վերաշինութեան եւ ժողովուրդի ընկերային մակարդակի բարձրացման գործին մէջ ցոյց տուաւ գովելի կորով եւ բարձր գիտակցութիւն, արդեօք այժմ պիտի չուզէ՞ր ցոյց տալ կարելի բարեհաճութիւն, որպէսզի Հայաստանեայց Եկեղեցին, որ անցեալին այնքան պատուաւոր կերպով կատարած է իր դերը ազգին հանդէպ, կատարէր նաեւ իր բուն պաշտօնը իր ժողովուրդի նկատմամբ, որպէսզի Հայ ժողովուրդի կրօնական պատմութեան մէջ չլաւերժանար Բէթսամիւսի սայլին պատկերը:

Մեր Հայրենիքը լոկ հող եւ ջուր չէ, այլ նաեւ գումարն է այն ֆիզիքական եւ բարոյական ոյժերուն, որոնք հնարաւոր կը դարձնեն մեր ցեղին կեանքն ու ինքնութիւնը:

Հայոց հայրենիքի բարոյական ոյժերու կարգին առաջին գիծին վրայ կը կանգնի Հայաստանեայց Եկեղեցին: Կրօնքը մեր ժողովուրդին համար խղճի խնդիր մը չէ միայն, այլ իր ինքնութեան զարկերակը. առանց Հայ Եկեղեցւոյ ջերմ շունչին կարելի չէ պահել Հայ ժողովուրդի ցեղային ինքնութիւնը:

Երկրորդ պատկերը կու գայ մեր իսկ ազգային պատմութենէն: Կ'ըսուի թէ, Ժէ. դարուն երբ պարսիկներ օսմանցիներէն ետ կ'առնեն Արարատեան գաւառը, կը քանդեն Երեւանի թեմի Հայ Եկեղեցիներու մեծ մասին զանգակատուները, բայց երբ ասպատակող բանակը կը հասնի Էջմիածնի տաճարին առաջ, բանակին գլուխը լուր կը ղրկէ իր սպարապետին, ըսելով. «Աշխարհի վրայ ցրուած բոլոր հայերուն ամենէն մեծ սրբարանին առջեւ ենք, կործանե՞նք անոր զանգակներն ալ»:

- Ո՛չ, պատասխանը կը բերէ սուրհանդակը, թող գէթ մայրը կարենայ երեբեմն-երբեմն խօսիլ իր զաւակներուն հետ, մի՛ կտրէք իր լեզուն»:

Իրաւամբ, Հայ ժողովուրդը Ս. Էջմիածնին միշտ նայած է իբրեւ խանդակաթ մօր մը: Մայր Եկեղեցի, Մայր Աթոռ, Մայր Տաճար բացատրութիւնները անփոխարինելի քաղցրութեամբ կը խօսին իւրաքանչիւր հայու հոգիին: Նոր ժամանակներու խորենացին՝ Առաքել Դաւրիժեցի երբ կը գրէր Ժէ. դարուն. «Ի վերայ Աշոյն եւ Ս. Էջմիածնի հաստատել կայ ամենայն ազգ Հայոց», որքան պատմական՝ նոյնքան բարոյական ճշմարտութիւն մը կ'արտայայտէր:

Սուրբին արցունքներէն, այսինքն ազգին վիշտէն իր բոցին սնունդը առնող կանթեղը, ազգային յոյսը, ժողովուրդին երեւակայութեան մէջ միշտ անշէջ մնաց Արագածի բարձունքին, եւ Էջմիածին, սգաւոր այդ որդեսէր մայրը ի սփիւռս աշխարհի ցրուած իր զաւակներուն խօսեցաւ միշտ իր յիշատակին քաղցրութեամբ, իր աւանդութիւններուն սրբութեամբ, իր Միւռոնին շողակաթ օծութեամբ, իր սրբատառ կոնդակներով, իր հայրենաքարոզ նուիրակներով եւ շնորհաբաշխութիւններով:

Վա՛յ անոր, որ կը փորձէ թմրեցնել մօր լեզուն, որովհետեւ անոր լռութիւնը ճակատագրական պիտի ըլլայ ո՛չ միայն մեր Հայաստանեայց Եկեղեցիին, բայց մանաւանդ Հայ ժողովուրդին համար:



ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ ՏՊԱՐԱՆ

(Հիմնադրության 185-Ամեակին Առթիւ)

Տպագրութեան գիւտից 393 տարի անց՝ 1833 թ., եւ Գաբրիէլ Նիկոմիդացի Հայ Պատրիարքի օրօք, Երուսաղէմի Հայոց Պատրիարքարանին կից հիմնուեց քաղաքի առաջին տպարանը: Մտայղացումը Զաքարիա Վարդապետինն էր, ով էլ 1841 թ. դառնում է Երուսաղէմի Հայոց Պատրիարք:

Կ. Պոլսում Պատրիարքական Փոխանորդ եղած տարիներին Զաքարիա Վարդապետը խորապէս կարեւորում է տպարանի հիմնումը եւ այն ի կատար ածում Եգիպտահայ յայտնի բարերար Մահտեսի Ալեքսան Եղիազարեանի առատաձեռն նուիրատուութեան շնորհիւ: 1833 թ. լոյս է տեսնում առաջին գիրքը՝ Տետրակ Աղօթամատոյցը, որի հրատարակմամբ Երուսաղէմում սկսւում է Հայ տպագրութեան պատմութիւնը: Յաջորդ տարի լոյս է տեսնում Վարդան Մեծ Վարդապետի կազմած երկու գիրք՝ Քերական (32 էջ) եւ Տետրիւն Անթառամ Ծաղիկ Մեծացուցեի (29 էջ)¹:

Հարկ է նշել, որ Ֆինանսական եւ տեխնիկական պատճառներով, տպարանի աշխատանքները սկզբնական շրջանում շատ համեստ էին եւ դանդաղընթաց: 1835 թ. պատրիարքարանում յատուկ ժողով է գումարւում, եւ որոշւում է մասնաւոր ֆոնդ հիմնել տպարանի աշխատանքները զարգացնելու համար: Առաջին նուիրատուութիւնը կատարում է Սամուէլ Վարդապետ Պոլսեցին, որը այդ նպատակով նուիրում է 40 000 դուրուշ²: Պատրիարքարանը նոյն նպատակով նուիրում է 110 000 դուրուշ: Հիմնադրուած ֆոնդը եւ նոր նշանակուած տեսուչը՝ Կիրակոս Եպիսկոպոս Երուսաղէմացին, տպարանի աշխատանքներին նոր թափ եւ որակ են հաղորդում: Մի քանի տարուայ ընթացքին լոյս կը տեսնեն տասնեակէ աւել կրօնական եւ ծիսական գիրքեր:

1841 թ. Զաքարիա Վարդապետի՝ Պատրիարք ընտրուելու հանգամանքը նոր շունչ եւ աւելն կը հաղորդէ տպարանի գործունէութեան: Անոր գահակալութեան առաջին տարում լոյս կը տեսնեն Մաշտոցը եւ Ներսէս Լամբրոնացու Սուրբ Պատարագի Մեկնութիւն գիրքերը: Այս իրողութիւնը կը շարժէ Կ. Պոլսոյ Աստուածատուր Պատրիարքի նախանձը, ով էլ կը հրահանգէ փակել տպարանը: Զաքարիա Պատրիարքը չէր կարող ենթարկուիլ նման հրահանգի, ուստի տպարանը կը շարունակէ գործել:

1846 թ. պատրիարք է ընտրւում տպարանի նախկին տեսուչ՝ Կիրակոս Եպիսկոպոսը: Ան Երուսաղէմ կը հրաւիրէ Տիգրան Սաւալանեանցին՝ ստանձնելու տպարա-

¹ Նշանեան Մեսրոպ Եպս., Տպարան Առաքելական Աթոռոյն Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի (Հաիւրամ-էայ Յոբելեանին առթիւ) 1833-1933, «Սիոն», Երուսաղէմ, 1933:

² Ղուրուշ կամ դուտուշ - Տանկական դրամ, հաւասար 40 փարայի, 0,227 ոսկի ֆրանկի, (Մալխասեանց Ս., Հայերէն բացատրական բառարան, Երեւան, 1944):

նի տեսչի պաշտոնը եւ միաժամանակ նոր տպագրական մեքենայ կը պատուիրէ Վիեննայէն: Ան նաեւ նամակ կը գրէ Կ. Պոլիս գտնուող իր փոխանորդ՝ Յովհաննէս Եպիսկոպոս Զմիւռնացիին, տպարանի նոր շէնք կառուցելու արտօնութիւն ստանալու համար: Պատրիարքի անակնկալ մահը անհնար է դարձնում ծրագրերի իրականացումը: Սակայն, 1865 թ. ընտրուած Եսայի Պատրիարք Թալասցին, իր գահակալութեան առաջին տարիներին, կ'իրականացնէ Կիրակոս Պատրիարքի ծրագիրը՝ կառուցելով տպարանի նոր շէնք եւ օժտելով այն ձուլարանով, գրաշարանով, կազմարանով եւ գրախանութով: Պատրիարքի հայրենակից՝ Յակոբ էֆենտի Աշրգեանը տպարանին նուիրում է նոր տպագրական մեքենայ, ինչպէս նաեւ նոր տառատեսակներ են բերում Կ. Պոլսից: Աշրգեան էֆենտի՝ 1871 թ. 274 օսմանեան ոսկու նուիրատուութեամբ, տպարանում կառուցում է նաեւ պահեստանոց: Աշխատողների թիւը հասնում է 20-ի: Եսայի Պատրիարքի քսանամեայ գահակալութեան տարիների ընթացքին լոյս է տեսնում մօտ 200 գիրք: Կրօնական եւ ծիսական գիրքերից բացի, տպագրում են նաեւ պատմութեան եւ գրականութեան վերաբերեալ գիրքեր, ինչպէս նաեւ դասագիրքեր: 1866 թ.-ից տպարանում լոյս է տեսնում Պատրիարքարանի պաշտօնական ամսագիրը՝ Սիոնը:

Տպարանի գործերը դանդաղում են Յարութիւն Վեհապետեան Պատրիարքի օրով, որի գահակալութեան քսանամեայ շրջանում լոյս է տեսնում ընդամէնը 73 գիրք: 1908 թ. Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցած յեղաշրջումից յետոյ վերացում է տպագրութեան գրաքննութիւնը, ինչի շնորհիւ լոյս են տեսնում աւելի մեծ թուով գրքեր: Սակայն, 1915 թ. տեղական կառավարութիւնը Պատրիարքարանին դատի է տալիս՝ մեղադրելով առանց արտօնութեան տպարան գործարկելու մէջ: Դատաւորը վճռում է Պատրիարքարանին տուգանել 50 օսմանեան ոսկի, պարտադրում են փակել տպարանը, իսկ տեսչին բանտարկում են 100 օր: Տպարանը չի գործում մինչեւ 1925 թ.:

Եղիշէ Դուրեան Պատրիարքի գահակալութեան չորրորդ տարում տպարանը վերաբացում է եւ մինչեւ իր վախճանը՝ 1930 թ., տպարանում լոյս է տեսնում 42 գիրք: Յաջորդ Պատրիարք՝ Գուշակեան Սրբազան, լինելով բանասէր անձ, իր գահակալութիւնից անմիջապէս յետոյ նախաձեռնում է տպարանի վերազինման աշխատանքները: Նրա խնդրանքով Եգիպտահայ Սարգիս Յովակիմեանը նուիրում է 1000 ոսկի, որով պատուիրում է նոր էլեկտրական տպագրական մեքենայ: Այսպիսով, մինչ 1939 թ. Պատրիարքի յանկարծամահ լինելը, տպում են եւս 50 գիրք:

1948-1960-ական թուականներին Պատրիարքարանը ստիպուած էր ապաստան տալ արաբ-խորայէլեան պատերազմի պատճառով գաղթական դարձած հազարաւոր սաղիմահայերի եւ հոգալ նրանց ամենօրեայ սնունդն ու այլ կենցաղային կարիքներ: Այս տարիներին թէեւ տպարանը բաց է մնում, սակայն իրականում այն գրեթէ չի գործում: 1960 թ. Երուսաղէմի պատրիարք է ընտրուում Եղիշէ Արք. Տէրտէրեանը, ով իր գահակալութեան առաջին իսկ օրից մեծ ուշադրութիւն է դարձնում տպարանին եւ ծրագրում է կառուցել նոր շէնք: Նրա ծրագիրն իրականանում է 1986 թ.՝ Ժառանգաւորաց Վարժարանի գետնաշարկում նոր մասնաշէնքի կառուցմամբ: Նոր տպարանը օժտւում է նաեւ հրատարակչական նոր մեքենաներով, որոնք պատուիրում են Գերմանիայից:

Հայոց տպարանը լինում է նաեւ Ամենապատիւ Թորգոմ Արք. Մանուկեան Պատրիարքի մշտական ուշադրութեան կենտրոնում: Նրա գահակալութեան տարիներին հրատարակւում են մի շարք կարեւոր աշխատութիւններ, վերահրատարակւում են արժէքաւոր պատմական, աստուածաբանական եւ ծիսական գիրքեր:

2013 թ. Երուսաղէմի նորընտիր Պատրիարք Նուրհան Արք. Մանուկեանը տպարա-

նը օժտում է նոր տպագրական մեքենայով եւ համակարգիչներով՝ զարկ տալով տպագրական աշխատանքին եւ Երուսաղէմում պահպանելով Հայ տպագրութեան աւանդոյթը: Անցնող հինգ տարիների ընթացքում տպարանում շարունակում են լոյս տեսնել «Սիոն» ամսագիրն ու եկեղեցական օրացոյցը, ինչպէս նաեւ կարեւոր պատմա-բանասիրական եւ աստուածաբանական գիրքեր:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ Ս. Քաղաքում առաջին տպարանը հիմնուել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմից, որը եղել է պատմութեան, կրօնի, ծիսագիտութեան եւ գրականութեան գրքերի կարեւոր մատակարար ոչ միայն Երուսաղէմի, այլ նաեւ Սփիւռքի հայ համայնքների եւ Հայաստանի համար: Տպարանում լոյս են տեսել Օրմանեանի, Սաւալանեանցի, Մկրտիչ Աղանունու, Եղիշէ Արք. Դուրեանի, Նորայր Արք. Պօղարեանի, Գրիգոր Տաթեւացու, եւ այլ յայտնի հեղինակների աշխատանքները: Թէեւ փոքր կարողութեամբ, այն տակաւին գործում է եւ շարունակում է կարեւոր տեղ զբաղեցնել Պատրիարքարանի գործունէութեանց ոլորտում:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Տէր, մինչ Նոր Տարին կ'արշալուսուի,
Օգնէ՛ ինծի թերութիւններս դնելու մէկ դի:
Թող շնչին բաներէ վեր մնամ,
Եւ տո՛ւր ինծի բարեկամութեան պարգեւած երանութիւնը.
Հեռացո՛ւր ինծմէ եսասիրութիւնն ու ատելութիւնը,
Թող ըլլամ, իմաստուն ճիշդ բաներու համար:
Ու Նոր Տարուան հետ շնորհէ՛ ինծի,
Որ արցունք չպատճառեմ ոչ մէկ աչքի:
Եւ երբ այս Նոր Տարին աւարտի,
Թող ըսեն, որ ես լաւ բարեկամ եղայ,
Ապրեցայ, սիրեցի ու գործեցի հոս,
Զայն վերածելով ուրախ տարուան մը:

Միշտ պատերազմէ՛ մոլութիւններուդ հետ, հաշտ ապրէ՛ դրացիներուդ հետ եւ թող իւրաքանչիւր Նոր Տարի քեզ գտնէ իբր նոր մարդ:

Երբ խիղճը արթննայ և հոգիները ձերբազատուին իրենց ստրկական բարդոյթներէն, այն ատեն է միայն, որ մարդ կրնայ ապրիլ ազատ և երջանիկ:

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անունան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ ԳՐԱԳԷՏԸ

(Ծննդեան 135-ամեակի առթիւ)

1915-ի ցեղասպանութեամբ վերջ գտան իր հարազատ հողի մէջ արմատ նետած հայ ժողովրդի հոգեւոր կեանքի բնական ընթիւղումները: Պոլիսը, թէկուզ հայրենիքից դուրս, բայց Հայաստան երկրի շունչով ապրող հայ մտքի ու լուսաւորութեան կենտրոնը, իր հոգեվարքը ապրեց 1915-1918 թուականներին, զինադադարից յետոյ վերականգնացաւ, ունեցաւ իր վերելքը եւ ապագայի փայլուն տեսլականը՝ Յակոբ Օշականի, Մատթէոս Զարիֆեանի, Վահան Թէքէջեանի «Բարձրավանքը»¹ վկայ: Քեմալական հալածանքները այդ վերհառումն էլ խեղդեցին: Հայը վերջնականապէս ցրուեց աշխարհով, Միջին Արեւելքից մինչեւ Եւրոպա ու Ամերիկա, ու միացաւ արդէն կազմուած գաղութներին կամ նոր գաղթօճախներ կազմեց: Սփիւռքը իբրեւ վայր եւ իբրեւ յղացք նոր իմաստներ ստացաւ, դարձաւ աշխարհայեացք, մտայնութիւն ու ապրելակերպ: Հայ մտաւորականութիւնը շփոթութեան, անորոշութեան ու յուսախաբութեան մատնուած փորձեց նոր իմաստ տալ աքսորային իր կեանքին, գտնել նպատակը հայրենիքից դուրս աշխարհացրիւ հայ ժողովրդի գոյատեւման. վերջին հաշուով փորձեց գտնել մի նոր ուղղութիւն հայ մշակույթի եւ մանաւանդ գրականութեան համար²:

Գրականագէտ, գրաքննադատ ու վիպագիր Յակոբ Օշականը, մէկն էր այն մտաւորականներից, որոնք ապրեցին Սփիւռքի տագնապը եւ իրենց անփոխարինելի ներդրումն ունեցան սփիւռքահայ գրականութեան սկզբնաւորման եւ զարգացման մէջ: Նա իր ժողովրդին, իր գրականութեանը ամբողջ էութեամբ նուիրուած մեծ մտաւորական էր:

Յակոբ Օշականը (Քիւֆէճեան) ծնուել է 1883 թուականի Դեկտեմբերի 9-ին, Պոլսին մերձակայ Բուրսա (Պրուսա) քաղաքում: Նշան Պէշիկթաշլեանը «Յակոբ Օշականի կեանքն ու գործը իրաւ երգիծաբանութիւնով» աշխատութեան մէջ նկարագրելով

¹ «Բարձրավանքը» միամետալ գրական-գեղարուեստական հանդէս է, որը հրատարակիչներ՝ Գ. Գաւաֆեանի, Կոստան Զարեանի, Վահան Թէքէջեանի, Շ. Պէրպէրեանի (պատասխանատու տնօրէն), Յակոբ Օշականի ջանքերով լոյս է տեսել 1922 թուականին, Կ. Պոլսում: Հանդէսի շուրջը համախմբուել էին եղեռնից ազատուած մտաւորականները՝ արեւմտահայ հոգեւոր կեանքը վերակերտելու ձգտումով: Ամսագրում ուղագրաւ են Յակոբ Օշականի «Հայ գրականութիւն» յօդուածաշարից Դանիէլ Վարուժանին, Ա. Շիրումանգաղէին, Աւետիք Իսահակեանին, Զապէլ Նսայեանին, Կ. Սիտալին, Արսէն Երկաթին նուիրուած գրաքննադատական յօդուածները:

² Ռ. Փիրումեան, Յակոբ Օշական, լուսաւոր կանթեղ սփիւտահայ գրականութեան սկզբնաւորման եւ զարգացման համբին, Պատմա-բանասիրական հանդէս, № 1, էջ 63:

Օշականի ծննդեան պայմանները՝ ասում է. «Ծնած է մսուրէն շատ աւելի համեստ վայրի մը՝ մութ ու խոնաւ, գետնափոր սենեակի մը մէջ: Զինքը դրած են հացի պարսպ տաշտին կեդրոնը: Ծնած առէն կը ճանչնայ դագաղը»³: Ծնողները հողագործի բանուորներ էին քաղաքում եւ տարուայ գրեթէ կէսը՝ ձմեռները, քաղաքում աշխատանք չլինելու պատճառով, անց էին կացնում գիւղում:

Ծանր մանկութիւն ու պատանեկութիւն էր բաժին ընկել Յակոբին: Նա հինգ տարեկան էր, երբ մահացաւ հայրը: Մայրը Բրուսայի մետաքսաթելի գործարանում օրը 14 ժամ աշխատելով, կիրակի օրերին էլ հարուստների ընտանիքներում ծառայելով՝ վաստակում է երեք երեխաների եւ նրանց գրեթէ կոյր հօրաքրոջ օրուայ հացը:

Նախակրթութիւնը Յակոբը ստանում է նախ գիւղում, ապա Բուրսայում՝ դրսեւորելով բացառիկ ընդունակութիւններ՝ ուշիմ էր եւ բացառիկ յիշողութեան տէր աշակերտ, հաւասարապէս առաջադէմ բոլոր դասերի մէջ:

Դպրոցում Յակոբի ազգանունը Յովհաննիսեան էր, իսկ իր ընկերները, ինչպէս սովորութիւն է անել յաճախ վարժարաններում, մակդիր էին փակցրել նրան՝ կոչելով Հէքիաթ:

Հէքիաթ Յակոբը գրասեղանների վրայ արդէն գրում էր ոտանաւորներ, արձակներ ու տրամախօսութիւններ: Աշակերտներն ու աշակերտուհիները իր այդ տրամախօսութիւնները անգիր էին սովորում եւ արտասանում:

Պատմում են, թէ 1898 թուականին վարժարան այցելած Գրիգոր Զօհրապը եւ Հրանդ Ասատուրը, երբ ծանօթանում են աշակերտների շարադրութիւններին, հիանում են Յակոբի շարադրանքով եւ Զօհրապը յանձնարարում է, որ անպայման «Հէքիաթին» ուղարկեն մի տեղ՝ ուսանելու համար⁴:

Բրուսայի վարժարանը աւարտելուց յետոյ՝ 1899-ին, Յակոբին ուղարկում են Արմաշի դպրեվանք:

Եղիշէ Արք. Դուրեանը ընդունում է եւ հարցնում.

- Ինչո՞ւ համար Արմաշ եկած ես տղա՛ս:

- Հայ գրականութեան պատմութիւնը գրելու համար:

Դուրեանը հեգնանքով շարունակում է.

- Քանի՞ հատոր պիտի ըլլայ գրելիք գիրքդ:

- Տասը հատոր:

Դուրեանը «Հէքիաթի» այս հէքիաթային խօսքերը լսելուց յետոյ, բացականչում է.

- Յիմա՛ր...⁵

Դպրեվանքում նա թոյլտուութեան սահմաններում, կարդում է օտար հեղինակների գործեր, սկսում է սովորել Ֆրանսերէն: Շուտով նրա մէջ արթնանում է քննադատը: Զի հաւանում որեւէ մէկի խօսած քարոզը եւ յայտարարում է. «Քարոզ խօսիլ. առիկա իմ գործս է»: Մէկի ատենաբանութեան համար ասում էր. «պարսպ խօսեցու կարաւան», միւսի ճառախօսութեան համար. «լեցուն պարսպութիւն», երրորդի խօսածի համար «փռոշով լեցուն հով», չորրորդին՝ «տակառաղմուկ, տակառաժխտ»: Մէկ տարի յետոյ՝ իր հետաքրքրութիւններին բաւարարութիւն չգտնելով, հեռանում է դպրեվանքից. նա եկել էր լեզուներ սովորելու, օտար գրականութիւն կարդալու, մինչդեռ ստիպուած էր հարիւրաւոր էջերով եկղեցական գրականութիւն ընդօրինակել՝ վարդապետ դառ-

³ Ն. Պէշկըպաշեան, Յակոբ Օշական (Կեանքն ու գործը իրաւ երգիծաբանութիւնով), Փարիզ, 1947, էջ 3:

⁴ Նոյն տեղում, էջ 6:

⁵ Նոյն տեղում

նալու համար, պահպանել դպրեվանքի կենցաղավարության խիստ կանոնները եւ պատժուել դրանք երբեմն խախտելու համար:

Այդպէս էլ Յակոբը բարձրագոյն կրթութիւն չի ստանում, սակայն տարիների ընթացքում ինքնակրթութեամբ, մոլի ընթերցասիրութեան, տքնաջան աշխատասիրութեան շնորհիւ հասնում է մտաւոր բարձր զարգացման եւ դառնում հայ առաւել բեղմնաւոր գրողներից մէկը⁶: Տարբեր ժանրերով (պատմուածք, հէքիաթ, վէպ, վիպակ, թատերգութիւն, բանաստեղծութիւն, քնարական արձակ, քննադատական յօդուած, դիմանկար, մենագրութիւն եւ այլն) նա գրել է հարիւրաւոր գործեր, որոնց մի մասն է միայն տպագրուել կենդանութեան օրօք: Նրա գրական պատկառելի ժառանգութիւնը, նրա ամենօրեայ ստեղծագործական աշխատանքը նկատի ունենալով նրան հայ Բալզակ են անուանել: Ինքն էլ, իր մտքում որպէս ստեղծագործողի օրինակելի կերպար ունեցել է Բալզակին: Թէեւ 1937 թուականին սրտի առաջին կաթուածից յետոյ բժշկները արգելել էին գրասեղանի առջեւ երկար նստել, սակայն Օշականը մինչեւ կեանքի վերջը մշտապէս շարունակում էր ապրել ստեղծագործական բուռն կեանքով, վախենալով, թէ անկատար կը մնան իր ծրագրերը:

Օշականի ստեղծագործութիւնները կարելի է բաժանել երեք հիմնական մասերի՝ վիպակ գործեր (արձակը), քննադատական-գրականագիտական գործեր եւ թատերգութիւն:

Օշականի թատերգութիւնները («Նոր պսակ», «Աքլորամարտ», «Ստեփանոս Սիւնեցի», «Երկինքի ճամփով», «Երբ մեռնիլ գիտենք», «Մինչեւ ո՞ւր», «Օրն օրերուն» եւ այլն) հետաքրքիր են իրենց բարձրացրած հարցերով, գաղափարներով, բայց ոչ իբրեւ թատերական ստեղծագործութիւններ՝ բեմականացման համար նպաստաւոր յատկանիշներով: Բեմադրուել է միայն «Նոր պսակը» (1922 թ. Պոլսում): Օշականի պիեսները աւելի շատ կարդալու, ընթերցուելու համար են, քան բեմադրուելու եւ մօտենում են արձակի այն տեսակին, որի մէջ գրողը մի կողմ կանգնելով՝ երկխօսութեան է հրաւիրում հերոսներին: Օշականի թատերգութիւնները ինչ-որ չափով լրացնում, ամբողջացնում են նրա վիպական ստեղծագործութիւնը: Նա մեծ է իբրեւ վիպագիր ու քննադատ-գրականագէտ⁷:

Օշականի վիպական ստեղծագործութիւնները 20-րդ դարի հայ արձակի հետաքրքիր երեւոյթներից են: Նա գրական ասպարէզ իջաւ 1900-ական թուականներին գիւղի կեանքը պատկերող պատմուածքներով ու «հէքիաթներով»՝ շարունակելով արեւմտահայ գիւղագրութեան աւանդները, սակայն փորձելով գիւղաշխարհը տեսնել մի ուրիշ դիտանկիւնից: Այդ բոլորը նա հաւաքեց «Խոնարհները» եւ «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուներում:

«Խոնարհներ» հերոսները գիւղի սովորական, հասարակ մարդիկ են՝ աղքատները, խեղճերը, խենթերը՝ իր բնորոշումով քոքուրները, որոնք այդպիսին են դարձել արկածի, որբութեան, մանկութեան տարիների մի «խոշոր խռովք» ապրելու պատճառով: Նրանց կեանքը պատկերեց, բայց ոչ առօրեայ, խաղաղ, հանգիստ կեանքը, աշխատանքն ու սոցիալական ծանր վիճակը, զրկանքները, այլ ներքին դրաման, հոգեկան աշխարհը: Կրքերով, սէրերով, իզուր փայփայուած, թաքուն երազներով, լուռ ցաւերով լցուած հոգիներ՝ երբեմն ընդունակ նաեւ ընդվզումների հասարակական օրէնքների դէմ:

«Խոնարհներ» հերոսների ճակատագիրը գրեթէ մշտապէս ողբերգական աւարտ է ունենում, բայց նրանց ապրած կեանքի պատմութիւնը, հոգեբանական պահերի

⁶ Վ. Գաբրիէլեան, Սփիւռահայ գրականութիւն, 3-րդ՝ լրամշակուած հ., ԵՊՀ հրատ., Երեւան, 2016, էջ 49:

⁷ Նոյն տեղում էջ 53:

վերլուծումով, իմաստաւորում է: Մեծ սէրերը, մեծ կրքերը պատճառ են դառնում այդ խեղճ, թշուառ մարդկանց խոր դրամային ու կործանմանը: Շրջապատի կողմից չհասկացուած այդ «խենթերը» իրենց հոգու խորքում լուռ ցաւեր ունեն, պայծառ երազներ, թաքուն, բայց բուռն զգացումներ, որ կարող են պոռթկալ կամ լռել, ու երկու դէպքում էլ աւարտում են ողբերգութեամբ:

Իր հերոսների կեանքի առօրեայ պատմութիւնների ու հոգեկան թաքուն ապրումների միջոցով Օշականը պատկերում է նաեւ բարքեր, սովորութիւններ, փորձելով յայտնաբերել ոչ միայն մարդկայինը, այլեւ այն, որ «հայեցի» է, «հայ հոգին» է:

Իրեն իսկ առաջադրած այս պահանջը Օշականը համարում էր հայ գրողի նախապայմանը: «Մեհեան» հանդէսում տպագրուած իր քննադատական յօդուածներում ու նաեւ հետագայում Օշականը հայ գրողից ամէնից առաջ պահանջում էր հայեցիութիւն, այսինքն՝ ազգային առանձնայատուկ յատկանիշ, ազգի հոգին, արեան ձայնը:

Այդ առանձնայատուկը մեր ժողովրդի բնորոշ կենսաձեւերը, բնաւորութեան հայեցի գծերն են (կենսասիրութիւն, ապագայի հանդէպ հաւատ, աշխատասիրութիւն, միամտութիւն եւ այլն), որ Օշականը փորձեց պատկերել իր «հէքիաթների» մէջ, որոնք նոյնպէս թարմութիւն էին դարասկզբի արեւմտահայ արձակում: Այդ «հէքիաթները», ժողովրդական աւանդութիւնների, առասպելների, բանաւոր զրոյցների, պարզ մարդկանց գեղեցիկ յարաբերութիւնների, բնաշխարհի գոյների եւ այլ թեմաներով այդ պատմութիւնները, որ հեղինակը հաւաքեց «Խորհուրդներու մեհեանը» ժողովածուի մէջ, ընդգծում են կեանքի տրոփով, պատումի քնարականութեամբ, կենդանի պատկերներով: Այդ իսկ պատճառով, ինչպէս իրաւացիօրէն նկատում է գրականագէտ Վ. Գաբրիէլեանը, դրանք հեռանում են պատմութեամբ ժանրից, հակուելով դէպի տպաւորապաշտ արձակ բանաստեղծութեան ժանրը:

Օշականը իր պատմութեանը հետեւում էր մասամբ Թլկատինցու եւ Զարդարեանի, Զօհրապի ու Երուխանի, մասամբ էլ Ֆրանսիացի նորավիպագիրների, յատկապէս Մոպսսանի աւանդութիւններին: Սիւժէի, կառուցուածքի մէջ նա ձգտում է պարզութեան, խտութեան, խուսափում է երկարաբանութիւններից, շեղումներից, ձգտում է գործողութեան զարգացման ու պատկերի կենդանութեան: Պատումը պարզ է, լեզուն պատկերաւոր: Հերոսների կեանքի ընդհանուր բնութագրական-նկարագրական պատմութիւնների մէջ գրողը իր ուշադրութիւնը յատկապէս բեւեռում է, իր խօսքերով ասած՝ «մի քանի հոգեբանական վայրկեաններ» վրայ՝ պեղելով նրանց հոգին, բացելով հոգեկան դրամայի ծալքերը, մի մօտեցում, որ ընդհանրապէս Օշականի արձակի առանձնայատուկ յատկանիշն է:

Մինչեւ 1928 թուականը գրուած արձակ պատմութեանը Օշականը յետադարձ հայեացքով վերապրում է մանկութեան ու պատանեկութեան, ապա եւ 1915-ի ու հետագայ տարիների իր կեանքի պահերը, որոնք, անձնական, անմիջական տպաւորութիւններ լինելով, ընդհանրացնում են ժամանակի պատկերը՝ հայ «պզտիկի» ու «պատանու» ապրումներն ընդհանրապէս⁸:

Իր վէպերով եւ յատկապէս «Մնացորդաց»-ով Օշականը ամբողջացրեց իր արձակի աշխարհը՝ արեւմտահայոց կեանքը 1860-1915-ի շրջանում, այն ծանր կեանքը, որ ապրեց հայ մարդը Թուրքիայի գաւառներում: Այդ աշխարհը ծանօթ, բայց եւ գրականութեան մէջ նորովի պատկերուած մի աշխարհ էր՝ «բնակեցուած» հայ ու թուրք հերոսներով. հայ գիւղացին՝ իր ազգային յատկանիշներով ու սովորոյթներով, թուրքը՝ բարբարոս ու մոլեռանդ բնոյթով, այլասերուած բարքերով: Կեանքի այս ընդհանուր համապատկերի մէջ Օշականը տուեց բուն կեանքը՝ մարդկայինը ազգա-

⁸ Նոյն տեղում, էջ 56-57:

յինով պայմանավորված համամարդկայինը՝ սէրը, ատելությունը, կիրքը, սեռային բռնկումները, արեան կանչը, ցեղային ոգին, ժառանգական մղումները, վայելքը, ողբերգությունը, մահը,- այն ամենը, ինչով պայմանավորված է մարդկային կեանքի շարժումը՝ ծնունդից մինչև մահ:

Հայ ու թուրք տարբեր գերդաստանների պատմութեամբ, ժառանգական կապերի բացայայտումով Օշականը ստեղծում է կեանքի տեւական ժամանակների (19-րդ դարի երկրորդ կեսի եւ 20-րդ դարասկզբի) պատմությունը: Ի տարբերություն սփիւռքահայ ուրիշ գրողների, որոնք պատկերել են Արեւմտեան Հայաստանի գիւղը, Օշականը ներկայացնում էր Թուրքիայի այլ վայրերում, թուրքերի մէջ, նրանց հետ միասին ապրող եւ նրանց կողմից մշտապէս հալածանքների ենթարկուող հայութեան կեանքի պատմությունը՝ հայ-թուրք յարաբերությունների մանրամասներով: Օշականը շատ լաւ էր ճանաչում նաեւ թուրքին՝ նրա լեզուն, բարքերը, մոլությունները, ախտագին ցանկությունները, ժառանգական բնազդները, նրա ողջ էությունը, ուստի եւ երեւի թէ միակն էր սփիւռքահայ գրողներից, որ գրեց նաեւ նրա մասին, բացայայտեց թուրքի բնոյթը, ցեղային այն յատկանիշները, վայրագ կոտորածների: Խորանալով թուրքի պատմութեան մէջ, բացելով նրա դաժանութեան, անգթութեան, բարոյական այլասերութեան արմատները՝ Օշականը նկատում է, թէ անգամ Եւրոպայում ուսանած թուրք փաշաները, սպաները չեն կարողանում ձերբազատուել իրենց ցեղային բնոյթից եւ ազգային, կրօնական ֆանատիզմը, բնածին ատելությունը «կեաւուր» (անհաւատ) հայի նկատմամբ կարող էր դրսեւորուել ամէն պահի՝ 1896-ին, 1909-ին, 1915-ին՝ (ինչպէս եղաւ եղեռնի բոլոր տարիներին): Օշականը ցոյց է տալիս այդ ատելութեան արմատները, որոնք պան-թուրքիզմի գաղափարի հիմքում են ընկած:

Իր վէպերով Օշականը նպատակ է ունեցել պատկերել Թուրքիայի գաւառներում ապրող հայութեան կեանքը, մինչև եղեռնի օրերը, նպատակ է ունեցել փրկել մեր ժողովրդի մնացորդացը: Օշականը այն համոզումն ունէր, թէ գրողների իր սերունդը պարտաւոր է հէնց մնացորդացի՝ կենդանի մնացածների համար փրկել նրա ճանաչած կեանքի, նախաեղեռնեան օրերի, արդէն բնաջինջ եղած հայութեան պատկերը՝ այն վերակերտելով գրականութեան մէջ, կենդանացնել այլեւս գոյություն չունեցող այդ աշխարհը:

Օշականի քննադատական-գրականագիտական ժառանգությունը նոյնպէս պատկառելի է: Արդէն տասական թուականներին առաջին պատմութեանների հետ, Օշականը յայտնի դարձաւ իր գրական վերլուծումներով, քննադատական սուր յօդուածներով ու գրախօսություններով, եւ յատկապէս «Մեհեան» հանդէսում տպագրուած «Հարթեմ»-ների շարքով, որի մէջ երիտասարդ քննադատը համարձակօրէն փորձում էր «տապալել» կեղծ արժէքները, գրական ասպարէզում յայտնի դարձած անուններ: Իր ժխտելու, մերժելու, «կուռքեր տապալելու», «գաճէ աստուածներին» փշրելու, «հարթելու» ոգեւորությունը պայմանավորված էր հայ գրականությունը բարձր չափանիշներով գնահատելու, համաշխարհային գրականութեան մակարդակով չափելու ձգտումով: Հետագայում Օշականը «հանդարտուեց», հայ գրական արժէքները փորձեց տեսնել հայ կեանքի ու գրականութեան շրջանակներում՝ հպարտութեամբ յիշատակելով մեր գրականութեան նուաճումները⁹:

Մշտապէս հետեւելով օրուայ, ժամանակակից գրականութեանը, Օշականը նոր գրքերի մասին հանդէս էր գալիս գրախօսություններով, վերլուծություններով, տպաւորություններով, կարծիք էր յայտնում ու բանավիճում գրական ամենատարբեր հարցերի շուրջ: Միաժամանակ մշտապէս անդրադառնում էր գրականութեան պատմութեանը, արժէքաւորում նախորդների գրական ժառանգությունը, նրանց վաստակը հայ գրա-

⁹ Նոյն տեղում, էջ 61:

կանութեան պատմութեան մէջ: Նա հաւասարապէս օրուայ գրական քննադատն էր ու գրականութեան պատմաբանը, ուստի եւ փորձել է գրական քննադատութեան ու գրականագիտութեան գրեթէ բոլոր ժանրերը՝ գրախօսութիւն, գրական նշմար¹⁰, տպաւորութիւններ, յօդուած, երկխօսութիւն-հարցազրոյց, գրական դիմանկար, մենագրութիւն, պատմութեան ակնարկներ եւ այլն:

Օշականի գրականագիտական-քննադատական ուսումնասիրութիւնների շրջանակը չափազանց ընդարձակ է՝ հայ մատենագիրներից, միջնադարի բանաստեղծներից մինչեւ նոր ու նորագոյն գրականութիւն, մինչեւ սփիւռքահայ ու խորհրդահայ հեղինակները ներառեալ: Անցեալի ու իր ժամանակի գրողների մասին առանձին ուսումնասիրութիւններից բացի, Օշականը ստեղծել է մեզանում նմանը չունեցող մի ուսումնասիրութիւն արեւմտահայ գրականութեան մասին, տասը հատորով՝ «Համապատկեր առեւտանայ գրականութեան» խորագրով: 1938-1944 թուականներին գրուած այս մեծածաւալ եւ համակողմանի ուսումնասիրութիւնը ներառում է արեւմտահայ գրականութեան շուրջ հարիւրամեայ պատմութիւնը, 1840-ականներին ասպարէզ իջած, իր անուանումով՝ «զարթօնքի» սերնդի գրողներից մինչեւ 20-րդ դարասկզբի «արուեստագէտ» գրողների սերունդը ներառեալ, մինչեւ Սփիւռք տարագրուած վերապրող արեւմտահայ գրողները: Շարքը աւարտում է իրեն՝ Օշականին նուիրուած մեծածաւալ ուսումնասիրութեամբ (10-րդ հատորը)՝ խորագրուած «Յակոբ Օշական. վկայութիւն», որի մէջ երրորդ դէմքով, գրականագէտ Օշականը հիմնաւորապէս վերլուծում է Օշական գրողի ու քննադատի ամբողջական գործը, արուեստի առանձնատկութիւնները: «Ինքնավերլուծումի, ինքնատեսութեան» մի բացառիկ օրինակ է սա իր ընդգրկումով՝ ծաւալով ու խորքով:

Օշականը այն գրագէտներից է, ով ընդունակ է իր տողերը վայելչօրէն հանդերձելու արուեստի ոսկեհուռ ու կախարդահիւս պատմութեանով:

Մեծ մարդիկ, ինչպէս նաեւ մեծ, նշանակալից, մարդկային պատմութեան մէջ անկիւնադարձ կազմող եղելութիւնները, նման են ճոխ ու խոր ոսկեհանքերի՝ որքան էլ պեղուեն՝ չեն սպառուի: Բոլոր ժամանակների մեծ մտածողները, իմաստասէրները, տեսաբանները ունեն իրենց խօսքը այդ մարդկանց կամ պատահարների մասին: Ու բոլոր այդ խօսքերի մէջ նորի ու անսովորի տեղը լայն է: Բազմաթիւ են Նարեկացուն, Կոմիտասին, Մեսրոպ Մաշտոցին, Վարդանի անձին նուիրուած երկերը, մենագրութիւնները: Տարբեր մօտեցումներով, վերլուծման իւրապատուկ եղանակով մեզ հասած այդ գործերում բացակայ է Օշականի անունը: Սակայն պէտք է ասել, որ նա եւս ունի բարձրագոյն իր աթոռը մեծերի այս պանթէոնում:

Ինչպէս Եղիվարդն է ասել «Օշական բացառիկ էր, ինքնատիպ եւ իր նմանը չունի մեր հին եւ նոր գրականութեան մէջ: Կապարի, պղինձի եւ ոսկիի խառնուրդ ձուլածոյ մը, ուր գիւղացին, մարդն ու գրագէտը երջանիկ շաղապատումով գիրարկը լրացնէին: Դժուար էր իր կապարը կշռել, պղինձը ծակել, սակայն հեշտանք էր իր ոսկիի արձակած փայլքին նայիլ»¹¹:

Օշականի ծննդեան 135-ամեակի առթիւ, երբ փորձում եմ մի քանի խօսք յանձնել թղթին, նպատակս է ընթերցասէր մեր հասարակութեան ուշադրութիւնը հրաւիրել Օշականի կողմից մեր գրականութեանը կտակուած մնայուն գործի վրայ: Որովհետեւ Օշականի գործը, թողած հարուստ գրական ժառանգութիւնը անզգամ մարդկանց ու ապերախտ դարերի հարուածների ու փոթորիկների դէմ կուրծք տալու չափ ամրախարիսխ է ու հսկայագէզ:

¹⁰ Դատողութիւններ որեւէ գրքի, որեւէ հեղինակի, որեւէ գրական երեւոյթի մասին:

¹¹ Եղիվարդ, Օշական երէկ եւ այսօր, «Սիոն», 1983, Դեկտեմբեր, թիւ 12, էջ 248:

Յոբելինական այս հանգրուանին, մաղթում եմ, որ Տէրը Հայ Գրականութեան սակաւամշակ այգին օժտի նոր ու նուիրեալ մշակներով, որպէսզի նրանք Օշականեան սիրով, խանդով ու մանաւանդ կիրքով կարողանան դարձնել այն առատ ու հասկաշատ՝ «մէկի տեղ երեսուն, վաթսուն եւ հարիւր», ու տան պատուաբեր ու պատկառելի արդիւնք՝ «ի ժամանակի հնձոց»:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Ան որ ամենաերկար գաւազանը (ոյժ) ունի, ա՛յն ի վիճակի է ստեղծելու քաղաքակրթութիւն:

Ճակատագրական պիտի ըլլար մեր կեանքերը բնորոշել հիմնուած միակ յաջողութեան մը և կամ ձախողութեան մը վրայ:

Չար մարդոց խիղճերը կ'արթննան միայն տարտարոսի մէջ, երբ բոցերը սկսին լիզել անոնց ոտքերը:

Եթէ փորձես սէրէն փախչիլ, ամբողջ կեանքիդ մէջ ապերջանիկ կը մնաս:

Երբ կը սիրենք՝ մենք մեզ աշխարհի տէրը կը զգանք, կարող՝ անկարելին կարելի դարձնելու և աշխարհի անարդարութիւնները սրբագրելու:

Մարդուն տարիքը կը չափուի անոր ներքին նեխածութեամբ:

Իրա՛ւ երջանկութիւնը միայն մէկ անգամ կը բախէ մեր դուռը:

Իսկական երջանկութիւնը կարճատեւ և չափազանց փխրուն զգացում մըն է:

Վախկոտները մի քանի մահ կ'ունենան, մինչ քաջը՝ միայն մէկ:

Գիշերը ունի հազար աչքեր:

Մենք երբեմն կը խօսինք ա՛յն լեզուով՝ որ բառարան չունի:

Մարդուն մեծագոյն առաքինութիւնը պէտք է ըլլայ իր միտքն ու հոգին դարձնել վերանորոգիչ գաղափարներու ընդունարան, ճանշնալ մեծութիւններն ու տեղ տալ անոնց իր մտքին և հոգիին մէջ:

Շատ խօսք ունեցող մարդը քիչ գործ կը տեսնէ:

Ինչպէս որ զգեստը չգործածուելով ցեցերու կեր կ'ըլլայ, նոյնպէս ալ մարդը եթէ անգործ մնայ մեղքերու ցեցով կ'ապականի:

Ան որ ինքզինք գերին կ'ընէ սուտին՝ կը կորսնցնէ իր խօսքին հեղինակութիւնը եւ հետեւաբար ատելի կ'ըլլայ Աստուծոյ և մարդոց աչքին:

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անունան
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ԱՆՄԱՀ ՔԵՐԹՈՂԸ՝ ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ (Ծննդեան 190-ամեակի առթիւ)

19-րդ դարի երկրորդ կեսի արեւմտահայ աշխարհաբար բանաստեղծության զարգացումը եւ դասական լեզուի ձեւաւորումը կապուած են հիմնականում երեք հեղինակների անուն հետ՝ Դ. Ալիշան, Մ. Պէշիկթաշլեան եւ Պ. Դուրեան: Նրանցից իւրաքանչիւրն իր առանձնաշատուկ տեղն ունի այդ գործում:

Մկրտիչ Պէշիկթաշլեանը բանաստեղծի իր կենսագրութիւնը սկսեց գրաբար քերթուածներով: Դրական դաստիարակութիւնն էր պատճառը, ժամանակակից-նախորդների՝ Ա. Բագրատունու եւ Դ. Ալիշանի ազդեցութիւնը, գրական ականդո՞թը, թէ՞ ուղղակի նախասիրութեան ու համոզումի խնդիր էր՝ դժուար է ասել: Թերեւս եւ մէկը, եւ միւսը, կամ գուցէ աւելի շատ առաջինը: «Աշխարհաբարի նկատմամբ նրա ունեցած վաղեմի համարումը»¹, ասել է թէ՛ համակրանքը, իրականում որոշակի շրջանակներ ունէր: Ժամանակի աշխարհաբարով գրուած մի շարք ճառերի եւ մեզանում առաջին աշխարհաբար դրամայի («Կոռնակ») հեղինակի վերաբերմունքը նոր հայերէնի նկատմամբ հիմնաւոր պատճառ ունի. հասկանալի լինել լսարանին: «Նա տեսաւ,- գրում է Վ. Թէրզիբաշեանը,- որ հասարակութիւնը կը սառչէ թատրոնից, երբ այդտեղ շարունակեն բեմադրել գրաբար անհասկանալի լեզուով պիեսներ: Անհրաժեշտ էր ներկայացումներ տալ աշխարհաբար, ժողովրդին հասկանալի լեզուով»²:

Պէշիկթաշլեանի աշխարհաբարը, թատերգութիւնների ու ճառերի մէջ, շատ պարզ է ու գեղեցիկ, քիչ ունի գրաբարի խառնուրդ. ոտանաւորների մէջ լեզուն շատ աւելի գրաբարախառն է, եւ դա բացատրուում է օգտակար լինելու այն տիրակալական ձգտումով, որով տողորուած էր Պէշիկթաշլեանը այդ թատերգութիւններն ու ճառերը գրելու ժամանակ: Աշխարհաբարը՝ նրա արձակում՝ զմայլելի է ընդհանրապէս, եւ կարող է համարուել մեր նոր լեզուի գրական կազմաւորումը նպաստաւորող առաջին քայլերից մէկը:

Մկրտիչ Պէշիկթաշլեանը ծնուել է 1828 թ. Կ. Պոլսի Օրթագիւղ թաղամասում: Մինաս Չերազի վկայութեամբ, նրա հայրը՝ դերձակ Ռափայէլ Պէշիկթաշլեանը, մէկն է եղել այն 12 000 հայերից, որոնց 1827 թ. Սուլթանը աքսորեց Փոքր Ասիայի խորքերը:

¹ Սաֆարեան Վ., Մկրտիչ Պէշիկթաշլեան, Երեւան, 1972, էջ 83:

² Թէրզիբաշեան Վ., Հայ դրամատուրգիայի պատմութիւն, գիրք Ա, Երեւան 1959, էջ 319: (Տե՛ս նաեւ Անտիսեան Յու. Ս., Արեւմտահայ բանաստեղծութեան լեզուի պատմութիւնից. Մկրտիչ Պէշիկթաշլեան, Բեձ, 2002, ք. 2, էջ 57-67):

Ծնողների մահից յետոյ Մ. Պէշիկթաշլեանը շուտով կորցնում է իր խորթ, բայց անսահման բարի մօրը եւ քոյրերին, մնալով մէն-մենակ աշխարհի հետ: Նախնական կրթութիւնը ստանում է Կ. Պոլսի մխիթարեան վարժարաններում մինչեւ 1839 թ.: 1839-1845 թթ. նա սովորում է Պադուայի (Իտալիա) Մուրատեան վարժարանում, որը նրա համար մեծ նշանակութիւն է ունեցել: Պադուայում նրա սովորելու տարիները համընկան իտալական ժողովրդի ազատագրական պայքարի բուռն վերելքի շրջանին:

1856 թ. վերջերին Պէշիկթաշլեանի ջանքերով Օրթագիւղն ունեցաւ իր թատերաբեմը: Նա եղաւ գիւղում առաջին անգամ թատերախումբ կազմողը, որին մասնակցեցին անձնուէր երիտասարդներ՝ բոլորն էլ Մուրատեան կամ Մուրատ-Ռափայէլեան վարժարանից: Հայ թատրոնի ու թատերգութեան պատմութիւնը, իրաւամբ, մեր նոր թատրոնի սկիզբն է համարում Պէշիկթաշլեանի հիմնադրած թատրոնը: Այն դրամաները, որոնցով հէնց սկզբից Մ. Պէշիկթաշլեանը ներկայացել է պոլսահայ հանդիսականին, եւ որոնք մաքուր աշխարհիկ լեզուով թարգմանուած առաջին թատերգութիւններն էին հայոց մեջ, եղել են իր «Կոռնակը», Վոլտերի «Կեսարի մահը» եւ Ալֆիերիի «Սաւուրը եւ Բրուտոսը»: Իսկ սա ցոյց է տալիս, որ հայ նոր թատրոնին նուիրուելուց կամ այն ստեղծելուց առաջ Պէշիկթաշլեանը տեսականօրէն եւ գործնականօրէն պատրաստուած է եղել դրան: Թատերական գործին անցնելը նրա երկար մտահոգութեան արդիւնք է եղել եւ ոչ թէ յանկարծակի ոգեւորութեան հետեւանք, ինչպէս նշուել է յաճախ: Պէշիկթաշլեանը հանդիսականների ուշադրութիւնը վառ պահելու ու նրանց սրտում հայրենիքի սուրբ սէրը արծարծելու համար, իր ողբերգութիւնների նիւթերը քաղել էր ազգային պատմութիւնից, ամենայնովի տեսարաններով նրանց ցոյց տալու համար սիրոյ, միութեան, եղբայրութեան բարի օրինակները եւ միեւնոյն ժամանակ մատնացոյց անելու ատելութեան, երկպառակութեան, մատնութեան ու նախանձի տխուր հետեւանքները, որոնցից մեծապէս տուժել են հայերը անցեալում³:

1846 թ. սկսում է Պէշիկթաշլեանի հասարակական գործունէութիւնը եւ տեւում մինչեւ կեանքի վերջին օրերը: 1846 թ. Կ. Պոլսում Մ. Պէշիկթաշլեանի նախաձեռնութեամբ եւ ակտիւ մասնակցութեամբ հիմնադրւում է «Համազգեաց ընկերութիւնը»: Նա եղել է նաեւ «Համազգեաց ընկերութեան» գաղափարական ղեկավարներից մէկը: Աւելի քան հինգ տարի «Համազգեացի» շուրջ ծաւալուած պայքարը առիթ ու դրդապատճառ է դարձել Պէշիկթաշլեանի՝ տարբեր ժանրերի 6 ստեղծագործութիւնների երեւան գալուն: Երկու ճառ «Խօսեցեալ ի կանառս ընկերութեանն Համազգեաց», «Ի նորակերտ ժողովարանն Համազգեաց խօսեցեալ», մի ձօն ընկերութեան տարելիցի առթիւ գրած՝ «Ողջոյն քեզ, ով հրաշակերտ տաճար վեհին իմաստութեան», ընկերութեան հակառակորդներին մերկացնող երկու երգիծական չափածոյ գործ՝ «Հանելուկ», «Մխիթարեան եմք աշակերտ» եւ վերջապէս «Համազգեացի» պայքարի անմիջական շարունակութիւնը հանդիսացող «Կոռնակ» դրաման, ահա այն վկաները, որ Պէշիկթաշլեանի անուան հետ են կապում «Համազգեացը»: Իսկ ընկերութեան նախնական հաւաքներից առաջինում արտասանած նրա ճառը դարձել է նոյն ընկերութեան հետագայում ձեւաւորուած ծրագրի ու գործելակերպի առանցքը:

Պէշիկթաշլեանի հասարակական գործունէութեան առաջին շրջանը՝ 1846-1852 թթ., ամբողջովին լցուած ու յագեցած է «Համազգեացով»: Ընկերութեան ծրագրում առաջադրուած մի շարք կէտեր հետագայում դառնում են այլ ընկերութիւնների ու կազմակերպութիւնների առաջացման խթան ու շարժառիթ, որոնցից մէկի՝ «Թանգարան վերձանութեան» հիմնադրմանը իր ակտիւ մասնակցութիւնն է ունեցել Պէշիկթաշլեանը:

³ Պիպեռեան Ա., Մ. Պէշիկթաշլեան մեծ բանաստեղծի կեանքն ու գործերը, Կ. Պոլիս, 1914, էջ 21-22:

Պէշիկթաշլեանի հասարակական գործունէութեան էջերից է 1859 թ. վերջերին Մուրատեան-Ռափայէլեան վարժարանների նախկին սաների միութեան ստեղծումը: Ընկերութիւնը եղել է «Համագգեացի» հետեւորդ մի հաստատութիւն կամ նրա հեռւոր արձագանքներից մէկը: Ընկերութեան ոգին ու գլխաւոր դէմքը Մ. Պէշիկթաշլեանն էր: Նա էր նախագահում երեկոյթներին, բոլորից առաջ բանախօսում ու իր հայրենասիրական ճառերով զմայլում ունկնդիրներին⁴, դժբախտաբար նրա մահից յետոյ ընկերութիւնը հազիւ կարողացաւ պահել իր գոյութիւնը 10-12 տարի (1860-1872): Պէշիկթաշլեանը ակտիւօրէն մասնակցել եւ ղեկավար դեր է կատարել 1860 թ. օգոստոսին Կ. Պոլսում հիմնադրուած «Անճնուեք ընկերութեան» աշխատանքներին, որոնց նպատակն էր ձրի ուսում եւ գրագիտութիւն տալ Պոլսում եղած գաւառահայ պանդուխտներին⁵:

Պէշիկթաշլեանի նուիրումները հայ ազգային-ազատագրական շարժմանը առաւել ամբողջութեամբ դրսեւորուել է 1860-ական թթ.: Այդ տարիների պոլսահայ կեանքի ամենա-ակնառու երեկոյթներից մէկը եղել է «Բարեգործական ընկերութիւնը», որը հիմնադրուել է 1860 թ. սեպտեմբերին: «Բարեգործականի» նպատակն էր Կիլիկիայի արգասաբեր հողերում զարգացնել երկրագործութիւնը՝ նախնական վարժարաններ հիմնելով, ուր աշակերտները նախնական կրթութեան հետ պիտի ստանային նաեւ երկրագործական ծանօթութիւններ եւ արհեստական գիտելիքներ, դժբախտաբար «Բարեգործականը» այդպէս էլ չհասաւ իր ազնիւ նպատակին, քանի որ վրայ հասաւ հալածանքը եւ կասեցրեց իր քայլերը:

Պէշիկթաշլեանի նման գեղարուեստական միտք ունեցող բանաստեղծը, բնականաբար պիտի ունենար նաեւ երաժշտական ճաշակ, եւ իրաւամբ տեղ պիտի ունենար հայ նոր երգի ու երաժշտութեան պատմութեան մէջ: 1850-1860-ական թթ. հայ երգն ու երաժշտութիւնը լուրջ բեկում ու տեղաշարժ ապրեցին: Այդ ուղղութեամբ երաժիշտներից բացի մեծ դեր էին կատարում նաեւ բանաստեղծներն ու հասարակական գործիչները: 1856 թ. լոյս տեսաւ Ռ. Պատկանեանի «Ազգային երգարան հայոց» ժողովածուն, որը նպատակ ունէր նպաստել հայ նոր երգի առաջացմանը: Այդ ժողովածուն անմիջապէս արժանացաւ Մ. Նալպանտեանի ուշադրութեանը եւ բարձր գնահատականին: Մեծ յեղափոխական-դեմոկրատը այդտեղ գտաւ շատ երգեր, որոնք «հայոց հոգւոյ եւ սրտի պահանջները» բաւարարող եւ ժամանակակից երգեր էին, որոնց շնորհիւ այդ երգարանը Նալպանտեանը կոչեց «Մի օրինաւոր այլոց երգարան»: Հայ երգին առաջադրուող պահանջները կատարելու համար Պէշիկթաշլեանը գրում եւ յօրինում է բազմաթիւ երգեր: Այդ ուղղութեամբ կատարած քայլերից մէկն է 1849 թ. Ղ. Ալիշանի «Բա՛մ-փորոտան» երգի համար երաժշտութիւն յօրինելը, իհարկէ ոչ այն, որը այսօր երգւում է:

Պէշիկթաշլեանը գործուն մասնակցութիւն է ունեցել 1862 թ. Կ. Պոլսում հիմնադրուած «Երաժշտական ընկերութեան» եւ երաժշտական ամսագրերի աշխատանքներին, ընկերութեան անդամների՝ Տիգրան Չուխաճեանի եւ Գաբրիէլ Երանեանի հետ միասին: Բացի այն, որ գրում ու յօրինում էր երգեր, որոնք յաճախ խմբագրւում էին Պոլսի նշանաւոր երաժիշտների կողմից, նա իր պիեսների բեմադրութեան ժամանակ օգտագործում էր Վէրտիի, Տօնիցեթիի ստեղծագործութիւններից⁶:

⁴ Մուրատ-Ռափայէլեան նախկին աշակերտների միութիւնը ունէր նուիրական պարտականութիւն, 1869-ից սկսած, ամէն տարի, Պէշիկթաշլեանի մահուան տարելիցի օրը (նոյեմբերի 28) ուխտագնացութիւն կատարել իր գերեզմանին, հանդիսաւոր յարգանք ընծայելու համար անմահ բանաստեղծի անմոռանալի յիշատակին. այդ օրը տխրագգեաց խոտն բազմութիւն էր միշտ բոլորում իր սգաւոր գերեզմանի շուրջ՝ միաբերան երգելու համար հայրենասէր ֆերթողի «Եղբայր եմք մեք որ մըրըրկաւ էինք գատուած» հոգեզուարն ու գեղաձայն երգը:

⁵ Նոյն տեղում, էջ 26:

⁶ Նոյն տեղում, էջ 28-34:

Պէշիկթաշլեանի հասարակական եւ գրական գործունէութեան կարեւոր ասպարէզներէից մէկն էլ մանկավարժութիւնն է, ուր նոյնպէս փայլատակեց Պէշիկթաշլեանի բազմաշող հոգու բոցը: Մանկավարժութեամբ նա զբաղուել է շուրջ քսան տարի: Երկար տարիներ հայերէն եւ ֆրանսերէն է դասաւանդել Կ. Պոլսի Լուսաւորչեան, Թարգմանչաց, Հռիփսիմեանց վարժարաններում, ինչպէս նաեւ մի շարք մեծահարուստ ընտանիքներում: Նրա մանկավարժական գործունէութեան արգասիքներից մէկն էլ այն է, որ հայերէնից ու հայկական իրականութիւնից կտրուած Սրբուհի Տիւսապը իր ուսուցչի ազդեցութեամբ դարձաւ արեւմտահայ գրականութեան նշանաւոր դէմքերից մէկը:

Պէշիկթաշլեան մանկավարժը նոր նպատակ ու խնդիրներ է առաջադրել հայ դպրոցին: Մանկավարժութիւնը նրա համար եղել է համազգային առաջադիմական շարժման կարեւոր օղակներից մէկը: Միայն դրանով կարելի է լինում բացատրել ու հասկանալ այն սէրն ու նուիրումները, որ նա ցուցաբերել է դպրոցի եւ մանկավարժութեան նկատմամբ: Պէշիկթաշլեանի բարոյական մարդկային չքնաղ ձիրքերը, գումարուելով նոր դպրոցի տեսական դրոյթներին ու նորոյթներին, ակնառու արդիւնքներ են տուել հայ մանկավարժութեան պատմութեան մէջ:

Պէշիկթաշլեանի գրական ժառանգութիւնը բաղկացած է շուրջ վաթսուն քերթուածներից, չորս ճառերից և մի քանի թատերգութիւններից: Թատերգութիւնները մասամբ թարգմանութիւններ են կամ՝ նմանողութիւն. «Առշակ Բ»-ը, «Կոռնակ»-ը, «Վահան»-ը եւ «Վահէ»-ն հետեւողութեամբ շարադրուած ինքնագիր խաղեր են, բայց մեծ արժէք չունեն, ո՛չ պատմական ուսումնասիրութեան տեսակէտից, ո՛չ զուտ արւեստի տեսակէտից: Նրանց մէջ, տեղ-տեղ կան որոշ բարոյական սկզբունքներ քարոզող կտորներ, երբեմն կան տեսարաններ՝ որոնք բաւական բեմական են ու յուզիչ, բայց հոգեբանութիւնը չափազանց հարեւանցի է, տիպարները մակերեւութային ու միակտուր⁷:

Դրեթէ միեւնոյն բանը կարելի է ասել ճառերի համար. աւելի հայրենասէրի արարքներ են, քան գրական ստեղծագործութիւններ: Նրանց մէջ պէտք չէ փնտռել խորաթափանց եւ մանրակրկիտ ուսումնասիրութիւն, սուր տեսութիւններ, ոչ էլ նըրբաքանդակ ոճ: Սակայն, այդ ճառերում կան հատուածներ, ուր ոճը, ուժեղ, թրթռուն յուզմունքով մի պահ բարձրանում է մինչեւ Պէշիկթաշլեանի «երգ»-երի նուրբ ինքնատիպութիւնը: Դրանք երգեր են միեւնոյն ձգտումով եւ զգացումով գրուած, կարծես հանրութեանը աւելի մատչելի դառնալու համար՝ ընդլայնուած արձակով, բայց ունենալով զգացման այն անկեղծութիւնը, պարզութիւնը եւ ջերմութիւնը, որ գտնում ենք նրա երգերում:

Պէշիկթաշլեանի գրական գործի ամենակարեւոր մասը՝ անվիճելի կերպով՝ իր բանաստեղծութիւններն են, որոնք ունեն չորս փուլ: Դրանցից առաջինը 1845-1850-ական թուականների շրջանն է, երբ Մխիթարեան դպրոցներում բանաստեղծական նախափորձեր անող Պէշիկթաշլեանը ամբողջովին իր վարդապետ ուսուցիչների ազդեցութեամբ գրում է երգեր, ցոյց տալիս Մխիթարեան պոեզիայի նիւթի եւ պոետիկայի փայլուն իմացութիւն («Նուազ ի մահն Յիսուսի», «Ի նահատակութիւն Վարդանանց», «Բացան դումմ մոր տաւոյս», «Յոնաթանիւն Վ. Հ. Գէորգայ վարդապետի արքայ Մխիթարեան ուխտին»): Այնուհետեւ նոյն տարիներին ունենում է որոնումներ, անբաւարարուածութիւն, որից նրան ելք պիտի նախանշի Դ. Ալիշանի «Երգ նահապետի» շարքը: Որոնումները վերջանում են 1850 թ. շեմին:

1850-ական թուականների ընթացքում Պէշիկթաշլեանը ստեղծում է այդ տաս-

⁷ Զօպանեան Ա., Մկրտիչ Պէշիկթաշլեանի կեանքը եւ գործը, Փարիզ, 1907, էջ 227:

նամեակի հայ պոեզիայի ընտիր էջերը «Եղբայր եմք մեք», «Գարուն» բանաստեղծութիւնները, որոնք մի նոր որակ էին հայ պոեզիայի պատմութեան մէջ: Զափազանցութիւններով լի, մեծաշփոփ, սնամէջ եւ անոճ բացականչութիւնների մէջ, որոնցից կազմուում է մեր հայրենասիրական երգերի մեծագոյն մասը, սրանք պարզ, բնական, սրտից բխած, անկեղծ ու ազնիւ աղաղակներ են, դրանով իսկ յուզիչ եւ անթառամօրէն գեղեցիկ:

*Տո՛ւր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մեք
Որ մըրըկաւ էինք զայրուած.
Բախարին ամէն ոխ չար ու նենգ
Ի մի համբոյր ցրուին՝ ի բաց.
Ընդ ասպնէղօք ինչ կայ սիրուն
Քան զանձկայի Եղբայր անուն:*

«Գարուն»-ը իր տեսակի մէջ հրաշակերտ է, ճշմարիտ ժողովրդական երգի պէս վճիտ ու խոր: Այս բանաստեղծութեամբ Պէշիկթաշլեանը պատմողական, արտաքին նկարագրական հայրենասիրութիւնը դարձրեց մարդկային կեանքի իմաստ: Այստեղ հայրենասիրութիւնը արդէն այն խօսքը չէ, որ ասում էին բոլորը, յաճախ սովորութիւն ունէր: Գեղարուեստական առումով նրա խօսքը ունի նոր կշիռ ու արժէք, այն գալիս է հոգու խորքերից:

*Թէպէտ թռչնիկն ու հովն հայոց
Անքաղաց շրջին վրայ
Թէեւ պղպոռ վրակն հայոց
Նոճինքու մէջ կը սողայ,
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց:*

1867 թ. աշնան սկզբին տարաբախտ, մարմնով տկար ու վտիտ բանաստեղծը ընկաւ անկողին: Պաշտելի քերթողի հիւանդութեան լուրը կայծակի արագութեամբ տարածուեց ամէնուր: Տխրութիւնը համակել էր բարեկամներին ու աշակերտներին, որոնք յաճախ այցելում էին մեծանուն հիւանդին, Օրթագիւղի ու Բերայի իր ընտանիքի անդամները ջանում էին ամօքել խեղճի վշտերը: Հիւանդը՝ զգացուած այդ վերաբերմունքից, իր դառնացած սրտից նամակով շնորհակալութիւն է յայտնում բարեկամներից մէկին եւ ասում. «Օրհնեա՛լ ըլլան անոնք որ իրենց սրտին գանձերը անմախաճ կը բանան տառապելիւն առջեւ, սակայն, ի գուր կը շողայ արեւը գօս արմատին վրայ, նա ոչ ոստեր ընձիւղէ ու ոչ ծաղիկ բողբոջէ»⁸:

Հիւանդութիւնը կարծես նրան աւելի զգայուն էր դարձրել, խորապէս յուզուում էր ընկերական երեկոյթներին մասնակցել չկարողանալու համար, սրտի ցաւը կրկնապատկուեց յատկապէս այն ժամանակ, երբ չկարողացաւ ներկայ գտնուել Մուրատ-Ռափայէլեան ընկերութեան 1868 թ. տարեկան հանգէսին:

Օրիորդ Սրբուհի Վահանեանը (Տիւսապ) իր յարգած դասատուին երախտագիտութիւն յայտնելու համար, իր սրբազան պարտականութիւնն էր համարում, օրը մէկ կամ երկու անգամ գնալ նրա մօտ նստել, դեղը իր ժամանակին տալ, պատասխանել բժիշկներին, հիւանդին սփոփել իր զուարթ եւ սուր խօսակցութեամբ կամ նրա սիրած հեղինակների գրուածքները կարդալով ժամանակ անցկացնել⁹:

⁸ Պիպէռնեան Ա., Մ. Պէշիկթաշլեան մեծ բանաստեղծի կեանքն ու գործերը, Կ. Պոլիս, 1914, էջ 127-128:

⁹ Նոյն տեղում, էջ 130-131:

1868 թ., փոթորկալից ձիւնախառն մի օր, Պէշիկթաշլեանի մահուան լուրը գոյժեց, հանճարը մարեց՝ Հայոց տխուր սրտերին նոր տխրութիւն աւելացնելով: Ազգը ողբաց այն մեծանուն քերթողի ու հայրենասէրի դառն կորուստը:

Գրական ու ազգային այս շնաշխարհիկ անմահ դէմքը իր տաղանդին ու համբաւին արժանավայել կերպով գնահատուեց իր ժամանակի բոլոր հայ մտաւորականներին ու համակրանքի ու մեծարանքի առարկայ եղաւ անխտիր բոլորի համար, որոնք մինչեւ վերջ չդադարեցին իրենց խորին զմայլանքը յայտնել: Բայց հակառակ իր գնահատման այսքան փայլուն արտայայտութիւնների, Պէշիկթաշլեանի նուիրական անունը անյիշատակ մնաց այն անմոռանալի 1871 թուականից յետոյ, երբ հանդիսաւոր տօնուեց նրա մահուան տարեդարձը եւ հէնց այդ տարում կանգնեցուեց անմահ բանաստեղծի բրգաձեւ շիրիմը, հետեւեալ պարզ վերտառութեամբ.

ՄԿՐՏԻՉ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

1829-1868

Նոյեմբեր 22 ¹⁰

Նոյն այդ թուականին՝ 1871-ին, Մուրատ-Ռափայէլեան աշակերտների ընկերութիւնը Տօք. Շիշմանեանի (Մերենց) նախաձեռնութեամբ, հայ հանճարի քերթուածները, ճառերը ու թարգմանութիւնները ի մի հաւաքելով լոյս ընծայեց «Մատենագրութիւն՝ Մ. Պէշիկթաշլեան»-ի անունով հատորը: Իսկ երբ ազգասէր երիտասարդների խորհուրդը յղացաւ արժանավայել կերպով տօնելու անմոռանալի քերթողի մահուան տարեդարձը, անտարակոյս Պէշիկթաշլեանի ոսկորները մի պահ հրճուեցին: Մահուան տարեդարձը տօնելու առաջարկը եղել էր Յովհաննէս Վահագն Աճեմեան հայրենասէր երիտասարդի կողմից, որ առաջին անգամ ուշագրաւ կոչ ուղղեց բոլոր ազգայիններին հետեւեալ սրտառուչ տողերով.

«...Հոն, ուր ուր ամառն անգամ մարդկան մտքն շանցնիւր յայց ելնել, միակ մահաւճան մը կայ գագաթն ի վեր բարձրացուցած:

Այն մահաւճանին տակ կը հանգչի Մկրտիչ Պէշիկթաշլեան...:

Այցելո՛ւ, ո՛վ որ ըլլաս, անտարբեր մ'անցնիւր այն շիրմին բովն, ու եթէ խորհելու կարողութիւն ունիս, մտածէ պահ մը այն գործին վրայ զոր Աստուած ստեղծեց ու Հայերը անուանեցին Պէշիկթաշլեան...:

Կարդա՛ւ ուշի ուշով այն ազգասիրութեամբ լի մատեանը, որ կոչի կեանք Պէշիկթաշլեանի...»¹¹:

Պէշիկթաշլեանը՝ 19-րդ դարի դասական մեծագոյն հայ քերթողը, յաւէտ անմահ պիտի մնայ ապագայ բոլոր սերունդների մօտ, պիտի յիշուի իր պաշտելի անունը ո՛չ թէ իբր գրական մեծ դէմք, իր թողած շնորհագեղ քերթուածներով, այլեւ պիտի փառաբանուի իբր մեծ հայրենասէր ու ազնուաբարոյ գործիչ, որ այս չքնաղ ձիրքերով օժտուած, հզօր ազդեցութիւն ունեցաւ իր ժամանակակից սերունդի վրայ: Հէնց այն վեհօգի Պէշիկթաշլեանն էր, որ ոգեւորեց ազգը իր հայրենաշունչ երգերով, իր քնարի հոգեզմայլ ձայնով հայրենիքի փառքը ու նրա սխրալի յիշատակները երգեց, նա էր, որ առաջին անգամ, եղբայրութիւն քարոզեց երկնաշունչ շեշտերով, նա էր, որ հայ բեմը կանգնեցրեց, որի վրայ հանդէս բերեց պատմական հրահանգիչ տեսարաններ, այս՝

¹⁰ Այս համեստ շիրմի տապանագրի մէջ, դժբախտաբար, ծննդեան թուականի եւ մահուան ամսաթւի սխալներ կան, քանի որ Պէշիկթաշլեանը, ըստ ընդունուած կարծիքների, ծնուել է 1828 թուականին, իսկ Տօք. Շիշմանեանի (Մերենց) վկայութեամբ, որ մինչեւ վերջին վայրկեանը, իր հիւանդ բարեկամի սմարից չէր բաժանուել, մահացել է 1868 թուականի, նոյեմբերի 29-ին, առաւօտեան:

¹¹ «Մամուլ», Հանդէս ազգային, Գ. տարի Դ. շրջան, թիւ 164 շաբաթ, 1871, Սեպտեմբեր 11, էջ 59:

գերազանցապէս զգայուն մեծ հոգին երկու արիւնակից եղբայրների միջեւ գտնուած ատելութիւնը ջնջեց եւ ազգը առաջնորդեց ամենաազնիւ ձգտումների, եւ ահա այս ամէնի համար իր վեհաշուք ու նուիրական անունը, որ գեղեցիկ զգացումների մարմնացումն է, դարէ դար անեղծ պիտի մնայ ու նրա հոգին պիտի սաւառնի հայութեան վրայ:

ԽՈՐՀՈՒՐԴ ԵՒ ԽՕՍՔ

Պրահման կրօնական մը քրիստոնեայ ծանօթի մը հետ խօսակցութեան ընթացքին կ'ըսէ. «Քրիստոնէութեան մէջ շատ բաներ կան որոնք կը գտնուին նաեւ մեր կրօնքին մէջ, բացի մէկ բանէ»:

«Իսկ ո՞րն է այդ», հարց կու տայ քրիստոնեան, որուն Պրահմանը կը պատասխանէ. «Փրկիչ մը»:

Քրիստոսի ուսուցման և գործօն կեանքի երեք կարճ տարիները աւելի նպաստած են մարդկութեան վերածնունդին և հոգիի ազնուացման, քան բոլոր իմաստասէրներու և բարոյագէտներու դարերու հետազօտութիւններն ու յորդորները:

Ձեր թշնամիները մի՛ ատէք կիրքով, որովհետեւ կրնայ ըլլալ որ հաշտուիք:

Ազահը իր ինչքերուն տէրը չէ, այլ ինչքերն են իր տէրը:

Եթէ իմաստութիւնը ուրիշին բանականութիւնն է, ուրեմն առաքինութիւնն ալ՝ սրտինը:

Մարդիկ կառավարելու համար սահմանուած իշխանաւորը պարտի ճանչնալ մարդերը:

Իշխանաւորները կը տկարանան երբ փորձեն օրէնքէն աւելի զօրաւոր ըլլալ:

Կիրքերը գոհացնելէ աւելի մեծ հաճոյք մը կայ, այդ ալ յաղթահարելն է անոնց:

Երբ ոսկին խօսի՝ ամէն լեզու կը լռէ:

Շատ խօսք ունեցող մարդը քիչ գործ կը տեսնէ:

Կեանքը կ'իմաստաւորուի այն ատեն՝ երբ ուրիշի համար կ'ապրուի:

Երանելի է ան՝ որ չի ցանկար ուրիշի ունեցածը:

Թերեւս՝ աղքատին շատ բան կը պակսի, սակայն ազահին՝ ամէն բան:

Ժամանակը կը փոխէ նոյնիսկ դատաւորին ակնոցը:

Մի՛ ըլլաք չարախօս՝ նոյնիսկ ձեր չարախօսներուն:

ՅՈՒՐԵԼԵԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՀ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Երեւանի Պետական Համալսարանի
Հայ բանասիրության ֆակուլտետի՝
ակադ. Հրանդ Թամրազեանի անուն
Հայ գրականության պատմության
ամբիոնի հայցորդ

ՅԱԿՈԲ ԿՈՋՈՅԵԱՆ ՆԿԱՐԻՉ «ՀԷՔԻԱԹԱՍԱՅԸ»

(Ծննդեան 135-ամեակ)

Յակոբ Կոջոյեանը հայ արուեստի մեծ երախտաւորներից է: Նրա անունը իր հաստատուն տեղն ունի հայ կերպարուեստի պատմության մէջ, սակայն, ցաւօք, այս տաղանդաւոր, համեստ ու ինքնամփոփ գեղանկարչի թողած ժառանգութիւնն ու աւանդը այդպէս էլ ըստ առժանայն չի ներկայացուել ու չի մեծարուել մեզանում:

Նրա բազմաժանր ստեղծագործութիւնները սնունդ են ազգային արմատներին: Դրանցում՝ վերաբերմունքը աշխարհի հանդէպ, սէրը հայրենիի հանդէպ արտայայտւած են կոջոյեանական գծերի ու գոյների լեզուով եւ վկայում են, որ նկարիչը կեանքի հանդէպ միշտ եղել է ազնիւ ու ապրել ստեղծագործական եռանդուն կեանքով:

Յակոբ Կոջոյեանը ծնուել է 1883 թուականին, հայաշատ Ախլցխա քաղաքում: Նախնիները էրզրումցիներ էին եւ վաղուց ի վեր, սերնդե-սերունդ, յայտնի ոսկերիչներ: Իսկ նկարչի հայրը՝ Կարապետը, իրենց տոհմիկ արուեստի հմուտ վարպետ էր: Տարիներ անց նրանց ընտանիքը տեղափոխուել է Վլադիկավկազ, որտեղ հայրը բացում է իր առանձին, մեծ արհեստանոցը եւ սկսում աշխատել աշակերտների, եղբայրների ու որդիների հետ:

10 տարեկանում Յակոբն այնքան է հմտանում, որ արդէն նրան վստահում են ինքնուրոյն գործեր: Ուսման տարիներին դասերից ազատ ժամերին պատանին լրջօրէն պարապում էր նաեւ նկարչութեամբ՝ դարձեալ ցուցաբերելով արտակարգ կարողութիւն:

Ուսումը շարունակելով Մոսկուայում, ոսկերիչ Պրոկոպի արուեստանոցում, Կոջոյեանը հաստատակամ որոշում է նկարիչ դառնալ եւ այդ որոշումը նրան տանում է Միւնխէն, որտեղ սովորում է Հաշթէի դպրոցում, իսկ հետագայում Միւնխէնի ակադեմիայում: Գերմանիայից յետոյ երկու տարի ապրում է Փարիզում: Պարզ է, թէ ինչ ազդեցութիւն են ունեցել Եւրոպական այդ երկրներն ու նրանց արուեստը Կոջոյեանի, որպէս արուեստագէտի, ձեւաւորման ու կայացման գործում: Վերադառնալով Ռուսաստան Կոջոյեանն անցնում է զինծառայութեան, իսկ Առաջին Համաշխարհային պատերազմն սկսելուց յետոյ զորակոչուել է գործող բանակ: Այդ տարիները ստեղծագործական տեսակէտից շատ աննպաստ էին Կոջոյեանի համար¹:

¹ Մաթեոսեան Վ. Հ., Յակոբ Կոջոյեան, Արուեստը, Երեւան, 1971, էջ 222:

1918 թուականին, երբ վերադարձել էր արդեն Հայաստան, սկսում է նորից նկարել: Մասնակցում է Մառի ղեկավարութեամբ Անիում տարուող հնագիտական եւ հետազոտական աշխատանքներին եւ այդ տարիների ընթացքում ստեղծում Անիական պեյզաժների շարքը:

Հայաստանի Առաջին Հանրապետութեան անկումից յետոյ, Կոջոյեանը Ալեքսանտր Թամանեանի հետ մեկնում է Պարսկաստան, հաստատւում Թաւրիզում, մասնակցում պարսկահայ գաղութի մշակութային կեանքին, դասաւանդում Թամանեանի կազմակերպած գեղարուեստի ստուդիայում: Բնական էր, որ Կոջոյեանի նման էսթետ անհատը անմիջապէս սկսեց խորամուխ լինել պարսկական ճոխ արուեստում, իւրացրեց բազմաթիւ նրբութիւններ ու գաղտնիքներ, ուսումնասիրեց ոչ միայն պարսկական միջնադարեան մանրանկարչութիւնը, այլեւ նրանց XIII-XIX դարերի իւրատիպ գեղանկարչութիւնը:

20-ական թուականներին Թամանեանի հետ Կոջոյեանը վերադառնում է հայրենիք՝ Երեւան, ցանկութեամբ՝ օգտակար լինել Հայաստանին: Ակտիւ մասնակցել է հայ մշակութային կեանքի ձեւաւորմանը: Սա նոր լիցք էր Կոջոյեանի համար եւ նա նոր թափով սկսում է իրագործել իր նոր մտայղացումները²:

Կոջոյեան նկարչի գործունէութիւնը լայն ընդգրկում է ունեցել՝ գրաֆիկա, գեղանկար, կիրառական արուեստ, բեմանկարչութիւն, մանկավարժութիւն: Ժողովրդական բանահիւսութիւն, էպոս, հէքիաթ, բանաստեղծութիւն, հայրենի բնութիւն, ահա թեմաներ, որոնք միշտ հետաքրքրել են նկարչին, եւ եղել նրա ստեղծագործութիւնների հիմնաքարը, հիմնական թեման:

Կոջոյեանը դարձաւ ժամանակակից հայկական գրքային գրաֆիկայի հիմնադիրը՝ իսկական նկարազարդող, որն ազատ, անկաշկանդ երեւակայութեամբ էր մարմնաւորում գրական երկը՝ նրա կերպարներին կենդանի շունչ հաղորդելով: Դրանք զուտ ձեւաւորումներ չեն, դրանցից ամէն մէկն առանձին արուեստի իսկական նմուշներ են, որոնք իրենց կատարողական վարպետութեան, բովանդակութեան արտայայտման բարձր որակով նկարիչ-ձեւաւորողին դարձնում են գրական գործի հեղինակակիցը:

Կոջոյեանի գրաֆիկայի ամենանշանաւոր գործերից է հայկական ժողովրդական էպոսի՝ Սասունցի Դաւթի թեմաներով ստեղծուած համանուն ստեղծագործութիւնը: Այն վսեմ ու առասպելական գծերով արտայայտուած գլուխգործոց է: Դա նկար էպոս է հրաշապատում՝ Դաւթի ու նրա մասին պատմող էպոսի բովանդակութիւնն արտայայտող 35 դրուագներով:

Յակոբ Կոջոյեանը գրեթէ չի նկարել դիմանկարներ, յայտնի է միայն նրա ինքնանկարը՝ արուած 1907 թուականին Մոսկուայում: Գրեթէ չի նկարել նաեւ նատիւրմորտներ: Միակ ժանրը, որ նրան միշտ է ձգտել դա բնանկարն է: Հայկական լեռնաշխարհը միշտ է հրապուրել նրան, սիրել է շրջել ու նկարել: Նա իր կտաւներում վերարտադրում էր բնութիւնը՝ յաճախ դրանցում անդրադառնալով գեղջկական աշխատանքին, կենցաղին: Պատկերում փողոցային տեսարաններ, ստեղծում տպաւորիչ բնանկարներ, ուր առկայ էին բնութեան, գարնանային զարթոնքի ու Երեւանեան բակային խաղաղ մոթիւններ:

Բնանկարներում կարծես իրականութիւնն ու հէքիաթը իրար են խառնուած: Այստեղ բացայայտւում է նկարչի բանաստեղծական էութիւնը: Կոջոյեանն իր նկարներում գեղանկարչական, թէ գրաֆիկական, ասես, հէքիաթասաց լինի:

Իր կեանքի ընթացքում Կոջոյեանը շատ բան հասցրեց անել: Գեղանկարչութիւ-

² Նոյն տեղում, էջ 224:

նից, գրաֆիկայից, կիրառական արուեստից զատ աշխատում էր նաև դեկորատիվ արուեստի բնագավառում: Անում էր թատերական ձեւաւորումներ, զբաղւում դասախօսական գործունէութեամբ:

1920-ական թուականների վերջերին ու 1930-ականների սկզբներին տպագրական տեխնիկայի եւ գրքի նկարչական ձեւաւորման ասպարէզում մեծ յաջողութիւնների հասաւ Հայպետհրատը: Այս գործում անգերազնահատելի դեր էր կատարում Հայպետհրատի գեղարուեստական բաժնի վարիչ՝ Եղիշէ Չարենցը: Բարձր կուլտուրայի տէր, գրքի մոլի սիրահար ու գրքարուեստի խորը գիտակ բանաստեղծը ձեւաւորման աշխատանքում ներգրաւում էր հանրապետութեան լաւագոյն նկարիչներին եւ, առաջին հերթին, Կոչոյեանին:

Եւ ահա, 1933-ին վարպետը ձեւաւորեց ու պատկերազարդեց Եղիշէ Չարենցի «Գիրք ճանապարհի» ժողովածուն՝ հանդէս բերելով նկարիչ-մեկնաբանի բացառիկ հմտութիւն: Միջնադարեան հայ վարպետների ծաղկած ձեւագրերի եւ Հին Արեւելքի արուեստի մի շարք սկզբունքները նորովի իմաստաւորող եւ գրքարուեստի կատարեալ նմուշ հանդիսացող այս գործը բացայայտում է եւ Չարենց-ստեղծագործողի էութիւնը, տալիս նրա խոհերի ու իտէալների նկարչական խտացումը³:

1934 թուականին Կոչոյեանը ձեւաւորում ու պատկերազարդում է Մաքսիմ Գորկու «Բանաստեղծութիւններ եւ լեզենդներ» ժողովածուն, Ակսել Բակունցի «Սեւ ցեղերի սերմնացանը» (Հայպետհրատ, 1933), Ազատ Վշտունու «Երկերը» (Հայպետհրատ, 1935) եւ այլ գրքեր: Դրանք, ճիշդ է, արտայայտչութեան ոյժով ու կատարման ընդհանուր մակարդակով զիջում են «Գիրք ճանապարհի» ձեւաւորմանը, բայց ունեն իրենց հետաքրքիր կողմերը⁴:

Յակոբ Կոչոյեանը ստեղծագործել է աւելի քան կէս դար: 1935 թուականին արժանացել է ժողովրդական նկարչի կոչմանը:

1934 թուականին Երեւանի կենտրոնում՝ Զօրաւոր եկեղեցու հարեւանութեամբ, բուլղարահայերի տրամադրած միջոցներով կառուցուեց մի երկյարկանի առանձնատուն, որտեղ բնակուեցին քանդակագործ՝ Արա Սարգսեանը եւ գեղանկարիչ՝ Յակոբ Կոչոյեանը: 1975 թուականին այն դարձաւ երկու արուեստագէտների տուն-թանգարան, որտեղ առանձին յարկաբաժիններում ցուցադրուած են նրանց սքանչելի ստեղծագործութիւնները:

Յակոբ Կոչոյեանը, իբրեւ սկզբունք, ազգային արուեստի զարգացումը պայմանաւորեց էպոխայի առաջադրած գեղագիտական հրատապ խնդիրների լուծումով: Պատմական, բարոյա-հասարակական հարցեր շօշափելիս, Կոչոյեանը ելակէտ ընտրեց ինչպէս ժողովրդի ճակատագիրը, ստեղծագործական փորձը, այնպէս էլ՝ նրա աշխարհայեացքն ու ճաշակը ըստ ժամանակի պահանջի դիմորոշելու եւ նորովի վերակերտելու անհրաժեշտութիւնը: Համապատասխանաբար, նոր շնչով ու արտայայտչական նոր միջոցներով իմաստաւորեց նախորդ սերնդի նկարիչներ Վարդգէս Սուրէնեանցի, Եղիշէ Թադեւոսեանի եւ միւսների արժարժած թեմաներն ու գեղագիտական-գաղափարական խնդիրները: Եւ այս ամէնը նա իրագործեց արուեստագէտին յատուկ բացառիկ նուիրւածութեամբ ու շիտակութեամբ, կրքով ու հաւատով:

Քննելով Կոչոյեանի կարեւորագոյն երկերը՝ փորձելով բացայայտել նրա ստեղծագործական նախասիրութիւնների եւ արժարժած պատմա-հասարակական, բարոյա-հոգեբանական, էսթետիկական ու ձեւաբանական խնդիրների էութիւնը՝ տեսնում

³ Նոյն տեղում, էջ 226:

⁴ Նոյն տեղում, էջ 226-227:

ենք, որ վարպետին հետաքրքրել են կերպարուեստի գրեթե բոլոր ժանրերն ու տեսակները: Կոչոյեանը ստեղծել է իրական-պատմական, բանահյուսական, գրական, կենցաղային թեմաներով բազմաֆիգուր պատկերներ՝ ցուցաբերելով «կոմպոզիտորի», յօրինողի եւ պատմողի բացառիկ ունակութիւն: Այդ երկերի «գործող անձինք» ամբողջական կերպարներ են եւ լիապէս մարմնաւորում են հեղինակի գաղափարական-գեղարուեստական միտումները: Մերթ կոմիկականի, մերթ ողբերգականի, մերթ հերոսականի, մերթ երազային մտորումների լոյսի տակ՝ դրանց սիւժէները դուրս են բերուած նեղ նկարագրական պատումի սահմաններից: Հեղինակը ընթացել է խոշոր ընդհանրացումների ճանապարհով եւ ցուցադրուող իրավիճակը ներկայացրել իբրեւ տեղի ու ժամանակի տիպական առանձնայատկութիւնները երեւակող, բազմախաւ ու տարողունակ հիմնախարիսխ: Կոչոյեանը ստեղծել է տարաբնոյթ պէյզաժներ, որոնք աչքը շոյող կամ, ինչպէս ասում են՝ «նկարչագեղ» տեսարաններ չեն սոսկ: Բնութեան մոթիւններում վարպետը շեշտել է մարդկային կեանքի անցած-գնացած կամ ներկայ գոյութիւնը, հողի եւ մտածող էակի կապը՝ տալով սրա պատմական արժէքաւորումը⁵:

Կոչոյեանը ստեղծել է գրքի ձեւաւորման ու պատկերազարդման փայլուն նմուշներ՝ հանդէս գալով որպէս նկարիչ մեկնաբան: Այս կարգի աշխատանքներում նա խորաթափանց «գիտնականի» կարողութեամբ վեր է հանել հեղինակի աշխարհայեացքի, մարդկային խառնուածքի, գրելաձեւի, էսթետիկական դաւանանքի յատկանշական կողմերը: Ի դէմս կոչոյեանական նկարազարդման, գրական նիւթը ստացել է իր տեսողական համարժէք վերարտացուումը եւ հարստացել նրանով: Եւ որ գլխաւորն է, թէ՛ սիւժէտային բազմաֆիգուր պատկերներում, թէ՛ պէյզաժներում, թէ գրքի ձեւաւորումներում վարպետը դիտողի հետ «խօսում» է իբրեւ մեծ հումանիստ, մեծ հայրենասէր ու քաղաքացի-արուեստագէտ: Ուղղակիօրէն, թէ միջնորդաւորուած ձեւով՝ նկարիչը իր բազմաթիւ երկերում անդրադարձնում է հայ ժողովրդի ճակատագիրը, նրա կրած տառապանքները եւ յանուն ազատութեան մղած պայքարը, նրա ստեղծագործած հանճարը եւ փայփայած իտէալները: Նա այս ամէնը կերպաւորում է պատմա-փիլիսոփայական, գեղագիտական, բարոյագիտական այնպիսի ելակէտերով, որոնք դրսեւորուած են հազարամեակների ընթացքում մշակուած բանահյուսութեան եւ առհասարակ ժողովրդական ստեղծագործութեան մէջ՝ յստակ ու խորախորհուրդ: Կոչոյեանի գործերում կերպարանագծուած են ժողովրդի կենսունակութիւնը, չարիքի, անարդարութեան հանդէպ նրա ունեցած ժխտական վերաբերմունքը, երջանիկ կեանքի, բարու յաղթանակի, գեղեցկի մասին նրա արտայայտած ըմբռնումներն ու սրանց հաստատումը: Վարպետի պատկերները ներշնչում են հաւատ ու սէր, բարձրացնում են ժողովրդի հաւաքական ոյժի եւ կամքի անխորտակելիութեան գաղափարը:

Կոչոյեանը օգտագործել է տեխնիկական այլազան միջոցներ, կիրառել է ոճական տարբեր, յաճախ հակադիր ըմբռնումներ, բոլոր դէպքերում էլ ի յայտ բերելով արտակարգ հմտութիւն: Ամէն անգամ նկարիչը ընտրել է համապատասխան ելք ու արտայայտչաձեւ՝ իրեն հետաքրքրող խնդիրները առաւել յաջողութեամբ լուծելու, ասելիքը առաւել ցայտունութեամբ հաղորդելու համար:

⁵ Նոյն տեղում, էջ 210:

ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆԵՐ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հայ եկեղեցականներու կեանքին մեծագոյն դժբախտութիւններէն մին եղած է քաղաքական գործերու խառնուելու փորձութիւնը: Հակառակ այն իրողութեան որ հոգեւոր գործունէութեան դաշտը այնքան ընդարձակ է եւ պատասխանատու, կարգ մը հոգեւորականներ գիտակցաբար կամ անգիտակցաբար թոյլ կու տան որ քաղաքական ազդակներ եւ հոսանքներ գան ու խառնուին իրենց հոգեւոր գործին:

Այսօր Հայաստանի մէջ ունինք սեփական կառավարութիւն, որ կը վարէ երկրին քաղաքական ճակատագիրը, իսկ արտասահմանի մէջ ալ կը գտնուին քաղաքական մեծամեծ կուսակցութիւններ, որոնք կրնան զբաղիլ քաղաքական գործերով՝ համաձայն իրենց պատկանած երկրին օրէնքներուն: Եկեղեցականը ունի իր ուրոյն եւ սեփական գործը, հետեւաբար պէտք չէ խառնուի իրեն չվերաբերող քաղաքական գործերու:

Եկեղեցականի մը գործունէութեան հարազատ դաշտն է Եկեղեցին: Իր պարտականութիւնն է հոգ տանիլ իրեն վստահուած ժողովուրդին հոգեւոր եւ բարոյական զարգացման: Եկեղեցական մը եթէ խղճի մտօք եւ արդիւնաւորապէս կատարէ իր այս պարտականութիւնը, արդէն իսկ գլուխ հանած կ'ըլլայ այնպիսի մեծ գործ մը՝ որ արժանի կը դարձնէ զինք երախտագէտ զնահատութեան:

Քաղաքական վարչաձեւերը երկրէ երկիր կը տարբերին եւ յաճախ կը մնան իրարու հակադիր: Միեւնոյն երկրին մէջ իսկ վարչութիւնները կրնան ենթարկուիլ յաճախակի փոփոխութեանց, այդ վերիվայրումները պէտք չէ ազդեն հայ եկեղեցականներու հոգեւոր գործունէութեան, որ բոլորովին տարբեր մակարդակի մը կը պատկանի անտարակոյս:

Եկեղեցին իբրեւ աստուածային հաստատութիւն ունի յաւիտենական սկզբունքներ եւ անփոփոխ ուղղութիւն, որմէ պէտք չէ շեղի երբեք: Ոեւէ եկեղեցական՝ իրաւունք պէտք չէ զգայ պատահական հովերու առաքաստ բանալով Եկեղեցւոյ նաւը ալեկոծութեան մատնելու: Անհատական նախաձեռնութեամբ «բարեկարգութեան» մանկունակ փորձերը Եկեղեցիին մէջ անկարգութիւն եւ անիշխանութիւն յառաջացնելով՝ զայն քայքայելու միայն կը ծառայեն: Հայաստանեայց Եկեղեցւոյ դարաւոր, նախանձելի եւ պատակառելի աւանդութիւնները լրջութենէ եւ խոհականութենէն զուրկ ընթացքներով պէտք չէ խախտել, Եկեղեցիին տեւականութեան եւ բարգաւաճման սիրոյն իսկ: Այս կը պահանջուի ամէն հայ եկեղեցականէ որ նախանձախնդիր է Հայաստանեայց Եկեղեցւոյ փառքին:

Հայ եկեղեցականը պէտք է ջանայ ուղիղ վարել իր աւօսը եւ զգուշանայ աջ կամ ահեակ խոտորելէ: Իր ձեռքը հոգեւոր մաճին վրայ դնող մշակը պէտք չունի ոտքին տակ քաղաքական պատուանդաններ ճարտարելու: Հոգիով երկիրնքի մէջ սաւառնիլ, իսկ միտքով ու մարմնով երկրի վրայ սողալ, ձախողութիւն միայն կը բերէ հայ եկեղեցականին: Հայ եկեղեցականը պէտք է իր ոտքերը պահէ կրօնական հաստատուն գետնի վրայ եւ զգուշանայ քաղաքական լարծուն զառիթափներու կողքին վերելակելու փորձերէ: Քաղաքական դարձուածներու եւ վերիվայրումներու թոհուրոհին մէջ չէ որ պիտի դեգերի հայ եկեղեցականը իրեն ասպարէզ մը հայթայթելու համար, այլ

արդէն իսկ աղաղակող հոգեւոր կարօտութեանց ընդառաջ երթալով պիտի գտնէ իսկական ծառայութեան լայնարձակ դաշտեր: Ծառայելու կոչումը պէտք է որ խթանէ զինք դէպի գործ, եւ ո՛չ թէ իշխելու եւ տիրելու սին փառամոլութիւն:

Փառամոլութեան կիրքը շատ մը եկեղեցականներու գահավէժ անկումին պատճառ է եղած: Փառամոլութիւնը, որ ինքնին դատապարտելի է, քառիցս դատապարտելի կը դառնայ երբ փառամոլը չի վարանիր անուղիղ եւ անխոստովանելի միջոցներ ալ կիրարկելու, գոհացնելու համար իր անյագուրդ ցանկութիւնը: Եկեղեցականը այնքան պէտք է խորշի գաղտնածածուկ գործերէ, որքան կը խորշի խաւարի իշխանէն՝ սատանայէն: Եկեղեցականին գործունէութեան դաշտը միշտ պէտք է ըլլայ բաց եւ լուսաւոր: Բարի գործերը լոյսի մէջ կը կատարուին եւ պէտք չունին մեկուսի կամ մութ թաքստոցներու: Խաւարի սէրը յատուկ է սատանային եւ անոր հետեւողները միայն կը փախչին լոյսէն: Աստուծոյ պաշտօնեան լոյսի եւ բարութեան սպասարկուն է գերազանցօրէն:

Եկեղեցական մը, որ արհամարհանքով կը նայի Աստուծոյ եւ իր ժողովուրդին ծառայութեան, եւ հետամուտ կ'ըլլայ փափուկ աթոռներու եւ հանգստաւէտ կենցաղի, ինքնին կը կորսնցնէ իր հոգեւոր մշակի վարձքը: Նա՛խ ծառայութիւն եւ ապա վարձատրութիւն, եւ այդ՝ առանց սակարկութեան: Պէտք է թողուլ Աստուծոյ կամքին որ իր ուզած ժամանակ եւ իր ուզած ձեւով վարձատրէ իր նուիրեալ պաշտօնեաները: Աստուած անտես չ'ըներ զանոնք՝ որոնք իրենց կեանքը նուիրած են իր սիրոյ եւ խաղաղութեան թագաւորութեան ծաւալումին, որ է Եկեղեցւոյ գերագոյն նպատակներէն մին:

Եկեղեցին շինարար հաստատութիւն մըն է եւ ո՛չ թէ քանդիչ, եւ շինարար աշխատանք կատարելու համար անհրաժեշտ է ունենալ խաղաղութիւն: Ուր որ խաղաղութիւն չկայ, հոն մի՛ սպասէք որեւէ արդիւնաւոր աշխատանք: Անոնք որ խաղաղութեան յարգը չեն գիտեր, անոնք որ իրենց գտնուած վայրը կոռադաշտի վերածելու կիրքը ունին, չեն կրնար օգտակար ըլլալ Եկեղեցիին: Եւ ինչ բան աւելի ձեռնտու է խախտելու Եկեղեցւոյ խաղաղութիւնը, քան քաղաքական շոշորթութեան անխորհուրդ պատեհապաշտութիւնը:

Մեր եկեղեցիներն ու վանքերը խաղաղ եւ արդիւնաւոր կեանքի վառարաններ դարձնելու գլխաւոր պայմանը այն է որ եկեղեցականներ չխառնուին քաղաքականութեան: Հայոց վանքերուն իսկական կոչումն է ըլլալ հոգեւոր մշակոյթի լուսաբուխ վառարաններ, հետեւաբար ինչքան որ կը խանգարէ այդ բարձր կոչումին իրագործումը՝ պէտք է հեռու պահուի մեր վանքերէն: Արդէն դաժան տարիներ դժբախտաբար քանդած ու աւերած են մեր հարիւրաւոր վանքերը, եւ մատի վրայ համրուող նմոյշներ միայն կը մնան մեզի. պէտք է գուրգուրալ անոնց վրայ, եւ չընել ոչ մէկ բան որ կրնայ զանոնք տկարացնել, կամ վտանգել անոնց կացութիւնը: Այս հոգածութիւնը պէտք է ցոյց տայ ամէն հայ եւ մանաւանդ ամէն հոգեւորական:

Եկեղեցական եւ միա՛յն եկեղեցական գործունէութեան պէտք է նուիրուի հայ եկեղեցականը: Այդ պէտք է ըլլայ կանոնը ամէն հայ եկեղեցականի, ինչ աստիճանի վրայ ալ գտնուի ան:

Հայ եկեղեցականներու միակ քաղաքականութիւնը պէտք է ըլլայ քաղաքականութեան չխառնուիլ:

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՐԻՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒԵՅԱԻ ԿԱԼՈՒԱԾ ՄԸ ԵՒՍ

Իր գահակալութենէն վերջ, Երուսաղէմի Պատրիարք Ամեն. Տ. Նուրհան Արք. Մանուկեան որդեգրած է նոր քաղաքականութիւն մը, որ է պարսպապատել վանքապատկան կալուածները՝ համաձայն վանքի պիտոճէի կարողութեան:

Առաջին կալուածը, որու պարսպապատման աշխատանքները սկսան 2016 թ. աշնան, կը գտնուի Պարոն-Տէր կալուածի մօտ եւ ունի աւելի քան երկու տիւնում տարածք: Կալուածի ընտրութիւնը պատահական չէր, քանի որ կառավարութիւնը կալուածին քովը գտնուող ճամբան լայցնելու աշխատանքները արդէն սկսած էր 2015 թ. աշնան, եւ շինարարները քանիցս այցելած էին այս կալուածը եւ նոյնիսկ մասնաւոր ներկով նշումներ ըրած ձիթենիի ծառերուն վրայ: Յստակ էր կառավարութեան ծրագիրը եւ եթէ Պատրիարքարանը արագ չարձագանքէր եւ պարսպապատման աշխատանքները չսկսէին, ապա քանի մը ամիսներ անց կալուածը ճանապարհաշինութեան նպատակով պիտի բռնագրաւուէր:



Պարսպապատման աշխատանքները իրականացնելու համար նախ մասնագէտներու օգնութեամբ կալուածին սահմանը որոշուեցաւ, ապա քարէ պարիսպ մը շարուեցաւ կալուածի ամբողջ երկայնքով: Այս աշխատանքները կատարուեցան Պաղեստինէն հրաւիրուած մասնագէտներու կողմէ: Պարսպապատման աշխատանքները աւարտելէ վերջ, ճամբայէն մինչեւ կալուած հողէ ճանապարհ մը բացուեցաւ եւ մասնաւոր երկաթեայ դուռ մը զետեղուեցաւ:



Անցեալ տարուայ աշնան, երբ Ժառանգաւոր սաներ գացին Պարոն-Տէրի կալուածը ձիթապտուղ հաւաքելու, առաջին անգամ ըլլալով այցելեցին նաեւ վերոյիշեալ կալուածը եւ հոն եւս ձիթապտուղ հաւաքեցին: Անցնող տասնամակներու ընթացքին, առաջին անգամն է, որ վանքը այդ կալուածէն բերք կը ստանար:

Պատրիարք Սրբազանը հոգեկան մեծ ուրախութիւն կ'ապրէր ամէն անգամ տեսնելով կալուածի պարսպապատման աշխատանքներու յառաջընթացը: Նկատի ունենալով, որ Սաղիմական աւանդութիւնը կ'ըսէ, թէ այս վայրը եղած է Գրիգոր Շղթայակիր Պատրիարքի ճգնավայրը, ուստի կալուածը նուիրուեցաւ Գրիգոր Շղթայակիր յիշատակին եւ համապատասխան ցուցանակ զետեղուեցաւ մուտքին՝ հայերէն, անգլերէն, արաբերէն եւ եբրայերէն լեզուներով: Պատրիարք Սրբազան Հօր օրհնութեամբ տարուայ ընթացքին ուխտի օր մը եւս պիտի հաստատուի՝ հաւատացեալ եւ ուխտաւոր մեր հայրենակիցներու համար այցելելու այս կալուած:



Կարելոր է հոս նշել, թէ պարսպապատման աշխատանքներու ծախսը ամբողջութեամբ հոգաց Պատրիարքարանը: Պարոն-Տէրի կալուածի եւ վերոնշեալ կալուածի պարսպապատման աշխատանքները աւարտելէ ետք, պարիսպ շունեցող ուրիշ կալուածներ եւս պիտի պարսպապատուին:

ԱՅԼԵԻԱՅԼՔ**ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ ԱՅՅԸ ՊԱՂԵՍՏԻՆԻ
ՆՈՐԱՆՇԱՆԱԿ ՏԵՂԱԿԱԼ՝ ՏԻԱՐ ՔԱՄԵԼ ՀԸՄԷՏԻՆ**

9 Հոկտեմբեր, 2018-ին, Սուրբ Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Գաւազանակիր՝ Տ. Ներսէճ Աբեղայ Ալոյեանի եւ Տ. Խաղ Վարդապետ Ճոնտուրեանի շնորհաւորական այցելութեան գնաց Պաղեստինի նախագահի նորանշանակ տեղակալ՝ Տիար Քամել Հըմէտի: Հանդիպման ընթացքին Տիար Հըմէտ շնորհակալութիւն յայտնեց Պատրիարք Սրբազան Հօրը այցելութեան համար եւ վստահեցուց թէ երկու համայնքներու միջեւ յարաբերութիւնները պիտի շարունակուին:

ՈՒՐԱՐԻ ՏԻՉՈՒԹԻՒՆ

Երեքշաբթի, 9 Հոկտեմբեր, 2018-ին, յետ երեկոյեան ժամերգութեան Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեան Ուրար շնորհեց 2-րդ Ընծայարանի երեք սաներուն: Ուրարակիր երեք այդ ուսանողներն են. Տիրացու Յարութիւն Բաբայեան, Տիրացու Շաւարշ Կարապետեան եւ Տիրացու Ռուբէն Յովհաննիսեան: Անոնք, Ս. Աթոռի հովանիին տակ եւ Ընծայարանի աւանդապաշտ ու կրօնաբոյր մթնոլորտին մէջ ուսանած եւ մեծցած, փափաքեցան ընդունիլ սուրբ ուրարը իրենց ուսերուն, իբրեւ նշանակը այն քաղցր լուծին որ իրենցը պիտի ըլլայ ապագային, եւ որ պիտի յատկանշուի անյողորդ հաւատարմութեամբ՝ հանդէպ Հայաստանեայց Ս. Եկեղեցիի Լուսաւորչադիր դաւանանքին, եւ անսակարկ ծառայութեամբ նոյն այդ Եկեղեցիին եւ Հայ ժողովուրդին:

Թող Ամենակալ Տէրը անխախտ պահէ անոնց ուխտը, որպէսզի իր այգիին նըւիրուին նոր եւ եռանդուն մշակներ:

**ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ԲՈՂՈՔ ՆԱՄԱԿԸ
ՈՒՂՂՈՒԱԾ ՎԱՐՉԱՊԵՏ ՊԵՆԻԱՄԻՆ ՆԷԹԱՆԻԱՀՈՒԻ**

Երուսաղէմի իրաւատէր երեք համայնքներու հոգեւոր պետերը 19 Հոկտեմբեր, 2018-ին, միասնաբար նամակ մը ստորագրած եւ ուղղած են Իսրայէլի վարչապետ Տիար Պենիամին Նէթանիահուի: Նամակին մէջ հոգեւոր պետերը իրենց զարմանքը կը յայտնեն քրիստոնեայ համայնքներուն պատկանող կալուածներու վերաբերեալ Իսրայէլի Խորհրդարանի անդամ Ռախէլ Ազարիայի հեղինակած օրինագծի՝ Հոկտեմբեր 21-ին կայանալիք նախարարներու յանձնաժողովի քննարկման օրակարգին մէջ ներառելու վերաբերեալ եւ կոչ կ'ընեն Վսեմաշուք վարչապետին անմիջապէս միջամտելու եւ միանգամ ընդմիշտ կասեցնելու օրինագծի քննարկումը: Հոգեւոր պետերը յիշեալ օրինագիծը որակած են ամօթալի եւ յիշեցուցած են վարչապետին, որ Յուլիսին հոգեւոր պետերուն ուղղուած իր նամակին մէջ ան կը վստահեցնէր, թէ

օրինագիծը ետ պիտի կոչուի:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԻՍՐԱՅԷԼԻ ՏԱՐԱԾԱՇԻՐՁԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ՝ ՏԻԱՐ ՅԱԽԻ ՀԱՆԵԿՊԻԻ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀՈԳԵՒՈՐ ՊԵՏԵՐՈՒ ՄԻՋԵԻ

23 Հոկտեմբեր, 2018-ին, Իսրայելի Արտաքին Գործոց Նախարարությունն ներս տեղի ունեցավ Իսրայելի Տարածաշրջանային Համագործակցության նախարար՝ Տիար Յախի Հանեկպիի եւ Երուսաղեմի հոգեւոր պետերու միջեւ հանդիպում: Պատրիարքության կողմէ ներկայ էին Ս. Աթոռոյս Կալուածոց Տեսուչ՝ Տ. Պարեա Ծայրագոյն Վարդապետ Երէցեան եւ Դիւանապետ՝ Տ. Կորին Վարդապետ Բաղդասարեան: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ Իսրայելի Խորհրդարանին մէջ շրջանառութեան մէջ դրուած Տիկին Ռախէլ Ազարիայի կողմէ մշակուած օրէնքի նախագիծը: Քննարկմանը ներկայ էր նաեւ Տիկին Ազարիա: Որոշուեցաւ կառավարութեան եւ իրաւատէր երեք քրիստոնեայ համայնքներու փաստաբաններէն աշխատանքային խումբ կազմել եւ միասնաբար աշխատիլ առաջարկուած օրինագծին վրայ՝ բացառելու պետութեան կողմէ եկեղեցապատկան կալուածներու բռնագրաւումը:

ՍԱՐԿԱԻԱԳԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնն ու Երուսաղեմի Հայ համայնքը հոգեւոր ցընծութեան օրեր ապրեցան 26-27 Հոկտեմբեր, 2018-ին:

26 Հոկտեմբեր, 2018-ին, երեկոյեան ժամերգութենէն եւ Սբ. Թարգմանչաց Վարդապետաց յիշատակի նախատօնակէն ետք, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին մէջ, Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի ձեռամբ կատարուեցաւ Սարկաւագական կոչման արարողութիւնը՝ Սուրբ Աթոռոյս Ուրաբակիրներէն Տրց. Յովհաննէս Պետրոսեանի, Տրց. Յակոբ Բաղդասարեանի եւ Տրց. Սահակ Դաւթեանի: Ընծայեալները ծնրադիր յառաջացան դասի մուտքէն և Ձեռնադրիչ Սրբազան Հօրմէն ստացան Կիսասարկաւագութեան աստիճան: Արարողութեանց խարտաւիլակն էր Տ. Պարեա Ծ. Վարդապետ Երէցեան, իսկ առընթերակաները՝ Տ. Թէոդորոս Վարդապետ Զաքարեան եւ Տ. Տաճատ Վարդապետ Ծատուրեան: Ընծայեալները ապա, կարմիր բազկուրարներ իրենց թեւերուն, մեկնեցան Ս. Յարութեան Տաճար, մասնակցելու Տնօրինական Ս. Տեղեաց թափօրին:

27 Հոկտեմբեր, 2018-ին, Սբ. Թարգմանչաց Վարդապետաց տօնին, Պատարագի սկիզբն ազդարարող կոչնակի հարուածներու եւ Կոմիտասեան եղանակով «Խորհուրդ խորին» շարականին հետ կը սկսի Պատարագը ու կը շարունակուի մինչեւ Ճաշու գրքին ընթերցումը:

Ընծայեալներ, որոնք մինչ այդ կը հետեւէին արարողութեանց, կը ծնրադրեն ատեան եւ լուռ ու վերացած կ'ունկնդրեն կրկին անգամ երգուող «Ուրախ լեր» շարականը. վիճակ մը՝ որ լաւագոյնս պիտի կրնար բացատրել իրենց նուիրումի ոգիին տարողութիւնը եւ եկեղեցւոյ ուրախութիւնը, մանաւանդ երբ ատիկա իրենցմով կ'ըլլար եւ այդ ուրախութեամբ հետագային իրենք պիտի երջանկանային: Բոլորին

ձայներուն մէջ ուրախութեան դող մը կար ու քաղցր սարսուռ մը՝ անոնց հոգիներուն խորը: Որովհետեւ որքան ալ որ ուրախալի է անոնց այդ աստիճան կանխահաս հաւանութիւնը, այնքան եւ յուզիչ անոնց խանդը՝ իրենց տակաւին նոր զօրացող ուսերուն վրայ առնելու ծանր բայց քաղցր լուծը Քրիստոսի եւ Ազգին:

Որքան ծանր այդ լուծը, նոյնքան եւ փշոտ՝ ճամբան: Այդ ճամբուն դժուարութիւնը զգացնող առիթ մը ծունկով խորան բարձրանալու եւ հոն միայն ուրար ստանալու կարգադրութիւնը՝ մեր սրբազան հայրապետներուն: Հաւանաբար, բայց եռեակը վրձնակամ է եւ արդէն իրենց համար այդ դժուարութիւնները անծանօթ չեն: Անոնք այդ բոլորը եւ միանգամայն անոնց դարմանը ստացած են Սուրբ Աթոռոյս կամարներուն տակ անցուցած իրենց իւրաքանչիւր վայրկեանէն:

Մեծ իտէալներու ճամբան միշտ փշոտ է եղած: Ու ո՞վ պիտի կարենար ժխտել մեծութիւնը այդ եռեակին՝ տեսնելէ ետք ու զգալէ վերջ անոնց անվախ ու յօժարակամ ծունկի բարձրանալը դէպի Ս. Խորան, ու մանաւանդ տեսնելէ ետք անոնց դէմքին արտասուախառն քրտինքը, իրենց հոգիներուն մէջ իտէալի մը կրակը մատնող...

Աստիճանները դիւրին յաղթահարելի արգելքներ, որոնցմէ ետք Ս. Խորանը՝ սրբավայրի մը ամբողջ հմայքով ու քաղցրութեամբ, ուր Ձեռնադրիչ Սրբազան Հօր հրաւէրով կը փութան Քրիստոսի լուծէն մագնիսացած, որ ամբողջովին գրաւած ըլլալով իրենց հոգին շատոնց անկէ վանած էր աշխարհայինը: Բայց ձեռնադրութենէ առաջ հարկ էր որ ժողովուրդին առջեւ եւս կատարուէր այդ ուխտը, ի գիտութիւն եւ ի լուր անոնց:

Ահա այդ ուխտը.

«Աստուածային եւ երկնային շնորհ, որ միշտ լնու զպէտս սրբոյ սպասաւորութեան առաքելական եկեղեցւոյ, կոչէ *զՅովհաննէս, զՅակոբ* եւ *զՍահակ* ի կիսասարկաւագութենէ ի սարկաւագութիւն, սրբոյ եկեղեցւոյ ի սպասաւորութիւն ըստ վկայութեան անձանց իւրեանց եւ ամենայն ժողովրդեանս»:

Այլեւս պատրաստ են անոնք ձեռնադրութեան:

Հասաւ նաեւ այն պահը, երբ ընծայեալները ստացան ուրար որ այլեւս իրենց համար քաղցր է ու թեթեւ ինչպէս ամէն անոնց, որոնք իտէալի մը կրակը ունին իրենց հոգիներուն խորը:

Ստացան նաեւ բուրվառ, հրաման խնկարկելու Ս. Եկեղեցւոյ մէջ խունկի անոյշ բոյրով լեցնելու տաճարը, ապագային դառնալու մէջ-մէկ ծխացող կնդրուկներ հայ եկեղեցւոյ տաճարէն ներս:

Ապա Գերաշնորհ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Դարիպեան Սրբազան Հայրը տուաւ իր խօսքը՝ նորընծայ Սարկաւագներուն, աղօթելով որ անոնց լուծը ըլլայ քաղցր ու թեթեւ եւ մաղթելով յաջողութիւն, կորով եւ շնորհք, միանգամայն նշելով Սուրբ Աթոռին դերը անոնց կեանքերու մէջ:

Անմիջապէս նորընծաներէն՝ Բարեշնորհ Յովհաննէս Սարկաւագ Պետրոսեան, Յակոբ Սարկաւագ Բաղդասարեան եւ Սահակ Սարկաւագ Դաւթեան կ'առնեն բուրվառը, առաջին իսկ հերթին լաւագոյնս եւ անթերի կերպով կատարելու իրենց նոր յանձնուած պարտականութիւնը:

Ահաւասիկ ամփոփ գիծերու մէջ օրուան մը նկարագրութիւնը: Սակայն ո՞վ կրնայ թարգմանել, ո՞ր գրիչը կրնայ նկարագրել այն զգացումներն ու ապրումները այնպէս ինչպէս անոնք գոյութիւն ունին հայու մը սրտին խորը...

Ունինք միայն անբացատրելի խանդ, անպատմելի ուրախութիւն եւ արդար յուզում

մը՝ եկած ընծայման արարողութեան սրտառու զրաւչութենէն եւ խորհրդածութենէն, որոնք զուտ զգացական եւ ժամանակաւոր ապրումներ ըլլալէ աւելի, հայութեան դարաւոր կեանքին աւիշը հանդիսացած են եւ կը հանդիսանան այսօր ալ:

Ու Սուրբ Աթոռը, որ այդ աւիշը տուող հազուագիւտ հաստատութիւններու լաւագոյններէն է, ամէն տարի անպակաս կ'ընէ նման առիթներ:

Այս առիթով, նորընծայ սարկաւազներուն, որոնցմով Սուրբ Աթոռոյս սարկաւազներուն թիւը կը բարձրանայ, շունինք նոր բարեմաղթութիւն, այլ սրտագինս կ'ըսենք. «Բարեաւ գնացէք ընդ այս ճանապարհ...»:

ԱՐԱՐԱՅԻ ՃԱԿԱՏԱՄԱՐՏԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԹԱՓՕՐՈՎ ԵՐԹ ԴԷՊԻ ԱՐԱՐԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆ

24 Նոյեմբեր, 2018-ին, Արարայի ճակատամարտի 100-ամեակի առիթով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Միաբան հայրերը, Ժառանգաւոր սաներ, ՀԵՄ-ի եւ ՀՄՀՄ-ի սկաուտներ եւ Սաղիմահայեր թափօրով այցելեցին Ս. Փրկչի գերեզմանատան մէջ գտնուող Արարայի յուշարձան, ուր կատարուեցաւ մասնաւոր Հոգեհանգստեան կարգ: Ապա թափօրը վերադարձաւ Ժառանգաւորաց Վարժարանի սրահ, ուր տեղի ունեցաւ Արարայի ճակատամարտի 100-ամեակին նուիրուած յուշատօն: Յուշատօնի ընթացքին բացման խօսքով հանդէս եկաւ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան, որ ներկաներուն փոխանցեց նաեւ Պատրիարք Սրբազան Հօր խօսքը, որմէ յետոյ դասախօսութիւններով հանդէս եկան Տիարք Գէորգ Հինգլեան եւ Եւան Տիրոշ: Յուշատօնը փակուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի օրհնութեան խօսքով: Արարայի ճակատամարտը տեղի ունեցած է 1918-ի Սեպտեմբեր 19-ին, որու ընթացքին զոհուեցան 21 հայ զինուորներ:

ԱՄԵՆԱՊԱՏԻ Տ. ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՍՐԲԱՋԱՆ ՀՕՐ ԽՕՍՔԸ ԱՐԱՐԱՅԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ՅՈՒՇԱՏԱԿԻՆ

Այս երեկոյ մենք յուզումով եւ միաժամանակ հոգեկան անխառն հպարտութեամբ և սիրով կ'ողջունենք ու կը յիշենք փաղանգը այն անձնուրաց 23 կտրիճ հայորդիներուն, որոնք ճիշդ 100 տարիներ առաջ, հեռո՛ւ հայրենիքէն Պաղեստինի Արարայի բարձունքին վրայ, իրենց մատղաշ կեանքերու պատարագումով, եկան այդ օրերու քաղաքակիրթ կարծուած աշխարհի աչքերուն առաջ պարզելու Հայուն անկաշառ կորովը, անոնք որոնք տարիներ շարունակ իրենց հոգիին խորը լուռ անթեղած էին մեր արիւնլուայ ու բռնադատուած իրաւունքը մեր երբեմնի պատմական հայրենիքին:

Եւ ա՛յն՝ ինչ որ մեր Մէկ ու Կէս Միլիոն նահատակներն ու քաղաքակիրթ մարդկութիւնը չէր յաջողած իրագործել 100 տարիներ առաջ այդ քսան և երեք ազնուական հայորդիները յաջողեցան ընել: 19 Սեպտեմբեր, 1918-ի արշալոյսին, հայ տարեգրութիւններու մէջ կ'անմահանար ԱՐԱՐԱՅ անունը, և օտար հողի վրայ ինկած հայրենասէր հայորդիներուն ի պատիւ, շուտով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը համեստ դամբարան մը պիտի կանգնէր Սիոնի բարձունքին, Սուրբ Փրկիչ գերեզմանատան մէջ, ո՛չ շատ հեռու Սուրբ Յարութեան՝ Քրիստոսի Գերեզմանէն:

Պատմությունը թէեւ բարոյական չափանիշներու քննադատը չէ, սակայն անոր պարտականությունն է մարդոց ուշադրությունը հրավիրել բացառիկ պատահարներու վրայ, որոնք կամաւոր կամ ակամայ ձեւով շեղած են մարդկային ուշադրութենէն: Այո՛, չենք կրնար և պէտք չէ մոռնանք պատմութեան բազմիցս մեզի կրկնած դասը...

Արարայի հերոսները իրենց ջլապինդ համոզումով ու կամքով, իրենց կոպերուն տակ ցոլքերը այն երազին, որ մեր ժողովուրդն էր հիւսեր, դարձան ուխտ պայքարի յանուն արդար հատուցման: Դարձան սերմ անկորուստ՝ հոգեղէն հունձքերու իրենց Հայկազնեան շառաւիղներուն և ինչու չէ համայն մարդկութեան, և իրենց իսկ մահով գիտցան երկնիլ յաղթանակը կեանքին՝ մահուան վրայ, այդպէսով յաւիտենական անդորր պարգեւելով մեր անգերեզման նահատակներուն:

Ու այս երեկոյ կ'ըսենք. Տէ՛ր Աստուած, բա՛ց դռները երկնքիդ և քաղցրութեամբ ընդունէ՛ մեր աղօթքները և ամենագուր սիրովդ յիշէ՛ Արարայի մեր անմեղ նահատակներուն բարի հոգիները կենաց Գրքիդ մէջ և արժանացո՛ւր զիրենք յաւիտենական լուսէ պսակիդ:

ԽՄԳ.





ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

Երկուշաբթի, 1 Հոկտեմբեր.– Յիշատակ Մեռելոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան:

Շաբաթ, 6 Հոկտեմբեր.– Տօն Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, Ս. Նշան վերնամատրան մէջ: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Կիրակի, 7 Հոկտեմբեր.– Բ. Կիրակի զկնի Խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Ներսէհ Աբղ. Արոյեան:

Ուրբաթ, 12 Հոկտեմբեր.– Ս. Գէորգի նախատօնակը պաշտուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 13 Հոկտեմբեր.– Սրբոյն Գէորգայ Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ղպտոց Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան, որ «Հայր Մեր»-էն առաջ քարոզեց: Արարողութեան աւարտին, Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ղպտոց վանքի տեսչէն:

Կէսօրէ ետք, Լուսարարապետ Ս. Հօր զլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան մեր վերնամատրան մէջ:

Կիրակի, 14 Հոկտեմբեր.– Տօն

Վարագայ Ս. Խաչին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեալ քարոզեց Տ. Պարեո Մ. Վրդ. Երէցեան: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 20 Հոկտեմբեր.– Սրբոց Եօթանասուն եւ Երկու Աշակերտացն Քրիստոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի գաւթին մէջ գտնուող Ս. Գէորգայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիրակի, 21 Հոկտեմբեր.– Դ. Կիրակի զկնի Խաչի: Կատարուեցաւ Ռամէի Ս. Գէորգայ վանքի տարեկան ուխտագնացութիւնը, ի ներկայութեան Երուսաղէմի, Եաֆայի եւ Հայֆայի հայութեան: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան:

Ուրբաթ, 26 Հոկտեմբեր.– Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Ս. Աթոռոյս երեք ուրարակիրներ Տրց. Յովհաննէս Պետրոսեան, Տրց. Յակոբ Բաղդասարեան եւ Տրց. Սահակ Դաւթեան Լուսարարապետ Սրբազան Հօր ձեռամբ ստացան կիսասարկաւագութեան աստիճան:

Շաբաթ, 27 Հոկտեմբեր.– Ս. Թարգմանչաց Վարդապետացն մերոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ.

Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Ճաշու Գիրքի ընթերցումէն առաջ կատարուեցաւ երեք կիսասարկաւագներու Սարկաւագի ձեռնադրութիւնը, իուսարարապետ Սրբազան Հօր ձեռամբ:

Ապա իուսարարապետ Ս. Հայրը նախագահեց Կիւլպէնկեան գերդաստանի անդամներուն համար կատարուած Հոգեհանգստեան կարգին:

Կիրակի, 28 Հոկտեմբեր.- Ե. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Շաբաթ, 3 Նոյեմբեր.- Ս. Աւետարանչացն՝ Մատթէոսի, Մարկոսի, Դուկասու եւ Յովհաննու: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան գաւիթը գտնուող հայոց Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթճեան:

Կիրակի, 4 Նոյեմբեր.- Զ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Երկուշաբթի, 5 Նոյեմբեր.- Ս. Յովսէփայ Աստուածահօրն: Ըստ սովորութեան Ս. Պատարագ մատուցուեցաւ Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Հայր Յովսէփի գերեզմանին վրայ: Հանգստապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Պատարագեց Տ. Տիգրան Քհնյ. Ոսկանեան:

Շաբաթ, 10 Նոյեմբեր.- Ս. Երկօտասան Վարդապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կէսօրէ ետք, իուսարարապետ Ս.

Հօր գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»-ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր ժամերգութիւնն ու նախատօնակը պաշտուեցան Հայոց Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Կիրակի, 11 Նոյեմբեր.- Գիւտ խաչ: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Դարիպեան: Ժամարարն էր Տ. Տիրան Արք. Յակոբեան: Ապա կատարուեցաւ մեծահանդէս թափօր, նախ Գիւտ խաչի Այրը, ապա Ս. Գերեզմանին շուրջ եռադարձ թափօրով եւ մէկ անգամ Պատանատեղւոյն: Թափօրը գլխաւորեց Տ. Սեւան Արք. Դարիպեան, ամպհովանիի տակ եւ Կենաց Փայտի մասունքն ի ձեռին: «Խաչի քո Քրիստոս» շարականի երգեցողութենէն եւ խնկարկութենէն ետք, արարողութիւնները վերջացան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Այսպէս փակելով 2018 տարուան Ս. Յարութեան Տաճարի հանդիսութեանց շրջանը:

Կիրակի, 18 Նոյեմբեր.- Ը. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Պարետ Ծ. Վրդ. Երէցեան:

Ուրբաթ, 23 Նոյեմբեր.- Նախատօնակին ի Ս. Հրեշտակապետաց նախագահեց Տ. Սեւան Արք. Դարիպեան:

Շաբաթ, 24 Նոյեմբեր.- Ս. Հրեշտակապետացն Գաբրիէլի եւ Միքայէլի: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Հրեշտակապետաց Վանքի Տեսուչ Տ. Դեւոնդ Վրդ. Յովհաննիսեան:

Կիրակի, 25 Նոյեմբեր.- Թ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Պա-

տարագեց եւ քարոզեց Տ. Թէոդորոս Վրդ. Զաքարեան:

Շաբաթ, 1 Դեկտեմբեր.- Ս. Առաքելոցն Անդրէի եւ Փիլիպպոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան:

Կիրակի, 2 Դեկտեմբեր.- Ժ. Կիրակի զկնի խաչի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Ժամարարն էր Տ. Շնորհք Աբղ. Պալոյեան:

Երեքշաբթի, 4 Դեկտեմբեր.- Ընծայումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շաբաթ, 8 Դեկտեմբեր.- Ս. Նիկողայոսի Սքանչեւագործին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Ս. Մակարայ մատրան մէջ: Ժամարարն էր Տ. Գէորգ Աբղ. Հայրապետեան: Վերաբերումը կատարուեցաւ գաւթին մէջ գտնուող Ս. Նիկողայոսի Սեղանին վրայ:

Կիրակի, 9 Դեկտեմբեր.- Ա. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարին, աշակողմեան դասին մէջ գտնուող Ս. Կարապետի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ներսէս Աբղ. Աղոյեան:

Ուրբաթ, 14 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 15 Դեկտեմբեր.- Ս. Առաքելոցն Թադէոսի եւ Բարդղղիմէոսի: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Գեղամ Ծ. Վրդ.

Զաքարեան:

Կիրակի, 16 Դեկտեմբեր.- Բ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց եւ քարոզեց Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Ուրբաթ, 21 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 22 Դեկտեմբեր.- Յղութիւն Ս. Աստուածածնի յԱննայէ: Առաւօտուն Լուսարարապետ Ս. Հօր գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժներով մեկնեցան Գեթսեմանիի պարտէզ եւ «Հրաշափառ»-ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց հանդիսապետ Սրբազան Հայրը:

Կիրակի, 23 Դեկտեմբեր.- Գ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ, ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնի խորանին վրայ: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Վրդ. Աթաշանեան:

Ուրբաթ, 28 Դեկտեմբեր.- Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Տ. Սեւան Արք. Ղարիպեան:

Շաբաթ, 29 Դեկտեմբեր.- Ս. Յակոբայ Մծբնայ Հայրապետին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Կիրակի, 30 Դեկտեմբեր.- Դ. Կիրակի Յիսնակաց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Արք. Ղարիպեան: Պատարագեց եւ քարոզեց Տ. Պարեա Ծ. Վրդ. Երէջեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Երկուշաբթի, 1 Հոկտեմբեր.-

Առաւօտեան ժամը 11-ին, Հայաստանէն Սուրբ Երկիր ժամանած ուխտաւորներ՝ առաջնորդութեամբ Երեւանի Ս. Սարգիս եկեղեցւոյ ծիսակատար քահանայ՝ Արժանապատիւ Տ. Շահէ Հայրապետեանի, այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Կիրակի, 7 Հոկտեմբեր.-

Երեկոյեան ժամը 7-ին, Նոթր-Տամ պանդոկին մէջ հիւրասիրութեամբ Երուսաղէմի մէջ Հայաստանի Հանրապետութեան Պատուոյ Հիւպատոս Պրն. Յուլիկ Մոմճեանի, տօնախմբուեցաւ Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 27-ամեակը, որուն ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ կարգ մը միաբան հայրերու:

Ուրբաթ, 12 Հոկտեմբեր.-

Սպանիոյ Ազգային Օրուան առիթով Երուսաղէմի Սպանական Ընդհանուր Հիւպատոսարանին կողմէ կազմակերպւած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեան ընկերակցութեամբ Աւագ Թարգման Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեանի եւ Դիւանապետ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի:

Երեքշաբթի, 30 Հոկտեմբեր.-

Առաւօտեան ժամը 11-ին, Հայաստանէն Տ. Ժիրայր Քահանայ Խաչատրեան ընկերակցութեամբ՝ Տ. Զոհրապ Քահանայ Մանասեանի, ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր

օրհնութիւնը:

Չորեքշաբթի, 7 Նոյեմբեր.-

Պատրիարքարան այցելեց եւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ հանդիպում ունեցաւ Իսրայէլի Զբօսաշրջութեան Նախարարութեան «Կրօնական Զբօսաշրջութեան» բաժնի նորանշանակ պետ Տիկին Նոկա Շեր-Կրեկօ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Հայաստանէն Սուրբ Երկիր ժամանող հայ ուխտաւորներու մուտքի արտօնութեան մասին հարցեր:

Նոյն օրը երեկոյեան ժամը 4-ին, Հայաստանէն՝ Երեւանի Ս. Աննա եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Զենոն Քահանայ Բարսեղեան ընկերակցութեամբ Արթիկի հոգեւոր սպասաւորներէն Արժանապատիւ Տ. Նիշիշ Քահանայ Նազարեանի ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Ուրբաթ, 9 Նոյեմբեր.-

Երուսաղէմի Ղպտի եկեղեցւոյ Եպիսկոպոս՝ Տ. Անպա Անտոնիոս եւ Եգիպտոսի մէջ գտնուող Ղպտոց Պատրիարքութեան Սինոդի անդամներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին քննարկուեցաւ «Տէր-էլ-Սուլթան» վանքին հարցը:

Երկուշաբթի, 12 Նոյեմբեր.-

Երեկոյեան ժամը 4-ին, Հայաստանէն՝ Նորք-Մարաշ համայնքի Ս. Աստուածա-

ծին եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Զաքարիա Քահանայ Աւետիսեան ընկերակցութեամբ Մայր Աթոռի Դիւանատան պաշտօնեայ Արժանապատիւ Տ. Պարոյր Քահանայ Աւետիսեանի ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան և ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 19 Նոյեմբեր.- Հայաստանէն Սուրբ Երկիր ժամանած Երեւանի՝ Կոնդի Ս. Յովհաննէս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժանապատիւ Տ. Դանիէլ Քահանայ Բաղումեան ուխտաւորներու խումբով այցելեցին Պատրիարքարան եւ ստացան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր օրհնութիւնը:

Երկուշաբթի, 26 Նոյեմբեր.- Երեկոյեան ժամը 4-ին, Ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչ՝ Հոգեշնորհ Տ. Տաճատ Վրդ. Ծատուրեան Հայաստանէն ժամանած նոր աշակերտներու հետ միասին այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին Հայր Սուրբը նոր աշակերտներուն ներկայացուց Պատրիարք Սրբազան Հօր եւ ապա Պատրիարք Սրբազան Հայրը բարի գալուստ եւ դասերու մէջ յաջողութիւն մաղթեց անոնց:

Երեքշաբթի, 27 Նոյեմբեր.- Առաւօտեան ժամը 10-ին Ամերիկայէն՝ Տաճարական Ասպետներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 29 Նոյեմբեր.- Ամերիկայի Ընդհանուր Հիւպատոս Տիկին Քերըն Սասահարա այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպման ընթացքին տիկին Սասահարա Պատրիարք Սրբազան Հօր ներկայացուց Հիւպատոսարանի «Պաղես-

տինեան Գործերու» նոր վարիչ Տիար Մայք Հանկին, ինչպէս նաեւ Հիւպատոսարանի կողմէ Պատրիարք Սրբազան Հօր յանձնեց յուշանուէր մը:

Շաբաթ, 1 Դեկտեմբեր.- Երոսաղէմի Հ.Մ.Ը.Մ-ի սրահին մէջ տեղի ունեցաւ Հ.Օ.Մ.-ի Ս. Ծննդեան տարեկան պազարը: Պազարին բացումը կատարեցին Սուրբ Աթոռոյս Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան եւ Հ.Օ.Մ.-ի ատենապետուհի՝ Տիկին Արշալոյս Պաղամեան:

Չորեքշաբթի, 12 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երիքովի Զինուորապետին կողմէ կազմակերպուած քրիստոնեայ համայնքներու հետ հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեան:

Շաբաթ, 14 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Բեթղէհէմի Զինուորապետին կողմէ կազմակերպուած քրիստոնեայ համայնքներու հետ հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Երկուշաբթի, 17 Դեկտեմբեր.- Հռոմի Սրբազան Քահանայապետի ծննդեան 82-ամեակին առիթով կազմակերպուած հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի:

Չորեքշաբթի, 19 Դեկտեմբեր.- Իսրայէլի Զբօսաշրջութեան նախարարին կողմէ Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով կազմակերպուած ամենամեայ հիւրասիրութեան ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Ղարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ Տ. Կորիւն Վրդ. Բաղդասարեանի: Հիւրասիրութեան ընթացքին Հայր Կորիւն ներկայներուն փոխանցեց Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր

պատգամը:

Հինգշաբթի, 27 Դեկտեմբեր.-


Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայէլի նախագահ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլինի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեան, ընկերակցութեամբ Տ. Պարետ Ծ. Վարդապետ Երէցեանի, Տ. Ղեւոնդ Վարդապետ Յովհաննիսեանի եւ Տ. Կորին Վարդապետ Բաղդասարեանի: Իր խօսքին մէջ Նորին Վսեմութիւնը նախ շնորհաւորեց Սուրբ Երկրի բոլոր քրիստոնեայ համայնքներու ներկայացուցիչներուն, ապա անդրադարձաւ եկեղեցական կալուածներուն վերաբերող օրինագծին՝ հաստատելով այն, որ Իսրայէլ պետութիւնը երբեք չի ընդունիր այնպիսի օրինագիծ մը, որը կրնայ վնաս հասցնել

քրիստոնեայ համայնքներուն: Ան վստահեցուց, որ խնդիրը պէտք է լուծուի բանակցութիւններու միջոցով՝ փաստաբաններու խումբին կողմէ:

Ուրբաթ, 28 Դեկտեմբեր.- Կաթո-

լիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնի առիթով, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Լուսարարապետ՝ Գերաշնորհ Տ. Սեւան Արքեպիսկոպոս Ղարիպեանի, շնորհաւորելու գացին Սուրբ Երկրի Քիւսթոտ՝ Հ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան, եւ Լատին Պատրիարքարանի կառավարիչ՝ Գերաշնորհ Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցապալային եւ Միաբանութեան:



ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ**ՍԵՒԱՆ ԱՐՔ. ՂԱՐԻՊԵԱՆ***Լուսարարապետ Ս. Աթոռոյ*

Շնորհակալությամբ եւ օրհնությամբ կ'արձանագրենք 2018 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերու տրուած հետեւեալ բարեպաշտական նուէրները:

1. Սաղիմաբնակ Տիար Սեւան Փանոսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 10 թիթեղ ձէթ:

2. Կ. Պոլիսէն Արապօղլու եւ Սաթըլմըշ ընտանիքներ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն միւռոնաթափ աղանի մը, հետեւեալ յիշատակարանով. «Ձմիւռոնաթափ զաղանին նուիրեալ է Արապօղլու եւ Սաթըլմըշ յընտանեաց, վասն գործածութեան յարարողութեան Զրօրհնեաց ի Յորդանան, Յամին Փրկչական 2018, ի տօնի Աստուածայայտնութեան: Ամենակալն Աստուած ընկալցի զնուէր զայս. Ամէն»:

3. Պելճիքայէն Տիար Գարիկ Կարապետեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 32 հատ կարճ, հաստ մոմեր:

(Յունուար)

4. Հայաստանի Երեւան քաղաքէն Տիկ. Սուսաննա Մկրտչեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ շղթայ մը:

(Փետրուար)

5. Հայաստանի Երեւան քաղաքէն Սուսաննա Գրիգորեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ճերմակ քարով ոսկի ականջօղեր:

6. Կ. Պոլիսէն Տէր եւ Տիկ. Արէթ Գոռեաններ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն հայկական ոճով և կարմիր քարերով արծաթեայ ձեռաց խաչ մը:

7. Լեհահայ ուխտաւորներ 32 տուփ, 1600 հատ լեհական կարճ ճերմակ մոմեր կը նուիրեն Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին:

(Ապրիլ)

8. Հայաստանի Երեւան քաղաքէն Նելլի Յարութեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ազամանդակուռ մատանի մը:

9. Հոլանտայէն Զուարթ Յարութիւնեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:

10. Սուտանէն Տիար Հրաչ Մարտիկեան Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ 4 քկ. խունկ:

11. Պելճիքայէն Յակոբեան ընտանիք, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:

12. Ռուսիայէն Ճաւահիր Յովհաննիսեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ փոքրիկ արծաթեայ գիրք մը՝ «Սուրբ Գիրք»:

13. Ռուսիայէն Գոհար Վարդանեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ աղամանդակուռ ոսկի մատանի մը:

14. Ռուսիայէն Յասմիկ Մխիթարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը՝ թանկագին քարերով:

(Մայիս)

15. Հայաստանի Երեւան քաղաքէն Ժաննա Բագիրեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ փոքր ոսկի խաչ մը:

16. Ամերիկայէն Տիար Յակոբ Տէմիրճեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ եմիփորոնի կապոյտ և ոսկեգոյն խաչեր:

17. Ռուսիայէն Տէր եւ Տիկ. Եղուարդ Խաչատրեան եւ Ժաննա Բաղալեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն Ս. Աստուածածնի եւ Մանուկ Յիսուսի պատկեր մը՝ պատրաստուած սաթէ քարերով:

(Յունիս)

18. Հայաստանի Երեւան քաղաքէն Աննա Աբգարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ Աստուածածնի փոքր, կլոր ոսկի պատկեր մը:

19. Մարտինէն Տիար Յովհաննէս Ուղուրկէլ Սաապեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ պատարագիչի զգեստ մը: Կարմիր, ծաղկաւոր, փոքր խաչերով շուրջառ մը, փորուրար մը, զոյգ բազպաններ, գօտի մը առանց ճարմանդի և վակաս մը:

(Օգոստոս)

20. Հայաստանէն Մարինէ Խաչատրեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ խաչելութեան պատկերով ոսկի խաչ մը:

(Սեպտեմբեր)

21. Հայաստանէն Կարինէ Սաֆարեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի մատանի մը:

22. Հայաստանի Երեւան քաղաքէն Անահիտ Պալտալեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ խոշոր ոսկի մատանի մը՝ մանր աղամանդէ քարերով:

23. Սաղիմաբնակ Տէր եւ Տիկ. Վահան եւ Մարի Օհաննէսեաններ, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրեն մէկ թիթեղ ձիթաիւղ:

24. Հայաստանի Երեւան քաղաքէն Նաիրա Տօնոյեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ արծաթեայ շղթայով խաչ մը:

25. Սաղիմաբնակ Տիկ. Զապէլ Գալայճեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարին կը նուիրէ մէկ թիթեղ ձիթաիւղ:

26. Սիրվարդ Պալեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի խաչ մը:

27. Ռուսիայէն Գոհար Ամիրջանեան, Սբ. Յակոբեանց Մայր Տաճարի Աստուածածնայ պատկերին կը նուիրէ ոսկի շղթայով Աստուածածնի պատկերով մետալիոն մը:

(Նոյեմբեր)

ԵՐԱՆԻ ՈՐ ՈՒՆԻՅԻ ՅԻՇԱՏԱԿ Ի ՍԻՈՎՆ



ՏԽՐՈՒՆԻ



ՀԱՆԳԻՍՏ

ՀՈԳՇ. Տ. ՌԱԶՄԻԿ ՎՐԴ. ՊՕՂՈՍԵԱՆԻ

Ս. Յակոբեանց Միաբանությունը սրտաբեկ եւ խոր վշտով կը գուժէ վախճանումը Հոգեշնորհ Տ. Ռազմիկ Վրդ. Պողոսեանի, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 20 Հոկտեմբեր, 2018-ին, Աւստրալիոյ Սիտնի քաղաքին մէջ, 91 տարեկան հասակին:

Հանգուցեալ Հայր Սուրբը ծնած է 7 Ապրիլ, 1927-ին՝ Ամման: Աւագանի անունով՝ Յարութիւն: 1929-ին ընտանեօք փոխադրուած է Երուսաղէմ, ուր յաճախած է «Թէրրա Սանթա» դպրոցը: Երկրորդական ուսումը կիսաւարտ թողած, 1942-ին սկսած է աշխատիլ որպէս ոսկերիչ, եւ այդ շրջանին հայերէն գրել-կարդալ սորված է ինքնաշխատութեամբ: 1970-ին, մօրը ու եղբայրներուն հետ Աւստրալիա կը գաղթէ, ուր ամէն Կիրակի կը մասնակցի Ս. Պատարագի արարողութեան: Օրուան առաջնորդ՝ Տ. Աղան Արք. Պալիողեանի ձեռամբ 1986, Օգոստոս 3-ին, Սիտնիի Սուրբ Յարութիւն եկեղեցւոյ մէջ Դպրութեան աստիճան ստացած է եւ նոյն ամսուն 17-ին՝ Սուրբ Աստուածածնի Վերափոխման տօնին, Մէլպուրնի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ՝ Սարկաւագութեան աստիճան: Ամիս մը ետք կը մեկնի Ս. Էջմիածին, ուր կէս տարի կը հետեւի Ճեմարանի դասընթացքին: 1988-ի Մարտին կու գայ Երուսաղէմ ու կ'աշակերտի Սուրբ Աթոռոյա Ընծայարանին: 1989-ի Փետրուար 5-ին, ձեռամբ երջանկայիշատակ Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի ձեռնադրուած է կուսակրօն արեղայ: Անկէ ասդին, հանգուցեալը ծառայած է Ս. Աթոռին իբր Աւագ Թարգման ու միաժամանակ Աւագ Շաբաթ օրերուն իբր Լուսահան: Հայր Սուրբը այն քաջ հոգեւորականներէն եղած է, որ իր կեանքը վտանգելով կարողացած է տէր կանգնիլ 90-ական թուականներուն հրէական խժոժութեանց ենթակայ Բեթղեհէմի Հայոց եկեղեցւոյ եւ համալիրին: Հայր Սուրբը վաղուց անկողնոյ կը ծառայէր եւ կը մնար հանգստեան տան մէջ:

Եկեղեցասէր եւ Աթոռանուէր կրօնականին առընթեր յատկանշական էին իր մօտ նկարագրի գեղեցիկ եւ փնտռուող գիծեր: Բարի եւ առաքինի եկեղեցական մըն էր, աւանդապահ եւ գործունեայ:

Վախճանման տխուր առիթով Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայրը մեկնեցաւ Սիւնի և մատուցեց իր վերջին յարգանքը վախճանեալ Հայր Սուրբին: 24 Հոկտեմբերի երեկոյեան, ի ներկայութեան հանգուցեալի ընտանիքին եւ հարազտներուն, տեղի ունեցաւ Հոգեշնորհ Հայր Սուրբի Վերջին Օծման արարողութիւնը: Հոգեւոյս Հայր Սուրբին մարմինը ամփոփուեցաւ Մաքուարի Փարքի հոգեւորականներու յատուկ պանթէոնին մէջ:

Սիւն, յանուն Ս. Աթոռոյս Գահակալ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի պարագաներուն եւ կ'աղօթէ որ Ամենակալը իր լոյսերու մէջ հանգչեցնէ Իր սպասաւորի հոգին:

«Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի»

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐԷ ՍՐԲԱԶԱՆ ՀՕՐ ԿՈՂՄԷ ԽՕՍՈՒԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ Ի ՍԻՏՆԻ, ԱԽՏՐԱԼԻԱ

«Երանի անոնց՝ որոնք մաքուր են սիրտով, որովհետեւ անոնք զԱստուած պիտի տեսնեն» (Մատթէոս 5:8):

Ի՞նչ է սրտի մաքրութիւնը: Սուրբ Գրքին մէջ սովորաբար «սիրտ» կը նշանակէ անհատին ամբողջ էութիւնը, որ կը ներառէ միտք, կամք եւ զգացումները: Հին Կտակարանին մէջ մաքուր սիրտով անձը այն էր՝ որ սուտ չունէր իր մէջ, եւ այս դաճաղին մէջ հանգչող մեր սիրեցեալ հոգեւոր եղբայրը՝ Հանգուցեալ Հոգշ. Տ. Ռազմիկ Վրդ. Պօղոսեան, եղաւ մին Սրբոց Յակոբեանց Միաբանութեան այն բացառիկ, մաքուր եւ արդար սիրտով անդամներէն:

Իբր մարդ արարածներ մենք հաւանաբար չենք դիմագրաւեր միեւնոյն դժուարութիւններն ու խնդիրները, սակայն իբր Աստուծոյ ստեղծածները ենթակայ ենք նոյն ճակատագրին, օր մը մենք բոլորս, ինչպէս հին Եգիպտացիները կ'ըսէին, պիտի անցնինք խաւարի ձորէն: Սակայն եկեղեցւոյ հին հայրերուն համար մահը բարոյական իմաստ մը ունէր: Մենք իբր պարզ արարածներ մեր կարելին կ'ընենք մեր հեղինակութիւնը տարածելու բնութեան վրայ եւ մեր այդ փորձին մէջ շարաշար կը ձախողինք, որովհետեւ մահը կու գայ մեզի յիշեցնելու մեր ոչնչութիւնն ու անկարողութիւնը: Մենք լաւ գիտենք թէ մահը անխուսափելի է, սակայն մարդը երբեք պատրաստ պիտի չըլլայ անոր, որովհետեւ մենք կը սկսինք մեռնիլ ծնած վայրկեանէն իսկ, ուրեմն մահը չէ որ պէտք է ըլլայ մեր գլխաւոր հարցումը - որովհետեւ Հայր Աստուած Մարդուն յաւիտենականութիւն չսոստացաւ - ուրեմն փոխանակ հարցնելու թէ ե՞րբ պիտի մեռնինք կամ ի՞նչպէս պիտի մեռնինք, աւելի ճիշդ պիտի ըլլար հարցնել «Ի՞նչպէս պիտի ապրինք»։ Կեանքը, ապրիլը պէտք է ըլլայ մեր գլխաւոր ու միակ հարցումը:

Սովորաբար մարդիկ մահուան մասին կը մտածեն եւ կը խօսին իբր վերացական, ոչ իրական բանի մը: Սակայն երբ գտնուինք սիրելիի մը դաճաղին առջեւ, մահը յանկարծ բոլորիս համար կը դառնայ իրական եւ շօշափելի: Եւ այսօր, մղուած սրբազան միակ պարտականութենէ մը, հաւաքուած ենք հոս տալու մեր սիրոյ եւ յարգանքի

տուրքը Ռազմիկ Հայր Սուրբին, Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ամենատարեց անդամին, որ իր աշնան տարիքի քաղցրագոյն պտուղները նուիրեց Ս. Աթոռին՝ անդամակցելով Երուսաղէմի Պատրիարքութեան: Պարզ ու բարի հոգիի տէր անհատ մը, որ լաւ գիտէր զատել չարը՝ բարիէն եւ ժխտականը՝ դրականէն: Անշուշտ չափազանց ցաւալի է տեսնել սիրելի մը, որ կը բաժնուի այս կեանքէն եւ իր սիրելիներէն սակայն դժբախտաբար այս մէկը կեանքի միակ եւ անխուսափելի իրականութիւնն է, եւ մահն ու թաղման այս տխուր արարողութիւնը կու գան մեզ մեզմ կերպով դնելու շատ սիրելի Հայր Ռազմիկի այս աշխարհէն յաւիտենական բաժանման իրականութեան առաջ, որ միաժամանակ վերագարձն է դէպի իր յաւիտենական տունը, դէպի իր Արարիչը՝ Աստուած:

Հայր Ռազմիկի կեանքի նաւը նաւարկեց ամբողջ 91 տարիներ: Ան հաղորդական ու համեստ անձ մը եղաւ միշտ, մէկը՝ որ կեանքէն շատ մեծ ակնկալութիւններ չունեցաւ, երբեք իր մասին չէր խօսեր ու չէր գանգատեր, բան մը որ այլեւս առաքինութիւն դարձած էր իր մէջ: Տարիներով ան ծառայեց Ս. Աթոռին իբր Աւագ թարգման ու միաժամանակ Աւագ Շաբաթ օրերուն իբր Լուսահան: Ապա տարիներով եղաւ Բեթղէհէմի Ծննդեան Ս. Տաճարի Տեսուչը, վայելելով քոյր յարանուանութիւններու տեսուչներուն ու տեղական իշխանութեանց յարգանքը:

Տարիներ առաջ Գանատական թերթ մը իր էջերէն մէկուն մէջ մրցոյթ մը յայտարարած էր, նիւթ ունենալով. «Ո՞վ է մարդուն իրաւ բարեկամը»: Խմբագրութիւնը կարգ մը պատասխաններուն մէջէն ընտրած էր հետեւեալը. «Մարդուն իրա՛ւ բարեկամը այն է, որ անոր կեանքի ամենագոյնար պահուն երբ ուրիշներ դուրս կու գան իր կեանքէն, ան կը մտնէ...»: Եւ իմ պարագայիս եւս, սիրելի Հայր Ռազմիկ եղաւ այն իրա՛ւ ու հարազատ բարեկամն ու եղբայրը, որ հակառակ իր առողջական փխրուն վիճակին, գերադասելով շահերը Ս. Աթոռին Աւատրալիայէն Երուսաղէմ այդ յոգնեցուցիչ ու երկար ճամբորդութիւնը յանձն առնելով, իմ դժուարին ու նեղ օրերուս ներս մտաւ կեանքէս, երբ անդին երբեմնի բարեկամ կարծուածներ դուրս կու գային անկէ:

Այժմ երբ հաւաքուած ենք մեզմէ յաւէտ բաժնուած Ռազմիկ Հայր Սուրբի դագաղին շուրջ, բոլոր հարազատները, բարեկամներն ու անոնք որոնք ձեռով մը ծանօթ էին ու կապուած իրեն եւ վայելած անոր անձին մտերմութիւնն ու ջերմութիւնը թող սիրով յիշեն զինք:

Շատ սիրելի Ստեփան, Թորոս, Գէորգ եւ Արշալոյս, ձեր ընտանիքներուն հետ՝ Ս. Յակոբեանց Միաբանութեան ընտանիքն ու անոր անդամները եւս կը կորսնցնեն անբիծ ու բարի եղբայր մը, որուն նախանձախնդրութիւնն ու սէրը Երուսաղէմի Պատրիարքութեան հանդէպ հորիզոններ ընդգրկելու չափ անսահման էր: Ի բոլոր սրտէ կ'աղօթեմ Բարձրեալն Աստուծոյ, որ իր երկնային լոյսերուն մէջ հանգչեցնէ մեր սիրելի հանգուցեալ եղբօր՝ Ռազմիկ Վարդապետ Պօղոսեանի հոգին, զինք դասելով իր արդարներուն կարգին, եւ իր սիրելիներուն պարգեւելով Սուրբ Հոգիի մխիթարութիւնը, ամէն:

Հոկտեմբեր 25, 2018

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդեսը հիմնադրվել է 1866-ին, պաշտոնաթերթն է Երուսաղեմի Հայոց Պատրիարքութեան և լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ զատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական և հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ և այլ բնոյթով նիւթեր:

Յօդուածները կ'ընդունուին Հայերէն և Անգլերէն լեզուներով, նախընտրաբար 10-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ (Word 2007-2010), երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Sylfaen, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt:

Յօդուածին մէջ տրուած յղումներու տառատեսակը պէտք է ըլլայ՝ Sylfaen, տառաչափը՝ 10 pt:

Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուներէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին և նախասիրութեան:

Յօդուածներ և այլ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկուին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Նոր Տարի	355
Ամանորեայ խոհեր	356

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ

Ծննդեան պատմություն (Բեթղեհէմ երթալ շուգող հովիւր)	357
--	-----

ԿՐՕՆԱԿԱՆ

Ն.Ա.Մ.

Կատարելություն	359
----------------	-----

Ն.Ա.Մ

Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր	362
-----------------------	-----

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

Յիսուսի կերպարը Սուրբ Յովհաննէսի աւետարանում: Զորրորդ աւետարանի կառուցուածքը եւ հարցեր՝ կապուած Յովհաննէսի Քրիստոսաբանութեան հետ	364
--	-----

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԵԱՆ

Ռուսաստանի Արմաւիր քաղաքի հայկական եկեղեցիները եւ նորաստեղծ որմնանկարները	385
--	-----

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՎԱՆՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Լեզուի արտայայտչամիջոցները Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» պոեմում	390
--	-----

ԳՐԱԿԱՆ

ՏԱԹԵԻԻԿ ՄԵՐՋԱՆԵԱՆ

Արեւմտահայ նորավէպի ինքնությունը եւ նրա տեսական հիմնաւորումները	396
--	-----

ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Արարայի ճակատամարտը եւ Հայկական Լէգէոնը (100-ամեակի առթիւ)	407
---	-----

ԱՆՏԻՊ ԷԶԵՐ**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ**

Զերդ Վսեմութիւն

410

ՅՈՐԵԼԵԱՆՆԵՐ**ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Տպարան
(Հիմնադրութեան 185-ամեակին առթիւ)

412

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆՅակոբ Օշական գրագէտը
(Ծննդեան 135-ամեակի առթիւ)

415

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆԱնմահ քերթողը՝ Մկրտիչ Պէշկիթաշեան
(Ծննդեան 190-ամեակի առթիւ)

422

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆՅակոբ Կոջոյեան «Դէքիաթասացը»
(Ծննդեան 135-ամեակի առթիւ)

429

ՎԱԹՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Հայ եկեղեցականը եւ քաղաքականութիւնը

433

ՏԵՂԵԿԱԳԻՐ**ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**

Պարսպապատուեցաւ կալուած մը եւս

435

ԱՅԼԵԻԱՅԼՔՊատրիարք Սրբազան Հօր այցը Պաղեստինի նորանշանակ
տեղակալ՝ Տիար Քամել Հըմէտին

437

Ուրարի տւշութիւն

437

Երուսաղէմի հոգեւոր պետերու բողոք նամակը
ուղղուած վարչապետ Պենիամին Նէթանիահուի

437

Հանդիպում Իսրայէլի Տարածաշրջանային համագործակցութեան
նախարար՝ Տիար Յաիմ Հանեկպիի եւ Երուսաղէմի հոգեւոր պետերու միջեւ

438

Սարկաւագական Զեռնադրութիւն

438

Արարայի ճակատամարտի 100-ամեակին նուիրուած
թափօրով երթ դէպի Արարայի յուշարձան

440

Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք
Սրբազան Հօր խօսքը Արարայի նահատակներու յիշատակին

440

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք - Բեմականք	442
Պաշտօնականք	445
Բարեպաշտական նուէրներ	448

ՏԵՐՈՒՆԻ

Հանգիստ Հոգշ. Տ. Ռազմիկ Վարդապետ Պօղոսեանի	451
Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր կողմէ խօսուած դամբանականը ի Սիտնի, Աւստրալիա	452
Յօդուածագիրներու ուշադրութեան	454
Յանկ նիւթոց 2018 տարւոյ	458

ՑԱՆԿ ՆԻԻԹՈՅ 2018 ՏԱՐԻՈՅ

ԱՆՏԻՊ ԷՋԵՐ

ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԷՐԵԱՆ

- Երկնքի արքայությունը	88
- Ապրիլ 24	194
- Պահքը	197
- Աբոն	328
- Ձերդ Վսեմություն	410

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍԻՐԱՆՈՅՇ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

Բառի զօրություն բանալին	34
-------------------------	----

ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ

- Փոխառեալ եւ բնիկ տերմինները Գրիգորիսի	
«Քննություն բնության մարդոյ եւ նորին ցաւոց» երկում	148
- Լեզուի արտայայտչամիջոցները Գրիգոր Նարեկացու	
«Մատեան ողբերգութեան» պոեմում	390

ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

ԵՂԻՎԱՐԴ

- Մեծ Պահքը	32
- Ապրիլ 24	141

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

Աստուած առաւ ափ մը լոյս	33
-------------------------	----

ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Թագուհի Շիշմանեան (Օր. Մենիկ), աշխատասիրությունամբ Ալ. Ա. Մակարեանի, երկեր, Երեւան, Նաիրի, 2015, էջ 203	286
--	-----

ԳՐԱԿԱՆ

ՆԵՐՍԵՏ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

- Ս. Երրորդության Նարեկացիական ըմբռնումը «Մատեան ողբերգութեան» երկում	41
- Քրիստոնէական արժեքների վարուժանական ընկալումները	155

ՏՐՅ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Առաքել Սիրնեցին եւ նրա գրական ժառանգությունը 51

ՏԱԹԵԻԻԿ ՄԵՐՋԱՆԵԱՆ

- Թագուհի Շիշմանեանի «Գարնան մի ասուպ» նորավէպի
գաղափարա-գեղարուեստական եւ ժանրային առանձնայատկությունները 58

- Արեւմտահայ նորավէպի կառուցուածքային առանձնայատկությունները 164

- Արեւմտահայ նորավէպի առանցքային թեման
եւ հիմնական բովանդակությունը 259

- Արեւմտահայ նորավէպի ինքնությունը
եւ նրա տեսական հիմնաւորումները 396

ՎԱՐԴԱՆ ԵՂԻԱՋԱՐԵԱՆ

Յովհաննէս Թլկուրանցու «Տաղ քաջի Լիպարտին»
հայրենասիրական ողբը 70

ՍԱՄՈՒԷԼ ԵՂԻԱՋԱՐԵԱՆ

Պերճ Զեյթունցեանի «Վերջին արեւագալը» վէպը 80

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ ՄԽԻԹԱՐԵԱՆ

Հայրենիքի վերածնությունեան խորհուրդը Վահան Տէրեանի
«Մի՛ խառնէք մեզ ձեր վայրի արջի ցեղերին» բանաստեղծության մէջ 177

ԱՍՏՂԻԿ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ

Վարուժան Ոսկանեանի «Շշուկների մատեան» վէպը
բախտինեան քրոնոտոպի հայեացքով 270

ԲԵՆԻԱՄԻՆ ՆՈՒՐԻԿԵԱՆ

Կաթիլ մը իւղ Ս. Մեսրոպէն 278

ԵԿԵՂԵՑԱԳԻՏԱԿԱՆ**ԱՐՄԱՆ ՄԱԿԱՐԵԱՆ**

Ռուսաստանի Արմաւիր քաղաքի հայկական
եկեղեցիները եւ նորաստեղծ որմնանկարները 385

ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ**ՎԱԼՏԵՐ ՊԷՐՊԷՐԵԱՆ**

Վեց հոլովների ըմբռնման լեզուաբանական հիմնաւորումները 281

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յունուար-Մարտ 3

«Եւ եկն ի Նազարէթ ուր սնեալն էր, եւ եմուտ ըստ

սովորութեան իւրում յաւուր շաբաթու ի ժողովուրդն»	123
Այս Սրբազան հաստատութիւնը	227
Նոր Տարի -Ամանորեայ խոհեր	355

ԿՐՕՆԱԿԱՆ

Ն.Ա.Մ.

- Տօնա Առաքելական	8
- Եօթնեակ Մեծ Պահոց	11
- «Եւ ասէին ցիս զօրհանապազ թէ ո՞ւր է Աստուած քո»	13
- Փոթորիկներ (Ճիպրան հալիլ Ճիպրան) Անգլերէնից թարգմանեց Ն.Ա.Մ.	16
- «Զի ամենայն որ բարձրացուցանէ զանձն իւր խոնարհեցի, եւ որ խոնարհեցուցանէ զանձն՝ բարձրացի»	128
- «Ինչ օգուտ, եթէ մարդ այս ամբողջ աշխարհը շահի, բայց իր անձը կորսնցէ»	131
- Դանիէլ	133
- «Թէ մոռացայց զքեզ Երուսաղէմ, մոռացի եւ զիս աչ իմ»	228
- «Եւ արդ՝ եթէ թագաւորութիւն յանձն իւր բաժանեցի ո՛չ կարէ կալ թագաւորութիւն այն...»	230
- «Եւ զկէսն արար յաստուած զդրօշեալ. եւ խոնարհեալ երկիր եպազ նմա, յաղօթս կայ առ նա եւ ասէ...»	232
- Կատարելութիւն	359
- Սիրեցէ՛ք զթշնամիս ձեր	362

ԴՈԿՏ. ՆԵՐՍԷՍ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ ՆԵՐՍԷՍԵԱՆ

- Grigor Naregatsi, mystic and poet: The soul's search for immediacy with God	236
- Յիսուսի կերպարը Սուրբ Յովհաննէսի աւետարանում: Չորրորդ աւետարանի կառուցուածքը եւ հարցեր՝ կապուած Յովհաննէսի Քրիստոսաբանութեան հետ	364
Heaven and Hell	135

ԿՐՕՆԱ-ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՅԱԿՈԲԵԱՆ

Կրօնի եւ գիտութեան հակամարտութեան հիմնախնդրի շուրջ	17
--	----

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ս. Աթոռոյս բարերար Տիար Գէորգ Աթընիզեան պարգևատրուեցաւ Ս Յակոբի Ասպետ շքանշանով	99
Նոր հրատարակութիւն Զաւէն Աւ. Քհնյ. Արզումանեանի «Յիշարժան անդրադարձ» գիրքի	101
Բողոք քաղաքապետարանի նոր օրէնքին դէմ Ս. Յարութեան Տաճարի դուռը գոցուեցաւ	102
Մագիստրոսական թէզի պաշտպանութիւն Տ. Ներսէս Աբեղայ Ալոյեանի	104
Միաբանական Ընդհանուր Ժողով Ս. Աթոռ, Երուսաղէմ 1-2 Մայիս, 2018	203

ՅՈՒՐԱԿԱՆՆԵՐ

ՆԵՐՍԵՏ ԱՐԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

- «ՍԻՈՆ» Երուսաղէմի նահապետը (90-ամեայ յոբելեանին առթիւ)	92
- Փոքրիկ ծաղկեփունջ մը մարմարեայ շիրմաքարին (Վազգէն Ա. Վահագնի ծննդեան 110-ամեայ յոբելեանին առթիւ)	305
- Գուրգէն Մահարիի անթառամ յիշատակին (Ծննդեան 115-ամեակ)	317
- Յակոբ Օշական գրագէտը (Ծննդեան 135-ամեակի առթիւ)	415
- Անմահ քերթողը՝ Մկրտիչ Պէշիկթաշլեան (Ծննդեան 190-ամեակի առթիւ)	422
- Յակոբ Կոշոյեան «Դէքիաթասացը» (Ծննդեան 135-ամեակի առթիւ)	429

ԴՈԿՏ. ՄԻՆԱՍ ԳՈՃԱՅԵԱՆ

Զապէլ Եսայեան երեւոյթը 20-րդ դարասկզբի հայ իրականութեան մէջ (Համառօտ ակնարկ ծննդեան 140 եւ մահուան 75-ամեակներուն առթիւ)	299
---	-----

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

- 175-ամեայ Ժառանգաւորաց Վարժարանը (Հիմնադրութեան յոբելեանին առթիւ)	313
- Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց Տպարան (Հիմնադրութեան 185-ամեակին առթիւ)	412
Քահանայութեան Յիսնամեակ Յոբելեան Տ. Սեւան Արք. Ղարիպեանի, Լուսարարապետի Ս. Առաքելական Աթոռոյս	199
Քահանայութեան 55-ամեակ Հոգեշնորհ Տ. Սամուէլ Ծ. Վարդապետ Աղոյեանի	325
Քահանայութեան 40-ամեակ Հոգեշնորհ Տ. Հայրիկ Վարդապետ Գալայճեանի	325

Քահանայություն 40-ամեակ	
Հոգեշնորհ Տ. Վանիկ Վարդապետ Մանկասարեանի	326
Քահանայություն 40-ամեակ	
Հոգեշնորհ Տ. Բաբգեն Ծ. Վարդապետ Անուշեանի	326
Քահանայություն 35-ամեակ	
Հոգեշնորհ Տ. Գուսան Վարդապետ Ալճանեանի	327

ՅԻՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

Տ. Եղիշէ Պատրիարք Տէրտէրեանի այցը Պոստոն	96
Այցելություն Նորին Սրբություն Պողոս Զ. Պապին	96
Բացում Ամերիկեան Ծերակոյտին	97
Այցելություն նախագահ Քենեդիի յուշարձանին	98
Հրատարակություն Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի ամբողջական եկերուն	98
Հայոց Պատրիարքարանի Փողոցին բացումը	98
Վարդանանք	98
Ապրիլեան յուշատօն	201
Զեռնադրություն Սարկաւագներու	201
Զեռնադրություն Կուսակրօն Քահանայից	201
Նշխարք Տարօնոյ	330
Փառահեղ օծում Ամմանի նորակառոյց Ս. Թադէոս եկեղեցին	331
Հայ եկեղեցականը եւ քաղաքականությունը	433

ՊԱՏՄԱԿԱՆ

ԶԱԻԷՆ ԱԻ. ՔԱՀԱՆԱՅ ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

Արմաշէն Երուսաղէմ: Երանաշնորհ Բաբգեն Աթոռակից	
Կաթողիկոս, Եղիշէ Դուրեան եւ Թորգոմ Դուշակեան Պատրիարքաներ	84

ՆԵՐՍԵՍ ԱՔԵՂԱՅ ԱԼՈՅԵԱՆ

Մայիսեան եռատօն	188
-----------------	-----

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՍԱՐԿԱԻԱԳ- ՊԵՏՐՈՍԵԱՆ

Յովհաննէս Դրասխանակերտցին եւ իր «Պատմություն Հայոցը»	290
--	-----

ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ

Արարայի ճակատամարտը եւ Հայկական Լէգէոնը (100-ամեակի առթիւ)	407
--	-----

ՍՈՒՐԲ ԳՐԱԿԱՆ**ԵՂԻՇԷ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԷՐՏԵՐԵԱՆ**

Ծննդեան պատմություն (Բեթղեհէմ երթալ շուգող հովիւը) 357

ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Եկեղեցականք - Բեմականք Յունուար-Մարտ 106

Ապրիլ - Յունիս 215

Յուլիս - Սեպտեմբեր 346

Հոկտեմբեր - Դեկտեմբեր 442

Պաշտօնականք Յունուար-Մարտ 112

Ապրիլ - Յունիս 220

Յուլիս - Սեպտեմբեր 349

Հոկտեմբեր - Դեկտեմբեր 445

Բարեպաշտական նուէրներ 2017 տարւոյ 116

Բարեպաշտական նուէրներ 2018 տարւոյ 448

ՏԵՂԵԿԱԳԻՐՆԵՐ**ԿՈՐԻԻՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԲԱՂԴԱՍԱՐԵԱՆ**

- Տարեկան տեղեկագիր ժառանգաւորաց Վարժարանի
Եւ Ընծայարանի 2017-2018 209

- Պարսպապատուեցաւ կալուած մը եւս 435

ՆՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ԳԱԶԱԶԵԱՆ

Տարեկան տեղեկագիր Սրբոց Թարգմանչաց Վարժարանի 2017-2018 212

ՍԱՄՈՒԷԼ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ԱՂՈՅԵԱՆ

Ս. Յարութեան տաճարի հայկական բաժիններու նորոգութիւն 332

ՏԵՐՈՒՆԻ

Հանգիստ Հոգշ. Տ Ռազմիկ Վարդապետ Պօղոսեանի 451

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր կողմէ խօսուած
դամբանականը ի Սիտնի, Աւստրալիա 452

ՔԱՐՈԶԽՕՍԱԿԱՆ**ՆՈՒՐՀԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ**

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ օծման առիթով
«Ես եմ դուռն, ընդ իս որ մտանիցէ՝ կեցցէ, մտցէ եւ ելցէ եւ ճարակ գտցէ» 136

ԶԱՔԷՈՍ Ծ. ՎԱՐԴԱՊԵՏ ՕՀԱՆԵԱՆ

Խաւարման գիշեր 139

ԱՅԼԵՒԱՅԼՔ

Ամեն, Պատրիարք Ս, Հօր Ծննդեան պատգամը Բթղեհէմի Ս, Այրէն	5
Ամեն, Պատրիարք Ս, Հօր պատգամը Ս, Յարութեան տօնի առիթով	125
Հայոց ցեղասպանութեան 103-րդ տարելից	205
Շնորհաւորագիր Հայաստանի Հանրապետութեան նորընտիր վարչապետ՝ Տիար Նիկոլ Փաշինեանին	205
Իսրայէլի Խորհրդարանի մէջ քննարկուեցաւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման հարցը	205
Ուխտագնացութիւն դէպի Պարոնտէր՝ Յիշատակի Պուրակ	206
Սրբոց Թարգմանչաց Վարժարանի Շրջանաւարտից հանդէս	206
Օծում Ս, Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ ի Նոր Երուսաղէմ	207
Դպրութեան աստիճանի տւշութիւն	207
Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի ամսվերջի հանդէս	208
Անգլիոյ Իշխան՝ Ուիլիըմի այցը Սուրբ Յարութեան Տաճար	208
Իսրայէլի վարչապետ Տիար Պենիամին Նէթանիյահուի պատասխան նամակը Ն, Ամեն, Տ, Նուրհան Արք, Մանուկեանին	343
Տարեկան գիշերային ուխտագնացութիւն դէպի Ս, Աստուածամօր տաճար	343
Տարեմուտ Սրբոց Թարգմանչաց Վարժարանի	343
Տարեմուտ Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի	344
Հանդիպում Իսրայէլի Տարածաշրջանային համագործակցութեան նախարար՝ Տիար Յախի Հանեկպիի եւ Երուսաղէմի հոգեւոր պետերու միջեւ	344
Պատրիարք Սրբազան Հօր այցը Պաղեստինի նորանշանակ տեղակալ՝ Տիար Քամել Հըմէտին	437
Ուրարի տուշութիւն	437
Երուսաղէմի հոգեւոր պետերու բողոք նամակը ուղղած վարչապետ Պենիամին Նէթանիյահուի	437
Հանդիպում Իսրայէլի Տարածաշրջանային համագործակցութեան նախարար՝ Տիար Յախի Հանեկպիի եւ Երուսաղէմի հոգեւոր պետերու միջեւ	438
Սարկաւագական Ձեռնադրութիւն	438
Արարայի ճակատամարտի 100-ամեակին նուիրուած թափօրով երթ դէպի Արարայի յուշարձան	440

Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարք
Սրբազան Հօր խօսքը Արարայի նահատակներու յիշատակին

440

Յօդուածագիրներու ուշադրութեան



Պատրիարք Սրբազան Հօր այցը Պաղեստինի նորանշանակ տեղակալ՝ Տիար Քամել Հըմէտին



Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայէլի նախագահ Վսեմաշուք Տիար Ռուվէն Ռիվլինի կողմէ կազմակերպուած ընդունելութիւն նախագահական պալատին մէջ



*Ուրարի տւչութիւն՝ Տրց. Յարութիւն Բաբայեանին,
Տրց. Շաւարշ Կարապետեանին եւ Տրց. Ռուբէն Յովհաննիսեանին*



Կիսասարկաւազական աստիճանի տւչութիւն



*Սարկաւագական Ձեռնադրութիւն Տրց. Յովհաննէս Պետրոսեանի,
Տրց. Յակոբ Բաղդասարեանի եւ Տրց. Սահակ Դաւթեանի*



*Ամեն. Պատրիարք Ս. Հօր այցըր Ամերիկայի Արարատ Թանգարան-ծերանոց
Ջախէն՝ Կրէկլըրի Մազմանեան, Շահէ Պոյաճեան, Պատրիարք Սրբազան, Մակի,
Նորա Մազմանեան, Տէրիք Դուկասեան*



«ՍԻՈՆ»Ի ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

«ՍԻՈՆ»-ի խմբագրությունը կը փորձէ ամբողջացնել և արդիականացնել բաժանորդներու ցանկը: Բաժանորդագրուեցէ՛ք Նոր շրջանի «ՍԻՈՆ»-ին, զոր կրնաք ստանալ նամակատան միջոցաւ և կամ այցելելով մեր կայքէջը:

Հաճեցէ՛ք ներքեւի կտրոնը յստակ և զլիսագիր տառերով ամբողջացնել և փութով մեր
E-mail: sionjournal@yahoo.com հասցէին ղրկել:

ՊԱՏՐԻԱՐԺՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՍԻՈՆԻ

Անուն, Մականուն. _____

Տիտղոս. _____

Կազմակերպութիւն. _____

Հասցէ. _____

Կայքէջ. _____ E-mail address _____

Տարեկան բաժանորդագրութիւն՝ \$ 150 USD



NOTICE TO SUBSCRIBERS

The Armenian Patriarchate of Jerusalem is driving up a new updated list to its official periodical SION. To ensure that your name is on the list, you are kindly requested to fill in the form below and send it back to us, with your remittance as soon as possible. You can also write to our E-mail: sionjournal@yahoo.com.

Name, Surname. _____

Title. _____

Organization. _____

Address. _____

Annual Subscription \$ 150 USD

Send your checks to: Armenian Patriarchate of Jerusalem P.O.Box 14235 Jerusalem, Israel

Tel: +972 (0)2-6282331

Fax: +972 (0)2-6264861

E-mail: sionjournal@yahoo.com

